

# ԱՐԵՂՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ



ԼԵՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ՍԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ  
150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ  
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
(Երևան, 2015 թ., հոկտեմբերի 14-15)

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2016

ՀՏԴ 80:06  
ԳՄԴ 80  
Ա 134

*Հրատարակվել է  
ԵՊՀ հայ բանասիրության  
ֆակուլտետի գիրքսրահի որոշմամբ*

**Խմբագրական խորհուրդ՝**

- Ա. Աբաջյան - ր.գ.դ., պրոֆ.
- Ա. Ավագյան - ր.գ.դ., պրոֆ.
- Յ. Ավետիսյան - ր.գ.դ., պրոֆ.
- Լ. Եզեկյան - ր.գ.դ., պրոֆ.
- Լ. Խաչատրյան - ր.գ.դ., պրոֆ.
- Լ. Հովհաննիսյան - ր.գ.դ., պրոֆ.
- Լ. Հովսեփյան - ր.գ.դ., պրոֆ.
- Ռ. Սաքապետոյան - ր.գ.դ., պրոֆ.

Ա 134 **Արեղյանական ընթերցումներ:** -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 288 էջ:

Սույն ժողովածուի մեջ գետեղված են Մանուկ Արեղյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներն ու ելույթները: Դրանք վերաբերում են ոչ միայն մեծ հայագետի կյանքին, գործունեությանը, գիտական վաստակին ու ժառանգությանը, այլև հայերենագիտությանը վերաբերող ամենատարբեր հարցերի:

Ժողովածուն կարող է օգտակար լինել ինչպես մասնագետների, այնպես էլ բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են լեզվի հարցերով:

ՀՏԴ 80:06  
ԳՄԴ 80

ISBN 978-5-8084-2059-5

© ԵՊՀ հրատ., 2016  
© Հեղ. խումբ, 2016

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հարգելի՛ բարեկամներ,

Ողջունում եմ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանրապետական գիտական այս նստաշրջանի մեկնարկը, որն իր հետագա շարունակությունը կունենա գիտակրթական տարբեր հաստատություններում:

Անգնահատելի է Մ. Աբեղյանի գիտական բեղմնավոր վաստակը հայագիտության զարգացման մեջ: Ականավոր գիտնականը արգասաբեր գործունեություն է ծավալել հայագիտության գրեթե բոլոր բնագավառներում՝ միջնադարյան քնարերգություն, առասպելաբանություն, ժողովրդական վիպասանություն ու էպոս, ընդհանրապես հին ու նոր գրականություններ, տաղաչափություն և այլն:

Մ. Աբեղյանը իրավամբ հայ գիտական քերականության հիմնադիրն է: Նրա լեզվաբանական աշխատությունները մնայուն ու կոթողային գործեր են, իսկ «Հայոց լեզվի տեսությունը» հայերենի բոլոր մակարդակների մասին երբևէ ստեղծված դասական անփոխարինելի աշխատություն է: Մեծատաղանդ հայագետը նաև հմուտ բառարանագիր է ու գրաբարագետ, արևելահայերենի արդի ուղղագրության հիմնադիր:

Մ. Աբեղյանը մեզ համար առանձնակի նշանակություն ունի նաև որպես համալսարանական. Մ. Աբեղյանը Երևանի պետական համալսարանի, ինչպես և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադիր գիտնականներից մեկն է:

Երկար տարիներ զբաղվելով մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ՝ նա կրթել է բանասերների բազում սերունդներ: Հայագիտության տիտանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի անուրանալի դերն ու վաստակը նաև համալսարանական գիտության զարգացման բնագավառում:

Դատելով գիտաժողովի ծրագրի հագեցվածությունից, արժարժվող խնդիրների կարևորությունից և արդիականությունից՝ համոզված եմ, որ քննարկումները կլինեն արդյունավետ ու շահեկան: «Աբեղյանական ընթերցումներ» խորագիրը կրող այս գիտաժողովը կրելու է պարբերական բնույթ:

Բոլորիդ մաղթում եմ ստեղծագործական բեղմնավոր աշխատանք...

**ԵՊՀ ռեկտոր՝  
Ա. Հ. Սիմոնյան**

**ՍԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Ականավոր հայագետ, լեզվաբան, գրականագետ, բանագետ, բառաբանագիր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Մանուկ Խաչատուրի Արեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Նախիջևանի Աստապատ գյուղում: Ըստ ավանդության՝ տեղանվան ծագումը կապվում է Ավարայրի հերոսամարտի հետ. պատմում են, որ Վարդան Մամիկոնյանի մարմինը «այդտեղ են բերել և պատել», որից և առաջացել է *Ասր-ասպար* անունը:

Արեղյանի հոր պապի՝ Պետրոսի բեղի կեսը սպիտակ լինելու պատճառով տոհմին տրվել է Աղբեղանք (թուրքերեն *աղ*՝սպիտակ), ապա՝ Արեղյան ազգանունը: Գերդաստանը կրել է նաև Գալստյան ազգանունը<sup>1</sup>:

Լինելով ընտանիքի կրտսեր զավակը՝ պատանի Մանուկը վայելում էր ծնողների՝ հողագործ Խաչատուրի և տիրացուի դուստր Մարթայի առանձնահատուկ սերն ու հոգածությունը: Յոթ տարեկանից գրաճանաչություն է սովորել գյուղի խալֆաների մոտ, այնուհետև դարձել Հովակիմ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանի հիմնած Կարմիր վանքի դպրոցի անդրանիկ սան: Իր բացառիկ ընդունակությունների շնորհիվ 1876 թ. նա մի երջանիկ պատահականությամբ ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որն ավարտում է 1885-ին «յոյժ գովելի» գնահատականներով: 1887-ին տեղափոխվում է Թիֆլիս՝ որպես թեմական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1888-ին լույս է տեսնում Արեղյանի բանաստեղծությունների ժողովածուն՝ «Նմուշներ» վերնագրով: Գեռևս 1886-ին՝ Էջմիածնում ուսանելիս, ճեմարանի դռնապան մոկացի Նախտ

---

<sup>1</sup> Տե՛ս **Արեղյան Հ.**, Օրերս ինձ հետ են..., Եր., 2014, էջ 5:

քեռուց (Նահապետ) լսելով «Սասնա ծռերի» նոր պատումը՝ գրի է առնում այն՝ դառնալով երկրորդը Գարեգին Սրվանձտյանից հետո: 1889-ին Շուշիում լույս է տեսնում «Դավիթ և Սհեր» պատումը: 1889 թ. Աբեղյանը հրավիրվում է Թիֆլիս՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատելու Հովհաննյան օրիորդաց վարժարանում: Նա այդ ժամանակ երբեմն թղթակցում էր «Նոր-Դարին», ապա դառնում է թերթի խմբագիր:

1893 թ. կատարվում է Աբեղյանի վաղեմի երազանքը, և նա իր նախկին ուսուցիչ Փիլիպոս Վարդանյանի միջնորդությամբ և Ալեքսանդր Մանթաշյանի հովանավորությամբ մեկնում է Գերմանիա, ընդունվում Ենայի համալսարան: Մեկ տարի սովորելուց հետո կրթությունը շարունակում է Լայպցիգի, ապա՝ Բեռլինի համալսարաններում: 1895-1896 թթ. Մ. Աբեղյանը սովորում է Սորբոնի համալսարանում:

1898 թ. Ենայի համալսարանում նա փայլուն պաշտպանում է «Հայ ժողովրդական հավատալիքը» թեմայով ատենախոսությունը՝ ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1898 թ. գիտնականը նորից Թիֆլիսում է և հրավեր է ստանում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդելու, որտեղ և նա բարեկամանում է մեծն Կոմիտասի հետ: Համատեղ սկսում են ժողովրդական երգեր հավաքել և ուսումնասիրել: 1903 թ. հրատարակվում է դրանցից թվով հիսունը՝ «Հազար ու մի խաղ» վերնագրով, 1905-ին՝ հաջորդ հիսնյակը: Նրանց միջև ծնվում և արմատավորվում է մեծ բարեկամություն. Կոմիտասը դառնում է Աբեղյանի որդու՝ հետագայում ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Սհեր Աբեղյանի կնքահայրը: 1903-ին Աբեղյանը ամուսնացել էր գորավար գնդապետ Գևորգ Շահխաթունյանի դստեր՝ Շուշանիկի հետ:

Աբեղյան ընտանիքում ծնվում են չորս արու զավակներ՝ Գագիկը, որը մահանում է կույրաղիքի սուր բորբոքումից 16 տարեկան հասակում, Սհերը, որին ևս ծնողները կորցնում են մեկ տարեկանում, երրորդ որդին՝ Մեհերը, և Սուրենը՝ հետագայում Գ. Մունդուկյանի անվան թատրոնի դերասան:

Մ. Աբեղյանը աշխատակցել է հայ պարբերական մամուլին («Նոր-Դար», «Մուրճ», «Արարատ», «Ազգագրական հանդես», «Նորք» ևն): 1917 թ. Հայոց ազգագրական ընկերությունը Թիֆլիսում հիմնում է կով-

կասագիտական և հայագիտական երկսեռ բարձրագույն դասընթացներ, որի համար դասախոս է նշանակվում Մ. Աբեղյանը: Այս ժամանակահատվածում մի խումբ նշանավոր գիտնականների, այդ թվում՝ Մ. Աբեղյանի և Հ. Թումանյանի ջանքերով կազմակերպվում է Հայկազյան ընկերությունը, որի նպատակն էր հիմնել Հայոց ակադեմիա, դնել հայկական համալսարանի հիմքերը, զարգացնել հայագիտությունը և այլն: Սակայն պատմական դեպքերի բերումով Հայկազյան ընկերության ծրագիրը չի իրականանում:

1918-1927 թթ.-ները Մ. Աբեղյանի գիտական գործունեության մեջ նշանավորվում են լեզվաշինարարական արդյունավետ աշխատանքներով. պետական գրական լեզվի մշակման խնդիրը դարձել էր ժամանակի հրամայական: 1918 թ. Թիֆլիսի հայ փաստաբանների միությունը ռուս-հայերեն իրավաբանական տերմինների բառարան կազմելու խնդրանքով դիմում է մի քանի հայտնի իրավաբանների և հայագետներ Մ. Աբեղյանին ու Ս. Մալխասյանին: 1919-ին լույս է տեսնում բառարանը՝ մեծապես նպաստելով հայ իրավաբանական մտքի զարգացմանը:

1918-ին Թիֆլիսում սկսվում են Երևանի համալսարանի կազմակերպման աշխատանքները: Մեծ գիտնականը դառնում է կազմակերպիչ հանձնաժողովի անդամ, հրավիրվում Երևան: 1919 թ. օգոստոսի 1-ին նշանակվում է համալսարանի դասախոս և պատմաբանասիրական ֆակուլտետի ղեկան: Սակայն Երևանում հարմար շենք չլինելու պատճառով համալսարանի բացումը կատարվում է հունվարին Ալեքսանդրապոլում:

1920 թ. Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց անմիջապես հետո Հայաստանի ռազմական կոմիսար Ավիս Նուրիջանյանի հրամանով Մ. Աբեղյանին հանձնարարվում է կազմել ռուս-հայերեն և հայ-ռուսերեն ռազմական տերմինների բառարան, և այդ նպատակով նրան նշանակում են ռազմական կոմիսարի անձնական քարտուղար: 1925 թ. (կազմի վրա՝ 1927) լույս է տեսնում 724-էջանոց բառարանը:

Հայաստանի խորհրդայնացման հենց սկզբում փակվում է Երևանի համալսարանը, և կառավարության հատուկ որոշումով վերաբացվում է ժողովրդական համալսարան, որտեղ և անվանի հայագետը դասավան-

դում է հայ ժողովրդական բանահյուսություն, հայ հին գրականություն և հայոց լեզվի տեսություն: 1921 թ. նրան շնորհվում է դոցենտի, 1926 թ.՝ հայ գրականության պատմության պրոֆեսորի գիտական կոչում: 1923-1925 թթ. Մ. Աբեղյանը արդեն Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնն է վարում:

1925 թ. Հայաստանի Ժողկոմխորհրդի հատուկ դեկրետով հիմնադրվում է Խորհրդային Հայաստանի առաջին գիտական կենտրոնը՝ գիտության և արվեստի ինստիտուտը, որի խորհրդի անդամներ են ընտրվում Հակոբ Հովհաննիսյանը, Համբարձում Քեչեկը, Ալեքսանդր Թամանյանը, Արսեն Տերտերյանը, Աշոտ Հովհաննիսյանը: Նախագահ է ընտրվում Հայկ Գյուլիքեխյանը, փոխնախագահ՝ Մ. Աբեղյանը: Սակայն վեց ամիս պաշտոնավարելուց հետո հրաժարական տված նախագահի պաշտոնը հինգ տարի շարունակում է վարել Աբեղյանը՝ անընդմեջ միաձայն վերընտրվելով:

Մեծ հայագետի նկատմամբ անսահման ակնածանքի և վստահության դրսևորումը երկրի իշխանությունների կողմից արտահայտվում է նրանում, որ 1925 թ. Աբեղյանը ընտրվում է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ (վերընտրվում է 1927, 1929 թթ.), իսկ 1927 թ.՝ Երևանի քաղխորհրդի անդամ: Սակայն 1930-ական թթ. չարաբաստիկ մթնոլորտում, անձի պաշտամունքի հետ կապված, փոխվում է վերաբերմունքը նաև նրա նկատմամբ: 1930 թ. առանց պատճառի նա ազատվում է գիտության և արվեստի ինստիտուտի նախագահի պաշտոնից, սկսվում են ոտնձգություններ նրա դավանած գիտական տեսության դեմ:

Գիտության բնագավառում իրենց առաջին քայլերն անող երիտասարդ լեզվաբանների համար (Գ. Սևակ, Ա. Ղարիբյան) հարմար պայմաններ են առաջանում հինգ հոլովի ճշմարիտ տեսությունն առաջ քաշած հեղինակի դեմ ընդվզելու համար: Աբեղյանի մնան վիթխարի մի մեծության դեմ պայքարի լավագույն տարբերակը գաղափարական պայքարն էր: Աբեղյանին մեղադրում են ֆորմալիզմի մեջ՝ մեռած սեռական ու հայցական հոլովների «խրտվիլակները» աշխարհաբարում չընդունելու համար: Նրա ուսմունքը հռչակվում է իբրև իդեալիստական, հակա-

դիալեկտիկական, մետաֆիզիկական, հակամարքսիստական: Գա Գ. Սևակի հորջորջած «սերունդների պայքարն» էր, երիտասարդ սերունդի պայքարը ավագ սերնդի դեմ՝ ամբողջ ճակատով, չափ ու սահմաններ չճանաչող: Գործիք էին դարձրել նաև ուսանողությանը: Վիրավորված գիտնականը, որոշելով ընդմիջտ թողնել մանկավարժական աշխատանքը, գրավոր հրաժարական է տալիս<sup>2</sup>: Իր սկզբունքներին աներեր հետամուտ մեծ հայագետը մինչև իր կյանքի վերջը այլևս չդասախոսեց ԵՊՀ-ում:

1931թ. պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Ե. Չարենցի և Աբեղյանի միջև բանակցություններ են սկսվում «Սասնա ծռերի» գիտական հրատարակության վերաբերյալ: 1932-ին նրանց միջև կնքվում է պայմանագիր, ըստ որի՝ վեպի համահավաք բնագիրը կազմված էր լինելու 2 հատորից (100 մամուլ): Աբեղյանը Կ. Մելիք-Օհանջանյանի եռանդուն մասնակցությամբ 1936 թ. հրատարակում է առաջին հատորը: 2-րդ հատորը հրատարակվում է գիտնականի մահվանից հետո (1-ին մասը՝ 1944-ին, 2-րդը՝ 1951-ին): Կառավարությունը 1940 թ. Աբեղյանին, ինչպես նաև Գ. Աբովին և Ա. Ղանալանյանին պարզևատրում է հանրապետության գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: 1932 թ. նա ընտրվել էր նաև Հայաստանի Կենտգործկոմի նախագահությանն առընթեր ՀԽՍՀ բնակավայրերի անունների ճշգրտման հանձնաժողովի նախագահ՝ կապված օտար տեղանունները հայացնելու, եղածները ճշգրտելու հետ:

Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով Աբեղյանի՝ հայ գիտությանն ու մշակույթին մատուցած վիթխարի ծառայությունները, 1935 թ. նրան շնորհում է գիտության վաստակավոր գործչի կոչում: Նույն թվականի նոյեմբերի 20-ին, առանց ատենախոսության պաշտպանության, հիմնվելով առկա աշխատությունների վրա, Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը նրան շնորհում է հասարակական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

---

<sup>2</sup> Աբեղյան Մ., Երկեր, Ը հատոր, Եր., 1985, էջ 494:

1940 թ. Մ. Մաշտոցի մահվան 1500-ամյակի առթիվ Արեղյանը ձեռնամուխ է լինում Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի հրատարակությանը: Արդեն 1941-ին լույս է տեսնում այն՝ Արեղյանի կազմած բնագրով, քարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով: «Հայոց հին գրականության պատմությունը», «Վիպական երգեր», «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև «Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ» երկերը, կարելի է ասել, դառնում են մեծանուն գիտնականի կարապի երգը:

Ինչպես գրում է ակադեմիկոս Սարգիս Հարությունյանը Արեղյանի կյանքին ու գործին մվիրված հսկայածավալ մեծարժեք աշխատության մեջ<sup>3</sup>, կյանքի վերջին չորս տարիները տառացիորեն դառնում են մեծ գիտնականի հասարակական վերազնահատման ու մեծարման մի կարճ, բայց բովանդակալից ժամանակաշրջան: Հենց 1940-ական թվականներից են սկիզբ առնում ուսումնական ու գիտահետազոտական տարբեր հաստատություններից արդեն պատկառելի տարիքով գիտնականին զանազան եղանակներով իրենց աշխատանքների մեջ ներգրավելու զանազան առաջարկները: 1942 թ. դեկտեմբերին ԵՊՀ ռեկտորատը Արեղյանին նշանակում է բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր: 1943-ի ապրիլին գրականության և լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն Արեղյանի թեկնածությունն է առաջադրում ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու համար: Հաջորդ օրն իսկ ԵՊՀ գիտխորհուրդը ևս ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի բարձր կոչմանն է առաջադրում Մ. Արեղյանին: Իսկ 1944 թ. սկզբներին ակադեմիայի նախագահ Հովսեփ Օրբելու ցանկությամբ առաջադրվում է նրան ստանձնել ակադեմիայի գրականության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը, որից նա հրաժարվում է վատառողջ լինելու պատճառով<sup>4</sup>:

1944 թ. սեպտեմբերի 25-ին մեծ գիտնականը կնքում է իր մահկանացուն: Կարկառուն գիտնականի հիշատակը հավերժացնելու համար

---

<sup>3</sup> Կենսագրական շատ տվյալներ վերցված են Մ. Հարությունյանի «Մ. Արեղյան. կյանքը և գործը» գրքից (Եր., 1970):

<sup>4</sup> Նշվ. աշխ., էջ 133:

Ժողկոմսովետը որոշեց գրականության ինստիտուտը կոչել Մանուկ Աբեղյանի անունով:

Մ. Աբեղյանի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի բացառիկ դերը համալսարանական գիտության զարգացման գործում:

Դ. Դեմիրճյանը Աբեղյանի մահվան մասին գրել է. «Նա ընկավ հսկա կաղնու նման, և ծանր լուրջուն տիրեց անտառում»: Իսկ մահվան տարեկիցի առթիվ Երևանի քաղաքային պանթեոնում Ա. Իսահակյանը Աբեղյանի գերեզմանի մոտ ասում է հետևյալը. «Մանուկ Աբեղյան... Ի՞նչ էր մեզ համար նա. հայկական ավանդությունների մարմնացում, գիտնական՝ բառիս ամենախորին իմաստով, անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքի մարդ՝ մեր ապառաժների պես կայուն, մտքի և կամքի, աշխատանքի և գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ: Հավերժ սիրելի Մանուկ Աբեղյան... Բովանդակ հայությունը հարգում և պատկառում է քեզանից և քո մեծարժեք վաստակներից, և քո՝ մեզնից հեռանալը համազգային վիշտ է: Մենք խորապես զգում ենք, որ քո շնորհիվ մեր ազգային-հոգեկան միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով<sup>5</sup>»:

Մ. Աբեղյանը արգասաբեր գործունեություն է ծավալել հայագիտական գրեթե բոլոր բնագավառներում՝ առասպելաբանություն, ժողովրդական վիպասանություն ու էպոս, միջնադարյան քնարերգություն, ընդհանրապես հին ու նոր գրականություններ, տաղաչափություն: Ինչ վերաբերում է լեզվաբանական աշխատություններին, նշենք, որ դրանք նույնքան մնայուն ու կոթողային գործեր են: Նա հեղինակ է 200-ից ավելի լեզվաբանական ուսումնասիրությունների: Աբեղյանը հայ իրականության մեջ երիտքերականների հետևորդն էր: Լեզվի բնորոշման, փոփոխության, զարգացման և քերականության տեսական հարցերում գիտ-

---

<sup>5</sup> «Գրական թերթ», 1959, հ. 40:

նականը որպես ուղեցիղ ունեցել է հենց այդ դպրոցի մշակած սկզբունքները:

Է. Աղայանը գրում է. «Մ. Աբեղյանի քերականական ուսումնասիրությունների առաջին և մեծագույն արժեքն այն է, որ դրանց շնորհիվ մեր գրական լեզվի քերականական կառուցվածքի նկարագրությունը լիովին ու վերջնականապես ազատագրվեց գրաբարյան քերականական սխեմաներից և ունեցավ իր ուրույն սխեմաները»<sup>6</sup>:

«Աշխարհաբարի քերականություն» գրքի առաջաբանում նորարարգիտականը գրում է. «Երբեք նորաձևության փափագը չէ եղել մեզ առաջնորդ այդ փոփոխությունների համար, այլ միմիայն ճշտության և կատարելության ձգտումը (...): Մեր քերականությունները մինչև այժմ մեծ մասամբ օտար քերականությունների ընդօրինակություն են, որոնց բոլորի համար «լատիներեն լեզուն Պրոկրոստեսի անկողինն է եղել, որի վրա նոր լեզուները ծայրատել են կամ բռնի կերպով քաշքշելով երկարացրել»: Այս պատճառով, ի նկատի ունենալով նորագույն գիտական հետազոտությունները քերականության մասին, հայերենի քերականության բոլոր խնդիրները կրկին ու կրկին քննության ենք ենթարկել և երկար կշռադատելուց հետո միայն այս կամ այն փոփոխությունը մտցրել<sup>7</sup>»:

Մ. Աբեղյանը, արդարև, ժամանակակից հայոց լեզվի գիտական քերականության հիմնադիրն է: «Աշխարհաբարի քերականության» մեջ լեզվաբանը մանրակրկիտ ուսումնասիրել է բառակազմության, հոլովման ու խոնարհման հետ կապված մի շարք խնդիրներ: «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատության մեջ քննության է ենթարկել աշխարհաբարի շարահյուսական համակարգը, բացահայտել կապակցության տեսակներն ու բառերի պաշտոնները, հոլովների ու կապերի նշանակություններն ու կիրառությունները, քննել նախադասության անդամների համաձայնության ու շարադասության օրենքները, պարզ և բարդ նախադասությունների տեսակները, բայի եղանակների ու ժամանակնե-

---

<sup>6</sup> Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1958, էջ 150:

<sup>7</sup> Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, Առաջաբան, էջ Գ:

րի կազմության յուրահատկությունները և այլն: Գիտնականը նոր մակարդակի է հասցրել շարահյուսությունը՝ որպես քերականության առանձին, ձևաբանությանը հավասար ճյուղ:

Մ. Աբեղյանի լեզվաբանական հետազոտությունների թագն ու պսակը «Հայոց լեզվի տեսությունն» է, որի մեջ ամփոփված են հեղինակի տեսական ըմբռումները հայերենի բոլոր մակարդակների՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, ինչպես նաև համակարգային օրինաչափությունների վերաբերյալ: Լինելով առաջինը՝ Աբեղյանը համակարգել է ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը, պարզաբանել հնչյունափոխական շատ երևույթներ, հիմնադրել է բառագիտությունը իր երկու բաժիններով՝ իմաստաբանություն և բառակազմություն, քննել ածանցների ծագումն ու նշանակությունները, բարդության տեսակները:

Մ. Աբեղյանը ստեղծել է բայի կերպերի տեսությունը, պարզել խոնարհման համակարգի էությունը, ճշտել բայի եղանակաժամանակային ձևերը և այլն:

Նա գրել է նաև գրաբարի քերականություն («Գրաբարի համառոտ քերականություն», Վաղարշապատ, 1907, 1936; «Գրաբարի դասագիրք», գիրք 1, Թիֆլիս, 1915; «Գրաբարի դասագիրք», գիրք 2, Թիֆլիս, 1916): Աբեղյանը նաև հայոց լեզվի արդի ուղղագրության հիմնադիրն է: Հայ գիտության զարգացմանը մեծապես նպաստել են բեղուն գիտնականի կազմած բառարանները՝ «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան» (Տ. Հովհաննիսյանի, Ս. Մալխասյանի... հեղինակակցությամբ), «Ռուս-հայերեն ռազմական բառարան», «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան» (Լ. Հովհաննիսյանի և Ա. Տեր-Պողոսյանի հեղինակակցությամբ):

Անվանի լեզվաբան, բառարանագետ Աշոտ Սուքիասյանը այսպես է բնութագրել Աբեղյան բառարանագրին. «Դեռ 20-ական թթ. պրոֆ. Աբեղյանը հիմնովին հերքեց ժամանակակից հայերենի մասին տարածված այն առասպելը, ըստ որի հայոց լեզուն անընդունակ է իր սեփական միջոցներով ստեղծելու հասարակական-քաղաքական, գիտական և տեխնիկական տերմինաբանություն: Այդ... առասպելի հերքման փայլուն

ապացույցներն են պրոֆ. Աբեղյանի կազմած և հայոց լեզվի մեջ մտած հազարավոր բառերն ու տերմինները...»<sup>8</sup>:

Ականավոր գիտնականի թողած գիտական բարձրաթեք ժառանգությունը իր անխախտ տեղն է զբաղեցնում հայագիտության ոսկե ֆոնդում:

Ահա թե ինչպիսի տողեր է ձոնել Վահան Թոթովենցը մեծատաղանդ հայագետին. «Մանուկ Աբեղյան... Կարծես մի հին բաբելացի, որ զարմանալի քմահաճույքով ցանկացել է զարթնել և ապրել իբրև հայ քսաներորդ դարում:

Նրա դեմքի վրա դեռևս կան բաբելոնական աստվածների դաշույնների հարվածները: Լավ չհղկված ճակատ, խորը ակոսված կնճիռներ, որոնք լցված են գիտության փոշով, հնադարյան արձաններիին վայել քիթ, լայն և ժայռային դիմադրողականություն ունեցող ծնոտ,...աչքեր, որոնք հառնում են միայն զննելու համար... Եթե մենք մի բուպե կասկածեինք նրա ոչ բաբելոնացի լինելուն, բայց պարտավոր ենք անպայման հավատալ, որ նա թև թևի ման է եկել Մովսես Խորենացու հետ, վիճել, հակաճառել նրան և, թերևս, Խորենացուն երբեմն դեմ է տվել պատին իր երկաթյա տրամաբանությամբ և քաշվելով իր խուցը՝ զրի է առել մտքերը երկաթագրերով... Մանուկ Աբեղյանը 20-րդ դարի հայ խոշորագույն գիտնականներից մեկն է: Եթե նա ապրեր Ոսկեդարում, նրա երկերը հետնորդների համար կդառնային ամենաբազմազան ուսումնասիրության առարկա...»<sup>9</sup>:

**Քանալի բառեր** – *գիտական քերականություն, հոլով, շարահյուսություն, գրաբար, բառարանագրություն, ուղղագրություն, էպոս, առասպել, տաղաչափություն:*

---

<sup>8</sup> Տե՛ս նրա «Ռուս-հայերեն բառարանագրությունը սովետական իշխանության տարիներին» քեկնածուական ատենախոսությունը, էջ 79 (անտիպ):

<sup>9</sup> **Զարյան Ռ.**, Հուշապատում, հ. 2, Եր., 1977, էջ 225:

**АННА АБАДЖЯН – Жизнь и научная деятельность Манука Абеяна.** – Неоценим научный вклад М. Абеяна в развитие арменоведения. Известный академик проявил себя почти во всех областях арменоведения: фольклор, народный эпос, легенды, средневековая поэзия, древняя и современная литература, стихосложение, рифмика. Что касается лингвистических трудов, то они настолько же монументальны и значимы. М. Абеян – автор более 200 лингвистических исследований. Он по праву считается основоположником армянской научной грамматики. Его «Теория армянского языка» – классический незаменимый труд о всех уровнях армянского языка. Многогранный арменовед был также опытным создателем словарей, знатоком грабара, основоположником современной восточноармянской орфографии.

М. Абеян был в числе ученых, основавших ЕГУ и Академию наук Армении.

**Ключевые слова:** *научная грамматика, падеж, синтаксис, грабар, составление словарей, орфография, эпос, легенда, рифмика.*

**ANNA ABAJYAN – Manouk Abegyan’s life and scientific activity.** – M. Abeghyan’s scientific contribution to the development of Armenology is invaluable. The well-known academician penetrated into nearly all the aspects of Armenology; mythology, folk tales and national epic, medieval lyric poetry, ancient and new literature, metrics, etc.. What refers to his linguistic works, they are also everlasting and monumental. He is an author of more than 200 linguistic studies. He truly deserves the name of the founder of Armenian scientific grammar. His “Armenian Language Theory” about all the levels of the Armenian language is one of the irreplaceable classical works ever created. Many-gifted Armenologist M. Abeghyan is also a skilled lexicographer and master of Grabar (Old Armenian), as well as the founder of modern Eastern Armenian orthography. M. Abeghyan is also one of the founder-scientists of YSU and National Academy of Sciences of Armenia.

**Key words:** scientific grammar, case, syntax, grabar, lexicography, orthography, epic, legend, metrics.

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՊԵՍ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ  
ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱՇՐՁԱՆ**

Գրական հայերենի շրջանաբաժանման հարցը հարյուր և ավելի տարիներ շարունակ գիտական հետաքրքրությունների առանցքում է: Եվ այն տպավորությունը կա, թե հարցը վերջնական լուծում ստացավ 1951 թ. Գևորգ Ջահուկյանի կարդացած գիտական զեկուցումով, որը հետագայում որոշ փոփոխություններով վերահրատարակվեց այլևայլ աշխատություններում:

Շրջանաբաժանման հիմքում Ջահուկյանը դնում է երեք սկզբունք: **1.** Լեզվի պատմությունը տվյալ լեզվի բոլոր տարատեսակությունների պատմությունն է: **2.** Շրջանաբաժանումը չպետք է հասկացվի բացարձակ իմաստով. «այն առավել կամ պակաս չափով հարաբերական բնույթ ունի»: **3.** Լեզվի ու նրա զարգացման օրենքները սերտ կապի մեջ են ժողովրդի պատմության հետ<sup>1</sup>: Այս մոտեցմամբ առանձնացվում է հայոց լեզվի պատմության երեք փուլ՝ հին շրջան (5-11), միջին շրջան (12-16), նոր շրջան (17-ից մինչև մեր օրերը): Գիտական շրջանառության մեջ դրված այս տեսակետը այսօր պաշտպանվում է առանց վերապահության: Սակայն շուրջ յոթ տասնամյակի պատմություն ունեցող մոտեցումները, մեր կարծիքով, որոշ բացատրությունների և ճշգրտումների պահանջ ունեն:

Անդրադառնանք առաջին սկզբունքին, որը, կարծում ենք, ամենից էականն է. **լեզվի պատմությունը տվյալ լեզվի բոլոր տարատեսակությունների պատմությունն է:** «Լեզվի պատմության շրջանաբաժանումը, գրում է Գ. Ջահուկյանը, պետք է արտացոլի լեզվի պատմության տարբեր շրջաններում այդ տարատեսակների փոխհարաբերության մեջ կատարված տեղաշարժերը, որոնք արտացոլվում են լեզվի զարգացման

---

<sup>1</sup> **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 33-35:

օրենքների մեջ»<sup>2</sup>: Ասել է թե՛ լեզվաբանը չի փորձում տալ հայերենի միայն գրական արտահայտությունների պատմության շրջանաբաժանումը: Այս մոտեցմամբ թեև հասկանալի կարող էր թվալ միջին հայերենի առանձնացումը որպես առանձին շրջափուլ, բայց այս դեպքում էլ բաց էր մնում լեզվի մյուս տարատեսակությունների, օրինակ, բարբառների խնդիրը. 15-16-րդ դարերում բարբառների ակտիվացումը արդյոք առանձին շրջափուլ էր, թե՞ ենթաշրջան միջին հայերենի համակարգում: Բայց իր սկզբունքները շարադրելիս Ջահուկյանը անում է ևս մի վերապահություն. նա նկատում է, որ լեզվի գրային շրջանի մասին խոսելիս, «այնուամենայնիվ, մենք ստիպված ենք մեծ մասամբ սահմանափակվել գրական լեզուների պատմությամբ՝ այլ կարգի տվյալների խիստ սահմանափակության պատճառով»<sup>3</sup>: Այս մոտեցումը որդեգրելուց հետո, երբ հայոց լեզվի բոլոր տարատեսակությունների պատմության շրջանաբաժանման փորձը ի վերջո օբյեկտիվորեն հանգում է գրական լեզուների շրջանաբաժանման, լեզվաբանին այլ բան չէր մնում, քան միջին հայերենը արհեստականորեն տեղավորել հայոց գրական լեզուների պատմական շրջայի մեջ՝ նրան վերագրելով գրական լեզվի հատկանիշներ: Ջահուկյանը սրանով պայմանականորեն ընդլայնում է առհասարակ գրական լեզվի ըմբռնման սահմանները՝ նրա հիմնական հատկանիշ համարելով ոչ թե կամ ոչ այնքան կայուն լեզվական որակ ունենալը, որքան քիչ թե շատ չափով նորմավորված լինելը: Այսօր խիստ հստակեցված են գրական լեզվի ըմբռնման շրջանակները. միջին հայերենը ոչ մի կերպ չի տեղավորվում այդ շրջանակներում: Միջին հայերենով զբաղվող բոլոր լեզվաբանները հատուկ շեշտել են այն միտքը, որ, այնուամենայնիվ, միջին հայերենը չունի կայուն լեզվական որակներ, և որ միջին հայերենը գրական լեզվի կարգավիճակի չհասավ: Ինքը՝ Ջահուկյանը ևս, բուն միջին հայերենի շրջափուլի մասին խոսելիս մեկ անգամ չէ, որ ընդգծում է այդ միտքը. միջին հայերենը, գրում է նա, «մշակման որոշակի հունի մեջ չի դրվել և անմիօրինակ է», միջին հայե-

---

<sup>2</sup> **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 33:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 34:

րենը այդպես էլ չկարողացավ հասնել ընդհանուր գրական լեզվի աստիճանին<sup>4</sup>:

Այդ դեպքում ո՞րն է **միջին գրական** անվանված հայերենի տեղը գրավոր հայերենի զարգացման պատմության մեջ:

Կուզեինք ձեր ուշադրությունը հրավիրել մեթոդաբանական մի կարևոր խնդրի վրա. արևելահայ բոլոր քերականները, ովքեր զբաղվել են հայերենի այսպես կոչված պերիոդիզացիայի հարցերով, ելակետ են ունեցել հիմնականում արևելահայերենի տվյալները, աշխարհաբար հայերենի սահմանները գծել են արևելահայ աշխարհաբարի սահմաններով: **Գուրգեն Սևակը**, ով առաջին լուրջ փորձը կատարեց գրական հայերենի զիտական շրջանաբաժանման, նույնիսկ ի սկզբանե հայտարարում է, որ ինքը «անհրաժեշտ է համարում վերանայել մեր ազգային գրական լեզվի՝ **արևելյան գրական աշխարհաբարի** սկզբնավորման հարցը»: Նրա «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» աշխատության մեջ հարցին նվիրված բաժինը հենց այդպես էլ կոչվում է՝ «Արևելահայ գրական լեզվի պատմության պերիոդիզացիա»<sup>5</sup>: Հարցին անդրադարձած արևելահայ մյուս լեզվաբանները՝ Ս. Ղազարյան, Գ. Ջահուկյան, Հ. Կուսիկյան և ուրիշներ, չեն դիտարկում տարբերակված մոտեցման խնդիրը և, որքան էլ տարօրինակ է, չեն քննարկում նաև Սևակի այդօրինակ մոտեցման պարագան, չնայած իրենք իսկ հարցի քննարկումները մեզ մատուցում են նույն ելակետից և նույն մոտեցմամբ, երբ միջին հայերենի և աշխարհաբարի սահմանագիծ են հռչակում 17-րդ դարը:

Այս սահմանագծումը կարծես թե համոզիչ է, երբ վերլուծության հիմքում դրվում են առավելապես արևելահայերենի իրողությունները: Հայտնի է, որ ուշ միջնադարում՝ 15-16-րդ դարերից սկսած, բարբառների ակտիվացմանը զուգահեռ, աշխուժանալ սկսեցին հատկապես արևելահայերենի լեզվատարրերը՝ **-ում** և **-իս** վերջավորությամբ անկատար դերբայների ձևերը, եզակի հրամայականի **-իր** վերջավորությունը (**հետևիր**, **խոստովանիր**), **ե** խոնարհման պարզ բայերում հոգնակի հրամայակա-

<sup>4</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 45:

<sup>5</sup> **Սևակ Գ.**, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Եր., 1948, էջ 9-19:

նի՝ միայն արևելահայերենին հատուկ արմատական-հիմքային կազմությունները (**կանչե՞ք, խմե՞ք, ծիծաղե՞ք**), բարբառային **էս-, էդ-, էն-**ը և դրանցով բաղադրված ձևերը, **ոնց** բառը, որը միայն արևելահայերենին բնորոշ հատկանիշ է: Ակտիվացան նաև արևելահայերենը բնութագրող այլ լեզվատարբեր, որոնք անմիջականորեն ածանցվում էին ոչ թե արևելահայ բարբառներից, այլ գրաբարից (բացառականի **-ից-**ը, ներգոյականի **-ում-**ը, վաղակատարի **-ել-**ը և այլն): Լեզվի աշխարհական որակների էական փոփոխության տպավորություն ստեղծվեց 16-17-րդ դարերում: Տեսանելի դարձավ արևմտահայ-արևելահայ կողմնորոշումը կամ, Է. Աղայանի խոսքերով ասած, «երկու հակադիր երևույթների բախումը», որը ի վերջո հանգեցրեց արևմտահայ աշխարհաբարից արևելահայ ճյուղի տարանջատմանը:

Սակայն պատկերը փոքր-ինչ այլ է, երբ քննարկման առարկան արևմտահայերենն է: Արևմտահայերենի տարրերը ակտիվ կիրառության մեջ էին տակավին վաղ միջնադարից սկսած: Հաստատապես կարելի է ասել, որ միջին հայերենում առկա են գրական արևմտահայերենի բոլոր իրողությունները՝ որպես արևմտահայ բարբառների լեզվական փաստեր: Դրա մասին է վկայում միջին հայերենի և արևմտահայերենի հնչյունային, բառային և քերականական փաստերի ամենապարզ համադրությունն անգամ:

Բազմաթիվ օրինակներից բերենք ընդամենը մեկ-երկուսը: Միջին հայերենում առկա է գրական արևմտահայերենին հատուկ **հնչյունական և հնչյունափոխական բոլոր իրողությունների աստիճանական զարգացումը**՝ պայթական բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխություն, **ո/ր** արտասանական հակադրության չգոյություն, **ա** և **ե** ձայնավորների՝ արևմտահայերենին հատուկ հնչյունափոխական դեպքեր՝ **մոռնալ, գիտնալ, հիննալ**, հոլովական ձևերում և հոգնակիակազմության մեջ անհնչյունափոխ բաղադրական հիմքով կազմություններ՝ **տուներ, ջուրեր, ձուկեր, որդիի, գարունի**, արևմտահայերեն-միջին հայերեն բառային միավորների (**հոս, հոն, քով, աստեն, աղեկ, աղվոր**) ակտիվ գործածություն, բայական համակարգում կրավորականի՝ արևմտահայերենին բնորոշ հատուկ ձև՝ **-ուիլ** վերջավորությամբ, **-եր** վերջավորությամբ

վաղակատար դերքայով և հարակատարով ժամանակաձևերի կիրառություններ՝ **չէ տեսեր, իջեր, տագնապեր է, չէ տեսած, գրած է**. միջին հայերենում օրինաչափ է եզակի հրամայականի՝ **ես>է** հնչյունափոխված վերջավորությամբ ձևերի օգտագործումը, մի բան, որ **ե, ի** լծորդության պարզ բայերի համար կանոնական դարձավ արևմտահայ գրականում՝ **չփէ, մաղէ, խառնէ, յիշէ**: Տարածված կազմություններ են արգելական հրամայականի **մի՛ պահեր, մի՛ վառեր, մի՛ թողուր** ձևերը: Ներկայի **կու / կը / կ՛**-ով համադրական կազմությունը միջին հայերենի բացարձակ հատկանիշն է: «Միջին հայերենով գրող ոչ մի հեղինակ չի խուսափել այս մասնիկից՝ սկսած Ներսես Շնորհալուց մինչև Ֆրիկ, Երզնկացիները և հետագա միջնադարյան մեր մյուս տաղերգուները<sup>6</sup>»: Այդ մասնիկի գործածությունը Այտընյանը համարում է նոր լեզվի մեջ «գլխատր կերպարանափոխութիւն յառաջ բերող», այդ լեզուն գրաբարից զատող և առանձին կերպով **աշխարհաբարի դրոշմ տվող** հատկանիշներից: Միջին հայերենի և արևմտահայերենի ուսումնասիրողներից Սամվել Անթուսյանը բայական համակարգի մասին պիտի արձանագրեր. «Արևմտահայ գրականի ձևերը ամբողջությամբ համընկնում են միջին հայերենի ձևերին»<sup>7</sup>: Միջին հայերենի բուն լեզվական որակի կարճ և դիպուկ բնութագրությունը թերևս կարելի է տալ լեզվաբան Գրիգոր Ղափանցյանի խոսքերի համաբանությամբ. «Միջին հայերենը բարևից մինչև ցտեսություն արևմտահայերեն է»:

Բերված օրինակները և փաստերը գերազանցապես 12-14-րդ դարերի մատենագրությունից են: Հետագա դարերում ավելի ընդգծվեցին նրշված հատկանիշները: Առանձին իրողություններ կայունացան: Բայց շատերը մնացին չնորմավորված՝ երկընտրության կամ եռընտրության մեջ: Հայոց լեզվի զարգացումը ազգային-քաղաքական կյանքի վայրիվերումների պատճառով իր բնական ու տրամաբանական վախճանին չհասավ միջին դարերում. դա տեղի ունեցավ շատ ավելի ուշ՝ 19-րդ դարի վերջերին և 20-ի սկզբներին՝ արևմտահայ գրական աշխարհաբարի կերպարանքով:

<sup>6</sup> «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 322:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 319-320:

Հարցի վերաբերյալ ուշագրավ դիտարկումներ ունի **Արսեն Այտընյանը**: Իր բառերով ասած՝ «աշխարհաբար կամ ժողովրդական ստորին լեզուի մը գոյութիւնը» հաստատող տարրերը մա փնտրում է 5-7-րդ և հետագա դարերի հայ մատենագրութեան մեջ: 7-րդ դարը նկատու է սահմանագիծ հին և նոր լեզուների՝ գրաբարի և «նախնեաց ռամկօրէնի» միջև: Ի վերջո արևմտահայ լեզվաբանը գալիս է այն համոզման, որ «գրեթէ հիմնական լեզուն (նկատի ունի իր ժամանակի՝ 19-րդ դարի արևմտահայ աշխարհաբարը. **Ա. Յու.**) ըստ էական մասին արդէն ձեւացած էր ասկէ իբր 7 դար յառաջ»<sup>8</sup>: Նոր հայերենի ձևավորման և հնից գատվելու ժամանակաշրջանը Արսեն Այտընյանը փաստորեն հասցնում է 12-13-րդ դարեր:

**Մանուկ Աբեղյանը** հայերենի պարբերացման խնդրին հատուկ չի անդրադարձել: «Հայոց լեզվի տեսութեան» Ներածութեան մեջ փորձել է համառոտ ուրվագծել գրավոր հայերենի անցած ճանապարհը՝ հիմնականում հետևելով ընդունված կարծիքներին: Գուսանական երգերի առիթով միջին հայերեն-արևմտահայերեն սերտ կապի մասին Աբեղյանը կատարում է հետաքրքիր դիտարկում. միջին հայերենը, գրում է մա, «իր հնչյունների դրոշմայն և քերականությամբ պատկանում է արևմտյան բարբառներին և համարվում է Կիլիկիայում խոսված բարբառը»<sup>9</sup>:

**Հրաչյա Աճառյանը** հստակ գծված շրջանաբաժանում չի տալիս, չի անդրադառնում դրա սկզբունքներին, այսուհանդերձ, լեզվի պատմական զարգացման և կրած փոփոխությունների վերաբերյալ նրա արտահայտած կարծիքների տրամաբանությամբ՝ հայերենի զարգացման պատմութեան մեջ հստակորեն առանձնացվում է երկու շրջավուլ՝ **գրաբար և աշխարհաբար**: Չարգացման փուլերը տարբերակելիս Աճառյանը նշում է, որ «Ինչպէս գրաբարի և միջին հայերենի սահմանը որոշելու համար կարելի չէ դնել մի որևէ վճռական կետ, նույնպէս մա միջին

---

<sup>8</sup> **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 151:

<sup>9</sup> **Աբեղյան Մ.**, Հին գուսանական ժողովրդական երգեր, ՀՄԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Եր., 1972, թիվ 2-3, էջ 225:

հայերենի և աշխարհաբարի համար»<sup>10</sup>: Աշխարհաբարի հնագույն գնումները փնտրում է 14-րդ դարի մատենագրության մեջ և արձանագրություններում: Այտրնյանի հետևողությամբ հնագույն գնում է համարում Բջնիի արձանագրությունը: Նշվում են նաև այլ օրինակներ:

Գրական հայերենի պատմության երկու հիմնական փուլերի գոյության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ 19-րդ դարում գրապայքարը ծավալվեց գրաբարի և աշխարհաբարի միջև և ոչ թե գրաբարի ու միջին հայերենի: Դա ըստ էության պայքար էր պաշտպանելու համար բնականոն ճանապարհով ձևավորված նոր հայերենի իրավունքները, որը միայն խիստ պայմանականորեն կոչվել է միջին հայերեն:

Անվանումների մասին պիտի ավելացնել նաև հետևյալը. **գրաբար**-ը գրի բառ էր՝ գրքի խոսք, **աշխարհաբար**-ը աշխարհիկ խոսք էր՝ աշխարհի բառ, և իր հասկացական նշանակությամբ հակադրվում էր գրաբարին: **Միջին հայերեն** անվանումը այս տրամաբանությամբ չի ենթարկվում և ընդամենը պիտի ընկալվի որպես աշխարհաբարի նախապատրաստական շրջափուլի կամ վաղ աշխարհաբարի պայմանական անվանում: Միջնադարի շատ մատենագիրներ հենց այդպես էլ ընկալում էին իրենց գործածած լեզուն և այդ լեզվով ստեղծվող արժեքների գործառնական նշանակությունը: Մխիթար Հեռացուց, Ֆրիկից, Երզնկացիներից մինչև Գրիգորիս Աղթամարցի, Նաղաշ Հովնաթան և ուրիշներ այդ մտքով են տոգորված եղել, այն է՝ գրել աշխարհիկ կամ աշխարհական լեզվով, աշխարհի բառով, ռամկորեն կամ ռամկական հայերենով: Իր «Անգիտաց անպետ» գրքի վերջում Ամիրոդովաթ Ամասիացին նշում է պատճառներ, որոնք դրդել են իրեն երկը գրելու աշխարհաբարով. «Եւ այլ ասենք,- գրում է նա,- թէ էր եղաւ այս գիրքս աշխարհաբառ: Եւ այս երեք պատճառի: Ա այն է՝ որ ամենայն մարդ չկարէ քերական կարդալ, և կամ արտաքին գրեանք, որ յայս խրթին բառերն յիմանայ. այնոր համար եղաւ աշխարհաբառ....»<sup>11</sup>:

---

<sup>10</sup> **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, էջ 441:

<sup>11</sup> Տե՛ս **Մկրտչյան Է.**, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980, էջ 26:

Այսպիսով՝ գրական հայերենի պատմության համար առաջարկվում է հետևյալ շրջանաբաժանումը՝ իին շրջան կամ **գրաբար** (5-12-րդ դարեր), **աշխարհաբար** (12-ից մինչև այսօր). 12-18-րդ դարերը աշխարհաբարի ձևավորման կամ **վաղ աշխարհաբարի** ենթաշրջանն է, պայմանականորեն՝ միջին հայերեն, բայց ոչ երբեք միջին գրական հայերեն: 1920-ականներից սկսում է **ժամանակակից** կամ **արդի հայերենի** ենթաշրջանը՝ երկու տարբերակներով՝ արևելահայերեն և արևմտահայերեն:

**Քանալի բառեր** – *լեզվի պարմություն, գրական հայերեն, շրջանաբաժանում, հարաբերական բնույթ, միջին հայերեն, արևելահայ աշխարհաբար, երկնյուղ հայերեն, արևմտահայերենի ձևավորման ենթաշրջան:*

**ЮРИЙ АВЕТИСЯН – Среднеармянский как начальный этап западноармянского ашхарабара.** – В истории развития литературного армянского языка принято выделять три этапа: грабар (древнеармянский), среднеармянский, ашхарабар (новоармянский). На основе новейших взглядов на литературный язык в статье поддерживается точка зрения, согласно которой по своим языковым характеристикам среднеармянский язык не может рассматриваться как особый вариант литературного языка и занимать место в его периодизации. Он представляет собой всего лишь начальный этап западноармянского ашхарабара. Таким образом, в истории литературного армянского языка следует выделять два периода – грабар и ашхарабар.

**Ключевые слова:** *история языка, литературный армянский, периодизация, релятивный характер, среднеармянский, восточноармянский ашхарабар, две ветви языка, начальный этап западноармянского языка.*

**YURI AVETISYAN – Middle Armenian as a Subperiod of the Formation of Western Armenian.** – It is adopted to distinguish three stages in the history of the development of literary Armenian, i.e. Old Armenian, Middle Armenian and New Armenian. The author, proceeding from the latest principles of defining a language, is trying to develop the view that Middle Armenian with its language qualities cannot be considered as a version of a literary language and be placed in the chain of this

phase division. It is only the pre-stage of the formation of Western New Armenian. Therefore, two phases should be distinguished for literary Armenian: Old Armenian and New Armenian.

**Key words:** *history of language, literary Armenian, phase division, relative character, Middle Armenian, Eastern New Armenian, two-branched Armenian, subperiod of the formation of Western Armenian.*

**ԲԱՐԲԱՌ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԼԵՁՈՒ**

Հայ լեզվաբանական միտքը զգալի ձեռքբերումներ ունի բարբառների ուսումնասիրության ոլորտում թե՛ տեսական և թե՛ գործնական առումներով: Բարբառների ուսումնասիրության տեսական հարցեր արծարծվել են Ք. Պատկանյանի, Ա. Այտընյանի, Լ. Մսերյանցի, Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Ա. Ղարիբյանի, Ա. Գրիգորյանի, Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի, Հ. Մուրադյանի, Ա. Խաչատրյանի, Մ. Աղաբեկյանի, Ա. Հանեյանի, Դ. Կոստանդյանի, Գ. Գևորգյանի և այլոց աշխատություններում: Գործնական նպատակներ հետապնդող՝ առանձին բարբառների նվիրված մենագրական աշխատություններում և բարբառային երևույթների հետազոտությանը նվիրված աշխատանքներում նույնպես եղել են տեսական բնույթի դիտարկումներ: Սակայն հայ բարբառագիտության մեջ բուն տեսական հարցերի նվիրված ամբողջական աշխատանքներ չեն կատարվել: Ուստի հարկ է քննության առարկա դարձնել բարբառագիտական ուսումնասիրության համար տեսական կարևոր նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ, հատկապես՝ ելակետային այնպիսի հարց, ինչպիսին է բարբառի ըմբռնումը:

Հայ բարբառագիտության հիմնադիրները բարբառի մեկնաբանության հարցում ուշադրության արժանի մի շարք դիտարկումներ են կատարել: Դեռևս Ք. Պատկանյանը բարբառները բնորոշել է իբրև տվյալ լեզվի տեսակներ (виды): Ըստ նրա՝ ինչպես չկա ազգ՝ առանց ցեղերի, այդպես էլ չի կարող լինել լեզու՝ առանց բարբառների: Չկա մի ժողովուրդ, որն իր բնակության ողջ տարածքում կխոսեր միևնույն բարբառով<sup>1</sup>: Նկատենք, որ «լեզվի տեսակ» բնութագրումը, մեր պատկերացմամբ, չի նշանակում այդ լեզվից առանձին, դրանից դուրս եղող իրողություն. լեզվի տեսակը հենց նույն լեզուն է՝ յուրահատուկ դրսևորմամբ:

<sup>1</sup> Տե՛ս **Патканов К.**, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869, էջ 2:

Ա. Այտընյանի պատկերացումը բարբառի մասին թերևս ներկայացնում են 5-րդ դարի ռամկական լեզվի մասին հետևյալ տողերը. «Բնական է մտածել՝ որ երբ մէկ կողման է դարբաց դասու մը տկար եղեգներուն յեցած ազնուագոյն լեզուն իւր գոյութիւնը հաստատ բռնել կը ջանար, միւս կողմանէ ժողովրդեան բազմութիւնն իւր ցածագոյն բարբառը՝ նորանոր փոփոխութիւններովն ու աղաւաղութիւններովը մէկտեղ կը շարունակէր»<sup>2</sup>: Սի կողմ թողնելով ժամանակին բնորոշ քյուրքմբռնումը (ցածագոյն բարբառ, աղաւաղութիւններ)՝ կարծում ենք, որ այստեղ կարևոր է այն, որ ի տարբերություն գրական լեզվի՝ բարբառը դիտվում է իբրև լեզվի՝ մշակման չենթարկվող, փոփոխությունների առավել ենթակա տարրերակ:

Հետաքրքրական է բարբառի աճառյանական ըմբռնումը. «Լեզուն ներկայացնում է անթիվ-անհամար զանազանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հարևանի հետ, ուրիշ երևույթներ, որոնք նույն կամ նման են այն հարևանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջությամբ նույնը լիներ մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ...»<sup>3</sup>: Այսինքն՝ ցանկացած տարածքում լեզուն դրսևորվում է իբրև հատկանիշների յուրահատուկ ամբողջություն՝ այլ վայրերի համանման դրսևորումների հետ ունենալով ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ, և բարբառները, փաստորեն, լեզվի գոյության բնական ձևերն են:

Անդրադառնալով բարբառներին՝ Մ.Աբեղյանը գրում է. «...Բարբառ կոչվում է նույն լեզվին պատկանող մարդկանց մի մասի տեղական խոսվածքը, որ ուրիշ տեղական խոսվածքներից տարբերվում է որոշ չափով»<sup>4</sup>: Այսպիսի սահմանումը որոշակիորեն նման է Պատկանյանի բնութագրմանը, և Աբեղյանը նույնպես, փաստորեն, կարծում է, որ բար-

---

<sup>2</sup> Այտընյան Ա., Բնական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վ., 1866, էջ 48:

<sup>3</sup> Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 2013, էջ 324-325:

<sup>4</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 47:

բառը հենց նույն լեզուն է՝ տվյալ տարածքի լեզվակիրներին բնորոշ յուրահատկություններով:

Ցավոք, բարբառի բուն էությունը հասկանալուն և բացատրելուն միտված այս դիտարկումները անտեսվեցին, երբ իրողությունը սկսեցին ներկայացնել այսպես կոչված «ստալինյան լեզվաբանական ուսմունքի» լույսի ներքո: Մեկընդմիջտ տրված, հայ իրականության մեջ մինչև այժմ էլ ընդունված դարձավ այն սահմանումը, համաձայն որի՝ «բարբառներն ընդհանուր լեզվի ճյուղավորումներն են»<sup>5</sup>: Բարբառներին վերստին վերագրվեց ընդհանուր լեզվի ստորին ձևերի կարգավիճակ<sup>6</sup>: Ա. Ղարիբյանի կարծիքով՝ «Բարբառների հարատևումը ժողովրդի դարավոր հետամնացության հետևանք է եղել, ուստի նրանք սովետական կարգերում, ոչ շատ հեռու ապագայում պիտի անհետանան», և այդ պատճառով էլ «բարբառների ուսումնասիրության հարցը հույժ շտապողականություն պահանջող հարց է»<sup>7</sup>: Խորհրդային լեզվաբանության մեջ բարբառների ընկալումը իբրև անցյալի մնացուկներ, ինչպես նշվում է ռուս բարբառագիտության մեջ<sup>8</sup>, պայմանավորված էր ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական գործոններով: Մի կողմից՝ գյուղացիությանը գյուղատնտեսական բանվոր դասակարգի վերածելու նպատակադրումով 1930-ական թվերից ձևավորվում է բացասական վերաբերմունք գյուղացիության, նրա մշակույթի և կենցաղի, բարբառների՝ իբրև գյուղական լեզվի նկատմամբ, մյուս կողմից՝ նույն այդ շրջանում քաղաքական գործիչներն ու փիլիսոփաները առաջ են քաշում ազգային մշակույթների և լեզուների մերձեցման գաղափարը, որի արդյունքում սոցիալիստական հասարակության մեջ աստիճանաբար պետք է վերանային տարբեր լեզուները, և ձևավորվեին միասնական մշակույթ ու

<sup>5</sup> Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 39:

<sup>6</sup> Տե՛ս **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 3:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 4: Գուցե և նշանավոր բարբառագետը ստիպված էր բարբառների մասին հայտնել ստալինյան ուսմունքի ոգուց բխող կարծիք, մանավանդ որ մեծապես կարևորում էր բարբառների դերը լեզվի ուսումնասիրության հարցում (տե՛ս նույն տեղում), սակայն բարբառի նկատմամբ մեծան պատկերացումները լայն տարածում ստացան և հայ իրականության մեջ այսօր ևս գերիշխող են:

<sup>8</sup> Տե՛ս Русская диалектология, Под редакцией Л. Касаткина, М., 2005, էջ 13-14:

միասնական լեզու, որի հիմքում պետք է ընկած լիներ գրական ռուսաց լեզուն<sup>9</sup>: «Համաձայն դրա էլ ռուսաց լեզվի բարբառները (բնականաբար նաև այլ լեզուների, այդ թվում՝ նաև հայերենի բարբառները – Վ.Կ.) հըր-չակվեցին անցյալի մնացուկ, շեղում գրական լեզվից, նրա աղավաղում»<sup>10</sup>:

Հ. Աճառյանը դեմ էր բարբառները լեզվի ստորին վիճակներ համարելուն և նման պատկերացումներում որոշակի վտանգ էր տեսնում՝ գրելով. «Բարբառները բոլորն էլ իրար հավասար են. բայց հենց որ նրանցից մեկը իշխանության գլուխ անցավ, սկսում է տիրել անհավասարության զգացմունքը: Խոսողները իրենք են սկսում արհամարհել իրենց լեզուն և զգում են այն՝ ստորին աստիճանի վրա: Սկսում է տիրել այն սխալ կարծիքը, թե բարբառը մայրաքաղաքի լեզվից ցածր է արժանիքով ու պատվով և կամ տիրող կամ գրական լեզվի հետին աղավաղյալ ծնունդն է: Լեզվաբանի համար բոլոր բարբառներն էլ ներկայացնում են մի տիպի շարունակական ձևափոխությունները: Լեզուն կամ նաև գրական լեզուն էլ բարբառներից մեկն է և հաճախ ավելի ուշ կազմված, քան մի ուրիշ բարբառ: Տգիտություն է բարբառներից մեկը մյուսին ստորադաս համարելը: Որևէ լեզվի պետական լինելը (քաղաքական պատիվ) կամ ճոխ գրականությամբ մշակված լինելը (գրական պատիվ) արժեք չունի գիտության համար: Բոլոր արդի լեզուներն էլ մի ժամանակ բարբառ էին մի ուրիշ, այս կամ այն ավելի հին լեզվի, իսկ հին լեզուները նույնպես բարբառ էին զանազան մայր լեզուների և այլն: Եթե կա նախապատվության զգացմունքը բարբառների միջև, ինքնին հասկանալի է, որ նույնը ավելի մեծ չափերով պիտի լինի նաև լեզվից լեզու և հատկապես տիրող ազգերի և նվաճված ազգերի լեզվի միջև»<sup>11</sup>: Բարբառի աճառյանական այս ըմբռնումին համահունչ պատկերացում ենք գտնում 20-րդ դարավերջի անգլիական բարբառագիտական աշխատանքում, որի հեղինակների համոզմամբ՝ ինչպես անգլերենի ցանկացած

<sup>9</sup> Стів Русская диалектология, Под редакцией Л. Касаткина, М., 2005, էջ 13-14:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>11</sup> **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Եր., 1955, էջ 140:

դրսևորում, ստանդարտ անգլերենը ևս նույն հաջողությամբ բարբառ է, և չպետք է կարծել, թե որևէ բարբառ լեզվաբանական առումով գերադասելի է մյուսներից<sup>12</sup>:

Ինչևէ, հայ իրականության մեջ բարբառի բնութագրման հարցում, կարելի է ասել, հետագա առաջընթաց տեղի չի ունեցել, և լեզվի ճյուղավորում լինելը մնում է իբրև այդ իրողության՝ համընդհանուր ընդունելության արժանացած որակում<sup>13</sup>: Մասնավորապես, Է. Աղայանի բնորոշմամբ՝ բարբառ է կոչվում ընդհանուր լեզվի ճյուղավորումը հանդիսացող այն համակարգը, որն իր յուրահատկություններով ընդհանուր է հասարակության այս կամ այն հատվածին՝ որոշ տարածքի վրա<sup>14</sup>:

Թվում է, որ նման մեկնաբանությունը չի բացահայտում բարբառ երևույթի բուն էությունը և մոտավոր պատկերացում է տալիս դրա մասին: Անհասկանալի է մնում, թե ինչ պետք է հասկանալ ճյուղավորում ասելով՝ շեղում, աղավաղում, տրոհում կամ՝ յուրահատկություններ ունեցող ամեն մի տարածական լեզվավիճակ արդյո՞ք բարբառ է, և ի վերջո ո՞րն է տարածական ընդգրկման սահմանը: Թերևս չբավարարվելով հիշյալ սահմանումով՝ Է. Աղայանը նկատել է, թե հենց այն, ինչը որ առանձնացնում, տարբերում է բարբառը ընդհանուր լեզվից, կազմում է բարբառի էությունը<sup>15</sup>:

Ըստ Է. Աղայանի՝ բարբառները ոչ այլ ինչ են, եթե ոչ ընդհանուր լեզվի ձևավորված վիճակը այս կամ այն տարածքում<sup>16</sup>: Հետևում է, որ պետք է ընդունել որոշակիորեն միասնական քերականություն, բառապաշար ու հնչյունական համակարգ ունեցող ընդհանուր մի լեզվավիճակի նախնական գոյությունը, որը և այս կամ այն տարածքում ենթարկվել է ձևավորությունների՝ առաջ բերելով բարբառներ:

---

<sup>12</sup> Տե՛ս **Chambers J., Trudgill P.**, *Dialectology*, Cambridge, 1980, էջ 3:

<sup>13</sup> Տե՛ս **Գրիգորյան Ա.**, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, էջ 9, **Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուկյան Թ.**, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 59:

<sup>14</sup> Տե՛ս **Աղայան Է.**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 92:

<sup>15</sup> Տե՛ս **Աղայան Է.**, նշվ աշխ., էջ 93:

<sup>16</sup> Նույն տեղում:

Այսպիսով, բարբառների առաջացումը պայմանավորվում է ոչ թե լեզվի նախնական՝ բարբառային վիճակում<sup>17</sup> տեղի ունեցող բնական գործընթացներով, այլ ընդհանուր լեզվի ձևավոխություններով<sup>18</sup>: Կարծիք է եղել նաև, թե իբր պարտված, մահացող լեզուները, ենթարկվելով և խառնվելով հաղթած լեզվին, առաջացնում են նրա բարբառները<sup>19</sup>: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ բարբառները հնագույն շրջանում առաջանում են տոհմերի, ցեղերի տրոհման, բաժանման միջոցով, հետագայում՝ դրանց միացման ճանապարհով և այլն<sup>20</sup>:

Բարբառների առաջացման վերաբերյալ եղած բոլոր այս տեսակետներն էլ, ի դեպ, բխում են այն ըմբռնումից, որ որևէ լեզվի գործառնության ընթացքում բարբառները միշտ չէ, որ գոյություն են ունեցել և միշտ չէ, որ գոյություն են ունենալու, և համարվում է, որ գրական լեզվի ազդեցությամբ բարբառները աստիճանաբար վերանում են: Ճիշտ է, ընդգծվում է, որ բարբառների գոյությունը պատմական անհրաժեշտություն է, և լեզվի այդ դրսևորումները հաջողությամբ սպասարկում են այս կամ այն վայրի հաղորդակցման կարիքները, գրական լեզվի բազան են ու հաճախ օգտագործվում են գեղարվեստական գրականության մեջ խոսքը ավելի կենդանի դարձնելու համար, ունեն կարևոր գիտական արժեք, սակայն միաժամանակ բարբառների գոյությունը յուրատեսակ խանգարիչ գործոն է համարվում միասնական լեզվի, հատկապես միասնական գրական լեզվի գոյության ու զարգացման համար: Ընդ որում՝ երբ ուժեղանում են լեզվի կենտրոնացման միտումները, թուլանում են բարբառների տարբերակման և գոյության հիմքերը, ստեղծվում են բարբառային տարբերությունների վերացման պայմաններ<sup>21</sup>:

Բարբառի էությունը ճիշտ հասկանալու, այն գիտականորեն բնութագրելու համար, մեր կարծիքով, հարկ է վերադառնալ Պատկանյանի,

---

<sup>17</sup> Կարծում ենք՝ լեզվի գոյության նախնական ու մշտական վիճակն է այս՝ ի տարբերություն խոսակցական և գրական վիճակների, որոնք ծնունդ են առնում բարբառային վիճակից պատմական զարգացման ընթացքում և կարող են մշտական չլինել:

<sup>18</sup> Այդ տեսակետն են պաշտպանել նաև Հյուբշմանը, Տոմսոնը, Մեյեն, Աճառյանը:

<sup>19</sup> Այս մասին տե՛ս **Պարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 39:

<sup>20</sup> Տե՛ս **Գրիգորյան Ա.**, նշվ. աշխ., էջ 56:

<sup>21</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Ջրույցներ հայոց լեզվի մասին, Եր., 1992, էջ 117 – 119:

Այտրնյանի, Աբեղյանի և Աճառյանի՝ բարբառին տրված բնութագրումներին: Ըստ այդմ՝ բարբառի ամենաէական հատկանիշը պետք է համարել նրա՝ լեզվի կենդանի, բնական և գիտակցականորեն չնորմավորված վիճակ լինելը: Բարբառին հատուկ են հնչյունական, բառապաշարային և քերականական ներքին անմիօրինակությունը, ձևերի բազմազանությունը, բազում անկանոնությունները. այն լեզվի չկարգաբերված վիճակն է, որը, բնականաբար, տարածքից տարածք հանդես է բերում զանազանություններ: Իհարկե, այդ ամենով հանդերձ՝ բարբառը չի դադարում համակարգ լինելուց. լեզվի գոյության ցանկացած մման ձև ունի լեզվական հատկանիշների իր յուրահատուկ կազմությունը, որը այդ կարգի որևէ այլ ձևի հետ երբեք նույնական չէ: Տարածքից տարածք բարբառները միմյանցից տարբերվում են ոչ թե իրենց բոլոր հատկանիշներով, այլ բարբառային հատկանիշների յուրահատուկ գույքորդումներով, որոնք ձևավորվել, ավանդույթի ուժով պահպանվել ու նաև վերափոխվել են լեզվական ու արտալեզվական զանազան գործոնների ազդեցությամբ՝ առանց խոսողների գիտակցական միջամտության ու վերահսկողության: Յուրաքանչյուր բարբառախոս իր խոսվածքի համակարգի կրողն է, և տվյալ բարբառի կրողները, որպես կանոն, հեշտությամբ ընկալում են խոսվածքային տարբերությունները, որոշում խոսողի ծագումը և բնակության վայրը: Ինչպես իրավացիորեն նկատել է Մ. Աբեղյանը, «Դրսից թեթև դիտողի համար այդպիսի խոսվածքները նույն բարբառն են կազմում, բայց իրենք տեղացիները շատ լավ են զանազանում իրենց լեզուները»<sup>22</sup>: Եվ իսկապես, քերականական կառուցվածքի, արտասանության և բառապաշարի առումներով բարբառները նույնքան համակարգային են և նույնքան պիտանի հաղորդակցման համար, որքան գրական լեզուն<sup>23</sup>:

Ասվածը նկատի ունենալով՝ առաջարկել ենք բարբառը սահմանել իբրև տվյալ լեզվի՝ գիտակցական նորմավորման ու կարգաբերման չենթարկված, բնական գոյաձևը կամ վիճակը ներկայացնող համակարգ, որը, չնայած ներքին անմիօրինակությանը, իր հատկանիշների յուրա-

<sup>22</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 48:

<sup>23</sup> Տիս Լայոնզ Դ., Введение в теоретическую лингвистику, М., 1978, էջ 52:

հատուկ գուգորդումներով տարբերվում է նույն լեզվի՝ այլ տարածքներում դրսևորվող համանման համակարգերից<sup>24</sup>: Այն, որ բարբառները նույն լեզվի դրսևորումներն են, նշանակում է, որ իրենց հիմնական հատկանիշներով դրանք նույնական են, սակայն յուրաքանչյուր դեպքում ընդհանուր հատկանիշները ուղեկցվում են պակաս ընդհանուր, մասնավոր հատկանիշների յուրահատուկ փնջերով, որոնցով էլ դրանք դառնում են նույն լեզվի տարբեր գոյաձևեր: Միևնույն ժամանակ, պակաս ընդհանուր կամ մասնավոր հատկանիշները, այլ կերպ ասած՝ բարբառային հատկանիշները, որպես կանոն հանդես են գալիս իբրև զուգաբանություններ՝ ունենալով որոշակի տարածվածություն և այդպիսով վեր հանելով առանձին բարբառների կամ բարբառների խմբի ընդհանրությունները: Այսպիսով, եթե բարբառը իբրև լեզվի ճյուղավորում կամ տարածական տարբերակ բնութագրումը իրողությունը ներկայացնում է ընդհանուրի և մասնավորի հարաբերությամբ, ինչպես նաև իրենից դուրս եղող (արտալեզվական) այլ իրողության (տարածություն) նկատմամբ ունեցած հարաբերությամբ, ապա մեր սահմանմամբ փորձ է արվում բարբառը բնութագրել նախ և առաջ իրեն բնորոշ ներլեզվական հատկանիշներով: Հավելենք նաև, որ, մեր պատկերացմամբ, քանի դեռ բարբառներում գերակշռում են ընդհանուր հատկանիշները, ապա դրանք նույն լեզվի գոյաձևեր են, բայց երբ պատմական հանգամանքների բերումով գերակշռության են հասնում բարբառային հատկանիշները, խախտվում է լեզվի միասնականությունը, և բարբառները իսկապես աստիճանաբար կարող են դառնալ ճյուղավորումներ կամ ճյուղեր, այսինքն՝ առանձին լեզուներ: Թերևս այդ ճանապարհով է տեղի ունեցել, օրինակ, հնդեվրոպական նախալեզվի տրոհումը, և առաջացել են նրա ճյուղավորումները կամ դուստր լեզուները:

Ինչ վերաբերում է բարբառների առաջացման խնդրին, ապա իբրև բարբառների առաջացման պատճառներ նշվող՝ ցեղերի անջատումն ու միացումը, ֆեոդալական մասնատվածությունը, աշխարհագրական ու տարբեր բնույթի այլ գործոնները, մեր կարծիքով, իրականում բարբա-

---

<sup>24</sup> Տե՛ս **Կատվայան Վ.**, Հայ բարբառագիտության հարցեր, Եր., 2014, էջ 18:

ռային տարբերությունների խորացման պայմաններ են: Բարբառների առաջացման բուն պատճառը լեզվի բնական վիճակի անմիօրինակությունն է՝ նախ և առաջ պայմանավորված լեզվական հանրության, այսինքն՝ լեզուն կրողների և օգտագործողների բնական անմիօրինակությամբ և ապա նաև՝ բոլոր լեզվակիրների միասնական հաղորդակցման անհնարինությամբ: Ինչպես նկատում է Մ. Աբեղյանը, «նույնիսկ միևնույն լեզվական շրջանին պատկանող անհատները միմյանց բոլորովին նման չեն խոսում, այլ յուրաքանչյուրն ունի իր ուրույն անհատական լեզուն: Դա բնական հետևանք է խոսվածքի սովորական գործունեության»<sup>25</sup>: Իհարկե, բարբառների ձևավորման հարցում չի կարելի բացառել արտալեզվական գործոնների դերը: Ըստ Աբեղյանի՝ «բարբառները ծագում են, երբ լեզվի մեջ առաջ եկած փոփոխությունները սահմանափակվում են որոշ տեղում և չեն անցնում ուրիշ կողմեր, ուր կա՛ն հին լեզվական ձևերն են պահվում, կա՛ն առաջ են գալիս տարբեր փոփոխություններ»<sup>26</sup>: Իրավացի է նաև Հ. Մուրադյանը, երբ գրում է. «բարբառային առանձին գոտիների գոյությունը (իրենց ուրույն բառային ու հնչյունաբերականական առանձնահատկություններով) ամենայն հավանականությամբ արդյունք են ոչ միայն լեզվի ներքին զարգացման օրինաչափությունների, այլև արտալեզվական որոշ գործոնների ազդեցության»<sup>27</sup>:

Մեր պատկերացմամբ՝ յուրաքանչյուր լեզու նախ և առաջ դրսևորվում է բարբառային վիճակով, որին բնորոշ են անմիօրինակությունը, չկարգաբերվածությունը, ձևախմբատային զանազանություններն ու տարբերակային դրսևորումները, որոնք համապատասխան պայմանների<sup>28</sup> առկայությամբ համակարգային բնույթ են ձեռք բերում և ժամանակի ընթացքում պատճառ դառնում բարբառային միավորների առաջացման: Մյուս կողմից՝ որոշակի պայմանների առկայությամբ բարբա-

---

<sup>25</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 36:

<sup>26</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 47:

<sup>27</sup> Մուրադյան Հ., Լեզվաբանական աշխարհագրությունը և նրա խնդիրները, Հայերենի բարբառագիտական ատլաս, Եր., 1982, էջ 26:

<sup>28</sup> Նախ և առաջ նկատի ունենք լեզվակիր հանրության տարածական տարանջատ և կայուն բաշխումը:

ռային տարբերությունները կարող են թուլանալ, առանձին բարբառներ կարող են և վերանալ, բարբառային խոսքը կարող է և կրել գրական լեզվի ազդեցությունը, բայց այդ չի կարող հանգեցնել ընդհանրապես **բարբառային լեզվի**<sup>29</sup> վերացման:

Հայերենի բոլոր բարբառները լեզվի դրսևորման մի եղանակ են կազմում, լեզվի նույն կարգի գոյաձևեր են, որոնք տարբերակվում են յուրահատկություններով, բայց և միավորվում են իրենց ընդհանրություններով: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ բարբառների ամբողջությունը կարելի է անվանել բարբառային հայերեն: Լեզվի բնական վիճակը ներկայացնող բարբառային հայերենի հիման վրա էլ ձևավորվել են խոսակցական և գրական հայերենները: Բարբառային հայերենում դրսևորվող ընդհանուր հատկանիշները նաև լեզվի ընդհանուր հատկանիշներ են. չի կարող լինել հայոց լեզվի ընդհանուր որևէ հատկանիշ, որն իր արտահայտությունը չունենա բարբառային հայերենում: Այդ ընդհանրությունները լեզվի բոլոր դրսևորումների միջուկն են կազմում, որով և ամբողջ լեզուն դառնում է մեկ միասնական, ամբողջական իրողություն: Հետևում է, որ հայոց լեզվի համար ընդհանուր հատկանիշները կարելի է դիտարկել հենց բարբառային հայերենում: Այդ հատկանիշները, փաստորեն, հայոց լեզվի շրջանակներում գործառնող լեզվական հանրույթներ են:

**Քանալի բառեր** – *բարբառային վիճակ, բարբառային լեզու, բարբառային հայերեն, բարբառի սահմանում, բարբառների առաջացում:*

**ВИКТОР КАТВАЛЯН** – *Диалект и диалектный язык.* – Диалект является формой существования, а не ответвлением языка. Как проявление диалектного состояния, диалекты характеризуются отсутствием сознательного нормирования и упорядочения, внутренним неоднобразием, своеобразным сочетанием признаков, чем отличаются от аналогичных систем того же языка, функционирующих на других территориях. Все диалекты армянского языка

---

<sup>29</sup> Ռուս լեզվաբանության մեջ **բարբառային լեզու** հասկացությունը ներմուծել է Ռ. Ավանեսովը (տե՛ս Русская диалектология, М., 2005, էջ 16):

представляют собой единый способ проявления языка, который может называться диалектным армянским языком.

**Ключевые слова:** *диалектное состояние, диалектный язык, диалектный армянский язык, определение диалекта, происхождение диалектов.*

**VIKTOR KATVALYAN - Dialect and dialect tongue.** Dialect is a form of existence of a language rather than branching. As expressions of dialectical situation dialects are characterized by the lack of standardization and regulation, inner nonuniformity, unique combinations of features by which they differ from similar systems of the same language expressed in other areas. All dialects of Armenian language present one form of expression of the language which can be called dialectical Armenian.

**Key words:** *dialectical situation, dialectical language, dialectical Armenian, definition of a dialect, formation of dialects.*

**ԼԵԶՎԱԿԱՆ ՄԵՂԱՆՉՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Լեզվական մեղանչումներ ասելով պետք է հասկանալ այս կամ այն պատճառով առաջացած լեզվական այն բոլոր շեղումները, որոնք հանդիպում են արդի հայերենի գրավոր կամ բանավոր տարբերակներում: Իսկ պատճառները բազմաթիվ են ու բազմազան: Հատկապես տարածված են այն սխալները, որոնք արդյունք են օտար լեզուների, մասնավորաբար ռուսերենի ազդեցության, այսինքն՝ հիմնականում ռուսաբանության արդյունք են և ռուսերենի բառացի պատճենումն են: Քիչ չեն նաև բառիմաստի սխալ ընկալման կամ պարզապես չիմացությունից եկող սխալներն ու շեղումները: Կան նաև զավեշտական և տրամաբանությունից զուրկ սխալներ:

**Քաշխել – բախշել**

*Բերքը բաշխեցին հավասարապես: Դավիթն իր երկու զարկը բաշխում է Ստրա Մելիքին: Նա իր ունեցածը բաշխում է չրի:*

Արդի հայերենում միանշանակ նկատվում է այս երկու բառերի իմաստների շփոթություն: Մի կողմից՝ մաս-մաս անել, բաժանել, մյուս կողմից՝ նվիրել, նաև ներել: Դիտարկենք, թե միանշանակ միևնույն ծագումն ունեցող այս բառերն ինչպես են մեկնաբանում հայերենի նշանավոր բառարանները: Սկսենք Հայկազյան բառարանից: **Քաշխել** գլխաբառը, որ բառի գրաբարյան սահմանական ներկան է, բացատրվում է այսպես. «Քաշխ կամ բաժին տալ իրաքանչիւր ումեք ըստ արժանեաց, կամ ձրի որպէս պարգև. բաժանելով տալ. մասնատրել զբարիս, զուտելիս, ևն. մատակարարել, անտեսել, պարգևել, շնորհել, բաժնել, փայ էքմէք, պէօլմէք... ուստի ոմկ. պախշել, պաշխել, պախշիշ տալ. \*Առանց նախանձու բաշխեցից: Բաշխեաց պարգևս: Չուար նորա բաշխեսցէ: Եւ զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն, ևն. \*Արդարութիւն ոչ ուրուք ելով ոսոխ՝ բաշխէ տայ զարժանիսն ըստ իրաքանչիւր իրի»: Ապա բերվում են գրաբարյան բնագրային օրինակներ տարբեր հեղինակներից:

Այնուհետև տրվում են լրացուցիչ իմաստներ. «բաժանել, որոշել, սփռել. \* Բաշխեաց զմանկունսն ի լիա և յռաքել. \* Իբրու զի տասն են (պատուիրանք). Բաշխեաց յերկուս հնգեակս, զորս յերկուս արձանս փորագրեաց»: Հաջորդ գլխաբառով տրվում է **Բաշխիշ** բառաձևը՝ հետևյալ բացատրությամբ. «Որպես ռմկ. պաշխիշ, սլ. պեշխիշ. այսինքն Պարզև, կամ մասն և բաժին ի բարեաց. Եվ ամենայն զօրացն տային ի մեծամեծ ավարացն ածելոց»: Տրվում են այս արմատով կազմված բառակազմական տարբերակներ՝ *բաշխիչ, բաշխողական, բաշխողակից, բաշխողութիւն, բաշխոյք, բաշխութիւն, բաշխումն*: Այսպիսով, Հայկազյան բառարանը նշում է **բաշխել** բառի գրաբարյան իմաստները՝ *բաժանել, պարզելիլ, մատակարարել*, և այլն: Տրվում է նաև բարբառային **բաշխիշ** ձևը:

Այժմ դիտարկենք այս բառի ծագման վերաբերյալ աճառյանական մոտեցումները: «Արմատական բառարանում» նա իբրև գլխաբառ բերում է **բաշխ** արմատը, որը, ըստ տարբեր աղբյուրների, մեկնաբանում է *հարկ, փուրք* և *ճակատագիր, բախար* իմաստներով: Այնուհետև նա գրում է. «Այս վերջին երկու նշանակությանց համար հմմտ. բաժ «հարկ, տուրք, ճակատագիր» և **բաժանել, բաժին** բառերը: Այս արմատից են ծագում բաշխել «բաժանել կամ իբրև պարզև տալ», բաշխոյք «պարզև», բաշխիչ, բազմաբաշխ, պարզևաբաշխ, բաշխատել «բաժան-բաժան անել», կճղակաբաշխ, ջրաբախշի, առատաբաշխ, շնորհաբաշխ ևն: Այս արմատից են կազմված նաև ժամաբաշխ «ախտարագետ», ազարակաբաշխ «գյուղատնտես», աստեղաբաշխ, որ ստրկօրէն թարգմանում են յն. «ախտարագետ», «գյուղատնտես» և «աստղաբաշխ» բառերից, երեքն էլ կազմուած են «բաժանել, բաշխել» բայից»: Իբրև նոր, աշխարհաբարյան կազմություններ՝ Աճառյանը նշում է **մրցանակաբաշխութիւն** և **ջրաբաշխական** բառերը: Բառի ծագումը Աճառյանը կապում է պիլ. \*baxš բառից, որը թեև ավանդված չէ գրականության մեջ, գրում է Աճառյանը, բայց կան իր ընկերները, ինչպես զնդ. baxš «մաս և բաժին հանել, նվիրել, պարզևել և այլն»: Աճառյանը նշում է նաև արմատի բելուջական, աֆղանական, քրդական և այլ տարբերակներ: Այս իրանյան բառերը կազմված են bag=սանս. bhag «բաժին, բաժանել» արմատից՝ Տրվում են նաև արմատի բարբառային տարբերակները

նույն՝ *բաժանել, նվիրել* և *ներել* իմաստներով, որոնցից վերջինը գրաբարին անծանոթ է: Նշվում է նաև **բաշխ**՝ մի տեսակ ջրային բույս. սա պարզապես համանուն է, որը կապ չունի մեր քննության նյութի հետ: Ստ. Մալխասյանցի բառարանում **բաշխել** գլխաբառը բացատրվում է «1. Բաժին-բաժին անել, ամեն մեկին իր բաժինը տալ, բաժանել մասնակիցների մեջ: Բերվում են հետևյալ ինքնահնար օրինակները. Ջուտ եկամտուն ընկերները իրանց մեջ հաւասարապես բաշխեցին: Այս ջուրը բաշխում է երեք գիղի վրայ: 2. Տրոհել, որոշել, ջոկել, խմբերի բաժանել. օր. Իւր հաւաքած նիւթերը բաշխեց երեք խմբի: 3. Բաժանել իբրև նուէր, նուիրել՝ Նա ամէն մեկիս մի-մի գիրք բաշխեց: Այս նկարը ընկերս ինձ բաշխեց: (*Ինչպես տեսնում ենք, օրինակներն այնքան էլ համոզիչ չեն. մանավանդ այս օրինակը (մի-մի գիրք բաշխեց) հավասարապես կարելի է հասկանալ նախորդ՝ բաժանել իմաստով-Ռ.Ս.*): 4. Ներել պարտքը՝ յանցանքը (իբրև նուէր անելով, չպահանջելով): Բոլոր պարտքս ինձ բաշխեց, ինչ բարի մարդ է: Այս անգամ յանցանքդ բաշխում եմ, ուրիշ անգամ էլ չանես: Այս մի անգամ մի՛ պատժիր, ինձ բաշխի՛ր, խօսք եմ տալիս, որ այսուհետև խելօք կլինեմ (վերջին երկու նշանակությամբ արտասանվում է *պաշխել* կամ *պախշել*)»: Մալխասյանցի այս ճշգրտումը շատ բանի մասին է վկայում: **Բաշխել** բառի նվիրել իմաստը այնքան էլ նրան չի համոզել, դրա համար էլ նա բերում է արտասանական այլ տարբերակ՝ *պաշխել* կամ *պախշել*: Բ-պ անցումը վերագրենք բառի արևմտահայ արտասանությանը, որտեղ պ-ն պիտի արտասանել բ, մնում է բառի՝ դրավոխությանը կազմված տարբերակը, որը հուշում է, թե հեղինակի օրոք արդեն այդ տարբերությունը գիտակցվում էր: Հաջորդ գլխաբառը, սակայն, բերվում է դարձյալ առանց դրավոխության՝ **բաշխիչ**, արվում է ծագումը (պահլ.) և բացատրվում իբրև *տուրք, պարզև* բերելով հետևյալ օրինակները. «1. Հասանելիք բաժին աւարամասից և 2. Նուէր, պարզև: Աղան ինձի եբաշխիչ տուեց: Ի՞նչ բաշխիչ ես տանելու, երբ գնում ես նրան տեսության: Դու այդ բանն արա՛, բաշխիչդ իմ գլխիս վրայ»: Ինչպես տեսնում ենք, *նվեր, պարզև* իմաստների համար Մալխասյանցի բառարանը, այնուամենայնիվ, տալիս է **շխ** (բաշխիչ) բառաձևը:

Այժմ անդրադառնանք մերօրյա բառարաններին: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» **Բախշել** գլխաբառը հղվում է **Բաշխել**-ին: Սա նշանակում է, որ այս բառարանը չի ընդունում **բախշել** բառը և այն համարում է անխրախուսելի: Իսկ Բաշխել-ի համար բերում է հետևյալ 7 իմաստները. «1. Բաժին-բաժին հատկացնել, տալ: 2. Տրուհել, մասերի՝ խմբերի բաժանել: 3. Բաժանել իբրև նվեր, նվիրել: 4. Աշխատանքը, պարտականությունները ևն բաժանել կատարողների միջև: 5. (*ժող.*) Ներել, մոռանալ, հանցանքը՝ պարտքը: 6. Որոշ կարգով դասավորել՝ խմբավորել: 7. Տեղ-տեղ բաշխել»: Ակնհայտորեն 5-րդ իմաստը առանձնանում է մնացածից, որն արտահայտվում է *ժող.* նշումով: Մեր կարծիքով, Աղայանը շատ լավ դա զգացել է և այդ նշումով ուզել է ցույց տալ **բախշել** տարբերակի՝ իր կարծիքով գրական չլինելը:

Ինչ վերաբերում է ակադեմիական «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանին», այնտեղ համարյա թե կրկնվում են Աղայանի մոտեցումները. **Բախշել**-ը դարձյալ հղվում է **Բաշխել**-ին, սակայն միայն 2-րդ կետին, իսկ բաշխել-ի համար նշվում են 3 հիմնական իմաստները՝ համապատասխան բնագրային հղումներով: «1. Նվիրել. Բաշխում է նա իր հին գուլպան, իսկ հարյուր մեկի շապիկն է հանում: 2. Բաժին-բաժին անել, բաժանել. Անհուն հանքը իմ գանձերի, սիրտս է առատ, լեն ու ազատ, ինչքան էլ որ բաշխեմ ձրի: 3. (*բռբ.*) Ներել (մեղքը, հանցանքը), Էս մի անգամ բաշխիր, որք տղա է»: Ակնհայտ է, որ բախշել-ը պետք է հղվեր 1-ին կետին՝ *նվիրել* իմաստով, ինչը վկայում է իրենց իսկ բերած օրինակը Բակունցից. «Ինձ հասանելիքն էլ քեզ են բաշխում,- ասաց տերը»:

Կուզեինք մի քանի բառով անդրադառնալ նաև արևմտահայերենի մի երկհատոր բառարանի՝ «Հայոց լեզվի նոր բառարան» խորագրով: Մեզ հետաքրքրող բառը այստեղ բերված է **բաշխիշ** ձևով և բացատրված է որպես պարսկերեն ծագում ունեցող բառ՝ *պարզև, նվեր, ընծա* իմաստներով: Ուշագրավ է, որ բերվում է թրքերեն - արաբերեն ձևը՝ **պախշիշ** (ֆր. բուր պոար): Այս բառը խիստ տարածված է Միջին Արևելքի հայկական գաղթօջախներում, և զարմանալի է, որ հիշյալ բառարանի հեղինակները կառչում են **բաշխիշ** ձևին, թեև բերում են հայերիս մեջ ևս լայն

գործածություն ունեցող *բախշիչ* (թեյանվեր, մաղարիչ) իմաստով կիրառությունը: Ի՞նչ եզրակացության կարելի է հանգել այս բոլոր տվյալների մտածանալուց հետո: Մեր կարծիքով, այսօր **բաշխել** և **բախշել** բաները պետք է դիտարկել իբրև բառային անկախ միավորներ և ոչ թե միևնույն բառի հնչյունափոխական տարբերակներ, ուստի բառարաններում պետք է ոչ թե **բախշել**-ը հղել **բաշխել**-ին՝ չճանաչելով նրա ինքնուրույն գոյության իրավունքը, այլ պետք է համարել առանձին գլխաբաներ: Այսպիսով, արդի հայերենում **բաշխել** նշանակում է *բաժանել, մասնատել* (ջուրը բաշխվում է հավասարաչափ), իսկ **բախշել**՝ նվիրել, նաև ներել (կյանքը բախշել):

### **Պատրիարք – մահապետ**

Патриарх բառը ռուսերենում, բացի *եկեղեցական հովվապետ՝ պատրիարք* իմաստից, ունի նաև *մահապետ, ցեղապետ, ընդհանրի գլուխ* իմաստները: Երբեմն այս իմաստով այն գործածում են նաև հայերենում, թեև **պատրիարք**-ը հայերենում չունի այդ իմաստները, և հայերենի ոչ մի բառարանում **պատրիարք**-ին նման իմաստ չի վերագրվում, ինչպես օրինակ՝ **Մարտիրոս Մարյանը հայ գեղանկարչության մահապետն է** ճիշտ արտահայտության փոխարեն գործածվում է **գեղանկարչության պատրիարքն է** արտահայտությունը: Հայերենում այս բառը ունի խստիվ տերմինավորված իմաստ հայոց առաքելական եկեղեցու երեք բարձրաստիճան պաշտոնների իմաստով՝ *Ամենայն հայոց կաթողիկոս, ծայրագույն պատրիարք, Պոլսի և Երուսաղեմի պատրիարքներ*: Համանման օրինակ է նաև **образ** բառի հայերեն թարգմանությունը: Այս բառը ռուսերենում *նշանակում է և՛ կերպար, և՛ պարկեր*: Սովորաբար այս բառը հայերեն թարգմանում են կերպար, որը ոչ միշտ է ճիշտ: Այսպես, образное мышление թարգմանում են կերպարային մտածողություն, մինչդեռ ճիշտը պատկերային մտածողությունն է: Այս երևույթը թարգմանության տեսության մեջ կոչվում է թարգմանչի կեղծ բարեկամներ (ложные друзья переводчика), երբ երկու լեզուներում բառերը ձևով նույնն են, բայց արտահայտում են տարբեր իմաստներ: Հմմտ. նաև ֆրանսերենում և ռուսերենում **ժուռնալ** բառը, որ համապատասխանաբար նշանակում է **օրաթերթ** և **ամսագիր**, կամ **мисия** բառը, որ նշանա-

կում է և՛ *առաքելություն*, և՛ *ներկայացուցչություն*: Հայերենում այն ճիշտ իմաստով գործածվելուց զատ (Գեապանն ավարտեց իր առաքելությունը) երբեմն հանդիպում է հետևյալ սխալ կիրառությամբ՝ *Լոնդոնի հայկական առաքելությունը*, *փոխանակ՝ Լոնդոնի հայկական ներկայացուցչությունը*:

### **Շեփոր – փող**

Այս երկուսը առհասարակ իրարից խիստ տարբերվող երաժշտական գործիքներ են: Շեփորը հարմարեցված է տարբեր ազդանշաններ հնչեցնելու համար և ունի սահմանափակ հնարավորություններ՝ ընդամենը մի քանի նոտա, որոնք հնչվում են լեզվին ու շրթունքներին տարբեր դիրքեր տալու շնորհիվ: Աղայանի բառարանում այն կոչվում է ազդանշանավող: Կիրառվում է ռազմական, այլևայլ ճամբարային հավաքների ժամանակ և ունի իր ազդանշանային տարբերակները՝ վերկաց, ճաշարան, դադար, ի մարտ և այլն: Մինչդեռ փողը երաժշտական բարձրակարգ կափույրավոր գործիք է, որը սիմֆոնիկ, փողային և ջազային նվագախմբերի զարդն է: Նրանով հնարավոր է նվագել ցանկացած՝ երաժշտական ամենաբարդ ստեղծագործություն: Մեզանում համարյա միշտ այս երկուսը շփոթվում են միմյանց հետ, ավելի ճիշտ՝ **փող**-ի փոխարեն գործածվում է **շեփոր**-ը: Ռուսերենում **փող**-ը կոչվում է **труба**, և այն համընկնում է հայերենի **փող** բառի խողովակ իմաստային դաշտին՝ *շնչափող*, *կերակրափող*, *լսափող*, *խոսափող*, *փողրակ* և այլն: Իսկ **շեփոր**-ը ռուսերենում կոչվում է **гоphi**, և ոչ մի ռուս դրանք չի շփոթում, մինչդեռ մեր որոշ բառարաններ դրանք ներկայացնում են իբրև հոմանիշներ: Մեր կարծիքով, շփոթելու պատճառը նախ կապվում է այս գործիքների արտաքին նմանության հետ, սակայն պակաս կարևոր չէ նաև **փող** բառի՝ պարսկերենից **փոխառյալ դրամ** իմաստի առկայությունը, որը որոշ անհարմարություններ է ստեղծում այս բառի գործածության մեջ: Հայտնի է, որ անվանի կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը ունի մի սքանչելի ստեղծագործություն, որ ռուսերեն կոչվում է «Концерт для трубы с оркестром»: «Սովետական արվեստ» ամսագրի շուրջ կեղտարյա հնություն ունեցող մի համարում գետեղված էր մի ընկերական շարժ, որտեղ պատկերված էր կոմպոզիտորը գործիքի հետ, և ուներ

հետևյալ մակագրությունը՝ «Կոնցերտ փողի համար»։ այստեղ **փող** բառը պետք է հասկանալ *շեփոր* իմաստով: Ակնհայտորեն ունենք սրամիտ բառախաղ, որ հիմնված է **փող** բառի տարբեր իմաստների վրա: Մեր օրերում ՋԼՄ-ներում, մամուլում և այլուր սովորական է դարձել փողի փոխարեն շեփորի գործությունը: Բավական է հիշատակել մի հեռուստահաղորդում, որում ներկայացվում էր մի տաղանդավոր պատանի, որը հաղթել էր շեփորի միջազգային մրցույթում: Ավելորդ է ասել, որ նման մրցույթ ուղղակի չի կարող լինել:

### **Հուղարկավորություն**

Այս տխուր բառը ունի **ի** նախորդ **ուղի** և **արկ** արմատները, որ Հայկազյան բառարանը բացատրում է «Յուղարկ երթալ կամ լինել, յուղարկատր լինել, յուղարկել, ճամփա դնել, յուլ գոմագ» և այլն: Ակնհայտորեն **ի** վերին Երուսաղեմ ճանապարհելու մասին է խոսքը: Մեզանում երբեմն հանդիպում է այս բառի ժողովրդական ստուգաբանությամբ կազմված **հողարկավորություն** ձևը, որտեղ բառը կապվում է **հող** արմատի հետ՝ կարծելով, թե այն կապվում է *հողին հանձնել* իմաստի հետ: Նման արտահայտությունը հիմնականում հանդիպում է բանավոր խոսքում: Մենք առիթ ենք ունեցել այն լսելու պետական բարձրաստիճան անձանց շուրթերից, այն էլ պաշտոնական արարողությունների ժամանակ:

### **Տնօրենություն- տնօրինություն**

Արևմտահայերենում այս բառերը խստիվ տարբերակված են և փոխարինում են հետևյալ բառերին. **դիրեկցիա** բառի փոխարեն գործածվում է **տնօրենություն**, իսկ տնօրինելու, կարգադրելու իմաստով՝ **տնօրինություն**: Այսպես՝ *Գպրոցի տնօրենությունը հայտնում է, որ շրջանավարտների հանդիպումը կկայանա հունվարի 17-ին*: Եվ մյուս օրինակը՝ *Գործի տնօրինությունը հանձնված է իրավասպահ մարմիններին*: Այս դեպքում գործ ունենք մի երևույթի հետ, որ կարելի է անվանել կանոնախախտություն կանոնարկման նպատակով: Ըստ էության **տնօրենություն** բառը կազմվում է հայերենի հնչյունական կանոնի խախտումով. չի գործում **է-ի** հանրահայտ հնչյունավորությունը, որի շնորհիվ կազմվում է նոր բառ՝ **տնօրենություն**, որը շատ հաջող փոխարինում է **դիրեկցիա** օտար բառին, իսկ հնչյունավորությամբ կազմված **տնօրինություն**

բառը մնում է իր սովորական գործածության ծիրում (ցնոր տնօրինություն): Ի դեպ, այս սկզբունքը ունի իր նախադեպը: **Տեք** արմատի համանման հնչյունափոխության չենթարկվելու, այսինքն՝ կանոնախախտմամբ ստեղծվել է **տեքություն** (պետություն-депжава) բառը, իսկ սովորական հնչյունափոխությամբ, այսինքն՝ կանոնի պահպանմամբ ունենք **տիրություն** (անել) բառը: Ահա սա է, որ անվանում ենք կանոնախախտություն կանոնարկման նպատակով:

### **Շամպայնի ցայտերը**

Անհնար է պատկերացնել որևէ տոնական միջոցառում՝ առանց շամպայնի խցանների պայթյունի և փրփրում, կայծկլտացող հեղուկով լի գավաթների զրնգոցի: Այս ամենը զուգորդվում է բարձր տրամադրության և երգ-երաժշտության հետ: Հետո սկսվում է «մասնագիտական» խոսք ու զրույցը շամպայնի շուրջ, թե դա ինչպիսի շամպայն է՝ չո՞ր, կիսաչո՞ր, թե՞ բրյուտ: Եվ այս ամենը ասվում է լուրջ դեմքով, առանց խորանալու տրամաբանական անհեթեթության մեջ: Չոր կամ կիսաչոր շամպայն: Տարօրինակ չէ՞ արդյոք: Կարո՞ղ է արդյոք շամպայնը, որ հեղուկ է, լինել չոր, կամ, առավել ևս, կիսաչոր: Եվ առհասարակ, որտեղի՞ց են գալիս շամպայնին տրվող այս բնութագրերը: Այս տեսակային անվանումները ցույց են տալիս շաքարի պարունակությունը փրփրում գինու մեջ: Այսպես՝ բրյուտ անվանումը ցույց է տալիս, որ 1 լիտրի մեջ կա 15 գրամից ոչ պակաս շաքար, չոր՝ 20-25 գ/լ, կիսաչոր՝ 40-45 գ/լ: Առհասարակ համարվում է, որ ինչքան քիչ է շաքարի պարունակությունը, այնքան բարձրակարգ է խմիչքը:

Վերադառնանք սակայն չոր ու թացին: Հայերեն այս անվանումները ակնհայտորեն հակասում են առողջ տրամաբանությանը, քանի որ հեղուկը չի կարող լինել չոր կամ կիսաչոր: Այդ դեպքում որտեղի՞ց են գալիս այս անտրամաբանական անվանումները: Պատճառը ռուսերենից կատարված մեխանիկական թարգմանությունն է: Ռուսները գինիները բնութագրելու համար գործածում են *сухо* և *полусухое* անվանումները, որոնց հայերեն ճիշտ համարժեքները կլինեն դառը և կիսադառը կամ կիսաքաղցր բառերը: Սակայն հարցը բարդանում է նրանով, որ շամպայնը ունի նաև այլ բնութագրեր՝ քաղցր (շաքարի պարունակությունը

80-85 գ/լ) և կիսաքաղցր (60-65 գ/լ): Այս դեպքում հայերեն անվանումների մեջ առաջանում է որոշ շփոթ, ուստի ռուսերեն անվանումների դիմաց առաջարկում ենք հետևյալ տարբերակները՝ *брюм – шисацук, сухое – դառը, полусухое – կիսադառը, полусладкое – կիսաքաղցր, сладкое – քաղցր*:

### **Մարզական տվայտանքներ**

Հայտնի է, որ մարզական եզրաբանությունը հայերենում հին ավանդույթներ չունի և չէր էլ կարող ունենալ, քանի որ հազարավոր մարզաձևեր և դրանց անվանումները ունեն ընդամենը տասնամյակների, իսկ շատ դեպքերում՝ մերօրյա ծագում: Այդ պատճառով մարզական մի շարք եզրույթներ հայերենում չեն կայունացել կամ ունեն գուգաձևություններ, ինչպես օրինակ՝ դարպասային գիծ // ճակատային գիծ, դարպասաձող // ձողափայտ, ցատկ // թռիչք // ոստյուն, անկյունային հարված դարպասի մոտ // անկյունային հարված դարպասին և այլն: Մակայն այսօր ուզում ենք անդրադառնալ մարզական մեկնաբանների կողմից հաճախ գործածվող մի քանի ակնհայտ սխալ ձևերի:

### **Ճիշտ և սխալ սուլիչներ**

Մարզական խաղերի ժամանակ մեծ դեր ունի մրցավարի սուլիչը. այն կարող է ազդարարել խաղի սկիզբը կամ ավարտը, արձանագրել տարբեր խախտումներ և այլն: Ֆուտբոլային (և ոչ միայն) խաղերի ժամանակ մեր մարզական մեկնաբանների կողմից գրեթե միշտ կարելի է լսել նման արտահայտություններ. *Մրցավարը սուլիչ է փայլա... Սուլիչից առաջ... Մինչև սուլիչը... Սուլիչից հետո... Սուլիչն անկրեղի էր... Ճիշտ սուլիչ էր... Անկրեղի սուլիչ էր... Լսվում է դարավորի սուլիչը... և այլն, և այլն: Հայերենում ունենք **սուլիչ** և **սուլոց** բառերը: Սուլիչը անվանում է այն արքը, գործիքը, որով սուլում են, սուլոցը այդ գործիքի արձակած ձայնն է: Ունենք նաև **սուլել** բայը, ուստի վերը բերված օրինակներում ճիշտ կլինի ասել՝ *Մրցավարը սուլում է... Սուլելոց առաջ... Սուլիչուց հետո... Սուլոցն անկրեղի էր... Լսվում է դարավորի սուլոցը (կամ սուլիչի ձայնը)*: Այս ամենի պատճառը դարձյալ ռուսերեն արտահայտությունների բառացի թարգմանությունն է: Թյուրիմացությունն առաջանում է այն պարզ պատճառով, որ ռուսերենում **սուլիչ** և **սուլոց** ար-*

տահայտվում են նույն բառով՝ свисток: Ռուսերենի համար սովորական են *Судья даёт свисток... До свистка... После свистка... Неверный свисток* և այլն: Ահա այս պատճառով էլ որոշ մեկնաբանների մեղքով հայերենում հայտնվում են սովիչներ, որոնք ունեն առաջ և հետո, լինում են ճիշտ ու սխալ, իսկ սուլոցը հանիրավի մոռացվում է:

### **Կոտրված ոտքեր և ձգված մկաններ**

Յուրաքանչյուր մարզաձև ունի իր առանձնահատկությունները, սակայն համարյա բոլոր մարզաձևերին էլ հատուկ են մարմնական թեթև կամ ծանր վնասվածքները: Հաճախ կարելի է լսել մկանային կամ նույնիսկ ոսկրային տարրեր վնասվածքների մասին մոտավորապես այսպիսի ձևակերպմամբ: *Նա կոտրել է ոտքը: Նա կոտրել է շեռքը: Նա չզել է մկանը:* Բայց մի՞թե այդպես լինում է (այն էլ սպորտում), որ մարդը վերցնի և կոտրի իր սեփական ոտքը կամ ձեռքը և կամ էլ վերցնի ու ձգի իր մկանը: Հենց այնպես: Խաղի համար: Կամ միտումնավոր ինքն իրեն խեղի: Իհարկե, երբեմն պատահում են ինքնախեղման դեպքեր, բայց դրանք չեն վերաբերում հոգեպես առողջ մարդկանց: Իսկ մենք դիտարկում ենք հենց այդ դեպքերը: Ասենք՝ *Ֆուտբոլիստ Կիրակոսյանը կոտրել է ոտքը, իսկ Սահակյանը չզել է մկանը:* Ի՞նչ կհասկանա հայ մարդը այս նախադասություններից: Այն, որ այդ ֆուտբոլիստները զբաղվել են ինքնախեղմամբ: Այսինքն՝ վերցրել են կացինը կամ մահակը և կոտրել սեփական ոտքը (ձեռքը, անրակը): Հենց այնպես, հաճույքի համար: Բայց արդյո՞ք այդ էր ուզում մեզ հաղորդել հարգելի մեկնաբանը: Ո՛չ, պարզապես նա մեզ թարգմանաբար ներկայացնում է *ռուսերեն Օն сломал ногу* կամ *Он растянул мышцы* արտահայտությունները: Արդյունքում ստացվում է վերոնշյալ արտուրդը: **Նա կոտրել է ձեռքը** նախադասության մեջ կա գործողությունը կատարող՝ նա, և առարկա, որն իր վրա է կրում գործողությունը՝ ձեռքը, ուստի անձը կոտրում է իր ձեռքը: Այնինչ, հայ մարդու համար այդ գործողությունը ոչ թե ներգործական է (ազդող-ազդվող), այլ, այսպես կոչված, կրավորակերպ չեզոք, երբ գործողությունը կատարվում է ինքնին, իրեն-իրեն: Ուրեմն, հայերեն ճիշտ կլինի ասել. Նրա ձեռքը (ոտքը, անրակը) կոտրվել է, նրա մկանը ձգվել է: Նման դեպքերի համար հայերենն ունի վ ամանց ունեցող բայեր, որոնք

արտահայտում են ոչ թե կրավորական սեռ, այլ ինքնին, ինքն իր վրա կատարվող գործողություններ (կոտրվել, ձգվել), որոնք էլ առավել ճիշտ են արտահայտում մարզախաղերի ժամանակ կատարվող նման երևույթները:

**Քանալի բառեր** – *լեզվական շեղումներ, իմաստային տարբերումներ, ռուսաբանություն, քարզմանչի կեղծ բարեկամներ, ժողովրդական սրուգաբանություն, կանոնարկում, կանոնախախտություն, մեխանիկական քարզմանություն, մարզական տերմինաբանություն:*

**РУБЕН САКАПЕТОЯН – Языковые ошибки в армянском языке.** – В статье рассматриваются встречающиеся в современном армянском языке языковые отклонения и ошибки, которые являются продуктом влияний иностранных (в частности, русского) языков. В основном они связываются с неправильным словоупотреблением или ошибочным семантическим восприятием. Представляются те словесные пары, в которых существуют такие отклонения, как **բաշխել-բախշել, տնօրենություն- տնօրինություն, փող-շեփոր, սուլիչ-սուլոց** и тд.

**Ключевые слова:** *языковые отклонения, смысловые разночтения, русизмы, ложные друзья переводчика, народная этимология, канонизация, отклонение от канонов, механический перевод, спортивная терминология.*

**RUBEN SAQAPETOYAN – Language errors in Armenian.** – In this article are being examined those linguistic deviations and mistakes occurring in Armenian language, which are a result of the influence of foreign languages, particularly Russian. They are mainly connected with a wrong usage of words or misunderstanding of the word meaning. Here are presented those word-couples in which there are deviations: **բաշխել-բախշել, տնօրենություն-տնօրինություն, փող-շեփոր, սուլիչ-սուլոց...** etc.

**Key words:** *language deviation, semantic differences, russism, false friends of translator, folk etymology, canonization, deviations from the rules, mechanical translation, sports terminology.*

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-ԳԱՐԶՎԱԾԱՅԻՆ  
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

Համեմատություն - դարձվածային արտահայտությունները (ՀԴԱ) լեզաոճական որոշակի կառույցներ են, որոնց հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որը՝ իբրև փոխաբերության մի տեսակ, արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով<sup>1</sup>:

ՀԴԱ-ներն ընդհանրապես լեզվի յուրաքանչյուր գոյավիճակում ցուցաբերում են քերականական որոշակի յուրահատկություններ, որոնցով տարբերվում են մյուս փուլերում գործառվող համանման կապակցություններից: Այդ առումով, պահպանելով գրաբարյան ՀԴԱ-ներին հատուկ քերականական որոշակի հատկանիշներ՝ միջին հայերենի անվանողական ՀԴԱ-ները քերականական որոշակի յուրահատկություններ են ի հայտ բերում: Այդ յուրահատկությունները հիմնականում վերաբերում են ՀԴԱ-ների կառուցատիպերին և քերականական բնութագրերին:

Որպես անվանողական միավորներ՝ ՀԴԱ-ները բնութագրվում են բառին հատուկ բառաքերականական հատկանիշներով. ըստ այդմ՝ կարելի է խոսել ՀԴԱ-ների ինչպես բառիմաստների (մենիմաստ և բազմիմաստ), իմաստային հարաբերությունների (հոմանիշ, հականիշ), տարբերակների (բառային, քերականական, քանակային), կառուցատիպերի (անվանողական և հաղորդակցական), այնպես էլ նրանց ձևաբանական արժեքների և շարահյուսական գործառույթների մասին:

---

<sup>1</sup> **Քաղիկյան Խ.**, ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջք 126-127, 140, 260-263: **Назарян А.**, Фразеология современного французского языка, М., 1987, էջք 111-125, 194-199: **Քեղիկյան Պ.**, ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Եր., 1990, էջ 50-51:

Չևաբանական մակարդակում ՀԴԱ-ները բնութագրվում են որոշակի խոսքիմասային արժեքներով, որոնք իրենց հերթին պայմանավորում են նրանց շարահյուսական գործառույթները:

Միջինհայերենյան ՀԴԱ-ները հիմնականում բաշխվում են ածականի, բայի և մակբայի խոսքիմասային համակարգի շրջանակներում:

Ա. ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ՀԴԱ-ՆԵՐ

Ածականական ՀԴԱ-ները դասակարգվում են տարբեր հիմունքներով. այս հարցում կարևոր հանգամանք է համարվում կապակցությունների գերադաս անդամի կառուցվածքային գործոնը: Նման կապակցությունների գերադաս բաղադրիչը (ածականը) ըստ կազմության կարող է լինել *պարզ կամ բաղադրյալ*:

Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել միջին հայերենի ածականական կապակցությունների հետևյալ կառուցատիպերը.

Ա. *պարզ ածականներով կառույցներ*.

պարզ//մաքուր որպես հայելի,  
քաղցր//անուշ զերդ զաքար,  
պայծառ քան զբաֆուր վարդ,  
զինչ կաթն սպիտակ,  
զերթ մոմ կակուղ,  
ամուր քարի նման,  
խաղաղ իբրև գորախտ,

սեաւ իբրև զհնդիկ,  
պայծառ քան հայելի,  
զերդ զլուսին սուրաթ բոլոր,  
զերթ կարկուտ պաղ,  
արեգական նման պայծառ,  
կարմիր նման վարդի,  
բարձր՝ թուխ ամպի նման:

Օրինակ՝ *Բարչր* եմ *թուխ ամպիդ նման*, որ ոչով ի յիս չի հասնի (ՆԲ, ՀԿ, 166):

Բ. *Բաղադրյալ ածականական բաղադրիչներով կառույցներ*, որոնց գերադաս բաղադրիչը նախածանցավոր կամ վերջածանցավոր կազմություն ունի:

ա) *Վերջածանցավոր ածականներով շևալորված ՀԴԱ-ներ*. Աստուծոյ չափ երախտատոր, կեղծատոր զանչ զսատանայ: Օրինակ՝

Խաբող քարոզ ես եկել, *կեղծատոր զանչ զսատանայ* (ՖԴ, 338):

բ) *Նախածանցավոր ածականներով ՀԴԱ-ներ*. անյաջող զերդ զգերի, մահու չափ անհանգիստ:

Օրինակ՝ Բայց թէ մահու չափ անհանգիստ պահեն, յայլ տեղ ոչ երթայ (ՆՄ,ԺԱՎ, 153):

գ) *Բարդ ածականներով շեղվորված ՀԴԱ-ներ.*

Համադրական հոդակապավոր (իսկական) բարդությամբ է կազմված *ահեղակերպ քան գփայլակն* ՀԴԱ-ն:

Հարադրական բարդությամբ են ձևավորված *խելքդ / խելքը պակաս քան գերեխոյ, կարմիր երես նման վարդի* ՀԴԱ-ները:

Օրինակ՝ Մուրօքը մարդ ես կատարեալ, *Խելքդ պակաս քան գերեխոյ* (ՖԴ, 99):

Ածականական ՀԴԱ -ները կարող են հանդես գալ ինչպես նախդրավոր, այնպես էլ աննախդիր կառուցատիպերով:

ա) Նախադրություններով և նրանց խնդիրներով են ձևավորվել հետևյալ կապակցությունները.

|                         |                            |
|-------------------------|----------------------------|
| սեալ իբրև զհնդիկ,       | կեղծատր զանչ զաստանայ,     |
| խաղաղ իբր գրախտ,        | քաղցր գերդ գշաքար,         |
| ահեղակերպ քան գփայլակն, | ի յալի նման,               |
| զինչ կաթն սալտակ,       | ի ծով նման,                |
| յալեաց նման,            | գերդ զլուսին սուրաթ բոլոր: |

Օրինակ՝ *Ձերդ զլուսին սուրաթ բոլոր.* Շուրջ երեսին մագերն ոլոր, անով արեր է շատ մոլոր (ԿԵ, 156):

բ) Հետևյալ ՀԴԱ-ների համեմատելի բառերը հանդես են եկել առանց նախդիրների.

|                      |                   |
|----------------------|-------------------|
| պարզ որպէս հայելի,   | գերթ մոմ կակուղ,  |
| գերթ կարկուտ սալտակ, | իբրև գնդակ բոլոր, |
| զէդ արին ալ պղտոր:   |                   |

Հմնտ. *Չգեաց հետ քար՝ գերթ կարկուտ պաղ և սպիրակ* (Գ, ՔԲՄ, 106):

Այսպիսի դասակարգումը հարաբերական է. վերոնշյալ ՀԴԱ-ները (հատկապես *գ* նախդրով կաղապարված կառույցները) հավասարապես կարող են հանդես գալ թե՛ նախդրով, թե՛ առանց դրա. առավել տարածված են նախդրավոր կապակցությունները:

Որոշ միազագաթ ՀԳԱ-ների նախադրության խնդիրը հանդես է գալիս **և** որոշիչ հոդով. *ծովին չափ, սարին չափ, լինոնն նման, քան զաէրն քաղցրիկ*:

Օրինակ՝ Պոկոքդ է *լինոնն նման*, կու բանաս մարդու մատան (ՆԶ, ՀԿ, 80):

Որոշ կապակցություններում անվանական բաղադրիչները հանդիպում են թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով՝ կազմելով քերականական տարբերակներ. *ի յալի նման, յալեսց նման*:

Հանդիպում են կապակցություններ, որոնց անվանական անդամը կարող է հանդես գալ միայն եզակի թվով.

|                         |                      |
|-------------------------|----------------------|
| արեզական նման,          | նման Յուդայի,        |
| քան զամեն ծաղիկ պայծառ, | մահու չափ անհանգիստ, |
| Աստուծոյ չափ երախտաւոր, | խաղաղ իբր գրբախտ:    |

Օրինակ՝ Մեկն *նրման է Յուդայի* (ՖԴ, 239):

Հանդիպում են նաև կապակցություններ, որոնց անվանական բաղադրիչները հանդես են գալիս միայն հոգնակի թվով (հատկապես երբ դրանք անեզական գոյականներ են), հմմտ. *սարեղաց նման, չափ ար-տաստաց*:

Ածականական ՀԳԱ-ներում ոչ այնքան համեմատության գործառույթն է դոմինանտ, որքան ածականով արտահայտված հատկանիշի սաստկությունն արտահայտելը:

Մասնագիտական գրականության մեջ ընդհանրապես ածականական բառակապակցությունների առումով նշվում է, որ *իբրև, որպէս, զիարդ, զանչ, զէր, զերդ/ք* նախադրությունները հայցականի հետ կազմում են որակական ածականի հավասարական համեմատական աստիճանը<sup>2</sup>:

Այսպես՝ *կեղծաւոր զանչ զսարանայ, սեաւ իբրև զհնդիկ, զէդ արին ալ պղորոր* ՀԳԱ-ներում ածական բաղադրիչով նշված հատկանիշների կարելի է հավելել *սաստիկ, իհար, չափազանց, շար-շար* և սաստկական իմաստի այլ բառեր:

---

<sup>2</sup> Տե՛ս **Քոսյան Վ.**, Միջին հայերենի բառակապակցությունները, Եր., 1984, էջ 68:

## Բ. ԲԱՅԱԿԱՆ ՀԴԱՆԵՐ

Միջին հայերենի բայական ՀԴԱ-ների կառուցատիպերը պայմանավորված են ինչպես բայական, այնպես էլ անվանական բաղադրիչների քերականական (ձևաբանական) յուրահատկություններով: Բայական բաղադրիչների առումով դա վերաբերում է սեռի կարգին, լծորդություններին, բայակազմությանը, անվանական բաղադրիչների դեպքում՝ հոլովական արտահայտությանը, առման կարգին և այլն:

Այսպես, կապակցության անվանական բաղադրիչները հայցական հոլովում կարող են հանդես գալ թե՛ *q* նախդրով, թե՛ առանց դրա.

որպես զշուն հաչել,

շողշողել(իմ) որպես զլոյս,

զինչ զհաց ուտել,

զինչ մոմ հալել(իմ),

ճեմել(իմ) որպես իշխան,

նստել(իմ) որպես արքայ և այլն:

Օրինակ՝ Փառօք ճեմիս *որպես իշխան* (ՊԳ, 186): *Որպես զխօսող* ձայնէ, *որպես զշուն* հաչէ (Գ, ԶԲՄ, 67):

Հանդիպում են ՀԴԱ-ներ, որոնց անվանական բաղադրիչները ձևավորված են *դ* ստացական հոլով՝ *դեղնել խնկիր նման*:

Կան բայական ՀԴԱ-ներ, որոնց նախադրության խնդիրները հանդես են գալիս միայն եզակի թվով, ինչպես՝ *խաղաղանալ իբր գորախոր, շողշողել(իմ) որպես զլոյս, արև նման շողշող փայլ* և այլն:

Օրինակ՝ Ի սորա ժամանակս *խաղաղացաւ* երկիր *իբր գորախոր սս-փուծոյ* (ԺԴ-ՀԶՀ, 24):

Կան բայական ՀԴԱ-ներ էլ, որոնց նախադրության խնդիրները կարող են հանդես գալ թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով, որ պայմանավորված է տվյալ գոյականի քանակայնություն արտահայտելու հանգամանքով, ինչպես՝ *ճեմել(իմ) որպես իշխան, զէդ աշնան դագել դոդայ, քան սևացեալ զամպս ցօղալ* և այլն:

ՀԴԱ-ների բայական գերադաս բաղադրիչները կառուցվածքային առումով կարող են լինել պարզ և բաղադրյալ, այդ թվում՝ նաև հարադրական կազմություններ:

ա) *Պարզ բայերով կապակցություններ*.

ճեմել(իմ) որպես իշխան,

երևալ զինչ զիրեշտակ,

զինչ մոմ հալել(իմ),

քան զեղբայր սիրել(իմ),

սիրամարգի նման քայլել(իմ),  
բ) բաղադրության քերականական ածանցով կազմություններ.  
շան պէս ուրանալ, խաղաղանալ իբր գորախտ,  
գ) հարադրավոր բայերով կազմություններ.  
արևի նման շողշող տալ, քան զմոմ առջևն ի վառ լինել(իմ):  
Բայական բաղադրիչները հանդես են գալիս տարբեր լծորություն-  
ներով.

Ե լծորություն. *զինչ զհաց ուտել, քան զհայր սիրել:*

Ա լծորություն.

շան պէս ուրանալ, զէտ աշնան դագել դողալ,  
քան սևացեալ ամպ ցոլալ, երևալ զինչ զհրեշտակ,  
խաղաղանալ իբր գորախտ:

Ի լծորություն.

շողշողել(իմ) որպէս զլոյս, ճեմել(իմ) որպէս իշխան,  
նստել(իմ) որպէս արքայ, քան զմոմ հալել(իմ),  
քան զմոմն առջևն ի վառ լինել(իմ) սիրամարգի նման քայլել(իմ):

Մյուս կողմից՝ բայական բաղադրիչները բնութագրվում են բայաստեղի տարբեր հատկանիշներով:

ա) Ներգործական սեռի բայեր.

քան զհայր սիրել, շան պէս ուրանալ,  
քան զեղբայր սիրել:

Օրինակ՝ *Քան զեղբայր* առելի զմեզ *սիրեցիկ*, Չէ ի մեր առնելեացրս մեզ հատուցել (ՖԴ, 144):

բ) Չեզոք սեռի.

քան սևացեալ ամպ ցոլալ, սիրամարգի նման քայլել,  
զերդ կուպր եռալ, դեղնել խնկի նման,  
զէտ աշնան դագել դողալ:

Օրինակ՝ Իմ սիրտս ի քո վառ սիրտդ *զէտ աշնան դագել կու դողալ* (ՆԲ, ԶԿ, 56):

Միջին հայերենում, ինչպես գրաբարում, ներգործական և չեզոք սեռի բայերի տարբերությունը պայմանավորված է լծորության փոփո-

խությամբ. ներգործական բայերն ունեն -ել, չեզոք սեռի բայերը՝ -իլ վեր-  
ջավորություն, հմմտ. *զինչ մնոմ հալիւմ - զինչ մնոմ հալիւմ*:

Ներգործական սեռի բայերից -վ- ամանցով կազմվել են կրավորա-  
կան սեռի բայեր. *զերդ լար քաշել- զերդ լար քաշվել*<sup>3</sup>:

Որոշակի կապակցությունների շրջանակներում բայական բաղադրիչ-  
ները ենթարկվում են սեռային իմաստի տեղաշարժերի, որ պայմանա-  
վորված է կապակցության բաղադրիչների վերաիմաստավորման հան-  
գամանքով: Ըստ այդմ, կան բայական կապակցություններ, որոնք ձև-  
վորումով չեզոք սեռի են, իմաստով՝ ներգործական, հմմտ. *քան զմումն  
առջևն ի վառ լինել* (ողջ կյանքում ուրիշներին լավություն անել), *քան  
սևացիս ամպ ցողալ* (չարիք բերել, վատություն անել), *որպէս զշուն հա-  
չել* (վատաբանել):

Կան որոշ ՀԴԱ-ներ էլ, որոնց բայական բաղադրիչները արտահայ-  
տության պլանում ներգործական սեռի են, բովանդակության պլանում՝  
չեզոք, ինչպես՝ *ուրանալ* (ներգ. սեռ) և *շան պէս ուրանալ* (ամամոթաբար  
հրաժարվել մեկից // մի բանից),- (չեզոք սեռ) և այլն:

#### Գ. ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ՀԴԱ-ՆԵՐ

Մակբայական ՀԴԱ-ները հիմնականում միագագաթ կապակցու-  
թյուններ են: Այդ կարգի միավորները ձևավորվում են նախադրություն-  
ներով և նրանց խնդիրներով: Վերջինս կարող է լինել գոյական կամ գո-  
յականաբար գործածված այլ խոսքի մաս (հիմնականում՝ ածական):  
Մակբայական ՀԴԱ-ների կառուցատիպերի բնութագրման հարցում  
պետք է նկատի ունենալ նախադրության խնդիրների հոլովական ար-  
տահայտությունը: Դրանք դրսևորվում են սեռական, տրական և հայցա-  
կան հոլովներով:

ա) Սեռական խնդիր + չափ նախադրություն. *մահու չափ*:

---

<sup>3</sup> *Չերդ լար քաշած, զերդ մարգարիք պայծառ շարած* ՀԴԱ-ները ձևավորվել են հա-  
րակատար դերբայով: Վերջինս գործածվում էր արդեն VII դարից, սակայն լայն տա-  
րածում է գտել X դարից սկսած (տե՛ս **Ղազարյան Ս.**, Հայոց լեզվի համառոտ պատմու-  
թյուն, Եր., 1981, էջ 264):

Ընդհանրապես բայական ՀԴԱ-ների շարքն են դասվում նաև դերբայական կապակ-  
ցությունները, որոնք կարող են ունենալ ածականական, մակբայական կիրառություններ:

բ) Տրական խնդիր + նման նախադրություն. *ամպոց նման, նման Յուդայի, իմաստընոց նման*։

գ) Նախադրություն + հայցական խնդիր կառուցատիպով են ձևավորվել՝

|                |                                    |
|----------------|------------------------------------|
| զերդ զզերի,    | զէտ մանկակորուստ կաքաւ,            |
| զինչ զիրէշտակ, | զինչ գարնան կայծակն ի յամպէն,      |
| քան զծով,      | զերդ քան սևացեալ ամպ,              |
| քան զմայր,     | զինչ հաւն երամէն ի գատ հանց խօճայ: |

Ինչպէս նկատելի է այս շարքերի քննությունից, առաջին շարքի (քան զզերի...) կապակցությունները ձևավորվել են *նախադրություն+ խնդիր կադասայարով*, երկրորդ շարքի նախադրության խնդիրներն ունեն *հավելական բաղադրիչներ*. Ելակետային կառուցատիպը հանդէս է եկել կազմիչ տարրերի ծավալումով (զէտ մանկակորուստ կաքաւ...):

Փոխանուն ածականներով են ձևավորվել *զէր խէվի պէս, իմաստընոց նման, զերդ յիմար, զերդ զզերի, քան զնեծարունն յոփացեալ* ՀԴԱ-ները:

Հանդիպում են *ի + հայցական + նման նախադրություն կադասայարով* ՀԴԱ-ները. *ի ծով նման, ի յայի նման*:

Մակբայական ՀԴԱ-ների անվանական բաղադրիչները կարող են հանդէս գալ կա՛ն միայն եզակի, կա՛ն միայն հոգնակի թվով:

ա) Միայն եզակի թվով են.

|            |               |                               |
|------------|---------------|-------------------------------|
| մահու չափ, | քան զծով,     | զինչ գարնան կայծակն ի յամպէն, |
| քան զմայր, | նման Յուդայի, | ի ծով նման:                   |

բ) Միայն հոգնակի թվով են այն բաղադրիչները, որոնք անեզական գոյականներ են. *չափ արրաստաց*:

Հանդիպում են այնպիսի կապակցություններ, որոնք դիտվում են ձևաբանական տարբերակներ. անվանական բաղադրիչները հանդէս են գալիս եզակի/հոգնակի հակադրությամբ. *ի յայի նման // յալեաց նման*:

Դ. ՀԴԱ-ՆԵՐԻ ՉԵՎԱԲԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ

ՀԴԱ-ները ձևաբանական արժեքի տեսակետից միանշանակ չեն. դրանց շարքում հանդիպում են կապակցություններ, որոնք հանդէս են

գալիս մեկից ավելի արժեքների համատեղումով՝ ցուցաբերելով խոսքի-մասային (ձևաբանական) տարարժեքություն:

Չևաբանորեն տարարժեք ՀԴԱ-ները համատեղում են ածական//մակբայ իմաստներ. երկարժեք այդ կառույցներն առնչվում են մերթ առարկային (նախադասության դիտվածքում՝ գոյականական անդամին), մերթ գործողությանը (շարահյուսական միջավայրում՝ բայական անդամին):

Ածական//մակբայ տարարժեք ՀԴԱ-ները շարահյուսական մակարդակում հանդես են գալիս որոշչի և պարագայի գործառույթներով.

քան զմայր (սիրով լի - ած., սիրելով - մկբ.),

նման Յուդայի (դավաճան - ած., դավաճանաբար - մկբ.),

հանց խօճայ (գոռոզ - ած., գոռոզամտորեն - մկբ.),

քան զանգէտ աղբատ (խելճ, անօգնական - ած., խղճալի կերպով - մկբ.),

քան զփորձած ոսկի (շատ փորձառու - ած., փորձառու կերպով - մկբ.),

արեգական նման (շատ պայծառ - ած., պայծառ լուսավորելով - մկբ.),

զինչ զարնան նման (շատ պայծառ - ած., պայծառությամբ - մկբ.),

մահու չափ (խիստ շատ - ած., սաստիկ, չափազանց - մկբ.),

զինչ զհրեշտակ // հրեշտակի նման (շատ բարի, անդավաճան - ած., անդավաճան կերպով - մկբ.),

ծովին չափ - շատ (ած.), չափազանց, շատ-շատ (մկբ.),

սարին չափ - շատ մեծ՝ խոշոր (ած.), սաստիկ (մկբ.),

որպէս մանեակ ոսկի ի պարանոցի իշոյ - խիստ անհամապատասխան (ած.), չսագելով (մկբ.),

իմաստնոց նման - շատ խելացի (ած.), իմաստնաբար (մկբ.),

սիրամարգի նման - փքված՝ գոռոզ (ած.), գոռոզամտորեն (մկբ.) և այլն:

Օրինակ՝ Մէկն *նման է հրեշտակի*: Մէկն *նման է Յուդայի* (ՖԴ, 239),- ած.: Տէրն յառաջ քան զկանայքն Երևեցաւ *զինչ զհրեշտակ* (ՖԴ, 139),- մկբ.:

*Մահու չափ* մեղօք գործելով զմեղս խոցոտեն գՔրիստոս (ՆՄ, ԺԱՎ, 276),- ամ.: Բայց թէ *մահու չափ* անհանգիստ պահեն, յայլ տեղ ոչ երթայ (ՆՄ, ԺԱՎ, 153), - մկբ.:

Հանդիպում են ՀԳԱ-ներ, որոնց երկատված արժեքները, առանձին վերցրած, ցուցաբարում են բազմիմաստություն: Հմմտ. *սհեղակերպ քան զփայլակն*. 1. խիստ անսպասելի, 2. չափազանց ահեղ՝ հուժկու (ամծ.), 3. արագորեն, անսպասելիորեն, 4. ահեղորեն (մկբ.)<sup>4</sup>:

Այսպիսով, հայերենում ընդհանրապես, միջին հայերենում մասնավորապես ՀԳԱ-ները բնութագրվում են որոշակի ձևաբանական արժեքներով, որոնք բաշխվում են ամականի, բայի և մակբայի խոսքիմասային համակարգի շրջանակներում: Յուրաքանչյուր արժեքի ՀԳԱ-ն բնութագրվում է որոշակի կառուցատիպերով, որոնց կառուցվածքային պլանում որոշիչ դեր ունեն գերադաս բաղադրիչները, որոնք իրենց հերթին պայմանավորում են ամբողջ կառույցի խոսքիմասային արժեքը՝ ձևաբանական մակարդակում և նրա իրացումը շարահյուսականում: Որոշ ՀԳԱ-ներ էլ բնութագրվում են խոսքիմասային տարարժեքությամբ՝ շարահյուսական մակարդակում կատարելով տարբեր գործառույթներ:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ, ՔԲՄ.- Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Եր., 1962:

ԺԴՀԶՀ.- ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Եր., 1950:

ԿԵ.- Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Եր., 1962:

ՆՄ, ԺԱՎ.- Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Եր., 1984:

ՆՔ, ՀԿ.- Նահապետ Քուչակ, Հայրենի կարգավ, Եր., 1957:

ՊՂ.- Պ. Ղափանցի, Չքաղցրիկ թռչնոց կաքաւոց (Հայ գրականության քրեատոմատիա, Եր., 1992):

---

<sup>4</sup> Խոսքիմասային տարարժեք բառերի մասին տես **Խաչատրյան Լ.**, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985, էջ 32-54, **Խաչատրյան Լ.**, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., 1996, էջ 84-201:

ՖՌ.- Ֆրիկ, Դիւան, Նյու Յորք, 1952:

**Բանալի բառեր** – *կայուն կապակցութիւն, համեմատութիւն, արդարաբանական արժեք, ձևականական արժեք, անհայտ, մակրայ, ձևականական փոխարժեքութիւն:*

**ЛАЛИК ХАЧАТРЯН – Морфологическая значимость компаративных фразеологизмов среднеармянского языка.** – Морфологическая значимость компаративных фразеологизмов в среднеармянском языке характеризуются конкретными моделями, которые разделяются на следующие подгруппы:

*прилагательные* – սեաւ իբրև զհնդիկ, կեղծատր զանչ զսատանայ;

*глагол* – զինչ զհաց ուտել, զինչ մոմ հալել(իմ);

*наречие* – քան զմայր, զինչ հաւն երամէն ի զստ.

В плане образования таких категорий важную роль играют способы выражения доминантного компонента, грамматические признаки зависимого члена, расположение элементов сочетания, а также связывающие особенности предлогов в плане выражения и содержания структуры.

**Ключевые слова:** *устойчивый оборот, сравнение, подчинительный компонент, морфологическая значимость, прилагательные, глагол, наречие, морфологическая полисемия.*

**LALIK KHACHATRIAN - The morphological value of image-bearing set - combinations in Middle Armenian are characterized by specific models, which are divided into the following groups:**

*adjective* - սեաւ իբրև զհնդիկ, կեղծատր զանչ զսատանայ,

*verb* - զինչ զհաց ուտել, զինչ մոմ հալել(իմ),

*adverb* - քան զմայր, զինչ հաւն երամէն ի զստ.

In terms of the formation of these values the ways of expression of dominant component play important role the grammatical features of a dependent member, layout combinations, as well as binding characteristics of prepositions in the plans of expression and content structure.

**Key words:** *set-combination, comparison, subordinative component, morphological value, verb, adjective, adverb, morphological polysemy.*

**ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅԱՆ  
ԽՆԳԻՐՆԵՐԸ**

1916 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Համբավաբեր» շաբաթաթերթի մի քանի համարներում Մանուկ Աբեղյանը հրապարակ է հանում իր «Հայերեն տաղաչափության մասին» հոդվածը, որն արդեն պատրաստ, բայց միջոցների բացակայության պատճառով չտպագրված «Հայոց լեզվի տաղաչափություն» հիմնարար աշխատության գլխավոր դրույթների սեղմ շարադրանքն էր: Խմբագրությունն այդ հոդվածին կցել էր մի ծանոթություն՝ ընդգծելով տաղաչափական գիտելիքների կարևորությունը սկսնակ ստեղծագործողների համար: «Այդ սկսնակներից շատ շատերը,- գրված է խմբագրականում,- բանաստեղծական շնորհ են ցույց տալիս, բայց անտեղյակ են հայերենի ոգուն ու տաղաչափության, և երբեմն ցուցմունքներ են ուզում, մենք դիմեցինք մեր աշխատակից պ. Մ. Աբեղյանին հատուկ առաջարկով՝ Հայոց տաղաչափության էական հիմունքները պարզաբանելու...»: Շարունակության մեջ ասված է. «Խմբագրությունը միայն ցավել կարող է, որ պ. Մ. Աբեղյանի Հայերենի տաղաչափության ընդարձակ ուսումնասիրությունը ցարդ լույս չտեսավ: Հրավիրում ենք այս առթիվ մեր «Հրատարակչական Ընկերության» և հայ մեկենասների ուշադրությունը, մանավանդ որ այդ գրքի տպագրության ծախսը շատ չէ լինելու»<sup>1</sup>:

Սակայն Աբեղյանի այդ աշխատությունը, որը պատրաստ էր արդեն 1912 թ., տպագրվեց միայն երկու տասնամյակ անց՝ 1933-ին, և եկավ լրացնելու այն բացը, որ կար մեր գիտության մեջ այդ ասպարեզում: Իսկ հետաքրքրությունը տաղաչափական խնդիրների նկատմամբ իսկապես մեծ էր և ուներ օրեցօր աճող պահանջարկ: Նույն «Համբավաբերի» հոդ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ե, Եր., 1971, էջ 504:

վածի առաջաբանում Մ. Աբեղյանը գրում է. «Հաճախ մեր երաժիշտները դիմել են ինձ՝ բացատրելու իրենց, թե ինչ կանոններով են հորինվում մեր ոտանավորները, և նրանք միշտ գանգատվել են, թե մեր հայերեն ոտանավորի եղանակ դներու ժամանակ մեծ դժվարության են հանդիպում... Բայց հաճախ գրականությանը պարապող երիտասարդներ ևս դիմել են ինձ՝ ցույց տալու մի երկու գիրք, որի մեջ մանրամասն պարզաբանված լինեն մեր տաղաչափությունը. ես էլ այդ դեպքում դժվարության են հանդիպել»<sup>2</sup>:

Տաղաչափության հարցերը Մ. Աբեղյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում արդեն վաղուց ունեին իրենց ուրույն և լուրջ տեղը: Դեռևս 1889 թ. հրատարակած հայկական մորահայտ Էպոսի «Գավիթ և Սիեր» պատումի առաջաբանում նա փորձում է բացահայտել և վերլուծել մեր ժողովրդական վիպերգի տաղաչափական կառուցվածքը: Աբեղյանի կողմից տաղաչափական հատուկ քննության նյութ են դարձել հայ գուսանական և ժողովրդական երգերը («Հայ ժողովրդական վեպը», «Գուսանական ժողովրդական երգեր» ուսումնասիրություններում): «Համբավաբերի» հոդվածաշարից հետո 1923 թ. նա հրապարակում է «Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բանաստեղծությունների մեջ» ծավալուն ուսումնասիրությունը, ավելի ուշ՝ 1934 թ., «Շահնամայի» ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» հոդվածը և մի շարք այլ գործեր, որոնցում արժարժված են տաղաչափական խնդիրներ: Հայտնի է, որ Գևորգյան ճեմարանի լսարանական բաժնում Աբեղյանը դասախոսություններ է կարդացել հայ տաղաչափության վերաբերյալ: Այս փաստերը վկայում են այն մեծ հետաքրքրության մասին, որ գիտնականը մշտապես ունեցել է հայկական ոտանավորի կառուցման ձևերի և եղանակների նկատմամբ:

Ո՞րն էր գիտության այս բնագավառում այն ելակետային վիճակը, որից սերում և շարունակվում էին Աբեղյանի տաղագիտական հետաքրքրությունները: Դեռևս 5-6-րդ դարերում հայ իրականության մեջ հունարան դպրոցի քերական մեկնիչները մշակել էին տաղաչափությա-

---

<sup>2</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 385:

նը վերաբերող հայերեն մի շարք տերմիններ: 19-րդ դարում, հատկապես Մխիթարյանների մոտ, տաղաչափական խնդիրների ուսումնասիրությունը լայն թափ ու ծավալ է ստանում: Այդ հարցերով զբաղվում են Է. Հյուրմյուզյանը, Ա. Բագրատունին, Ղ. Հովնանյանը և ուրիշներ: Տաղաչափության հարցերին մեծ տեղ է հատկացրել Արսեն Այտընյանը իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ: Ի դեպ, Մանուկ Աբեղյանն իրեն դիմողներին խորհուրդ էր տալիս կարդալ հենց այս աշխատանքը տաղաչափական քիչ թե շատ ամբողջական գիտելիքներ ձեռք բերելու համար: Նշանակալի երկեր էին Ավ. Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» գիրքը, Աթանես Տիրոյանի «Ասորական և հայկական տաղաչափություն» հոդվածաշարը: Անունների այս շարքը կարելի է համարել ևս մի քանիսով, սակայն պետք է նշել, որ մինչաբեղյանական տաղագիտությունը մեզանում կրում էր գերազանցապես նկարագրական բնույթ և շատ հաճախ վերաբերում էր որևէ առանձին, մասնավոր շրջանի (ասենք, Գողթան երգերին կամ միջնադարյան բանաստեղծության ձևերին): Մինչաբեղյանական տաղագիտության մյուս էական թերությունն այն էր, որ հայկական ոտանավորի օրինաչափությունները փորձում էին վերաձևել անտիկ կամ ռոմանական լեզուների (գերազանցապես՝ ֆրանսերենի) տաղաչափական սկզբունքների հիման վրա՝ հաշվի առնելով հայերենի և այդ լեզուների շեշտադրական որոշակի մանրություններ: Ինչպես իրավացիորեն նկատել է ակադ. Սարգիս Հարությունյանը, «Հայ տաղաչափագիտությունն ընդհանրապես մինչև Աբեղյանը տակավին իր մանկությունն էր ապրում, հնի ավանդական խանձարուրով կաշկանդված. զգացվում էր նոր խոսքի, գիտական նոր մտքի անհրաժեշտություն»<sup>3</sup>:

Աբեղյանն այս ասպարեզում հիրավի դարձավ այն նախակարապետը, ով փորձեց ստեղծել ամբողջական և տեսական տաղագիտություն: Նախ՝ նա առաջինն էր, որ սահմանեց և անվանում տվեց տաղաչափական բազմաթիվ հասկացությունների՝ իհարկե, մեծ չափով հենվելով իր

---

<sup>3</sup> Հարությունյան Ա., Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Եր., 1970, էջ 431:

նախորդների մշակած տերմինաբանության վրա, բայց և զգալիորեն հարստացնելով այն: Նրա շնորհիվ մեզանում սկսեցին շրջանառվել շատ նոր եզրույթներ ու հասկացություններ:

Մեծ գիտնականի տաղազիտական հայացքների առանցքում չափաժոյի և բնական արձակ խոսքի կառուցման սկզբունքների համադրում էր, քանի որ, ըստ նրա, չափաժոյի ուսումնասիրությունն անհնարին է առանց արձակի բնական ռիթմի և առոգանության ուսումնասիրման, և արձակից որոշակի շեղումներն են հենց ստեղծում չափաժոն՝ իբրև հատուկ կազմակերպված խոսքի տեսակ: Իր աշխատությունն անվանելով «Հայոց լեզվի տաղաչափություն»՝ Աբեղյանը դրանով իսկ ընդգծում էր ուսանավորի կառուցվածքի սերտ կապը լեզվի ընդհանուր սկզբունքների և պրոսոդիայի հետ (շեշտադրություն, արտասանական տևողություն, իմաստային շեշտ, տրույմ, բառակազմություն և այլն): Եթե ժամանակակից տեսական միտքը գրականագիտությանն է հատկացնում տաղաչափությունը, ապա Աբեղյանն ընդգծեց վերջինիս կապն առավելապես լեզվաբանության հետ, իսկ ավելի շուտ՝ այն համարեց լեզվաբանության և գրականագիտության արանքում գտնվող մի միջանկյալ գիտություն, որը յուրահատուկ ձևով շաղկապում է այդ երկուսը:

Մյուս նորույթը, որ բերեց Աբեղյանը, ուսանավորի և երաժշտության սերտ կապի ընդգծումն էր դրանց ծագումնաբանական և ռիթմական-կառուցվածքային հիմքի վրա: Երաժշտական տակտերի, դրանց տևողության, ընկնող և բարձրացող ռիթմերի նմանությամբ էր նա բացատրում տաղաչափական շատ իրողություններ: Միևնույն ժամանակ նա ցույց էր տալիս բանաստեղծական շատ ձևերի՝ էպոսի, գուսանական պոեզիայի երգային բնույթը և դրանց տաղաչափական կառույցի սերտ կապը երաժշտության հետ: Սակայն Աբեղյանը նաև բազմիցս խոսում է դրանց տարբերության մասին՝ ընդգծելով, որ պոեզիան կապված է առաջին հերթին խոսքի, հետևաբար մտքի և իմաստի արտահայտման հետ, իսկ երաժշտությունն ազատ է հնչյունների օգտագործման մեջ:

Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափության» կարևորագույն արժանիքներից մեկն էլ բանաստեղծական ձևի և բովանդակության սերտ կապի ընդգծումն է: Այդ գրքում, որն առաջին հայացքից կարող է գուտ

ձևական քննության նմուշ թվալ, հեղինակը բազմիցս շեշտադրում է ձևի կապը բանաստեղծության բովանդակային կողմերի հետ՝ առաջնությունը տալով վերջիններին: Հետաքրքիր է, որ աշխատությունը լույս տեսնելուց անմիջապես հետո նրա գրախոսներից մեկը՝ բանասեր-երաժիշտ Հակոբ Հարությունյանը, հաճելիորեն զարմացած լինելով Աբեղյանի տաղաչափական գիտելիքների խորությամբ և ընդգրկման լայնությամբ, միևնույն ժամանակ նրան մեղադրում էր ֆորմալ, ձևապաշտական մոտեցման մեջ: Թեև գրախոսությունը մնում է անտիպ, սակայն Աբեղյանին ներկայացնում են այն՝ խնդրելով պատասխանել գրախոսականում արված դիտողություններին: Աբեղյանը հանդես եկավ «Մի քանի տաղաչափական խնդիրների մասին» ընդարձակ բանավիճային հոդվածով, որտեղ փորձեց պաշտպանել իր աշխատության մեթոդաբանական սկզբունքները՝ մեկ առ մեկ ցույց տալով գրախոսի սխալներն ու վրիպումները<sup>4</sup>:

Սակայն Աբեղյանի «Տաղաչափության» ամենաարժեքավոր կողմը թերևս այն հսկայական նյութի ընդգրկումն է, որ տեսնում ենք այդ աշխատանքում: Զննության առնելով հայկական բազմադարյան պոեզիայի մեծաթիվ նմուշներ՝ սկսած Գողթան երգերից մինչև Չարենց և նրա ժամանակակիցները, Աբեղյանն առաջին անգամ փորձ արեց ստեղծելու ոչ թե նկարագրական, այլ տիպաբանական տաղագիտություն, որտեղ հստակ ներկայացված էին այն բոլոր տեսակներն ու ենթատեսակները, որոնք հանդիպում են մեր բանաստեղծության մեջ: Նա նշել է հայկական ոտանավորի 53 հիմնական տեսակ՝ միևնույն ժամանակ ցույց տալով մեր տաղաչափության պատմական զարգացման ընթացքը, նոր ձևերի առաջացման միտումները, մեր ոտանավորի կրած ազդեցությունը գուսանական արվեստից, արևելյան և արևմտյան ժողովուրդների բանաստեղծությունից: Ուստի կարելի է ասել, որ տաղաչափության տիպաբանական քննությունը Աբեղյանի մոտ ձեռք է բերում նաև պատմական երանգավորում:

---

<sup>4</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 453-500:

Աբեղյանի «Տաղաչափությունը» միևնույն ժամանակ հավակնում էր դառնալ նորմատիվ տեսություն, քանի որ, գծագրելով բանաստեղծության կառուցման հիմնական սկզբունքները, գիտնականը նաև մատնանշում էր այդ կանոններից շեղումներ տարբեր պոետների մոտ: Նորմատիվիզմի այս կարգի դրսևորումը, իհարկե, հետագայում ենթարկվեց լուրջ քննադատության:

Այստեղ առանձին պետք է անդրադառնալ մի հարցի, որը Աբեղյանի տաղաչափական տեսության ամենաքննադատված և ամենավիճելի կողմերից է: Խոսքը վերաբերում է հայկական ոտանավորի բնույթին, որին Աբեղյանը փորձեց տալ սպառիչ և ամբողջական պատասխան: Իրավացիորեն ընդգծելով հայկական ոտանավորի ինքնատիպությունը՝ գիտնականը միևնույն ժամանակ հակադրվեց մեզանում իշխող և հատկապես Մխիթարյաններից եկող մտայնությանը՝ մեր տաղաչափության բնույթը բացատրել ֆրանսիական պոեզիայի օրինակներով: Աբեղյանը մի քանի անգամ իրավացիորեն հայտարարում է. մեր պոեզիան չի կարելի վերածնել ֆրանսիականի օրինակով, քանի որ մեր լեզուն այլ բնույթ ունի: Նա նաև նկատում է, որ եթե ֆրանսերենում սովորական են երկար անդամները, ապա մեր լեզուն հակված է ավելի փոքր միավորներով կառույցների: Այստեղից Աբեղյանն անցում է կատարում մի խնդրի լուծման, որը դեռևս այդպիսի ծավալով և այդ խորությամբ չէր դրվել մեր տաղագիտության մեջ. դա մեր ոտանավորի ինքնատիպ որակի բացահայտման խնդիրն էր: Սակայն հրաժարվելով ֆրանսիականից՝ Աբեղյանն այդ հարցի լուծմանը մոտեցավ գերմանական տաղագիտության ելակետից՝ հայտարարելով, որ մեր ոտանավորը միջանկյալ տեղ է գրավում գերմանականի և ռուսականի արանքում և իր բնույթով շեշտային է, այսինքն՝ ռիթմի ստեղծումը պայմանավորված է ուժեղ արտասանվող շեշտերով: 1915 թ. նման տեսակետ էր հայտնել նաև Ստ. Մալխասյանը, որը «Չիթենի» գրական ժողովածուում, հավանաբար ոչ առանց Աբեղյանի որոշ հոդվածների անմիջական ազդեցության, հրապարակում է «Հայերեն տաղաչափությունը շեշտային է» պարտադրող վերնագրով հոդվածը: Այս պնդմամբ երկու խոշորագույն գիտնականներն ըստ էության հակադրվում էին մինչ այդ իշխող տեսակետին հայկական ոտա-

նավորի վանկային բնույթի մասին, տեսակետ, որին Արեղյանը մի քանի անգամ անդրադառնում է իր աշխատության մեջ՝ ըստ էության ժխտելով Ադոնցի, Բագրատունու, Բահաթրյանի և այլոց տեսությունները: Մակայն պետք է ասել, որ երկու խոշոր գիտնականներն այս հարցում մնացին միայնակ: Նշենք, որ հայկական ոտանավորի վանկային բնույթի մասին խոսել են նաև օտարները՝ Ն. Մառը, Վ. Բրյուսովը և ուրիշներ: Ի դեպ, Բրյուսովն այդ խնդրին ուղղակիորեն անդրադառնում է ոչ միայն իր կազմած «Поэзия Армении» անթոլոգիայի առաջաբանում, այլև «Մի քանի մտքեր հայկական տաղաչափության մասին» անավարտ հոդվածում:

Հետաքրքիր է, որ հայկական ոտանավորի շեշտային բնույթի դեմ առաջինն ընդվզել է Ե. Չարենցը 1934 թ. օրագրային մի գրառման մեջ. «...Չնայած Մ. Արեղյանի «գիտական» դրգմային, մեր տաղաչափությունն իր հիմքում, այնուամենայնիվ, վանկային է,- գրում է նա, - իսկ շեշտային տաղաչափությունը մեր բանաստեղծական արվեստի մեջ բերովի, արհեստական կուլտուրա է, որ իր հիմքում իսկ ինտելիգենտական է, այսինքն՝ մտացածին»<sup>5</sup>: 1936 թ. Թիֆլիսի «Պրոլետար» թերթի համարներից մեկում Պողոս Մակինցյանը, տպագրելով Պուշկինի «Բորիս Գոդունով»-ից կատարած իր թարգմանության մի հատված, նույնպես անդրադառնում է այս խնդրին և ուղղակիորեն հանդես գալիս Ս. Մալխասյանի ու Արեղյանի տեսության դեմ՝ պնդելով, թե «տաղաչափության խնդրի ուղիղ լուծումից կախված կլինի թարգմանությունների որակը», և օտար լեզուներից թարգմանելիս պետք չէ պատճենել օտար տաղաչափության սկզբունքները<sup>6</sup>:

Հայկական ոտանավորի վանկային բնույթը գիտականորեն հիմնավորեց 20-րդ դարի 60-70-ական թթ. ասպարեզ եկած հայ տաղագետների նոր սերունդը (Էդ. Ջրբաշյան, Ռ. Պապայան, Ա. Պապոյան, Վ. Նավասարդյան, Դ. Գասպարյան, Ռ. Ղուլյան և ուրիշներ)՝ իհարկե,

---

<sup>5</sup> **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1967, էջ 478:

<sup>6</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Ջրբաշյան Է.**, Ինչի՞ մասին էր վեճը (1930-ական թթ. հայ բանասիրության պատմությունից), Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, Եր., 1996, N 2, էջ 16-30:

ամենևին չնսեմացնելով Մանուկ Աբեղյանի դերը հայ տաղագիտության զարգացման գործում<sup>7</sup>: Միևնույն ժամանակ նշվեցին այն օբյեկտիվ պատճառները, որոնք ծնունդ էին տվել հայկական ոտանավորի շեշտային բնույթի վերաբերյալ տեսությանը:

Նախ, ինչպես իրավացիորեն նկատված է, 20-րդ դարասկզբին, երբ առաջ քաշվեց այդ տեսությունը, բանասիրության մեջ բավական տարածված էր այն մտայնությունը, որի համաձայն՝ վանկային տաղաչափության համեմատությամբ շեշտային ոտանավորը զարգացման ավելի բարձր աստիճան էր ներկայացնում: Հետևաբար Աբեղյանը փորձում էր կարծես մեր ոտանավորը դնել «ավելի բարձր» որակական աստիճանի վրա:

Երկրորդ, տաղաչափական ձևերը բաժանելով միայն երկուսի՝ ամանակայինի և շեշտայինի՝ Աբեղյանը ողջ եվրոպական հետբյուզանդական պոեզիան համարում էր շեշտային և ըստ էության հայկական վանկային ոտանավորը նույնպես քննում էր այդտեղ՝ իբրև դրա տարատեսակ, բայց իբրև հակադրություն հին շրջանի ամանակային ձևերի:

Երրորդ պատճառը բանաստեղծությունն անպայմանորեն երաժըշտության ռիթմական սկզբունքների հետ կապելու միտումն էր, ինչը հանգեցնում էր շեշտերով ձևավորվող ռիթմին նախապատվություն տալուն: Իհարկե, այստեղ չի կարելի շխտել նաև գերմանական բանասիրության այն մեծ ազդեցության մասին, որը կրում էր Մ. Աբեղյանը:

Սակայն գիտնականի մեծությունն ի վերջո ոչ թե վերջնական ճշմարտություններ տալն է, այլ գիտության համար նոր հուն բացելը: Իսկ այս առումով Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափությունը» իրոք նոր և լայն հուն բացեց հայ տաղագիտության համար՝ ձևավորելով նրա գիտական և տեսական ամուր հիմքերը:

**Բանալի բառեր** – *տաղաչափություն, պրոսոդիա, շեշտ, ռիթմ, բանաստեղծական չափ, ամանակային ոտանավոր, շեշտային ոտանավոր, վանկային ոտանավոր:*

---

<sup>7</sup> Հայկական ոտանավորի վանկային բնույթի առավել հանգամանալից գիտական հիմնավորումը տես **Ջրբաշյան Է.**, Պոետիկայի հարցեր, Եր., 1976, էջ 153-270:

**АШХЕН ДЖРБАШЯН – Манук Абегиан и проблемы армянского стиховедения.** – В 1933 году вышло в свет монументальное научное исследование М. Абегиана «Метрика армянского языка». Абегиан впервые сделал попытку создать целостную теорию армянского стиха. Он показал, что армянский стих надо рассматривать согласно законам армянского языка, а не иностранных языков. В то же время он определил особенность армянского стиха, считая его тоническим. В 60-70-ые годы XX века новое поколение армянских стиховедов научно обосновало силлабическую природу армянского стиха, при этом нисколько не принижая роль М. Абегиана в развитии армянского стиховедения.

**Ключевые слова:** *стихосложение, просодия, ударение, ритм, стихотворный размер, метрический стих, тонический стих, силлабический стих.*

**ASHKHEN JRBASHYAN – Manuk Abeghyan and Problems of Armenian Metrics** – In 1933 the fundamental work by Manuk Abeghyan entitled “Metrics of Armenian Language”, was published which opened a new course in Armenian metrics. For the first time Abeghyan tried to create a complete and theoretical prosody. He showed that our poems must be examined by the rules of Armenian and not foreign languages. At the same time he defined the nature of our verse and considered it to be accentual. In 60-70s of the 20<sup>th</sup> century the new generations of specialists in metrics without overshadowing the role of Abeghyan in the development of Armenian prosody scientifically proved the syllabic nature of Armenian verse.

**Key words:** *metrics, prosody, stress, rhythm, metre, quantitative verse, accentual verse, syllabic verse.*

**ԳՈՏԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅԱՄԲ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ  
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Գոտի կրելու՝ հին ուխտից ժառանգված իրավունքը, որով խորհրդրանշվում է Քրիստոսի ողջախոհությունը, քահանայական աստիճան ունեցողների մենաշնորհն է: **Գոտի** հասկացությունը հատկանշվում է իմաստային կոնկրետացում կամ սահմանափակում արտահայտող բազմաթիվ բառերով, այդ թվում՝ հոմանիշներով ու հնչյունական տարբերակներով: Լեզվական այդ միավորներն ունեն և՛ աշխարհիկ, և՛ կրոնական բովանդակություն, մատնանշում են հագուստի այդ բաղադրիչի որակներն ու ձևերը, կրողների սեռատարիքային առանձնահատկությունները:

Գրական հայերենին բնորոշ *գոտի* ձևը տարածքային ոչ մի տարբերակում չհանդիպեցինք, հակառակ դրան՝ բազմաթիվ են բարբառային և խոսվածքային արտահայտությունները<sup>1</sup>. **գծփէ**, Մեղրի // **կողի**, Եդեսիայի Գարմունջ, Սասունի Քոփ, Նիկոմեդիայի Խասկալ, Մոտկանի Նիչ, Համշեն // **կ'ուդա**, Չեյթունի Ֆուռնուս // **կ'օտի**, Վան, Գոբիս // **կօտր** // **կուտի**, Սասունի Կրխու // **կ'նփէ**, ԼՂՀ Մարտունու Նոր շեն, Կաղարծի, Վերին Հոռաթաղ // **կ'ծփի**, Վարդաշեն // **կուդա**, Սվեդիայի Խտրբեկ, Մարաշ // **կծո**, Քեսաբ // **կ'ուդի**, Հաջըն // **քողի**, Մալաթիա և այլն: «Ֆրստանին փարչեվեն իվիցօվ, քուդի գարըցի» (Բեյլան):

Ինչպես նկատելի է, նշված հնչյունական զուգաբանությունները դրսևորում են տվյալ տարածքներին բնորոշ բաղաձայնական և ձայնավորական փոփոխություններ, որոնց համար որպես ելակետ ծառայել է *գոտի* բառը: Մի շարք վայրերում ելակետային է ոչ թե *գոտի* -ն, այլ *գաւ-*

---

<sup>1</sup> Բարբառային օրինակները բերվում են ըստ բարբառագիտական մենագրությունների, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութերի և բարբառախոս վայրերում մեր կատարած հարցումների:

յրի գրաբարյան հնչյունակազմը, որի *ւ* ձայնորդը հնչյունափոխվելով դառնում է *խ*, ինչպիսին հանդիպում ենք, օրինակ, *եսութն > օխտ, աւշ > օխծ, քարքափել > քախարքիել* բառերում: Կարելի է ենթադրել, որ ներքոբերյալ տարածքներում գրաբարյան լեզվական իրողությունները համեմատաբար կայուն են (*գոխարի*, Նոր Ջուղա // *գօխարի*, Ագուլիս // *գ'նխարի*, ԼՂՀ Խանազահ, Ղարաղաղի Ղասմաշեն և Քեյվան) և այլն:

Արևմտյան խմբակցության Սասունի բարբառի Փսանքի Մըշկեղ բնակավայրի խոսվածքային կղզյակում *գուրի* բառը հանդես է գալիս *ն* որոշյալ հոդով՝ **կուդին**:

Տարածքային մի շարք տարբերակներում *գուրի* բառին ավելանում է գրաբարյան *ք* հոգնակերտը, որը, միանալով *ի* վերջնաձայնավորին, կազմում է **իք > իկ // իգ** հնչյունակապակցությունը և ընկալվում որպես փաղաքշական կամ փոքրացուցիչ ածանց: Փոքրացուցիչ - փաղաքշական նրբիմաստը կարելի է հիմնավորել արևելյան տարածքի Մեղրիի բարբառի Կաքավաբերդի խոսվածքի **գ'նխտակ // կ'նխտակ** և Անատոլիական Բուրդուրի **կ'օտուկ** տարբերակներով, ուրում *ակ* և *ուկ*-ը նույնպես ընկալվում են որպես այդպիսի վերջածանցներ:

Օրինակ՝ **գ'օղիք**, Չարմահալի Սինագան, Վերին Բուրվարի Դեյնով // **գնդիգ**, Փերիայի Սանգիբարան // **կյնպիք**, Նախիջևանի Շուռուտ // **կօրիկ**, Ցածի Թիմարի Բոշանի, Փերիայի Ճաղկալանջ // **կնդիգ'**, Շամախի // **կ'ծպի(կ)**, Շահունյանի Բուզլուխ // **կուրեժկ**, Մոկսի Մամուտանց // **կօղիգ**, Նախիջևանի Ագնաբերդ, Շամխորի Նյուզգեր, Էջմիածնի Շահումյան, նաև *գաւոր* ելակետային արմատից՝ **գօխարիկ**, Հավարիկ // **գ'նխարիկ**, Կարճևան և այլն:

Պարզ դիտարկումը ցույց է տալիս, որ **իք > իկ // իգ** -ը հիմնականում բնորոշ է արևելյան, հատկապես պարսկահայերով բնակեցված վայրերին:

Մոկսի Խալենց բնակավայրում գոտի **> կ'նպե'իկ** բառը իմաստավոր-խոթյան է ենթարկվել և նշանակում է *կանացի գլխարկ*: Կարելի է ենթադրել, որ իմաստավորխոթյան հիմքում ընկած են արտաքին նմանությունը և ինչ-որ առումով գործառութային ընդհանրությունը:

Մի շարք տարածքներում *գուրի* բառը հանդես է գալիս որպես բառակապակցության անդամ, որին ուղեկցում են տեսակային, որակային, բաղկացուցչային, ձևային, սեռատարիքային, գեղարվեստական, ազգագրական, խորհրդանշային, կիրառական, տեղային իմաստատարներ: Այսպես՝ *խուլաց կողի* (=հյուսած), Արդվինի Խոփա և Բորչկա // *շալ գ'օղի*, Ալաշկերտի Յօնջալու և Իրիցու գյուղ // *շալէ կ'ուղի* (լայն, պարսկական), Հաջըն // *սջամշալ կողի* (Պարսկաստանից բերված), Մասունի Արծվիկ // *շօրէ գ'օրիկ*, Կարսի Չոլախլու // *շօրէ կօրի*, Էջմիածնի Աղավնատուն և Հայթաղ // *բօսյակողի* (գորգի նման գործված գեղեցիկ և քանկագին), Սեբաստիայի Դենդիլ և այլն:

*Գուրի* բառն առանձնանում է հոմանշային ընդարձակ շարքերով, որոնցում ընդգրկված են և՛ հայերեն բառեր, և՛ օտարաբանություններ, և՛ դրանցով բաղադրված բարդություններ ու բառակապակցություններ:

Հայերեն են՝

**Գար**, Սեբաստիա // *գարիչ* // *վարդիքգարիչ*, Խոփա և Բորչկա // *մէջ կաս*, Խոյ, Մոկս, Մուշ // *մէջքգար*, Տրապիզոն // *մրշկաս*, Բայազետի Մուսուն // *միչկար*, Բուլանուխի Միրբար // *մէչկար*, Մուշի Հադգոն, Ալաշկերտի Կազի // *մեճկար*, Ապարանի Չորագլուխ // *միճկար*, Արագածոտնի Մելիքգյուղ, Հարթավան, Արագած, Արայի, Ափնա և Կայք // *մէշկ'ս*, Շատախի Արնշատ, Խոշաբի Ձենիս // *մէշկաս*, Նախիջևանի Գյումուր, Մոկսի Հաղին և Խալենց, Վանի Ալյուր և այլն:

**Լարան**, Բուլանուխի Յոնջալու և այլն: Կարծում ենք՝ *լարան* - *գուրու* հոգևոր իմաստի համար հիմք է հանդիսացել դերվիշների՝ գոտու փոխարեն պարան կապելը որպես աշխարհիկ կյանքի վայելքներից հրաժարման հավաստիք:

**Կաշի** // *մէչկի կաշի*, Վանի Դարման և Ծվստան:

**Փորքաշ**. Գարաբաղի բարբառին բնորոշ այս կցական բարդությունն ունի բացառապես հոգևոր բովանդակություն և նշանակում է *քահանայի փորի վրա կապված գուրի*:

Արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, ռուսերեն օտարաբանություններ են՝

**Բաշ**, Հին Բայազետից եկածներով բնակեցված Ապարանի Քուչակ:

**Թաամա**, Ախալցխայի Ջուղա և Ծղաթբիլա, Ախալքալաքի Ալաստան և Աբուլ, Փերիայի Դաջա // **քուսի**, Բուլանուխի Յոնջարու և այլն:

**Թօխկա**, Հավարիկ, Ղարաբաղ, Նուխի, Ղարաղաղի Ղասմաշեն և այլն: **Թօխկա** հոմանիշը արևելյան խմբակցության Ագայի, Օշականի և Վայոց ձորի միջբարբառի Նախիջևանի Ագնաբերդի և Մեծոփի խոսվածքներում հանդես է գալիս որպես բազմիմաստ բառ՝ միաժամանակ նշանակելով նաև *գուրու ճարմանդ*:

**Կայիշ**, Վանի Դարման և Ծվատան, Ցածի Թիմարի Քոչանի // խաիշ, Արագածոտնի Մելիքզյուղ, Հարթավան, Արագած, Արայի, Ափնա, Կայք // **կաիշ**, Մալաթիա // Ծայիշ, Խոշարի Ձենիս, Ալաշկերտի Կագի, Արծկեի Սիփան // **կէիշ**, Ագա // **գայիշ**, Համշենի Օրդու, Խոփա և Բորչկա // **ղայիշ**, Նախիջևանի Ագնաբերդ, Պարսկաստանի Քիշմիշթափա, Ղարաղաղի Ղասմաշեն // **ժայիշ**, Դիաղիմի Ջուջան, Վանի Քոեր // **ժօիշ**, Եղեսիայի Գարմունջ // **ժէիշ**, Քեսաբ // **խլլիշ**, Սասունի Քոփ // **կայիշա**, ԼՂՀ Մարտակերտ և այլն:

**Կուշկուն**, Ագա:

**Ղ՛օլան**, Եղեսիայի Գարմունջ:

**ճարիկ**, Խիզանի Խարիոթ, Բիթլիսի Շեն, Կարկառի Ծոկոից գաղթածներով բնակեցված Աշտարակի Ագարակ // **ճօրիկ**, Գավաշի Հարպերտ («ճօրիկ շորից էր, թօթով կրպեիէն ծախէն») // **ճօրէ՛կ**, Մոկսի Մամբուտանց, Շատախի Կվերս // **ճարէ՛կ**, Մամբուտանցի Ապարանց և Սեղ // **ճարրէ՛կ**, Բիթլիսի Տուսու // **ջառ**, Տիգրանակերտ և այլն:

**Շըբօկ**, Վանի Ավրակ:

**Շալ**, Վանի Քոեր:

**Պօյխ**, Խոյ - Սալմաստից եկածներով բնակեցված Չորաղբյուր // **պօյէս**, ԼՂՀ Մարտակերտ, Վերին Հոռաքաղ // **պօյէգ**, Շամխորի Մարտունի և այլն:

**Սօյրօտլիկ**, Սեբաստիայի Դենդիլ // **սօրօփլլղ**, Բասենի Գոմաձոր:

**Քըշիգ**, Սասունի Արփի:

**Քյամար**, Մուշի Հաղոցն և Վարդենիս, Փերիայի Բուղրան («Քյամարը Ջ՛ուղայում, Թէիրանում ինք տենում»), Ապարանի Չորագլուխ, Բայազետի Մուսուն // **ք՛ըմըր**, Խնուսի Գոպալ, Փսանքի Մըշկեղ // **ք՛էմեր**,

Ալանբեկ // **ք'՝մ՞ր**, Նախիջևանի Ազնաբերդ և Մեծովի, Շահումյանի Բուզլուխ, Նուխի // **չամար**, Հին Բայազետից եկածներով բնակեցված Ապարանի Քուչակ // **չ՞մ՞ր**, Ազա // քեմեր, Ռոդոսքո // **քյամարբանդ**, Վերին Բուրվարի Դեյնով և այլն:

**Օխճուր**, Կարսի Նախիջևան // **ուչխուր**, Համշենի Օրդու:

Ինչպես նկատում ենք, օտարաբանությունների տարածագործառնականության պատկերը խիստ տարբեր է: Մի դեպքում դրանք մեկ-երկու վայրերում գործառող կոլոկալային օրինակներ են, մյուս դեպքում՝ բավականին լայն բարբառային տարածք գրավող բառաձևեր, ինչպիսիք են, օրինակ, արաբերեն *կայիչ* և պարսկերեն *քյամար* փոխառությունները:

Հայերեն + օտարաբանություն են՝ **կաշվե դայիչ**, Կարսի Չոլախլու, Ախալքալաքի Ալաստան, Մալաթիա, **միչաց ք՞մար**, Նախիջևանի Շուշուտ, ԼԳՀ Մարտունու Կաղարծի, Տաշիրի Մեծավան, Սասունի Գոմք, Բիթլիսի Քրխասան // **միչմու քամար**, Սասունի Արծվիկ, մեչաց շալ, Վերին Հայոց ձորի Հորմոդուր, **միգրի քեկ**, Բուլանուխի Յոնջալու, **երչաքե ք՞մար**, Մոկսի Խալենց // **այչքքե ք՞մ՞յ**, Հաջըն // **արչաք քյամար**, Կարսի Չոլախլու, **վոսկ՛ե ք՞մ՞ր**, Էջմիածնի Աղավնատուն և Հայթաղ, Փերիայի Ծաղկալանջ և այլն:

Կը ճյուղի Տիգրանակերտի բարբառում արծաթից պատրաստված գոտին անվանում են **վոսկ՛ե ք՞մ՞ր**: Կարելի է ենթադրել, որ հին տիգրանակերտցիները գոտի պատրաստել են միայն ոսկուց և կոչել են **վոսկ՛ե ք՞մ՞ր**, ապա հետագայում ոսկին փոխարինել են արծաթով՝ սովորույթի ուժով պահպանելով նախկին անվանումը, որում մթագնել է **ոսկի** բառի մաստը:

Օտարաբանություն + օտարաբանություն-Աջամ շալի, Եդեսիայի Գարմունջ: **Ղայիչ ք՞մ՞ր**, Մերաստիա և այլն:

Ինչպես նշեցինք, վկայաբերված տարբերակներին կարող ենք վերագրել և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր բովանդակություն: Մի շարք տարածքներում գործառում են միայն որպես աշխարհիկ բովանդակություն ունեցող բառեր և հատկանշում են կանացի, մանկական, կենդանու կամ մետաղադրամներ պահելու համար նախատեսված գոտին և այդ իսկ

պատճառով տվյալ բարբառային տարածքում կրոնակեղեցական բառաշերտի մաս կազմել չեն կարող, չնայած մի այլ վայրի խոսքում ունեն հոգևոր իմաստ: Նման բառերը պայմանականորեն կարելի է անվանել երկդիմի գուգաբանություններ: Այսպես՝ *այոյխ* // *այոյխ*, Նուխի, *կօրիկ*, Նախիջևանի Մեծով, *չայ*, Ալաշկերտի Յօնջալու և Իրիցու գյուղ, Կոտայքի Ողջաբերդ, *լ՞ր՞ն*, Արծկեի Հառեն և Արջրա (մանկական՝ բարակ, կոպիտ գոտի), *դայիշ*, Շամխորի Նյուզգեր (կենդանու), Աբխազիայի Ալախաձեն (կտրիճի), *ք՞մ՞ջ*, Հաջըն (մեջը դրամ պահելու համար, կապում են վերնագգեստի տակից) // *ք՞մ՞ր*, Սեբաստիա, Ալաշկերտի Յօնջալու և Իրիցու գյուղ (արծաթե, ոսկեջրած, կանացի), Չեյթունի Ֆուռնուս (արծաթե, միայն հարուստների կանանց համար նախատեսված), Վանի Քներ (ոսկեղեն պահելու համար), Բեյլանի Սովըլուխ և Աթըխ (ոսկի պահելու համար), *միշկասպ*, Ապարանի Ծաղկաշեն, *ա՞րևիկ*, Մոկաի Մամըռտանց, *ք՞ջ*, Արծկեի Հառեն և Արջրա, *կօրի*, Սեբաստիայի Դենդիլ (հասարակ), *մէջօց կ՞ողի*, Հաջըն (ոսկի պահելու համար) և այլն:

Ռոդոսքոյի բարբառը հոգևոր բովանդակության համար տարբերակում է *խայիշ*, աշխարհիկի համար՝ *քօրի* հոմանիշները, չնայած հոգևոր իմաստով օրինաչափ կլիներ *գօրի* գրական ձևի կիրառությունը:

Փերիայի Բոլորանում տարբերակումը պայմանավորված է համապատասխան հումքից պատրաստված լինելով: «*Յագրի գ՞ողիզը քանզ կրդորից էր, րդդամարթիկ ին կարում*»: «*Բ՞րրթից գ՞ողիզը կրնանիբըն ին կարում*» [Փերիայի Բոլորան գյուղ]:

Վարդենիսի խոսվածքում այդ տարբերակումն արտահայտվում է հետևյալ կերպ. «*Տրդամարթի գ՞ողին իսայիշն ա, կրնիզմարթի գ՞ողին անթարի գ՞ողին ա, գ՞օրչուզ ա: Բյանար աղեն զը կարէր*» [Մուշի Վարդենիս գյուղ]:

Օրինակները ցույց են տալիս, որ հոմանշությունը հանդես է գալիս երկու կերպ՝ ա) ընդհանուր և բ) մասնավոր կամ տեղային: Ընդհանուր ենք անվանում այն հոմանիշները, որոնք կարող են հանդես գալ որպես բառարանային մեկ գլխաբառի իմաստային տարբերակներ, օրինակ՝ Նինոծմինդայի Փոգայի խոսվածքի *գօրիկ*-ը և Ռոդոսքոյի բարբառի *թօխսս*-ն: Մասնավոր կամ տեղային ենք անվանում նույն բնակավայրի

բարբառախոսներին ծանոթ լեզվական միավորները, ինչպիսիք են, օրինակ, *միշկասպ (կրնգա) // առչրթէ ք՞մար // կայիշ* (Ապարանի Ճաղկաշեն), *կ՞յիշ // քնրկ՞* // *ք՞մր* (Էջմիածնի Խաթուն-Արխ), *շայ // քաշ // Օայիշ // ք՞մր* (Պոռթէ կանացի) (Դիադիմի Ջուջան) և այլն:

Այսպիսով, աշխարհիկ և հոգևոր հագուստի բաղադրիչ նշող *գուրի* հասկացության բառանուններն օժտված են լայն տարածագործառնականությամբ, բնորոշ են հայերենի բոլոր բարբառներին ու խոսվածքներին, ունեն հոգևոր և աշխարհիկ բովանդակությամբ առանձնացող հոմանշային շարքեր, ինչպես նաև բարբառային տվյալ տարածքին բնորոշ հնչյունական տարբերակներ:

**Բանալի բառեր** – *գուրի, քարքառ, քառապաշար, հնչյունափոխություն, հնչյունական փարբերակ, գուգարանություն, հոմանիշ, գործառույթ:*

**АЙКАНУШ МЕСРОПЯН – Диалектные особенности концепта «ремень», обусловленного духовным содержанием.** – В статье представлены диалектные фонетические эквиваленты и синонимы слова **ремень**.

Понятие «ремень» описывается духовным и светским содержанием, широко распространено в армянских диалектах и имеет многочисленные фонетические варианты и синонимы.

**Ключевые слова:** *ремень, диалект, словарный запас, фонетические изменения, фонетическая версия, изоглосса, синоним, функция.*

**HAYKANUSH MESROPYAN -The dialectal characteristics of the words conditioned with spiritual content of the concept "belt".** - The article presents the groups of dialectal phonetic variants and synonyms of the word "belt".

The concept names of "belt" mention spiritual and secular content. They have wide territorial usage, phonetic versions and are characteristic to all the Armenian dialects.

**Key words:** *belt, dialect, vocabulary, sounds, phonetic version, isoglosse, synonymous, function.*

**ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,  
ԳՐԱՆՅ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ**

Միջին հայերենում եվրոպական լեզուներից փոխառյալ բառամիավորների մեջ իրենց գործածությամբ աչքի են ընկնում ֆրանսիական փոխառությունները, որոնք թեև թվով զիջում են հունական փոխառություններին, սակայն գերազանցում են կիրառման հաճախականությամբ:

Պետք է նշել, որ հայերենագիտության մեջ ընդհանրապես եվրոպական, մասամբ նաև ֆրանսիական փոխառությունները բավականաչափ ներկայացվել են: Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 2-րդ հատորում<sup>1</sup> արձանագրված է 70 փոխառություն, իսկ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատությունում<sup>2</sup> ֆրանսերենից փոխառյալ բառամիավորների թիվը 96 է: Այս բառացանկերը լրացնում են Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանը «Միջին հայերենի բառարանում» (այսուհետ՝ ՄՀԲ)՝ արձանագրելով մի շարք նոր բառեր ու բառաձևեր և դրանց թիվը հասցնելով 106-ի<sup>3</sup>: Տարիներ անց Ռ. Ղազարյանը հրատարակեց «Միջին գրական հայերենի բառապաշարը» մենագրությունը, որտեղ նույնպես քննեց միջին հայերենի՝ լատիներենից, ֆրանսերենից, լեհերենից, հունարենից և այլ լեզուներից փոխառյալ բառերը<sup>4</sup>: Որոշ թվով փոխառություններ կան նաև Նորայր Բյուզանդացու արժեքավոր բառարաններում<sup>5</sup>: Մ. Ղազարյանի «Եվրոպական փոխառությունները մի-

<sup>1</sup> Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951:

<sup>2</sup> Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972:

<sup>3</sup> Տե՛ս Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հ. Ա-Բ, Եր., 1987, 1992:

<sup>4</sup> Տե՛ս Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառապաշարը, Եր., 2001:

<sup>5</sup> Տե՛ս Բիւզանդացի Ն., Բառգիրք ի գաղղիերէն լեզուի, Պոլիս, 1884: Բառգիրք ստորին հայոց ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարոց, ԺՆՆ, 2001:

ջին հայերենում» թեկնածուական ատենախոսության մեջ<sup>6</sup> արձանագրված է ֆրանսերենից փոխառյալ 145 բառ: Անդրադառնալով միջին հայերենի ֆրանսիական փոխառություններին՝ Կ. Գրիգորյանը<sup>7</sup> որոշ ճշգրտումներ է մտցրել նշված ցանկերում, օրինակ՝ **քրե.ֆեթ, բրոգեսիոն, մամֆսար** գոյականները «Միջին հայերենի բառարանում» դիտվում են որպես լատինական փոխառություններ, սակայն սույն հեղինակի կողմից դրանք ևս համարվում են ֆրանսերենից փոխառյալ՝ ելնելով փոխառված բառերի՝ ձևով ֆրանսերեն տարբերակներին ավելի մոտ լինելուց (**քրե.ֆեթ** <ֆրանս. prefet, լատ. prefectus, **բրոգեսիոն** < ֆրանս. procession լատ. procession) կամ որոշ հնչյունների ավելի հավանական տառադարձությունից: Եվ հակառակը՝ ՄՀԲ-ում ընդգրկված և ֆրանսերենից փոխառյալ համարվող **մուսեղիսար** (երաժշտական) ածականը համարվում է արաբական փոխառություն, իսկ **նոքար** գոյականը՝ դեռևս 5-րդ դարում հունարենից փոխառված:

ՄՀԲ-ում կան ֆրանսերեն փոխառություններ, որոնք համարվել են միջնորդավորումով հայերենին անցած, օրինակ՝ **ալաման-գերմանացի, բուրլա-ճարմանդ, փօսպ-պաշտոն, աստիճան** բառերը համարվել են թուրքերենից միջնորդավորումով փոխանցված, սակայն այս բառերի հնչյունական ձևավորումները փոխատու և նշված միջնորդ ձևերում, ըստ հեղինակի, չեն համընկնում, և այս բառերը համարվում են ֆրանսերենից անմիջականորեն մուտք գործած:

Միջին հայերենում ֆրանսիական փոխառությունների գերակշռող մասը հատուկ է կիլիկյան հայերենին (12-14-րդ դդ.): Կիլիկիայի հայ իրականության մեջ հատկապես մեծ է եղել ֆրանս-հայկական շփումը, որի արդյունքում զգալի թվով բառեր ֆրանսերենից ներթափանցել են կիլիկյան հայերեն՝ իրենց կնիքը դնելով միջին հայերենի բառապաշարի վրա:

---

<sup>6</sup> Տե՛ս **Ղազարյան Մ.**, Եվրոպական փոխառությունները միջին հայերենում, թեկնածուական ատենախոսություն, Եր., 2000:

<sup>7</sup> Տե՛ս **Գրիգորյան Կ.**, Ֆրանսերենից փոխառված բառերը հայերենում, թեկնածուական ատենախոսություն, Եր., 1999:

Միջին հայերենը համընկնում է հին և միջին ֆրանսերենի ժամանակաշրջաններին, սակայն միջին հայերենի ֆրանսիական բառափոխառություններում աչքի են ընկնում ֆրանսերենի՝ հատկապես հին շրջանից ներմուծված բառամիավորները (9-14-րդ դդ): Դրանց մի մասը ներթափանցել է գրական լեզվի միջոցով, իսկ մյուս և ավելի մեծ մասը անմիջական շփման հետևանքով մուտք է գործել ժողովրդախոսակցական լեզվի միջոցով, որի ապացույցն է դրանցից շատերի հնչյունափոխված ձևերի առկայությունը, ինչպես օրինակ՝ **բուրճէս** (պուրճէս, պուռճէս, պոռճէս)-**քաղաքացի**, **գունդ** (գօնթ)-**կոնս**, **ընթրուր** (ոմբրուր)-կայսր, **բուսիլուս** (ոսպիտալ, ոսբիթալ)-**հյուրանոց**, **հոսպիլուս**, **ջամբրոլայ** (ջամբուայ, գամբեռլին, ջամբուահ, ջամբուլայ, ջամբլ)-**սենեկապետ**, **վիսրեռ** (վեստեռ, վեստառ)-**գանձարուն**, **սիսանդարուն**: Իհարկե, այս տարբերությունները կարող են պայմանավորված լինել նրանով, թե դրանք հատկապես որ բարբառից են փոխառվել, երբեմն կարող են լինել նաև սխալագրության հետևանք: Բացի այդ՝ տարբեր լեզուներից կատարված փոխառությունների մեջ կան նաև կրկնակ փոխառություններ, երբ արդեն փոխառված բառը լեզվի զարգացման այս կամ այն փուլում կարող է նորից փոխառվել կամ կարող է կազմել կրկնակներ՝ փոխառվելով տարբեր լեզուներից, ինչպես՝ **ֆրէր** (կրոնավոր)-ֆրանս., **ֆրա**-իտալ., **դամուժեկ** (ազնվական օրիորդ)-ֆրանս., **դամոջեկ**-իտալ., **դուկ** (դուքս)-ֆրանս., **դուն**-իտալ., **դուկասր** (ոսկեդրամ)-ֆրանս., **դուկասր**-իտալ. և այլն: Ֆրանսերենից կատարված փոխառությունները հիմնականում ամփոփված են դիվանական և պատմական գրականության մեջ: Դրանք վերաբերում են պետական, հասարակական կյանքին, պաշտոնավարությանը, կրոնին, իրավագիտությանը, առևտրին, կենցաղին: Ռ. Ղազարյանի «Միջին գրական հայերենի բառապաշարը»<sup>8</sup> աշխատության մեջ դրանք իմաստային տեսակետից ներկայացվում են հետևյալ խմբերով. 1.պետական-վարչական հարաբերություններ, ծառայություններ՝ **բրինջ-իշխան**, **գամբեռլին-սենեկապետ**, **գուրդէգ-ասպետ**, **մինիստրնիրանալ-գլխավոր նախարար**, **ջինթիլոն-ազնվական**, **սիր-իշ-**

<sup>8</sup> Տե՛ս Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 143:

իսան, **սօլդատ-գինվոր**, **փօֆին**-բազաժառանգի փհիրդու, **բունանրուր**-հրամանատար, 2.կրոնի հետ կապված բառեր-**արծուք**-արքեպիսկոպոս, **բասաճ**-հաշակրաց արշավանք, **բրաջուր**-կաթոլիկ քարոզիչ, **գօլէճ**-միաբանություն, **դամբլ**-տանարական, **կասյուր**-միաբանության պետ, **ջարիդէ**-բարեգործական հասարակություն, **ֆրեր**-հոգևոր եղբայր, 3.դատարան-**անսիգ**-օրենք, **ավուգայթ**-փաստաբան, **ջալունջ**-բողոք, **պֆրնդել**-պաշտպանել, **քիթ**-ազատ, **օդրել**-արտոնել, 4.հասարակական հարաբերություններ՝ **բէլ**-կնքահայր, **բուրճէս**-բաղաքացի, **մարիաճ**-ամուսնություն, **տոսյր**-հարսանեկան նվեր, **օմաճ**-մեծարանք, 5. կենցաղային իրեր-**հառնէգ**-սարք, **հանդերձանք**, **պացին**-կոնք, **տաշտ**, **սօլեր**-կոշիկ, 6. դրամ-**լիվր**-դրամական միավոր, **դուռնէգ**-դրամ, **մարկ**-արծաթ դրամ, **սպռին**-դրամական միավոր, **սօլ**-ոսկուց մետաղադրամ, 7. չափ ու քանակ-**գան**-երկարության չափ, **դուպլ**-անգամ, **պարիկ**, **օն**-արմընկաչափ: Մեր կողմից ավելացվել են հետևյալ խմբերը՝ 8.կենդանական աշխարհին վերաբերող բառեր-**դուբէթ**-ձիու ճակարի մազափունջ, **կլափ**-ջրային թռչուն, **ճնիժ**-երինջ, **սպառան**, **սրոս**-այրուց ձիու սրունքի վրա, **պրլֆին**-դեղին, **ֆարսին**-գրասարների հիվանդություն, 9.բուսական աշխարհին վերաբերող բառեր-**գոյրգունս**-բրբուն, **էպոյլ**-վայրի բանբրվենի, **ֆավր**-բակլա, **ֆրայն**-հացենի, 10. ազգություն ցույց տվող բառեր-**ալաման**-գերմանացի, **գալլիացի**-գալիացի, **ֆռանցեգ**-ֆրանսիացի, 11. շինություն, կահույք, կահկարասի-**առնօր**-պահարան, **հանապ**-մեծ և լայն գավաթ, **վեսպառ**-հանդերձատուն, **ֆլապրին**-շուշանազուռի գավազան, այլ բառեր-**գաբիլոն**-կեղծամ, **դուռնայ**-մրցախաղ, **կրամայր**-քերականություն, **մորպ**-ամանի ծեփ, **նոել**//**նոյել**-ծննդյան գիշեր, **պակ**-գարդ, **ջաբիպր**-գրքի գլուխ, **ջարմ**-կախարդանք, **սիբիլ**-գուշակուհի, **սիռէն**-ծովահարս, **սուկան**-վերարկու: Պետական կյանքին ու պաշտոնավարությանը վերաբերող բառափոխառությունների մեծ քանակից պարզ է դառնում, որ Կիլիկյան Հայաստանում մեծ է եղել միջնադարյան Ֆրանսիայի վարչաքաղաքական իրավակարգի, ասպետական, արքունական ու հոգևոր կյանքի ազդեցությունը:

Ինչ վերաբերում է ֆրանսիական փոխառությունների խոսքիմասային պատկանելությանը, պետք է նշել, որ դրանք հիմնականում գոյա-

կաններ են: Եվ դա պատահական չէ, քանի որ գոյականները իրականութեան առարկաների, երևույթների հասկացությունների արտահայտություններ են, իսկ վերջիններս ավելի շուտ են փոխառվում: Կարևոր չէ, թե հիմնականում որ սեռի գոյականներ են փոխառվում, քանի որ հայերենում դրանք, բացառությամբ անձ ցույց տվող գոյականների, կորցնում են սեռի քերականական կարգը: Ֆրանսերենից փոխառյալ գոյականները միջին հայերենում ստացել են որոշիչ հոդ և հոլովվել՝ հիմնականում ենթարկվելով **ի** վերջադրական հոլովման, ինչպես՝ գամբո-**գամբոի**, բրինձ-**բրնձի**, լիվր-**լիվրի** և այլն, որոշ բառեր՝ **ու** և **ո** հոլովումներին. **անսիգ, ջալունջ** գոյականները ենթարկվում են **ո** հոլովման՝ **անսիգոյ**, իսկ **ալաման, բէ, դանբ, մարաջախար** գոյականները՝ **ու** հոլովման (բէ-**բլու**, դանբ-**դանբլու**), **պայլ** գոյականը հավասարապես ենթարկվում է **ու** և **ո** հոլովումներին (**պայլոյ/պայլու**), **պապրոն, բրաջուր, բրէպիկադուր** գոյականները՝ **ի** և **ա** հոլովումների՝ **պապրոնի/պապրոնայ, բրաջրի/բրաջրայ, բրէպիկադրի/բրէպիկադրայ**: Զննարկվող ժամանակաշրջանում ֆրանսերենից փոխառված գոյականների հոգնակին կազմվում է **եր** (*գուրդ-գուրդեր*), **ներ** (*լեկաթ-լեկաթներ*), **նի** (*ֆրէր-ֆրէրնի*), **ք** (*լիճ-լիճք*), **անք** (*ալաման-ալամանանք*), **այք** (*պարոն-պարոնայք*) հոգնակերտ մասնիկների միջոցով, իսկ **դրոյսք** գոյականը, որի փոխատու բառաձևն է **trousse** եզակի թվի գոյականը, միջին հայերենում գործածվում է բացառապես հոգնակի թվով: Միջին հայերեն ներմուծված գոյականների մեծ մասը, անկախ փոխատու բառի կազմությունից, հայերենում ընկալվում է որպես պարզ բառամիավոր:

Ի տարբերություն գոյականների՝ փոքր թիվ են կազմում բայերն ու ածականները: Մեր հաշվումներով միջին հայերենը ֆրանսերենից փոխառել է բացառապես **ե** խոնարհման պատկանող 10 բայ, 7-ը՝ հին ֆրանսերենից (**բլայքել-պաշտպանել, ջալրնջել-բողոքել, ջաստել-պարծել, սայգել-բռնագրավել, պֆրնտել-պաշտպանել, տրպլել-կրկնակի հատուցել, ֆայլել-դատրդ տանուլ տալ, օդրել-արտոնել**), 3-ը (**կայօփել-բառասմբակ վազել, քիթել-բողնել, շնորհել, սայգել-բռնագրավել**)՝ միջին ֆրանսերենից: Մրանք յուրօրինակ բառակազմություններ են՝ բայակերտումներ, որոնք ստեղծվել են մեր լեզվին հատուկ բա-

ռակագմական կանոններով և խոնարհվելիս ենթարկվում են միջին հայերենի խոնարհման օրինաչափություններին:

Միջին հայերենում ֆրանսերենից փոխառյալ ածականները 6-ն են՝ **դրահիդոր** (*դավաճան*), **ռոհպալո** (խարդախ), **հասարաթ** (*նիզակալոր*), **ռիճ** (*հարուստ*), **փուսլ** (*կրկնակի*), **քիթ** (*ազար*): Փոխառված ածականները միջին հայերենում կորցրել են թվի և սեռի քերականական կարգերը և գործածվում են առանց որևէ բառակազմական փոփոխության: Վերոհիշյալ ածականներից երկուսը՝ **քիթ** (*ազարորեն*) և **փուսլ** (*կրկին*) իմաստներով, գործածվում են նաև որպես մակբայներ: Փոխառյալ այս բառամիավորները, ինչպես հայերենի բուն ածականները, կարող էին ստանալ համեմատության աստիճաններ, իսկ որոշիչ հոդ ստանալով՝ դրանք գործածվում էին գոյականաբար՝ ենթարկվելով **ի** հոլովման:

Ֆրանսերենից փոխառված բառամիավորների մեջ թվով քիչ, սակայն կան նաև բազմիմաստ բառեր, օրինակ՝ **պարոն** բառը, բացի 1. *ազնվականական րիտորոս*, 2. *հարգական դիմելաչև*, 3. *իշխանավոր, րեր* նշանակություններից, ունի նաև *րանուրեր* իմաստը, որ ծագում է լատ. Patronus (*րանուրեր*) բառից<sup>9</sup>, **դամբլ** բառն ունի 1. *րանար*, 2. *րանարական ասպեր* իմաստները, **լիլր** բառը՝ 1. *դրամական միավոր*, 2. *ծանրության չափ*, **ռուճիսարր**-1. *ցուցակագիր*, 2. *մարենավարություն* իմաստները, **պսյլ**-1. *մեծ իշխան*, 2. *Կիլիկյան շրջանում ասպերի փոխանորդ*, **պսցին**-1. *րաշր, կոնք*, 2. *բաս*, **ր.ֆրնդեյ**-1. *պաշրպանել*, 2. *արգելել*, **ոն**-1. *արմունկ*, 2. *չափի հնագույն միավոր իմաստներ*: Միջին հայերենում ֆրանսիական բառափոխառություններից մի քանիսը ծնունդ են տվել համանունների շարքերի, որոնց անդամներից որևէ մեկը կամ երկուսը փոխառություն են տարբեր լեզուներից, օրինակ՝ **բրինչ**-պակ. birinj-*հացագգիների ընրանիքին պարկանող բոյս*, բրինձ-ֆրանս. prince-*իշխան*, բազաժառանգ, **գամբր**-հֆր. gembre-*սենյակ*, **գամբր-խոշոր րեսակի ուժեղ շուն**, **լիճ**-ջրով բացված ալյուրի խոյու, լիճ-հֆր. lige-*վասալ*, *ավարառու*, լիճ-ջրով լցված րարածություն, **քիթ**

<sup>9</sup> Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 294:

*մարմնի մաս, քիթ-որևէ առարկայի դուրս ցցված մասը, զանազան գործիքների սուր ծայրը, 3. քիթ-հֆր. quite, մֆր. quitte-ազար, անմասն:*

Անդրադառնալով նաև ֆրանսերենից փոխառյալ հիմքերով բառակազմական կաղապարներին, ներկայացնելով դրանց բառակազմական հիմնական օրինաչափությունները՝ այդ կաղապարները բաժանել ենք 2 խմբի՝ բառաբարդման և ածանցման կաղապարների: Ըստ կառուցվածքային առանձնահատկությունների՝ բառաբարդմամբ առաջացած կաղապարները ներկայացրել ենք հարադրական կամ վերլուծական և համադրական տեսակներով: Առաջինները լինում են բայական և անվանական: Ֆրանսերենից փոխառյալ բառերով ստեղծվել են վերլուծական մի շարք կազմություններ: Դրանք հարադրավոր բարդություններ են. այսպես՝ **մայն, օման, սայզայ և ջայունջ** փոխառյալ գոյականները **դնեյ, րալ, այնեյ, անեյ** բայերի հետ կազմել են հարադրավոր բարդությունները՝ **մայն դնեյ (պաշտպանեյ), ջայունջ այնեյ (բողոք ներկայացնել), սայզայ անեյ (բռնագրավել), սայզայ րալ (արգելք դնել ունեցվածքի վրա), օման այնեյ (մեծարել):** Նշված հարադրավոր բայերից երկուսը, ինչպես վերը նշվել է, ունեն իրենց պարզ համարժեքները՝ **սայզայ անեյ-սայզել, ջայունջ այնեյ-ջայրնջել:**

Համադրական բարդությունները նպատակահարմար ենք համարել բաժանել հոդակապով և անհոդակապ տեսակների՝ դրանց մեջ առանձնացնելով նաև հնչյունավորված բաղադրիչներով կառույցները: Պետք է նշել, որ ֆրանսերենից փոխառյալ արմատներով բարդ բառերը քանակով զիջում են ածանցավորներին: Ֆրանսերենից փոխառյալ հիմքերով կազմված հոդակապով բարդություններ են, օրինակ՝ **պարոնապապ (սկեսրայր), պարոնամայր (սկեսուր), պարոնացալ (հողալրասպ), պարոնադուսպր** բառերը, իսկ անհոդակապ բարդություններ են **պարոնորդի, պարոնպապ, պարոնրէր** բառերը: Բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելությամբ դրանք բոլորը կազմված են գոյականներից: Ածանցման կաղապարները ներկայացնում են հետևյալ պատկերը: Մի շարք փոխառյալ գոյականներ **-ուրխն, -ուհի, -ուր, -ցի** վերջածանցների միջոցով կազմել են նոր գոյականներ՝ **անդալուսցի, գալլիացի, գոլոնցի, դամբլցի, զանցլերուրխն, գունդուրխն, ընբրու-**

*րութիւն, լճութիւն, մարաջախարութիւն, մարգիզութիւն, պայլութիւն, պարոնութիւն, պարոնութիւն, փոկութիւն, քիթելութիւն, քիթութիւն, մարգիզուհի, պարոնուհի, անսիզոյր: –Ան* նախաձանցի միջոցով *լիճ* գոյականից կազմվել է *անլիճ* ածականը, *ջալունջ* գոյականից՝ *անջալունջ* մակբայը: *Կայօփէկ* բայից –*ցն* պատճառական ածանցի միջոցով ստեղծվել է *կայօփցնել* պատճառական բայը, հին և միջին ֆրանսերենի բայական վերջավորությունները (ier.er,ir, re) փոխարինվել են հայերեն բայական –*ել* վերջավորությամբ, որն ավելացել է ֆրանսերեն բայարմատներից և կազմել բայեր՝ *բլայթել, կայօփել, ջասպել, սայգել, փպլել, փֆրնպել, քիթել, օդրել, ֆայլել*:

Ֆրանսերենից փոխառյալ արմատներով բարդ և ածանցավոր բառերի մեջ ամենաարգասավորը *պարոն* (*իշխան*) բառն է, քանի որ այն տարբեր ածանցների և արմատների միջոցով կազմվել է 11 նոր բառամիավոր՝ *պարոնութիւն, պարոնանայ, պարոնորդի, պարոնիկ, պարոնապաս/պարոնպաս* (*սկեսրայր*), *պարոնամայր* (*սկեսուր*), *պարոնացավ* (*հողատրաս*), *պարոնուհի, պարոնադուստր, պարոնացնել, պարոնպէր* (*հարգական փիրդոս*):

Այսպիսով, միջին հայերենում ֆրանսերենից փոխառյալ բառերն ըստ կազմության լինում են պարզ (*լիճ, քիթ*), ածանցավոր (*ջանայերութիւն, անլիճ*) և բարդ (*պարոնամայր, պարոնպէր, սայգայ փայ*): Բառաբարդման, ածանցման, ինչպես նաև բառաթերման ժամանակ հաճախ տեղի է ունենում հնչյունափոխություն: Շեշտագրկված ձայնավորը սղվում է կամ վերածվում *ը*-ի՝ բրինձ-*բրնձի, լիճ-լճութիւն, ջալունջ-ջալնջել*, բրետիկադուր-*բրէտիկադրայ*: Սակայն երբեմն հնչյունական այս կանոնը չի գործում, և շեշտագրկված ձայնավորը մնում է անփոփոխ՝ դուկ-*դուկի*, գունդ-*գունդութիւն*:

Ֆրանսիական փոխառությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջին հայերենում վերջիններս, ունենալով հայերեն համարժեքներ, հիմնականում չպահպանեցին իրենց գործառական արժեքը և չներվելով հայերենի բառապաշարին՝ դուրս մղվեցին հետագա գործածությունից: Միայն որոշ բառեր նույնությամբ կամ հնչյունական մասնակի ձևափոխությամբ շարունակում են գործածվել մինչև այժմ, ինչպես՝ *պա-*

**րոն, բարոն, պրինց, մարկիզ, դուքս: Պարոն** գոյականը լայնորեն գործածվում է արևմտահայերենում և արևելահայերենում, **մարաջախար** գոյականը՝ արևմտահայերենում: **Սոլեր-souler-կոշիկ** գոյականից Ապարանի, Թավրիզի, Խոյի, Մուշի, Նոր Բայազեթի, Շատախի, Սասունի, Վանի և որոշ այլ բարբառներում ունենք **սոլ** պարզ, **սոլկնոց** ածանցավոր և **սոլխար** բարդ բառերը: **Պապրոն-տեր, պարոն, մեծավոր, իշխան** գոյականը որոշ բարբառներում պահպանվել է «սկեսրայր» իմաստով:

Այսպիսով, ֆրանսիական փոխառությունները արտացոլում են մի քաղաքակրթության ազդեցության աստիճանը մեկ այլ քաղաքակրթության վրա: Լեզվափոխառությունների կատարմանը նպաստող գործոններից են փոխառու լեզվում որևէ նորամուտ հասկացություն արտահայտելու համար համապատասխան բառի բացակայությունն ու տվյալ պահին լեզվի ներքին միջոցներով համարժեք ստեղծելու անհնարին կամ ոչ նպատակահարմար լինելը, իմաստային տարբերակում մտցնելու նպատակով այս կամ այն ընդհանուր հասկացությունը մասնավորելու անհրաժեշտությունը<sup>10</sup>, մայրենի միավորի համեմատությամբ օտար միավորի կարծությունը, մեկ հասկացության համար մեկ բառ գործածելու ձգտումը, ինչպես նաև բառապաշարային միավորների հաղորդակցային հստակությունն ապահովելու պահանջը:

**Բանալի բառեր** – *կաղապար, հաղորդակցում, լեզվական կառուցվածք, ածանցում, բառապաշար, բարբառ, գրական լեզու, միջնորդավորված և անմիջական փոխառություն, հիբրիդային կազմություններ:*

**СУСАННА ГРИГОРЯН – Французские заимствования в среднеармянском языке, их словообразовательные особенности.** – В лексике среднеармянского языка существует большое количество прямых и косвенных французских заимствований, которые вошли в язык письменным или устным путем. Фонетический состав и семантика заимствований впоследствии подвергаются изменениям и деривации в заимствующем языке. Такие сложные слова в языке называются гибридными образованиями. Выделение

<sup>10</sup> Տե՛ս **Բարդեղիզյան Ա.**, Հայ-ֆրանսիական լեզվական առնչությունները XIX դարում, Եր., 1990, էջ 121:

французских заимствований в сложных словах имеет особое значение, так как этим определяется частота и языковое значение данного заимствования, что важно для оценки заимствованных слов вообще.

**Ключевые слова:** *модель, коммуникация, языковая структура, деривация, лексика, диалект, литературный язык, прямое и косвенное заимствование, гибридные образования.*

**SUSANNA GRIGORYAN- French Borrowings in Middle Armenian and Their Word-Building Peculiarities** - The direct and indirect loan words borrowed from French in both written and oral ways are numerous in the vocabulary of Middle Armenian. The loan words are taken from the borrower language with their own value and phonetic formation, but can later undergo affixation and compounding in the borrower language. This kind of word-compositions are considered to be hybrid formations in the language. The separation of French loan words within compound words is very important, because it decides the frequency and value of the usage of the given loan word which is in general very essential for the estimation of the value of borrowings.

**Key words:** *pattern, communication, linguistic structure, affixation, dialect, literary language, direct and indirect borrowing, hybrid formations.*

**ԻԳԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ  
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ  
«ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ»**

Յուրաքանչյուր անձնանուն բառ է, որն արտահայտում է որոշակի իմաստ: Հ. Աճառյանը գրում է, որ հին ժամանակներում հայերի մեջ կնոջ անուն տալը ամոթ բան է համարվել: Այդ էր պատճառը, որ կնոջը իր սեփական անունով կոչելու փոխարեն ասում էին «այսինչի աղջիկը»: Այդպես են առաջացել *Տիգրանուհի, Սմբարյուհի, Սահականուշ* և այլ անուններ, որոնք իրապես անձնանուն չեն և նշանակում են *Տիգրանի աղջիկ, Սմբարի աղջիկ, Սահակի աղջիկ* և այլն:

Հայոց պատմության մեջ իզական անուններ չունենալու պատճառով հայ իրականության մեջ սկսեցին հորինել ամեն տեսակի նորանոր անուններ: Հայկական կազմությամբ իզական անձնանունների մեծ մասն առաջացել է հասարակ գոյականներից, որոնց մեջ առանձին խումբ են կազմում.

ա) բույսերի, ծաղիկների, մրգերի անուններից, ինչպես նաև բուսաբանական տարբեր հասկացությունների անուններից առաջացած անձնանուններ՝ *Արմավենի, Բամբկիկ* («բամբակ» բառի փաղաքշականն է), *Գիներբուկ* (ժող. վայրի ծաղիկ), *Խնկենի, Խնչոր, Կեռաս, Համասիյուն (ծաղիկ), Մանիշակ, Հասմիկ, Նարինջ, Շուշան, Սուսամբար, Վարդենի* և այլն:

Կան անձնանուններ, որոնք հատուկ են և՛ իզական, և՛ արական սեռերին՝ *Մեխակ, Մասուր, Վարդ*:

բ) Կենդանիների անուններից առաջացած անձնանուններ՝ *Աղավնի, Այծյամն, Այծեմնիկ, Արծվիկ, Դեղջանիկ, Եղնար* («եղնիկ» բառի ժող. ձևն է), *Թութակ, Լորիկ, Սիրամարգ*:

Որոշ անձնանուններ հատուկ են և՛ իզական, և՛ արական սեռերին՝ *Թութակ, Արծվիկ* և այլն:

Այս խմբում քննարկվող անձնանունները կերտելիս նկատի են առնրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հատկանիշները: Օրինակ՝ *Միրասարգ* անձնանվան մեջ ակնհայտորեն հաշվի է առնվել գեղեցկության հատկանիշը, *Աղավնի*, *Եղնիկ* անձնանուններում՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բարեմասնությունները՝ գեղեցկությունը, անմեղությունը: Մյուս դեպքում՝ իբրև անձնանուն գործածվելիս, նկատի են առնրվել կենդանիների հատուկ կամ նրանց վերագրվող զանազան հատկանիշներ՝ վախկոտություն, արիություն, ուժեղություն, անմեղություն և այլն:

գ) Առանձին խումբ են կազմում ազգակցական կապեր ցույց տվող բառերից ծագած անձնանունները, որոնք առաջացել են մոր, եղբոր, քրոջ, որդու, դստեր, տատի՝ ազգակցական շատ սերտ կապեր արտահայտող բառերից՝ *Աղբրաց* (այնպիսի քույր, որ եղբայր արժե), *Դուստր*, *Դստրիկ*, *Հանիկ*, *Մերիկ*, *Մամա*, *Նաներ*, *Նանուշ* (նանի, տատի զգվականն է) և այլն):

դ) Մարդու կամ կենդանիների մարմնի մասերի անվանումներից առաջացած անձնանուններ՝ *Եղջրիկ*, *Ծամիկ*, *Վարսիկ*, *Գիսանե*, *Հերիկ* և այլն):

ե) Իբրև անձնանուն են գործածվել նաև տարբեր թանկարժեք, գեղեցիկ և փայլող քարերի ու մետաղների անունները՝ *Բյուրեղ*, *Ակներ*, *Ականց*, *Գոհար*, *Գոհարիկ*, *Չմրուխտ*, *Մարգարիտ* և այլն: Ե՛վ իզական, և՛ արական սեռերին հատուկ է *Ոսկի*-ն:

զ) Չբաղմունքի իմաստային դաշտից՝ պաշտոն, տիտղոս նշանակող բառերից կազմված անձնանուններ՝ *Բամբիշ*, *Երեցորիկին*, *Իշխանուհի*, *Թագուհի*, *Կայսրուհի* և այլն:

է) Անձնանուններ են դարձել նաև երկնային մարմինների՝ *Արևիկ*, *Արեգ*, *Արփենիկ*, *Արփինե*, *Լուսին*, *Շողիկ*, *Հրարփի*, հին հայկական աստվածների, տարվա եղանակների՝ *Գարուն*, *Չմեռ*, *Արեգի*, օրվա ժամերի՝ *Օրիկ*, *Վերջալույս*, *Արշալույս*, *Լուսիկ*, անվանումները, որոնց մի մասը հատուկ է և՛ իզական, և՛ արական սեռերին:

ը) Առանձին խումբ են կազմում կրոնական գաղափարների ազդեցությամբ ստեղծված անձնանունները՝ *Դրահարուհի, Խաչմելիք, Սրբուհի, Հրեշտակ* և այլն:

Թվարկված կրոնական անձնանունները իրենց արտահայտած իմաստով պահպանել են կապը կրոնական գաղափարների հետ, և այժմ էլ այդ կապն առկա է, իսկ որոշ կրոնական անձնանուններում (*Ասրդիկ, Անահիպ*) կապը մթազնամ է:

թ) Հայկական կազմությամբ անձնանուններում կան նաև տարբեր տեղանուններից՝ ջրանուն, լեռնանուն, երկրանուն, բնականուն, առաջացած անձնանուններ՝ *Արաքսի, Կարինե, Երեսիսի* (Երասխ գետի անունից) *Սիս, Հայաստան* և այլն:

Հայկական կազմությամբ անձնանուններում իրենց ուրույն տեղն ունեն իգական սեռի՝ ածական անուններից կազմված անձնանունները, որոնց մեջ կարելի է առանձնացնել.

1. մարդու արտաքին և ներքին բարեմասնություններն արտահայտող անձնանունները (*Ազնիվ, Աննման, Բարի, Գեղեցիկ, Չվարթ, Թուխժամ, Խելոք, Խոնարհ, Ծամոսկի, Կարարյալ, Համեստ, Հրաչուհի, Նագելի, Նագուկ, Նահշուն, Ոսկեհեր, Ոսկեծամ, Պարզիկ, Սիրունիկ, Քրմքուշ* և այլն): Ե՛վ իգական, և՛ արական (*Խարություն, Աղյալ* (լավ), *Աղվոր*):

2. Կան նաև վատ հատկանիշներ արտահայտող անձնանուններ, որոնք այժմ գործածվում են իբրև մականուններ (*Հիմար, Ծուռ, Խևիկ* և այլն):

3. Առանձին խումբ են կազմում գույների անուններից առաջացած անձնանունները (*Սևիկ, Թխիկ, Կարմիր, Ալ, Դեղձան* և այլն):

4. Կան նաև ավագություն, մեծություն, առաջնեկություն և այլ հատկանիշներ ցույց տվող ածականներից առաջացած անձնանուններ (*Անգին, Անթառամ, Բահարավոր, Դալար, Թանկագին, Համեղ, Հրեղեն, Պայծառ, Փայլուն, Քաղցրենի* և այլն): Ե՛վ իգական, և՛ արական՝ *Թանգ* (թանկագին) և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ որակական կազմությամբ անձնանուններում կան և այնպիսիները, որոնք փոխառություններ են, սակայն մեր լեզվի

մեջ մտել են հնագույն շրջաններից և գլխակցվում են որպես հայկական բառեր, և նրանց օտար լինելը կարելի է իմանալ միայն լեզվաբանական-ստուգաբանական հետազոտություն կատարելուց հետո՝ (*Շուշան* (ասորական կամ պահլավական փոխառություն), *Օվասաննա* (եբրայական փոխառություն, նշանակում է օրհներգություն), *Քախրալոր* (իրանական ծագման է), *Սուսամբար* (պարսկական փոխառություն, առաջացել է ծաղկանունից)), և՛ իգական, և՛ արական՝ *Ազայր* (իրանական փոխառություն է):

Հ. Աճառյանն այս կարգի անձնանունները համարում է բնիկ՝ իբրև գլխաբառ սկզբում դնելով համապատասխան նշանը:

Այժմ անդրադառնանք իգական անձնանունների բառակազմական քննությանը:

Հայկական կազմությամբ իգական անձնանունների բառակազմական քննություն կատարելիս պարզվում է, որ դրանց մեծ մասը ածանցավոր կազմության է: Առավել մեծ խումբ են կազմում վերջածանցավոր կազմությամբ իգական անձնանունները, իսկ նախածանցավոր, պարզ և բարդածանցավոր կազմությամբ անձնանունները փոքր խմբեր են կազմում:

ա) Պարզ բառերից են *Գարուն*, *Դուարր*, *Ջեփյուռ*, *Չմրուխար*, *Չվարթ*, *Ընծա*, *Խիլա* («նվեր» բառերից), *Խնչոր*, *Խոնարի*, *Խոց*, *Ծամ*, *Ծիածան*, *Կեռաս*, *Հնազանդ*, *Հիմար*, *Մին*, *Մազադաք*, *Նարինջ*, *Շամամ*, *Շուշան*, *Պայծառ*, *Ռեհան*, *Քնքուշ* անձնանունները:

Ե՛վ իգական, և՛ արական սեռերին հատուկ են *Թագ*, *Սեղ*, *Մասուր*, *Վարդ* և այլն:

բ) Ածանցավոր կազմությամբ անձնանուններ.

1. նախածանցավոր՝ *Անբառամ*, *Աննման*, *Համասփյուռ*,

2. վերջածանցավոր՝ *ակ-Ծովակ*, *ական-Բավական*, և՛ իգական, և՛ արական սեռերին հատուկ (*Պարվական*, *Սիրական* և այլն), *ան-Սիրան*, *անի-Նազանի*, *ե-Մամե*, *եղ-Համեղ*, *եղեմ-Հրեղեմ*, *եմի-Արմավեմի*, *Խնկեմի*, *Վարդեմի*, *Քաղցրեմի*, *եմիլ-Արփեմիլ*, *Նազեմիլ*, *Վարսեմիլ*, *իլ-Վյծեմիլ*, *Ասրդիլ*, *Արծվիլ*, *Գեղեցիլ*, *Բամբիլ*, *Գնդիլ*, *Գոհարիլ*, *Դերձանիլ*, *Դարբիլ*, *Եղնիլ*, *Չարդարիլ*, *Թանգիլ*, *Շուշիլ*, *Լորիլ*, *Խա-*

թունիկ, Խուժիկ, Ծովիկ, Հանիկ, Չայնիկ, Հովիկ, Մամիկ, Մենիկ, Մերիկ, Մինիկ, Նազիկ, Նանիկ, Նվերիկ, Նուշիկ, Ընորիկ, Ծողիկ, Ուլիկ, Պարզիկ, Պերճիկ, Սերիկ, Սիրիկ, Սիրունիկ, Փնջիկ, Բնարիկ, Օրիկ, և՛ իգական, և՛ արական սեռերին հատուկ՝ Արևիկ, Դոխիկ, Թուխիկ, Լուսիկ, Ծամիկ և այլն):

Բերված այս օրինակներից երևում է, թե հայերենում որքան մեծ թիվ են կազմում փաղաքշական, գգվական նշանակություն ցույց տվող -իկ վերջածանցով կազմված անձնանուններ<sup>1</sup>:

Յալ-Մայրացյալ, յալ- Երանյալ, անոց- Թանգանոց, ոց -Գինոց, Մանոց, Վարդոց, և՛ իգական, և՛ արական սեռերին հատուկ – Հայոց, ուքում- Գոհություն, ուկ- Նազուկ, ուհի- Ագայրուհի, Ավագուհի, Բեկրուհի, Գեղուհի, Դշխուհի, Դրահարուհի, Երանուհի, Չարմուհի, Թագուհի, Իմաստուհի, Իշխանուհի, Իսկուհի, Համազասպուհի, Հայկուհի, Մաքրուհի, Հաղբուհի, Նարդուհի (նարդոս ծաղկանունից), Նշանուհի, Պսակուհի, Սրբուհի, Վարդուհի, Վշրուհի, Տիրուհի և այլն:

**Ուհի** վերջածանցը փոխառվել է հին շրջանում: Այն հայերենի ամենագործուն և տարածված իգականակերտ վերջածանցներից է:

Ուն- Նահչուն, Փայլուն, ուշ- Նանուշ, Մելուշ, Խնդուշ, ստան- Բուրաստան, Հասաստան, (ս)վոր- Բահարավոր, և՛ իգական, և՛ արական սեռերին հատուկ՝ Ընորհավոր և այլն:

Կազմությամբ բարդ անձնանունների բաղադրիչները երբեմն բնիկ հայերեն բառեր են, որոշ դեպքերում էլ մի բաղադրիչը օտար է, փոխառված, իսկ մյուսը՝ հայկական:

Հայկական բաղադրիչներով կազմված անձնանուններ են՝ Աղեկմանուկ, Աղեկտիկին, Ամենտիկին (ամենից մեծ տիկին), Արեգնազան, Արևույս, Արևրիկին, Ավագրիկին, Բարևրիկին, Երեցրիկին, Թանգմանա, Թանգմայր, Թանգրիկին, Թուխժամ, Ծամոսկի, Հերիքնազ, Հրարտի, Սիրարտի, Մամրասր, Մայրտիկին, Մայրանուն, Մայրտարիկ, Մեծտիկին, Մինքույր, Նորտիկին, Շաղոսկի, Շողոտիկին, Ընորտիկին, Ոսկիհարիկ, Սասնոպար, Սիսմամ, Տղարիկին, Փռքրիկին և այլն:

---

<sup>1</sup> Տե՛ս Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989, էջ 320:

Անձնանուններ, որոնց բաղադրիչներից մեկը բնիկ հայկական է, մյուսը՝ օտար: Այսպիսի կազմություն ունեցող օտար բաղադրիչները հիմնականում պարսկական, արաբական, թուրքական, ինչպես նաև քաթարական ու վրացական ծագում ունեն: Իզական անձնանունների մեծ մասը անհողակապ բարդություն է, մյուս մասն էլ՝ հարադրավոր:

ա) Անհողակապ անձնանուններից են՝ *Գոհարշահ*, *Գուլոսկի* (պարսկական *գուլ վարդ* բառից), *Գուլվարդ*, *Թանգազիզ*, *Լուսբիքա*, (թաթարական *բիքա տիկին* բառից), *Խանդարիկ*, *Խերսելեք* (արաբական *սելեք՝ հրեշտակ*), *Հարսելեք*, *Մամադեդա* (վրացական *դեդա՝ մայր*), *Մամափաշա*, *Ոսկիզուլ*, *Ոսկինանա* (թուրքական *նանա՝ մայրիկ*<sup>2</sup>), *Վարդեսանամ* (արաբական *սանամ կույր*), *Վարդիզուլ* և այլն):

բ) Հարադրավոր անձնանուններից են՝ *Խոնարի-Մելեք*, *Փոքր-Տիկին*:

Հանդիպում են նաև բարդաձանցավոր կազմության իզական անձնանուններ, ինչպես՝ *Հրաչուհի*, *Մամփորիկ* և այլն:

Այսպիսով, հայկական ծագում ունեցող 962 անձնանուններից իզական են 369-ը: Ուշագրավ է, որ Հ. Աճառյանը անձնանունների իր բառարանում անդրադարձել է երկակի՝ և՛ իզական, և՛ արական գործածություն ունեցող անձնանուններին. դրանց թիվը հասնում է 26-ի:

**Քանալի բառեր** – *իզական անձնանուններ, արտաքին բարեմասնություններ, գլխաբառ, բնիկ հայկական, երկակի գործածություն, բառակազմական քննություն, փոխառություն:*

**КНАРИК СУКИАСЯН – Семантический и словообразовательный анализ женских имен в «Словаре армянских личных имен» Г. Ачаряна.** – В статье мы обратились к происхождению армянских женских имен. а) Мы выделили девять групп из антропонимов, которые произошли от названий растений, цветов, фруктов, животных, частей тела человека, названий различных камней и металлов, небесных тел, религиозных понятий, а также названий стран и территорий.

<sup>2</sup> Տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1057:

б) Провели словообразовательный анализ: выделили простые (приставочные и суффиксальные), сложные и сложноприставочные антропонимы. Из 962 личных имен, имеющих армянское происхождение, 369 – женские антропонимы, а количество общих антропонимов – и мужских, и женских – равно 26.

**Ключевые слова:** *женские личные имена, внешние признаки, логин, исконно армянские, заимствования, двойное использование, основа антропонимов.*

**KNARIK SUKIASYAN - Formative and Semantic Analysis in H. Acharyan's Dictionary of Personal Names.** In article we referred to the origin of the female names. We have singled out nine groups from the words showing family ties to plants, flowers, fruits, animals, human body parts, different stones and metals, heavenly bodies, the influence of religious ideas, as well as the names of countries and territories. Word formative examination: simple, derivative (prefix and suffix), compound and compound derivative personal names. 369 of 962 personal names having Armenian origin are female, and the number of both female and male personal names is 26.

**Key words:** *female personal names, external features, login, native Armenian, dual use, borrowings, anthroponyms basis.*

**ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԸ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ**

Բառարանագրությունը լեզվի այն բաղկացուցիչ մասերից մեկն է, որը գայթակղել է գրեթե բոլոր նշանավոր հայագետներին՝ Մ. Մեբաստացի, Հ. Աճառյան, Ս. Մալխասյանց, Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Ա. Սուքիասյան և այլք: Բացառություն չէ նաև Մանուկ Աբեղյանը, որը, չնայած իր բազմաբովանդակ գործունեությանը, ունի իր ներդրումը բառարանագրության մեջ: Իր ցանկացած ուսումնասիրության մեջ նա դրսևորում է բառագետի իր տաղանդը և բացատրում զանազան բառեր այնպիսի խորությամբ ու ճշգրտությամբ, ինչին կնախանձեին մերօրյա շատուշատ բառարանագիրներ: Նրա «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության հենց առաջին ենթավերնագիրն է «Տերմիններ», որտեղ նա բացատրում *ժողովուրդ* բառը լայն և նեղ առումներով, *բանահյուսություն* ու *բանահավաք* բառերը, *բանագետ*-ը առաջարկում *ֆոլկլորիստի* փոխարեն և *բանագիրությունը*՝ որպես բանահյուսության մասին գիտության եզր:

1940 թվականին լույս է տեսել Մ. Աբեղյանի «*Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ, անտրոնիներ*» ժողովածուն, որի վերջում հեղինակի կողմից ներկայացված են տաղերի և նրանց փոփոխակների դժվարհասկանալի բառերն ու բառաձևերը, ինչպես նաև *գ*, *ի* նախդիրների կիրառությունները հայրեններում: Իր իսկ երկու խոսքից պարզ է դառնում, թե որքան լուրջ մոտեցում է դրսևորում նա առաջին հայացքից այդքան հասարակ թվացող մի բառացանկի ներկայացմանը: Բառերի նշանակությունները ճիշտ որոշելու համար նա օգտվել է բազմաթիվ բառարաններից, որոնցից մի քանիսի անունը թվարկում է:

Բերենք տաղերից մեկը.

*Քանի ու քանի կասես՝*

*Մի՛ կենար դու խամ լաթերով.*

*Գնա՛, ապրշում հագիր,*

*Որ նահաշած է ոսկի թելով,  
Արեհ, լուկ առջևս անցի՛ր,  
Լօք քալէ՛ քալդ համարով,  
Յայնժամ ինչ աղվոր թըվիս,  
Քան գուռի որթըն իսաղողով:*

Բառացանկում արդեն միառմի ներկայացվում (ընդ որում՝ տարընթերցումներով) և բացատրվում են *սայրշում-մեկրաքս, արեկ-արի, եկ, լուկ//լօք//լուք- և տիս, նաս, տալս* բառերը, առանց որի դժվար թե որևէ ընթերցող լիարժեք կկարողանա ընկալել տաղի իմաստը:

Իսկ այժմ ներկայացնենք մեծ լեզվաբանի բուն բառարանագրական գործերը:

Դեռևս 1919 թ. Ս. Մալխասյանցի, Տ. Հովհաննիսյանի և ուրիշների հեղինակակցությամբ Մ. Աբեղյանը հրատարակում է «Ռուս-հայերեն առձեռն իրավաբանական բառարանը», որը պարունակում էր ընդամենը 1400 գլխաբառ, բայց այդ բառահոդվածներից յուրաքանչյուրը այնքան ճշգրիտ է բացատրված, որ մինչ այսօր էլ ընդունելի է ու կիրառելի:

1922 թ. Մանուկ Աբեղյանը հայոց լեզու է դասավանդում Երևանի նորաբաց ռազմական դպրոցում, ինչն էլ այդքան արագ ստիպում է ձեռնամուխ լինել մի շատ կարևոր գրքի՝ «Ռուս-հայերեն ռազմական բառարանի» ստեղծմանը: Այն հրատարակվում է 1925 թ.: Հեղինակը առաջաբանում շեշտում է բառարանի գործնական անհրաժեշտության մասին և բառացանկը կազմում՝ օգտվելով 35-ից ավելի ռազմական կանոնագրքերից ու ձեռնարկներից, ֆրանսերեն-ռուսերեն ռազմական բառարանից և, ամենակարևորը, “Энциклопедия военных и морских наук” գրքի ութ հատորներից և հանրագիտարանի հեղինակ Գ. Լեերայի բազմաթիվ այլ հոդվածներից<sup>1</sup>: Հայերեն բառերի ու տերմինների համար աղբյուր են ծառայել Լուսինյանի, Քաջունու, Նուպարյանի, Դաղբաշյանի բառարանները: Ինչպես նշում է հեղինակը բառարանի առաջաբանում, իրեն շատ օգտակար է եղել 1919-1920 թթ. ռազմական կանոնագրքերը ռուս-

---

<sup>1</sup> Sté u Dictionnaire franco-russe des principaux termes militaires, par A. Flint և Энциклопедия военных и морских наук, сост. и ред. Г. Леера, **Աբեղյան Մ.**, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Եր., 1925, էջ 3:

րենից հայերեն թարգմանող հանձնախմբի աշխատանքներին մասնակցելը՝ 1924 թ. ստեղծված Հայկական խմբագրական-հրատարակչական կոլեգիայի կազմում, որը նոր ռազմական գրքեր էր թարգմանում և տպագրում: «Այս վերջին թարգմանությունների տերմինոլոգիան ևս անցել է իմ խմբագրությամբ, որի համար ես միշտ խորհրդակցել եմ թարգմանիչների և ուրիշների հետ՝ ըստ իրենց մասնագիտության, և կամ հաճախ թարգմանիչներն իրենք են դիմել ինձ շատ տերմինների հայերենի համար»<sup>2</sup>, -գրում է Աբեղյանը: Ապա հավելում է, որ դեռ վերջնական տարբերակն էլ պատասխանատու պաշտոնյաների հետ կարդացել է: Ինչո՞ւ ենք այսպես մանրամասնում. միայն մեկ պատճառով. այսպիսի խորքային մոտեցումը երբեք չէր կարող արդյունք չտալ: Մանուկ Աբեղյանի այս բառարանը համարվում է հայ մասնագիտական բառարանագրության արժեքավոր գործերից մեկը. «Ռազմական լիարժեք բառարան կազմելու պարտիվը պարկանում է Մանուկ Աբեղյանին», - գրում է Գ. Գասպարյանը<sup>3</sup>: Բառարանը ունի 724 էջ և պարունակում է 17000 բառ և կապակցություն՝ ըստ Գասպար Գասպարյանի, իսկ ըստ Սվետլանա Ավանյանի՝ 25000 տերմին և տերմինային կապակցություն<sup>4</sup>:

Բառարանն ընդգրկում է ռազմական ոլորտի հիմնական տերմինները, տալիս դրանց նշանակությունները՝ *մարտունակություն, վերջապահ, զինանոց, զրահապար, զրահամեյրադ, զրահահար, զրահամեքենա, հրերանային, սվինամարտ, հերևագոր, ձգարանություն (բալիստիկա), զորաշարժ, հրերաթումբ, հողապարվար, մարտկոցային, հրերասայլ, զինվորագրում, հավաքագրում, հողմաչափ, ռազմապրուզանք, ռազմամթերք, օդազնացություն, պարանշուտի և այլն*, որոնց մեծ մասը այսօր ևս կիրառելի են ռազմական ոլորտում և կազմում է ռազմական բառապաշարի հիմքը: Դրանք հիմնականում ռուսերեն տերմինի դիմաց միաբառ հայերեն համարժեքներ են, ինչպես՝ *аксельбант-սկիպ, аррьергард-վերջապահ, ассистент-ընթերակա, балка-հեծան, баланс-հաշվեկշիռ, бронемашинա-զրահամեքենա, взрыватель-պայթուցիչ*,

<sup>2</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Ռուս-հայերեն ռազմական բառարան, էջ 4:

<sup>3</sup> Տե՛ս Գասպարյան Գ., *Հայ բառարանագրության պարմություն*, Եր., 1968, էջ 421:

<sup>4</sup> Տե՛ս Ավանյան Մ., *Ռուս-հայերեն ռազմական բառարան*, Եր., 1992, էջ 3:

*волномер-ալեշափ, мундир-համազգեստ, униформа-համազգեստ, наконечник-ծայրափայտ, наводка- նշանառություն, упушение-զանցառություն, шайба-փափոհակ, шагомер-քայլաչափ, шкала-սանդղակ, штамп-դրոշմոց* և այլն:

Բառարանի արժեքը ռազմական տերմինաբանության կարգավորման տեսանկյունից խիստ գնահատելի է նաև օտար (ռուսերեն) բառակապակցության դիմաց հարյուրավոր դեպքերում միաբառ հայերեն տարբերակ ներկայացնելու առումով, այսպես՝ *перевязочный бинт-վիրակապ, шейный ремень-վզափոկ, вытижной шнур-չգալար, отхожая яма-աղբահոր, рукопашный бой-չեղևափայտ, дорога вдоль вала-ալարանշուղի, кавалерийский полк-հեծելազոր, наблюдательный пост- դիրախուր, դիրակալան, наблюдательный пункт-կետ, դիրակետ* և այլն:

Գլխաբառերից շատերը ներկայացված են հայերեն հոմանիշային տարբերակներով, որը կարելի է արդարացնել հետևյալ հիմնավորումներով. նախ, որ այդ տերմինը բազմիմաստ է, ասենք՝ *нагнетать-սեղմել, հույս փակ, ճնշել* տարբերակները համանիշներ են և կարող են իմաստային տարբերություն ի ցույց դնել տարբեր իրավիճակներ բնութագրելիս, կամ՝ *вытягивать-չզել, երկայնաչզել, դուրս քաշել*, և ապա այդպես հնարավորություն է ընձեռվում համապատասխան դեպքում ունենալ տարբեր բառեր և ճշգրիտ ընտրություն կատարել: Այս առումով միանգամայն ճիշտ դիտարկում է անում ինքը՝ հեղինակը, բառարանի առաջաբանում. «... Եվ որ գլխավորն է՝ հին բառերը գործածված են նոր նշանակությամբ ևս, որ չունեն մեր բառերը միայն այն պատճառով, որ այդպիսի կիրառության կարիքը չի եղել, մինչդեռ դրանց համապատասխան բառերն ուրիշ լեզուների մեջ ունեն, ըստ տեղին թե՛ մեր բառերի սովորական նշանակությունը և թե՛ այս նոր նշանակությունը: Կուլտուրայի փոխվելու հետ, բնականաբար ոչ միայն նոր բառեր պիտի մտնեն մեր լեզվի մեջ, այլև մեր բառերի նշանակությունները ևս պետք է ընդարձակվեն նոր առումներով»<sup>5</sup>:

---

<sup>5</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 6:

Բայց սա եթե ընդհանրության մեջ միգուցե ճիշտ է, ապա շատ դեպքերում այսօր արդեն չի համապատասխանում. ասենք՝ *высший- վերին, բարձրագույն* տարբերակներից *վերին*-ը այսօր կիրառելի չէ, ոչ թե *վերին շրջաք*, այլ *բարձրագույն շրջաք*, կամ *выкуп-փրկանք*, *փրկագին*, բայց այսօր ավելի շատ՝ *փրկագին*:

Ինչ խոսք, բառարանը այսօր պատմական է, և շատ բառեր այլևս արդեն ոչ ճիշտ կամ ոչ հասկանալի և ընդունելի, ինչպես՝ *ավտոմատ-ինքնեկ*, *ավտոմատիստ-ինքնեկաչիգ*, *արխիվ-հնադարան*, *բեզ-վագ*, *բեզլեգ-փախարյա*, *բլինդած-շերտափակ*, *թունել-սրորոտի*, *յամա-գուրք*, *խորխորատ*, *նասոս-հանոց*, *տրադիցիա-ավանդություն*, *բունդ-խագն*, *բունդավիշկ-խագնարար*, *վիարել-ձիգ*, *արչակյուն*, *պայթյուն*, *տրանսպորտ-փոխակրանք* և տասնյակ այլ բառեր:

Հետաքրքրության համար մենք որոշակի համեմատություն կատարեցինք արդեն բավական ուշ տպագրված ռազմական երկու այլ բառարանների հետ՝ հեղինակած Հ. Մելքումյանի<sup>6</sup> և վերը հիշատակած Ս. Ասլանյանի կողմից, և պետք է փաստել, որ Աբեղյանի բառարանը բացարձակապես չի զիջում նշված բառարաններին, քանի որ տերմինների բազմաթիվ քանակ կրկնվում է: Դեռ ավելին՝ ռազմական եզրաբանության մասին որևէ ուսումնասիրություն անհնար է պատկերացնել առանց այս բառարանի օգտագործման: Բերենք մեկ-երկու համեմատական օրինակ. *бдительность*-ը, ըստ Աբեղյանի, տրվում է *արթնություն*, *աշխրջություն*, Ասլանյանի մոտ՝ *զգոնություն*, *աշխրջություն*, Ար. Ղարիբյանի բառարանում՝ *զգասություն*, *զգոնություն*, *աշխրջություն*, *бесцену*-ը *փախարական* և բոլորի մոտ, Ար. Ղարիբյանը հավելում է *զաղթական*-ը:

Հաջորդ լուրջ բառարանը, որ լույս է տեսել արդեն մեծ գիտնականի մահից հետո՝ 1951 թվականին «*Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարան*» է: Ի տարբերություն նախորդ բառարանի թեմատիկայի՝ այս պարագայում խնդիրն այլ է: Բժշկական տերմինաբանության հիմքը դրվել էր դեռևս միջնադարում. Հայ բժիշկները գրել են մասնագիտական

---

<sup>6</sup> Տե՛ս Մելքումյան Հ., *Ռազմական տերմինների ռուս-հայերեն համառոտ բառարան*, Եր., 1983թ.:

բազմաթիվ բառարաններ, նրանք գլխավորապես թարգմանել են հունարենից կամ արաբերենից, երբեմն լատիներենից կամ պարսկերենից և այդ ձևով մշակել ու ստեղծել որոշակի բժշկական տերմիններ: Հիշենք դրանցից «*Բարք Գաղիսանոսի*» (Մատենադարանում կա այդ բառարանի երեսունից ավելի օրինակ), *Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիրաց անպետրը»*, որոնց հետագայում հաջորդեցին տպագիր բազմաթիվ բառարաններ և դրանցից վերջինը Մ. Աբեղյանի, Լ. Հովհաննիսյանի, Ա. Տեր-Պողոսյանի կազմած այս բառարանն է, որը պարունակում է շուրջ քսան հազար բառահոդված: Բառարանի հեղինակ է եղել մաս բժիշկ Արշակ Ղազարյանը, որի անունը, սակայն, չի գրվել գրքի վրա, քանի որ նա անձի պաշտամունքի տարիների կամայականություններին զոհ է գնացել:

Բառարանի առաջաբանի հեղինակն է Լ. Հովհաննիսյանը, որը արժևորում է նախորդ բժշկական, հատկապես Լ. Տիգրանյանի, Վ. Արծրունու բառարանները:

Այս բառարանի կազմության կարևոր սկզբունքներն են եղել.

ա/ տերմիններ կազմելիս նկատի ունենալ, թե որ դեպքում անհրաժեշտ է պահել անփոփոխ օտար տերմինը՝ *սորրյա, ինֆարկտ, հերպես, լամբլիոզ, լակիրազա, բացիլ*, և որ դեպքում կերտել նորերը՝ օգտվելով հայերենի հարուստ բառապաշարից՝ *գրիծա-ճողվածք, ֆիբրոնա-թել-քուռ, ֆիլրո-քանոց, ժելրոնիս-դեղնուկ, պադկիդիշ- ընկեցիկ*,

բ/ նախկինում եղած տերմինները ճշգրտել և փոխարինել ավելի ճիշտ տարբերակով (*կլիպան-փական-կափույր*):

գ/ օտար ածական տերմինները թարգմանել գոյականի սեռական հոլովով, ասենք՝ *подпупочный-պորրաիակի, подлопаточный-թիակաիակի, подреберный-կողաիակի, подзрудинный-կրծուկաիակի*, իսկ մնացած դեպքերում թարգմանել իբրև ածական՝ *-ալիմ* վերջածանցով՝ *эрозивный-քերծվածալիմ, лицевой-դիմալիմ, -ական՝ нечувствительный-անզգայական, эротический-իրաիական, -ալոր՝ полосатый-գրլալոր* և այլ վերջածանցներով, *-չև՝ воркообразный-չազարաչև, падучевидный-վերնորաչև, -կերպ՝ фиброид-թելրաիերպ* վերջնաբաղադրիչ արմատներով:

Բառարանը հետաքրքիր է դառնում նաև տրվող լատինական այնպիսի արտահայտությունների ու դարձվածքների հայերեն ու ռուսերեն քարգմանություններով, որոնք գործածվում են բժշկության ոլորտում, ինչպես՝ *ավիազի բաղնիք, հիվանդագին հեշտափրություն, մամացային ջրգողություն, արքնատրիկ հովիկ, Ռեյյան կղզյակի շենք, Վյոսենյան նեղուց, ներսադարձ շիտոր, քափառող բջիջներ, գրասաֆյան պարկիկների պայրյան* և այլն:

Սակայն բառարանը լայն տարածում չունեցավ, քանի որ առաջին գլխաբառը լատիներեն է, ինչը դժվարացնում էր համապատասխան բառը փնտրելիս:

Մանուկ Աբեղյանը Գերենիկ Գեմիրճյանի և Գարեգին Լևոնյանի հետ կազմել է «*Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինաբանական բառարան*»-ը, որը, ժամանակին չհրատարակվելով, հնացավ և կորցրեց իր նշանակությունը:

Իհարկե, կարելի է երկար գրել, խոսել ու ներկայացնել անվանի գիտնականի բառարանագրական աշխատանքը, որն ունի բազմաթիվ դրվատելի կողմեր, ինչու չէ, նաև թերություններ, բայց կցանկանայինք մեր խոսքն ավարտել անգլիացիների մի իմաստուն ասույթով. «Բառարանները նման են ժամացույցի. ամենալավը չի կարող ամենից ճիշտը լինել, ամենավատը չլինելուց լավ է»:

**Բանալի բառեր** – *բառարանագրություն, բառացանկ, ռազմական բառապաշար, եզրաբանություն, բժշկական ոլորտի բառապաշար, գրխարատ, տերմինային կապակցություն, քարգմանական տարբերակ, դարձվածային արտահայտություն:*

**ПАРАНДЗЕМ МЕЙТИХАНЯН – Манук Абебян-лексикограф.** – Вклад Манука Абебяна в армяноведение определяется и его лексикографической деятельностью. Сравнение с военными словарями конца XX века показывает, что составленный М. Абебяном «Русско-армянский военный словарь» до сих пор используется в военной лексике и терминологии. Другой словарь, который вышел в свет уже после смерти великого ученого и который является коллективной работой, – это «Латинско-русско-армянский медицинский словарь».

Этот словарь безусловно восполняет созданную еще в средние века медицинскую терминологию.

**Ключевые слова:** *лексикография, словник, военная лексика, терминология, медицинская лексика, заглавное слово, сочетание терминов, переводческий вариант, фразеологическое выражение.*

#### **PARANDZEM MEYTIKHANYAN- Manuk Abeghyan as Lexicographer.**

The contribution of Manuk Abeghyan is distinct in Armenology also because of dictionaries comprised by him. The comparison with military dictionaries comprised at the end of the 20<sup>th</sup> century shows that up to now the “Russian-Armenian Military Dictionary” created by M. Abeghyan remains strictly usable both in lexicology and terminology of the military field.

The next dictionary which was published after the death of the great scholar and which is already a product of group work is the “Latin-Russian-Armenian Medical Dictionary”. This, by all means, supplies the medical terminology created in the medieval period.

**Key words:** *lexicography, glossary, military vocabulary, medical vocabulary, capital word, conjecture of terms, translated variant, idiomatic expression.*

**«ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ի ՈՐՈՇ ԴՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՉԵՌԱԳԻՐ  
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ**

«Բառգիրք հայոց» բառարանն առաջին անգամ տպագրվել է 1698 թ. Երեմիա Մեղրեցու ջանքերով (հենց նրան են շատերը համարում բառարանի հեղինակ):

Մինչ այդ ունեցել ենք ձեռագիր բառարանագրության հսկա պաշար, որի առաջնեկը (չհաշված սուրբգրային բացատրական ուղեկից բառարանները) Արիստակես Գրչի՝ 12-րդ դարի ուղղագրական բառարանն է: Ուշ միջնադարում են ստեղծվել «Բառք եբրայականք», «Հանդես բանաստեղծաց» (հիմնականում հոմանշային շարքեր են)<sup>1</sup>, «Բառք քերթողականք» և այլ բառարաններ: Բնույթով վերջինի նման է «Նահապետի բառարանը»<sup>2</sup>: Երևանի Մատենադարանի թ. 1528 ձեռագիր բառարանում գետեղված այս փոքր բառարանում կարելի է գտնել բառային բազմաթիվ նոր տվյալներ, այդ թվում՝ գրավոր այլ աղբյուրներում չհանդիպող բառեր, ինչպես՝ *համշահրին* – ի մի քաղաքէ, *համփսոնն* – մի սեղան, *մարմաշել* – ախորժել, *վահ* – հին և այլն:

«Բառք քերթողականք» բառարանային մմուշներից մեկի հիման վրա 17-րդ դարի վերջում Երեմիա Մեղրեցին հրատարակել է հայերեն առաջին տպագիր «Բառգիրք հայոց» բացատրական բառարանը (չհաշված, իհարկե, Ֆրանչիսկոս Ռիվոլայի և Աստվածատուր Ներսեսովիչի հայերեն-լատիներեն բառարանները և բառարանային այլ մասնակի միավորներ):

Լույսընծայումից ի վեր հայ առաջին տպագիր այս բառարանն արժանացել է ուսումնասիրողների իրարամերժ գնահատականներին: Օրի-

---

<sup>1</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառեր (ձեռագիր բառարանների նյութի հիման վրա), ՊԲՀ, 2012, թ. 2, էջ 170-180:

<sup>2</sup> **Պողոսյան Ն.**, 17-րդ դարի հայ բառարանագրության հուշարձաններ, «Չառուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Եր., 2012, էջ 252-264:

նակ՝ Հ. Աճառյան. «Մանրամասն քննելուց հետո աշխատությունը տեսա, որ մեծագույն մասամբ **վրիպակների մի հավաքածու է** այն... Պետք է շատ զգուշությամբ վերաբերվիլ սույն բառագրքի հետ և նրա հիշած ձևերը իբր ճշմարտություն չընդունիլ»<sup>3</sup>:

Գ. Ջահուկյան. «Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» մեծապես **շահած կլիներ**, եթե «Բառգիրք հայոց»-ի քննական բնագրի հրատարակության աշխատանք կատարված լիներ նախքան այդ բառարանի հրատարակումը»<sup>4</sup>:

Անվանի հայագետներից բացի՝ բառարանը եղել է նաև այլ լեզվաբանների ուշադրության կենտրոնում. 1975 թ. Հայկ Ամալյանի աշխատասիրությամբ տպագրվեց քննական-համեմատական բնագիրը: Բազմաթիվ բառարանային ճշգրտումներ են կատարել Լ. Հովհաննիսյանն ու Վ. Համբարձումյանը<sup>5</sup>: Վ. Համբարձումյանը նշում է, որ «բառարանում դեռևս կան բառեր, որոնք կարոտ են նոր լուսաբանման», ապա անդրադառնում է ԲՀ-ի *աղանդումն, աղիփարոս, անապե, անդուք, եկիտ, ուքամ* և այլ բառերի ստուգաբանությանն ու քննությանը<sup>6</sup>: Այս ամենով հանդերձ՝ չի կարելի ասել, թե «Բառգրքի» նկատմամբ կասկածները փարատվել են ներկայումս: Մեր հրապարակումը բառարանի տվյալները ճշգրտելուն միտված մի քայլ է:

\* \* \*

Երևանի Մատենադարանի մի քանի ձեռագիր բառարանների միջոցով (թթ. 739, 1654 և այլ) փորձել ենք ցույց տալ, թե ինչպիսի գրչագրական և լեզվական փոփոխությունների, հաճախ՝ աղճատումների միջոցով էին ի հայտ գալիս հնարավոր վրիպակները, որոնք ձեռագրից ձեռագիր անցնելիս քաղաքացիություն էին ստանում և ամրագրվում որպես նոր բառեր: Ձեռագրական հստակ օրինակներով հնարավոր է ցույց տալ նման բազմաթիվ «բառափոխումներ»:

<sup>3</sup> **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հտ. I, Եր., 1971, էջ 10:


<sup>4</sup> **Ջահուկյան Գ.**, Ստուգաբանություններ, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1976, թ. 12, էջ 41:

<sup>5</sup> **Հովհաննիսյան Լ.**, Բառաքննական նկատառումներ «Բառգիրք Հայոցում» տեղ գտած մի քանի բառերի վերաբերյալ, ՊԲՀ, Եր., 2000:

<sup>6</sup> **Համբարձումյան Վ.**, Բառաքննական դիտարկումներ Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոցի» մի քանի բառերի շուրջ, ՊԲՀ, Եր., 2010, N 3, էջ 161-169:

Բառահողվածի շփոթից, սխալ արտագրելուց կամ բառանջատումից ի հայտ էին գալիս նոր բառեր, օրինակ՝ «կատակ – ահել կ. ազդուրել» բառահողվածը ոչ ճիշտ արտագրելու հետևանքով առաջացել է մեկ այլ ձեռագրի «կատակահել - կազդուրել» հատվածը, «համադամ – անուշակ» բառահողվածից ստացվել է «համադաշունակ» նոր և անստույգ բառը, որը նաև տեղ է գտել «Բառգիրք հայոց»-ի առաջին և երկրորդ տպագիր տարբերակներում՝ «համաուղնակ», «համադաուշնակ» անստույգ ձևերով: «Խաղամ – ծիլ» բառահողվածի հետագա կցումից առաջացել է «խաղամծել» անստույգ բառը:

Առավել արտառոց է թ. 1654 ձեռագրում հանդիպող հետևյալ «բառափոխությունը»: Չեռագրի 231ա էջում կարդում ենք «ցոփան - հաստատ» բառահողվածը, ընդ որում՝ հստակ ուրվագծվում է, որ գրիչը կամ արտագրողը «ցոփան» բառավերջում նույնպես ուղղում է կատարել. նախապես եղել է «ցոփա՛ւ», հետո գրչագրական միջամտությունից հետո դարձել է «ցոփա՛ն»: Ամեն դեպքում շփոթն ակնհայտ է: Հետագա պրպրտումներն ի հայտ են բերում, որ դա ավելի վաղ ձեռագրից «ցոփ - անհաստատ» բառահողվածի փոփոխությամբ առաջացած մի նոր բառ է՝ «ցոփան», որը հայերենում փաստորեն գոյություն չունի և ընդամենը գրչագրական մի սխալի արդյունք է, իսկ նրա բացատրությունը ոչ թե «հաստատ» պետք է լինի, այլ հակադիր իմաստը՝ «անհաստատ» (տե՛ս ֆոտոպատճենը):



Այլ օրինակներ: «Հակատակել» բառն ի հայտ է եկել տարբեր ձեռագրերում «հակառակել» և «հակագրել» բառերի անհասկանալի միակցումից, որի մի տարբերակն է «Բառգիրք հայոց»-ի տպագիր տարբերակ ներմուծված «հակատառել – հակագրել» բառահոդվածը:

Մեկ տառի փոփոխմամբ առաջանում էին նոր բառեր. «բացատրել» բառը վերածվել է «բացատրել»՝ «ատ» տառակապակցությունը սխալմամբ «աւ» գրելու պատճառով, «գահատրակ»-ը դարձել է «գահուրակ, «բացասակ»-ը՝ «բայասակ» և այլն:

Նոր բառեր էին գոյանում ամբողջական վանկերի փոփոխմամբ. «հաստադրութիւն», փոխ.՝ հաստատադրութիւն, «ներջանակ» - ներշըրջանակ և այլն:

«Բառափոխումների» օրինակներ շատ կարելի է բերել: Մեր բառացանկում հանդիպում են հարյուրի հասնող նման ձևեր, որոնցից ներկայացնում ենք մի փունջ.

**գիպակացել** – փոխանակ՝ գիտակցել, **դեսպան** – դեսպակ, **դիպհոսակ** – դիտահաւակ, **ընդորմամբ** – ընդ որոնմամբ, **թաչել** – թափել, **թերաննակ** – թերանունակ, **խաղբայ** – խայտայ, **հմայրակ** – հպատակ, **ճարանակ** – ճարտարնակ, **շաղծակել** – շաղկածել, **պարզանակ** – պարզունակ, **վաղագարար** – վաղագաղափար և այլն:

Ձեռագրային տարընթերցումները, նկատելի է, նոր բառերի կարող են հանգեցնել մի շարք պատճառներով, ինչպես՝ ձեռագրերում հաճախ *ա-ն, գ-դ, ս-ն* և այլ տառերի գծագրությունը հստակ չտարբերակելու, բառակցման եղանակով շարադրելու (*երկիրասն, նորնորու, քարմեղեալ*), կրճատ գրությունը սխալ բացելու (*միտերեցկին*), անձանոթ բառերը հայերեն կամ օտար այս կամ այն բառին նմանեցնելու և ժողովրդական ստուգաբանության (*եղայ շրջեալ-հեղաշրջել*) և ուրիշ շատ պատճառներով<sup>7</sup>:

Նման ճանապարհով գոյացած բազմաթիվ աղճատված բառեր են սարդել Հայկ Ամալյանի տպագրած «Բառգիրք հայոց»-ի քննական բնագրում: Դա բնական և անխուսափելի պետք է համարել, քանի որ

---

<sup>7</sup> Տարբերակների առաջացման ուղիների մասին տես նաև «Բառգիրք հայոց»-ի քննական բնագիրը (Հ. Ամալյան, Եր., 1975, էջ ԺԳ):

աշխատասիրողի ձեռքի տակ չէին կարող գտնվել բառարանի ձեռագրային բոլոր նախօրինակները, նաև մեկ անհատի ջանքերից դուրս է բոլոր աղճատումները ճշգրտելը: Օրինակ՝ «Բառգրքի» 1975 թ. հրատարակության միայն 60-70 էջերում տեղ են գտել այսպիսի բառեր՝ **գագուցեալ, գակուցեալ, գայկուցեալ, գաղասն, գաղիսայ, գամզագարիչ, գարսած, գասիոնգարեր, գողթեյ, գեղեղփրէ**, որոնք, անշուշտ, ձեռագրային աղճատումների արդյունք են, և որոնց առաջացման ուղիները պետք է պարզել ձեռագրային տվյալները մեր մատնանշած եղանակով ճշտելուց հետո:

Պետք է ասել, որ գրչագրական վրիպակներից ի հայտ եկած «նոր» բառերը միայն ձեռագիր բառարաններում չէ, որ հանդիպում են: Տարբեր աղբյուրներից (ձեռագիր և տպագիր) մենք քաղել ենք գրչագրական տարբերակների, հնչյունափոխված ձևերի մի փունջ, որոնք առաջին հայացքից կարող են նորակազմ բառեր գրանցելու առիթ տալ, բայց ամեն դեպքում պետք է քննել՝ պարզելու համար դրանց ճիշտ սկզբնաձևը.

- ան**հ**արեստ - փոխ.՝ անարիեստ,
- բո**յ**որ - բոլոր,
- գ**ծ**ողիկ - գծողիկ,
- խ**ռ**տացաւ - խստացաւ,
- կա**ր**տարելապէս - կատարելապէս,
- հայ**ռ**կազանց - հայկազանց,
- մա**ր**քրափայլ - մարքրափայլ,
- ն**ս**աստ - նոսաստ,
- նո**ր**աբողբոջ - նորաբողբոջ,
- տառա**ր**պող - տառապող և այլն:

Նման բառերը խիստ զգուշությամբ պետք է ներառվեն բառապաշարային քննությունների մեջ՝ պատահականորեն նորակազմ չդիտելու համար: Այդպես ենք մենք փորձել վարվել մեր «Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում» բառարանը պատրաստելիս<sup>8</sup>:

---

<sup>8</sup> Պողոսյան Ն., Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (3000 բառային միավոր), Եր., 2014:

Ամեն դեպքում պետք է ամրագրել, որ «Բառգիրք հայոց»-ը մեծ կարևորություն ունի հայոց լեզվի բառապաշարի ամբողջական նկարագրության ու քննության համար: Իսկ մեր մատնանշած ուղին կարող է տարածվել առհասարակ անհատակ կազմություն և իմաստ ունեցող բազմաթիվ բառերի հնարավոր աղճատումները վերհանելու, դրանց նախաձևերը գտնելու համար՝ հենվելով ձեռագիր բառարանների տվյալների վրա: Այս մեթոդով հնարավոր է նաև ճշտել ու գտնել հայերեն առաջին տպագիր բացատրական բառարանի՝ «Բառգիրք հայոց»-ի շատ բառերի սկզբնական ու ճիշտ ձևերը և իմաստները: Այդպիսով «Բառգիրքը» վերագտած կլինի իր արժեքին համապատասխան տեղը հայ գրավոր մշակույթում:

**Բանալի բառեր** – *բառապաշար, բառարան, Մալրենադարան, չեռագիր, վրիպակներ, ճշգրտումներ:*

**НОРАЙР ПОГОСЯН** – **Некоторые замечания «Баргирк Айоц» («Армянская словарная книга») на основании данных рукописных словарей.** – В средние века были созданы различные словари на армянском языке. На основе одного из таких словарей в 1698 году Иеремиа Мегреци опубликовал толковый словарь, который содержит около 10 тысяч слов.

Исследователи выражают различные мнения относительно этого словаря. Г. Ачарян считает его (словарь) «совокупностью ошибок». Другие отмечают, что словарь содержит ценную информацию и много новых слов, которые не встречаются в других работах.

На примере рукописных словарей Ереванского Матенадарана мы попытались показать, как возникают ошибки во время копирования рукописей, которые включаются и в другие рукописи. В итоге, множество ошибок было опубликовано и в словаре 1698 года.

Предлагаемый в работе метод дает возможность более подробно и точно корректировать данные словаря 1698 года, найти оригинальные и правильные формы, а также значения слов, содержащихся в нем.

**Ключевые слова:** *словарный запас, словарь, Матенадаран, рукописи, ошибки, корректировки.*

**NORAYR POGHOSYAN - Some Adjustments of "Armenian Bargirq"**  
**Based on the Manuscript Dictionaries** - During the Middle Ages many different Armenian dictionaries were created. On the base of one of them in 1698, Yeremiah Meghretsi published an explanatory dictionary that contains about 10 thousand words with their explanations.

The researchers have expressed different opinions about this dictionary. H. Acharyan considered it "a collection of misprints". Others noted that the dictionary contains valuable information and many new words which did not appear in other works.

Using manuscript dictionaries of Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts, we tried to show how the misprints occurred while copying manuscripts. Later these misprinted words appeared in other manuscripts and in the dictionary published in 1698.

Our proposed method enables to adjust the first printed Armenian dictionary, to find out more data, primary and correct forms and meanings.

**Key words:** *vocabulary, dictionary, matenadaran, manuscripts, error, correction.*

**ՀԱՅՈՑ ԳԵՏԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Տեղանվանագիտության արքիմանդներից հիմնականը հետևյալն է. գետերի և լեռների անվանումները հարաբերականորեն ավելի կայուն են մյուսներից: Նրանց հաջողվում է խուսափել պատմության շրջադարձներից, որոնց այդպես ենթակա են բնակավայրերի անունները:

Գերմանացի տեղանվանագետ Դ. Բերգերն այս երևույթին տալիս է բնափոխտիպայական բացատրություն. «Մարդու կյանքի ամենակարևոր բաղադրիչներից մեկը ջուրն է: Մի գետը, մի լիճը, մի առուն կամ ամենափչը՝ աղբյուրը, նրան ապրելու, այդտեղ բնակություն հաստատելու հնարավորություն են տալիս: Նա կարողանում է արտեր և այգիներ մշակել, ոռոգել դրանք: Ջրի՝ մարդու կյանքում ունեցած այդ անփոխարինելի դերից պետք է հասկանալ, թե ինչու են գետերի անուններն այդքան երկարակյաց: Բնակավայրերը կարող են անհետանալ, եթե լքվեն բնակիչների կողմից. դրանք ամայանում են՝ վերածվելով ավերակների, մինչդեռ առուններն ու գետերը հաստատուն են. դրանք, թեպետ կարող են փոխել իրենց հունը, բայց ջուրը, որ գալիս է լեռներից, չի կարող անհետանալ, չորանալ, ավելին՝ համատեղելով երկրի ձգողության ու ծանրության ուժերը՝ դառնում է ջրային մի մեծ տարածք: Գետերի անունները, իհարկե, չեն կարող այնքան մնայուն լինել, որքան նրանցով անվանված գետերը, բայց և պետք է խոստովանել, որ աշխարհագրական ամենափոփոխուն և ավանդական անունների թվին են պատկանում մեծ գետերի՝ ցայսօր կենդանի անունները»<sup>1</sup>:

Անկասկած է, որ բնության մարմինները նախաստեղծ են, մարդն իր գոյությամբ և արարչությամբ հաջորդում է նրանց. անգամ հնագույն

---

<sup>1</sup> **Dieter Berger**, DUDEN, Taschenbücher, Geographische Namen in Deutschland, Herkunft und Bedeutung der Namen von Ländern, Städten, Bergen und Gewässern, Mannheim. Leipzig, Zürich, 1993, pp. 18-19.

բնակավայրերն ավելի երիտասարդ են լեռնաշղթաների և ջրային խոշոր միավորների համեմատ: Բացի դրանից՝ բնականումներն ինչ-որ առ-մամբ ներքաշված են պատմական պայքարի մեջ, դրանք ենթակա են մարդկանց շահերին և կախված են նրանց կենսագործունեությունից, իսկ բնության միավորների անվանումները քաղաքականապես և պատ-մականորեն ավելի չեզոք են, ուստի նոր նվաճողները կամ վերաբնակնե-րը չեն ձգտում դրանք անվանափոխել՝ ըստ իրենց պատկերացումների և նպատակների: Սակայն յուրաքանչյուր դրույթ ունի իր հակադրույթը. ինչպես արձանագրում է ռուս տեղանվանագետ Վ. Նիկոնովը, այս օրի-նաչափությունը ևս բացարձակ չէ, բացառություններ լինում են. «Դա-մասկոս և Բասրա քաղաքներն իրենց անունները պահպանում են մի քանի հազարամյակ, այնինչ այնպիսի խոշոր գետեր, ինչպես Վոլգան, Դնեպրը կամ Դանուբն այդ ժամանակընթացում հասցրել են մի քանի անգամ անվանափոխվել»<sup>2</sup>: Բերված օրինակների դեպքում ակնհայտո-րեն գործել են հիշատակված բնակավայրերի վերանվանման համար ազդեցիկ, անհատթահարելի պատմական և քաղաքական արգելքներ: Բնականումները հեշտությամբ քաղաքականացվում են և այդ քաղաքա-կան հանգամանքներից ելնելով՝ կա՛ն կայուն են, կա՛ն փոփոխական:

Հայկական տեղանունների պարագայում նույնը մասնակիորեն կա-րող ենք արձանագրել *Երևան, Գյումրի* բնականումների օրինակով՝ միաժամանակ նշելով, որ Հայկական բարձրավանդակի խոշոր ջրա-նունները ևս չեն վերանվանվել և ունեն մի քանի հազարամյակի պատ-մություն՝ *Արածանի, Ախուրյան, Աղսրև, Երասխ, Եփրատ* և այլն: Տեղա-նունն իր առաջնային գործառնությով նշան է, ուստի հանրահայտ նշանը, որպես կանոն, չեն փոխում նորաստեղծ նշանով:

Բնության միավորների անունների ստորաբաժանման մեջ ջրանուն-ները՝ հատկապես լճերի և գետերի, նպատակային վերանվանման առարկա գրեթե չեն դառնում: Եթե հիշենք անունների ծագման վերաբե-րյալ հին հույների բանավեճը՝ ըստ բնության («ֆյուսեյ»-ի) և ըստ դրու-թյան («թեսեյ»-ի) տեսությունները, ապա դրանք հեշտությամբ կիրառելի

---

<sup>2</sup> **Никонов В.**, Введение в топонимику, издательство Наука, М., 1965, с. 43:

են տեղանունների պարագայում: Այստեղ «ֆյունեյ»-ի լավագույն ապացույցն են հատկապես բնաշխարհագրական միավորների անունները՝ լեռնանուններն ու ջրանունները: Սկզբնապես տեղանունը և իր նշանակած աշխարհագրական միավորը, մասամբ նաև բնակավայրը ուղիղ կապի մեջ են. օբյեկտի բնույթից բխում է նրա անվանումը: Կապույտ ջրերով լիճը կամ կապույտ երկնքի մեջ մխրճված լեռնագագաթը կոչում են *Կապույտ*, սակավաջուր աղբյուրը՝ *Ծարավ աղբյուր*, երկաթով հարուստ լիճը՝ *Շահգոր լիճ*, հանքային աղերով հարուստ գետը՝ *Աղի* և այդպես շարունակ:

Տեղանունները և դրանք կազմող հիմքերը, ստեղծվելով ըստ անվանվող միավորների բնության, այնուհետև շարունակում են իրենց կյանքն արդեն ըստ դրության, «բեսեյի» սկզբունքով, այսինքն՝ յուրաքանչյուր ազգ իր կենսագործունեության ընթացքում ստեղծում է սահմանափակ թվով տեղանվանահիմքեր և հատուկ ածանցներ, որոնք զուգակցելով և կրկնելով՝ կարող է անվանակոչել անսահմանափակ թվով աշխարհագրական միավորներ և բնակավայրեր: Կարծում ենք, որ տեղանունները, թեև բառային միավորներ են, բայց դրանք կարելի է համարել յուրօրինակ տեքստեր, որտեղ նշանների միջոցով (նշանները տեղանվանահիմքերն ու տեղանվանակերտ մասնիկներ են), անվանադիրը հստակ բովանդակություն է ծածկագրում ներկա և ապագա լեզվակիրների համար: Այս ըմբռնմամբ տեղանունը, հատկապես հնագույն և հանրահայտ, վաղնջատեքստ է՝ արքիտեքստ, որտեղ արտացոլված են անվանադիր հանրության ենթագիտակցական և գիտակցական պատկերացումները աշխարհի ու մարդկանց հարաբերությունների վերաբերյալ:

Ջրանունները հայ իրականության մեջ մեծ դերակատարում ունեն, թեև Հայաստանը համարվում է սակավաջուր լեռնային երկիր, բայց պատմական կտրվածքով ջրային միավորները միշտ վճռորոշ են եղել հայ լեզվամտածողության և ինքնարձնկալման համար: Այսպես՝ պատմական հայրենիքի հասկացությունը կամ ներկայումս տարածված եզրույթով՝ տեսլականը, ծովից ծով Հայաստանն է և ոչ թե, գործիմանկ՝ լեռից լեռ՝ Արարատից մինչև Մուսա լեռ ու Նեմրոս Հայաստանը: Հիշենք նաև պատմական-ծագումնաբանական այն վարկածը, ըստ որի՝ արմեն-

ները, որոնք մասնակցել են հայկական էթնոսի կազմավորմանը, որոշ հնագույն աղբյուրներում համարվել են ծովային ժողովուրդ, և այսօր էլ Միջերկրական, Էգեյան և Բալթիկ ծովերի ավերին կան «armen-arman» հիմքով տեղանուններ, ավելի որոշակի՝ ջրանուններ<sup>3</sup>:

Ջրի սրբացումը հեթանոսական ժամանակներից է գալիս, հանգրվանում մեր «Սասնա ծռեր» դյուցազներգության և հեքիաթների մեջ, իհարկե, հիմնականում անձնանուններով, բայց որոշակի կնիք է թողնում նաև մեր տեղանուններում: Չմոռանանք, որ Հայաստան տեղանվան հնագույն հոմանիշներից է Նաիրին, իսկ Նաիրին ստուգաբանվում է նաև իբրև գետերի երկիր: Մենք համարվում ենք Կուր-Արաքսյան մշակույթի կրող. վիթխարի է նաև Եփրատ գետի ու նրա վտակների դերակատարումը մեր բնակության վայրերի և պետական կազմավորումների պատմության մեջ:

Այժմ քննարկենք հայկական հիմնական գետանունները՝ իրենց տեղանվանահիմքերով, կառուցվածքային և իմաստային հատկանիշներով, որոնք բոլորը միասին գոյացնում են ջրանունների անվանման հայկական բանաձևը: Յուրաքանչյուր լեզվակիր հանրույթ ձևավորում է անվանաստեղծման իր հիմնակադասարները կամ բանաձևը, որը հարաբերականորեն վերժամանակային է և վերտարածական, այսինքն՝ հայ անվանադիրը թե՛ մեր թվարկությունից առաջ՝ 3-րդ հազարամյակում, թե՛ մ.թ. 21-րդ դարում, անկախ բնակության աշխարհագրական վայրից, իր շրջակա միջավայրի միավորները անվանակոչում է գրեթե նույն սկզբունքներով, բառակազմական կադասարներով, որոնց հիմքում հայտնի տեղանվանահիմքեր են, ածանցներ ու քերականական մասնիկներ՝ ստեղծելով հայկական տեղանվանահամակարգը՝ իր շրջանաբաժանումներով: Դիշտ է, ժամանակը և տարածությունը որոշակի հետք թողնում են անվանադրման սկզբունքների վրա, բայց դրանք նրբերանգներ են, որոնք չեն փոխում հիմնական ներկայանակը: Ինչպես արդեն նշեցինք, մակրոջրանունները իրենց ծագմամբ շատ ավելի հին են և ծագումնաբանորեն կապվում են այն ժողովուրդների լեզուների հետ, որոնք

---

<sup>3</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Եր., 1987, էջ 286-287:

վաղնչական ժամանակներում հայկականացել են և, ըստ էության, կարող են բացատրվել նաև ենթաշերտի միջոցով: Դրանք, ըստ մեզ, յուրօրինակ ժառանգություն են, որ հայերը ստացել են Փոքր Ասիան և Կովկասը բնակեցնող տարբեր ազգություններից՝ խեթերից, կասկերից, լուվացիներից, իբերներից և այլ ցեղերից:

Ծագումնաբանորեն մնան թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ ջրանունների հիմքում ցեղանուններ են՝ Վան, Եփրատ, Տիգրիս, Արածանի, Երասխ, Գեղամա լիճ, Բզնունյաց ծով և այլն: Խոշոր ջրանունն իր անվանումը գրեթե հիմնականում ստացել է տվյալ տարածքը բնակեցնող ժողովրդի կամ էլ նրա պաշտած աստվածների անուններից:

Հազարամյակների պատմություն ունեցող մեր խոշոր ջրանունների զգալի մասը ունի հնդեվրոպական ծագում, ինչպես ընդհանրացնում է գետանունների՝ մեզանում առաջին համակարգված հետազոտող Վ. Ջիհանյանը. «Եթե առաջարկված ստուգաբանությունները նույնիսկ մասամբ համապատասխանում են իրականությանը, ջրանունների զգալի մասը հ.-ե. ծագում ունի և ներկայացնում է հայկական, իրանական, թերևս անատոլիական կամ մերձակից և առայժմ անհայտ կամ չճշգրտված հ.-ե. լեզվադարձներ»<sup>4</sup>: Անատոլիական ասելով՝ ուսումնասիրողը նկատի ունի առավելապես խեթա-լուվական լեզուները: Այս ուսումնասիրության մեջ ներկայացնում ենք հայկական իրականության մեջ վճռորոշ նշանակություն ունեցող գետանունների և դրանց վտակների անվանումների գիտականության բարձր աստիճանի հավակնող ստուգաբանությունների պատմությունը, որոնք համադրել ենք և փորձել ճշգրտել:

Հայերիս համար գետերի մեջ սրբազան նշանակությամբ օժտված է *Արարտը*, եթե լեռնանունների մեջ առանցքային մայր լեռն *Արարալուն* է, ապա գետանունների մեջ՝ մայր *Արարտը*: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» *Արարտ* գլխաբառի դիմաց թվարկված են հինգ տասնյակից ավելի տեղանվանական տարբերակներ թե՛ հայկական, թե՛ օտար աղբյուրներից, ինչպես օրինակ՝ *Արախես*,

---

<sup>4</sup> **Ջիհանյան Վ.**, Հայկական լեռնաշխարհի ջրանունները, Եր., 1998, էջ 269:

*Արախիս, Արաս, Արաքսե, Արաքսիս, Երասիս, Ռաիս, Ռասի, Ռաս, Ռահ, Արագ, Արագի* և այլ արմատներից կազմված՝ *Բասեևի ջուր, Գեհոն, Գեհովն, Գիհով, Գիհովն, Դվնագեթ, Ջահունյաց գեթ, Ջանունյաց գեթ*<sup>5</sup>... Այս տարբերակները, հատկապես առաջին շարքի, որոնք միևնույն տեղանվանահիմքի հնչյունական փոփոխակներն են՝ տարբեր լեզուներից ծագած, վկաներն են այն հարուստ պատմության, որն ընթացել ու ծավալվել է այս գետի ափերին բնակվող և այնտեղ հաստատվելու ջանքեր գործադրող տարբեր ժողովուրդների մշտակա պայքարին գուրընթաց:

*Երասիտ* հայ մատենագրության մեջ (V-XVIII դարեր) ամենահաճախ հիշատակվող գետանունն է, որն իր ողջ հոսանքով պատմական Հայաստանի տարածքում է գտնվում: Հնագույն վկայությունները հունա-հռոմեական աղբյուրներում են՝ *Ղարձիզ, Araxes*, որոնց ավանդույթով էլ գետը պաշտոնապես ճանաչվել է *Արաքս*<sup>6</sup>, իր բազմաթիվ փտակներով: Հայկական աղբյուրներում *Արաքս* անունն ամրակայվել է XIX դարում, մինչ այդ գերիշխողը *Երասիս* տարբերակն էր: Գետանունը փորձել են ստուգաբանել դեռ հին հեղինակները՝ Ստրաբոնը և Խորենացին, որոնցից առաջինը գետի հունական անունը բխեցնում է «ճեղքել, խլել» *«ἀπαράξαι, ῥοξάνια»* բայերից<sup>7</sup>, ընդ որում՝ այդ անունը դրել է Արմենոսը: Ն. Արոնցն իր «Քննական պատմություն հայոց» երկի «Հայերի ծագումը» անավարտ մնացած գլխում Արաքս գետի՝ Ստրաբոնի այս ստուգաբանությանը մանրամասն անդրադարձ է կատարել:

Հնում Արաքսը, լեռներից գահավիժելով, ողողում էր դաշտը և ելք չգտնելով՝ ընդարձակ ծով էր գոյացնում Թեսալիայի Պենեոս գետի պես, որը հնում Արաքս էր կոչվում՝ իբրև ճեղքող<sup>8</sup>: Ահա Արաքսն էլ ճեղքում է լեռները, որպեսզի հոսի դեպի Կասպից ծով, այսինքն՝ Արաքս նշանակում է ճեղքող: Իսկ ահա Խորենացին իր մախրնտրած սկզբունքով

<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Եր. 1986, էջ 400:

<sup>6</sup> Տե՛ս **Ջիհանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 241-244:

<sup>7</sup> Տե՛ս **Ստրաբոն**, Օտար աղբյուրները հայերի մասին, հունական աղբյուրներ, N 1, Եր., 1940, էջ 11-14:

<sup>8</sup> Տե՛ս **Արոնց Ն.**, Քննական պատմություն հայոց, Երկեր, հ. Դ, Եր., 2009, էջ 351:

*Արաքս* գետանունը բացատրում է Արամայիսի թոռան՝ *Երասարի* անվան միջոցով<sup>9</sup>:

*Արաքս*ը՝ իբրև վաղնջական ծագում ունեցող անուն, բխեցվել է նաև ցեղանունից: Այսպես՝ Հովհ. Կարազոյազյանը նրա վաղագույն հիշատակումը գտնում է Արգիշտի Ա-ի Խորխոռոյան տարեգրության մեջ՝ Ք.ա. 785 թ. որպես *Երիսիսե*, նրա վերականգնած հնչյունական անցումը հետևյալն է՝ *Երիսիսե* > *Երսիս* > *Երսիսք* > *Երսիսա* > *Երասիս*: Իսկ երկբարբառը պարզեցվել է իս>ա անցումով, -ք և -ս մասնիկները հոգնակերտներն են, որոնք հույժ բնորոշ էին ցեղանունների կազմությանը, իսկ վերջում կատարվել է դրափոխություն: Անտիկ շրջանի *Արաքսես* ձևը ծագել է *Երսիսա* ձևից<sup>10</sup>: Իսկ Վ. Ջիհանյանն առաջարկում է *Երասիս* անվանումը համարել հ.ե \* *res/ ɛros / \* ɛros* «հոսել, թափվել» արմատի ածանցյալը՝ *kho/ kha* վերջնամասնիկով: Այստեղ իմաստային գուգակցումը համոզիչ է, ջրի իմաստային դաշտին պատկանող գործողությունները հաճախ են ջրանունների հիմք դառնում, բայց հնչյունական անցումներն անհամոզիչ են: Դա նշում է նաև ինքը՝ Ջիհանյանը՝ անհարթությունները փորձելով բացատրել անատոլիական լեզվադրոտի՝ մեզ դեռ անհայտ, բայց հնարավոր օրինաչափություններով:

Մեր համոզմամբ՝ Հ. Կարազոյազյանի առաջարկած և նրանից վաղ Ս. Երեմյանի ենթադրյալ ստուգաբանական տարբերակն<sup>11</sup> ավելի համոզիչ է՝ ցեղանունից - գետանուն անցումով: Արաքսի տասից ավելի վտակների որոշ անվանումները ևս բնութագրական են, որովհետև, եթե մեծ գետն անվանակոչվում էր իր ափերին ապրող ցեղերի անվամբ, ապա նրա ճյուղավորումները կարող էին ստանալ իրենց անունները՝ ըստ որակական հատկանիշների, այսպես՝ ունենք գունանուն տեղանվանահիմք պարունակող երեք վտակ՝ *Դեղին գեղը*, *Կարսի գեղը*, *Սև ջուրը*: Այս ստուգաբանության հավաստումներից է գերմանացի տեղանվանագետ Դ. Բերգերի դիտարկումը գերմաներենում գունանունների՝ գետանուն դառնալու ընթացքի և վերաիմաստավորման վերաբերյալ.

<sup>9</sup> Տե՛ս Խորենացի Մ., Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 48:

<sup>10</sup> Հմմտ. Կարազեղզեան Յ., նշվ. աշխ., էջ 240:

<sup>11</sup> Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Եր., 1963, էջ 74:

«Գունանուններից բաղադրված ջրանունները փոխվում են ժամանակի հետ և տարբեր լեզուներում: Սա վերաբերում է հատկապես հնդեվրոպա-գերմանական (indogermanisch) ժամանակվա գունանունների մեծ մասին: \*Alb արմատն է, որից առաջացել է, դիցուք, Elbe գետանունը, այն իսկապես ունի «սպիտակ» հիմնական իմաստը, բայց ջրանվան մեջ կիրառվելով՝ ձեռք է բերել «լուսավոր, պարզ» իմաստները՝ միաժամանակ ընդլայնելով գետի նշանակությունը»<sup>12</sup>:

Թեև վտակների անվանակոչման դեպքում ևս ունենք ցեղանունից ծագած գետանուն, ինչպես, օրինակ՝ *Վեդին*: Հ. Կարագոյոյանն այս գետանունը բխեցնում է *Վերդա* ցեղանունից՝ *Մերda*, «r/ր» աճականն ընկել է, բառավերջի a/ա-ն դարձել է օ/ե, ապա է>ի անցումով ստանում ենք՝ *Մերda > Մeda > Մedē > Մedi*<sup>13</sup>:

*Հրազդան* գետանունը, որը նաև բնականում է դարձել, 20-ական քվականներին եղել է նաև գավառանուն, ծագմամբ իրանական է, վկայված է մի շարք տարբերակներով՝ *Հուրազդան, Հուրասուրան, Բջնի ջուր, Բջնո գետ, Բջնու ջուր, Չանգա, Չանգագետ, Չանգի, Իլդարունի, Իլդարունիա ...*<sup>14</sup>, Հրազդանի ավազանը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից, ուստի տեղանունը ևս հին է, մեր մատենագրության մեջ վկայված է *Հրազդան, Հուրազդան, Հուրասուրան* ձևերով, *Չանգի/Չանգու* տարբերակը ուշ միջնադարում է կիրառվել և այսօր էլ գործածական է բարբառներում ու խոսակցական լեզվում: Վ. Ջիհանյանն առաջին բաղադրիչը առաջարկում է համեմատել իրաներեն *frac* բառի հետ, որն ունի «վերև, կից» իմաստները, իսկ երկրորդ բաղադրիչն ավելի թափանցիկ է և ուղղակի կապվում է իրանական գործունակ տոպոֆորմանտ *dānu*-ի հետ, որը նշանակում է «գետ» և վկայված է բազմաթիվ հայտնի գետանուններում՝ *Դոն, Դնեպր, Դանուբ / Դունայ, Դնեսար, Ալդոն*: Ըստ այսմ՝ *Հրազդան* տեղանունը մեկնաբանվում է որպես Վերին գետ<sup>15</sup>, այսինքն՝ անվանումը կատարվել է ըստ աշխարհագրական դիրքի: *Իլդա-*

<sup>12</sup> Berger D., նշվ. աշխ., էջ 9:

<sup>13</sup> Հմմտ. Կարագեոզեան Յ., նշվ. աշխ., էջ 165:

<sup>14</sup> Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, Եր., 1991, էջ 457:

<sup>15</sup> Հմմտ. Ջիհանյան Վ., նշվ. աշխ., էջ 249:

*րունի* անվանումը Հայաստանի ուրարտական շրջանից է, այն վկայված է Ռուսա II-ի Չվարթնոցյան արձանագրության մեջ<sup>16</sup>:

Հ. Կարագոյզյանն այս գետանունը ստուգաբանում է որպես «Ծովագետ»: «Իլը» բաղադրիչը համարում է «գետ» բառը, ինչպես իրանյան *dānu-*ն, իսկ «արուն»-ը բացատրում է խեթերենի միջոցով՝ «ծով» իմաստով: Գտնում են այլ գետանուններ նույնիմաստ կադապարով, մասնավորապես՝ Մասիսի արևմտյան կողմում գտնվող Գայլատու լճից սկիզբ առնող և Տղմուտի մեջ թափվող *Առուն* գետը, որը դարձյալ ստուգաբանում է որպես Ծովագետ<sup>17</sup>:

Փաստենք, որ Վ. Ջիհանյանը նույն այս *Առուն* գետի հիմքը փորձում է բացատրել \**sr-uno/na* նախածնով, որն ունի «հեղեղ, հոսանք» իմաստները: Ստուգաբանական որոնումները դեռ կարող են շարունակվել<sup>18</sup>:

Երասիսի վտակ *Ազալթ* գետանունը թափանցիկ է նաև արդի լեզվամտածողությամբ. ողջ խնդիրն է, թե ինչու է գետը կոչվել «ազատ» անվանով: Ղ. Ալիշանը «ազատ» բառը փորձում է բացատրել արքունական ոստանում գտնվելու փաստով՝ «վասն արքունի ոստանի՞ն մատուցակութեանն»<sup>19</sup>: Այս ստուգաբանական բացատրությունը հիմնավորվում է *Մասիս / Մասիք* լեռան *Ազալթ* անվանումով՝ իբրև Մեծ Հայքի թագավորության ոստանում գտնվող լեռ: Մեր կարծիքով, համոզիչ մեկնաբանություն է, բայց նշենք, որ Վ. Ջիհանյանը փորձում է ավելի գործնական՝ աշխարհագրական բացատրություն տալ «ազատ» բառի տեղանվանացմանը, քանի որ «ազատ» բառը, բացի ՆՀԲ-ում վկայված «ազնվական, իշխան, ոստանիկ» իմաստներից, ունի նաև «զատ, հեռի, մեկուսի, անմասն»<sup>20</sup> իմաստները, ուրեմն գետը կարող էր Ազատ կոչվել, որովհետև ի տարբերություն Բասախ և Հրագրան գետերի՝ առանձին, ազատ է խառնվել Երասիսին<sup>21</sup>:

<sup>16</sup> Арутюнан Н., Топонимика Урарту, էջ 87-88:

<sup>17</sup> Տե՛ս. Կարագեոզեան Յ., նշվ. աշխ., էջ 221:

<sup>18</sup> Տե՛ս Ջիհանյան Վ., նշվ. աշխ., էջ 231:

<sup>19</sup> Ալիշան Ղ., Այրարատ, Վեներտիկ, Սբ. Ղազար, 1890, էջ 331:

<sup>20</sup> «Նոր բառգիրք Հայկագետան լեզուի», հ. I, Եր. 1979, էջ 4:

<sup>21</sup> Տե՛ս Ջիհանյան Վ., նշվ. աշխ., էջ 220:

Անվանադրման նշյալ ենթահամակարգում, այսպիսով, գործում է սեփականության կամ պատկանելության սկզբունքի գերակայությունը, մնացյալ սկզբունքները խոշոր ջրային միավորների անվանումների հիմքում կարծես ածանցյալ են: Ում պատկանում, ծառայում է ջրանունը, նրա անունն էլ կրում է: Բայց չպետք է բացառել նաև, որ ջրանունների վաղնջական անվանման հիմքում ընկած է «ջուր» հասկացությունն իր իմաստային դաշտով:

Օրինակ՝ *Մխուրյան* գետանունը, որը մեր տարածքի՝ ուրարտական շրջանից վկայված հնագույն տեղանուններից է: Այսպես, Սարիղամիշում գտնված Արգիշտի Առաջինի արձանագրության մեջ նշվում է *Մխուրիանի*՝ <sup>URU</sup> *Ahuriani* քաղաքի գրավման մասին<sup>22</sup>: Գ. Ջահուկյանն այն ստուգաբանում է հնդեվրոպական «ջուր» արմատի միջոցով՝ \*ak<sup>u</sup> պեղսագյան կամ թրակյան համահունչ գետանունների հետ՝ Άχερον, Άχελη, Άχελώος<sup>23</sup>: Նա կարծում է, որ «Մխուրյան» ուրարտական ծագման հատուկ անունից առաջացել է *ախուրան*<sup>24</sup> «սրընթաց, ահեղ (գետ)» բառը, որը վկայված է Հ.Աճառյանի ՀԱԲ-ում որպես նորագյուտ<sup>25</sup>:

Ընդհանրացնելով վերոնշյալ ստուգաբանությունները՝ կարող ենք նշել, որ ջրանունների կազմում սովորաբար ամենահաճախադեպը «ջուր» իմաստային խմբին պատկանող բառերն են, գործօրինակ՝ *ծով*, *լիճ*, *գետ*, *առու*, *ճահիճ/մոր*, *աղբյուր*, *հեղեղ*, ինչպես նաև ջրին բնորոշ գործողությունները՝ *հոսել*, *թափվել*, *վիժել*, *ծփալ*, *խայրալ*, *որոյալ*, *աղմկել*, *ձեղքել*, ջրի հատկանիշները նշանակող բառերը՝ *մաքուր*, *ջինջ*, *գուլալ*, *պղրոր*, *մուգ*, *արագ*, *դանդաղ*, *լողմոր*, *աղի*, հնարավոր գունային երանգների անունները, որոնք հեշտությամբ ենթարկվում են տեղանվանացման և՛ մաքուր, ուղիղ ձևով, և՛ ածանցմամբ, և՛ բառաբարդմամբ, և՛ բառակապակցությունների կազմում:

<sup>22</sup> Տե՛ս **Արությունյան** **Н.**, Топонимика Урарту, Ереван, 1985, էջ 47:

<sup>23</sup> Տե՛ս **Ջահուկյան** **Գ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 97:

<sup>24</sup> **Ջահուկյան** **Գ.**, Հայոց լեզվի պատմություն. մախագրային շրջան, Եր., 1987, էջ 440:

<sup>25</sup> **Աճառյան** **Հ.**, Հայերենի արմատական բառարան, հ. I, Եր., 1971, էջ 99:

Կառուցվածքային տեսանկյունից թե՛ համաժամանակյա, թե՛ տար-  
ժամանակյա կտրվածքով մեզանում գերակշռող են բարդ և բաղադրյալ  
գեոտանոնները, պարզերն ավելի սակավաթիվ են:

Այսպես՝ Սևանա լիճը եզերող լեռնաշղթաներից դեպի լիճը հոսող և  
շրջակայքը ոռոգող շուրջ 30 գետերից և գետակներից ամենախոշորների  
անվանումները հետևյալներն են՝ *Արգիճ*, *Ծակքար*, *Գավառազեյր*,  
*Դրախարիկ*, *Չկնազեյր*, *Կարճաղբյուր*, *Մասրիկ*, *Վարդենիս*: Այս 8 գե-  
տերի անվանումներից 4-ը բարդ են՝ *Ծակքար*, *Կարճաղբյուր* – կցական  
բարդություններ, որոնք առաջացել են որոշիչ-որոշյալ կապակցություն-  
ների սերտաճումից, 2-ը՝ հողակապավոր համաղբակաճ բարդություն-  
ներ՝ *Գավառազեյր*, *Չկնազեյր* (հատկացուցիչ-հատկացյալ կապակցու-  
թյունների սերտաճումից առաջացած): Եվս մեկ հին անվանման մեջ՝  
*Արգիճ*, վերականգնվում է մթագնած բարդություն՝ «**լիճ**» բաղադրիչով,  
որտեղ «արգ» հիմքն է, հնդեվրոպական \*arg արմատը՝ «փայլուն, սպի-  
տակ» իմաստով, որը, ինչպես նշում է Վ. Ջիհանյանը, ջրանուն դառնա-  
լու մեծ հակում ունեն<sup>26</sup>: 2-ը *-իկ* նվազական ածանցով կազմություններ  
են՝ *Դրախարիկ*, *Մասրիկ*, 1-ը՝ *-նի/-ք* հոգնակի ուղղականի հայցական  
ձևը՝ *նիք>նիս*, որը՝ թեթույթային, իսկ լայն առումով ածանցային կազ-  
մություն կարող ենք համարել՝ *Վարդենիք>Վարդենիս*:

Կառուցատիպը բոլոր դեպքերում կախված է անվանադրման  
սկզբունքներից, որոնք տեղանունների համար երեք հարցերի պատաս-  
խան են ենթադրում՝ ի՞նչ է (ջուր, ծով, լիճ, գետ, աղբյուր և այլն), ինչպի-  
սի՞ն է (մեծ, փոքր, խոր, պարզ, սև, կապույտ և այլն) և ո՞ւմն է (աստված-  
ներինը, ցեղերինը կամ անհատներինը): Ըստ այդմ՝ եթե ջրանունը պա-  
տասխանում է առաջին հարցին, ապա այն պարզ է կամ պարզ ածան-  
ցավոր՝ *Ծով-Ծովք-Ծովեր-Ծովակ*, *Լիճ-Լիճք-Լճեր-Լճակ*, *Անպ-Անպեր-  
Անպակ* ձևերի համաբանությամբ, երկրորդ և երրորդ հարցերին պա-  
տասխանելու պարագայում ջրանունը հիմնականում դառնում է բաղադ-  
րյալ կամ բարդ՝ *Մեծ լիճ*, *Պարզ լիճ*, *Բզնունյաց ծով*, *Գեղամա լիճ*, *Ան-  
պաջուր*, *Ակնաջուր*, *Գավառազեյր*, *Գառնազեյր* և այլն:

<sup>26</sup> Տե՛ս **Ջիհանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 232:

Հավարտ նշենք, որ գետանունների ուսումնասիրության ստուգաբանական փուլն անխուսափելի հանգեցնում է դրանց իմաստակառուցվածքային կաղապարների առանձնացմանը, որն արդեն միավորում է բոլոր ժողովուրդներին՝ երևան բերելով անվանադրման ընդհանուր կաղապարները, դրանց մենք կհանդիպենք զարգացած և հազարամյակների պատմություն ունեցող սեմական և հնդեվրոպական ժողովուրդների լեզուներում, ինչպես նաև իրենց քաղաքակրթության սկզբում առաջին քայլերը կատարող կղզիային տարբեր ժողովուրդների տեղանվանացանկերում: Կարող ենք ասել, որ անվանադրումը, Կ. Յունգի ձևակերպմամբ, արքետիպ է:

Եթե Յունգն առանձնացնում է արքետիպերն ըստ կենսական բոլոր հիմնական իրավիճակների՝ Մեծ մայր, Հավերժական մանուկ, Ծեր իմաստուն, Գազան, Ոգի, Փոխակերպում, Սրբազան ամուսնություն և այլն<sup>27</sup>, ապա, մեր համոզմամբ, պետք է առանձնացնել *Հավերժական անվանադրի* արքետիպը, որը թույլ է տալիս մարդկանց երկրի տարբեր ծագերում բոլոր ժամանակներում անվանակոչող բնութագրիչ նշաններ ստեղծել սահմանափակ թվով հիմնաբառերով և ածանցներով ոչ միայն մարդկանց բազմության, այլև շրջակա աշխարհի անսահմանափակ միավորների համար. «Դա առաջնային նախնական փորձ է, որ բարձրանում է անժամանակության խորքերից ... քանդելու նախաստեղծ քառսի թնջուկը»<sup>28</sup>: Հայոց գետանուններն այս փորձի լավագույն ապացույցն են:

**Բանալի բառեր** – *Հայասրան, ջրանուններ, հայոց գեղերի անուններ, արուզարանության պատմություն, ազգային ինքնագիրակցություն, ցեղերի անուններ, ընդհանուր հնդեվրոպական ծագում:*

---

<sup>27</sup> Հմմտ. **Карл Юнг**, Избранное, М., 1998, էջ 8:

<sup>28</sup> Նույն տեղը, էջ 9-10:

**НАРИНЕ ДИЛБАРЯН – Из истории этимологии названий армянских рек.** – Гидронимы, наиболее значительную часть которых составляют названия рек, в топонимике принято считать самыми устойчивыми и древними образованиями. Гидронимы в армянской действительности всегда играли важную роль, хотя Армения и является горной и маловодной страной, исторически именно крупные реки стали определяющими понятиями для армянского национального самосознания. Армяне считаются носителями Куро-Араксской индоевропейской культуры. Велико значение Евфрата и его притоков в истории возникновения первых армянских государственных формирований. Аракс-Ерасх издревле армяне называли Мать-река. История этимологии названий армянских рек доказывает, что они имеют в основном общеиндоевропейское происхождение, но существуют также более поздние иранские названия – Раздан, Азат. В основу названий многих рек легли имена тех древних племен, которые заселяли Армению и участвовали в формировании армянского этноса, например, Евфрат, Арацани, Ерасх/Аракс, Ван, Веди.

**Ключевые слова:** *Армения, гидронимы, названия армянских рек, история этимологии, национальное самосознание, названия племен, общеиндоевропейское происхождение.*

**NARINE DILBARYAN - From the history of etymology of the names Armenian rivers.** - Hydronyms, the most significant part of which are the names of the rivers, in the toponymy is considered to be the most stable and ancient formations. Hydronyms in Armenian reality has always played an important role, though Armenia is a mountainous country and low water, but historically it is the major river became defining concepts for the Armenian national identity. Armenians consider carriers Kura-Aras of Indo-European culture. The significance of the Euphrates and its tributaries in the history of the first Armenian state formations. *Arax-Yeraskh* Armenians since ancient times was called the Mother River. History of the etymology of the names of the Armenian rivers proves that they are mostly Indo-European origin, there are also more recent Iranian name - *Razdan, Azat*. The basis of the names of many rivers have laid down the names of the ancient tribes that inhabited Armenia and participated in the formation of the Armenian ethnic group, such as the *Euphrates, Aratsani, Yeraskh / Aras, Van, Vedy*.

**Key words:** *Armenia, hydronyms, names of Armenian rivers, history of etymology, national identity, names of tribes, Indo-European origin.*

**ԼԵՉՎԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՅԵՐԸ Մ. ԱՔԵՂՅԱՆԻ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Լեզվաբանության կարևորագույն սկզբունքներից մեկն այն է, որ յուրաքանչյուր լեզու միշտ և անընդհատ փոփոխվում է, և այդ փոփոխության մեջ են լեզվի կյանքն ու պատմությունը: Մյուս սկզբունքն այն է, որ, շարունակական փոփոխություններից զուգընթաց, գրական լեզուն պետք է անընդհատ կանոնարկվի, նորմավորվի՝ հիմնվելով լեզվի պատմությունից ձեռք բերած իրողությունների, ընդհանրապես մարդկային լեզվի զարգացման ընդհանուր օրենքների ուսումնասիրության, խոսքային գործունեության կամ կենդանի խոսվածքի փոփոխությունների և նրանց մեջ նույնը մնացող գործոնների բնույթի ու ներգործության հետազոտական քննության վրա:

Մ. Աբեղյանը բազմակողմանիորեն ու հիմնովին ուսումնասիրեց քերականական գիտությունը, ուսումնասիրեց և թափանցեց հայերենի էության մեջ ու գրեց հայոց լեզվի տեսությունն ու նրա քերականությունը:

Ըստ քերականի՝ ամեն լեզվի մեջ լեզվական բոլոր իրակությունները որոշ օրենքներով միշտ և անընդհատ փոփոխվում են՝ խոսողների կամքից բոլորովին անկախ: Այդ փոփոխությունը, սակայն, այնքան դանդաղ է կատարվում, որ խոսողների համար անզգալի է մնում, միայն առանձին անհատներ, որ սուր դիտողություն ունեն և հետաքրքրվում են լեզվով, նկատում են լեզվի մեջ իրենց կարճ կյանքի ընթացքում մտած փոփոխությունները: Սուր դիտողությամբ և նուրբ լեզվագագացողությամբ օժտված գիտնականը նկատեց լեզվի մեջ իր կարճ կյանքի ընթացքում մտած փոփոխությունները, լեզվական իրակությունների կիրառական տատանումներն ընդգծելով՝ աշխատեց հնարավորինս ճշտել, կանոնավորել իր ժամանակի գրական լեզուն՝ դառնալով մեկը նրանցից, ով, ինչպես ինքն է ասում, «...մեր հին հայկական միջավայրում, կյանքի ար-

գեղքների դեմ անընդհատ կռվելով է ձգտել գիտության, իր հոգնածությամբ ժամերն է միայն՝ փոխանակ հանգստի՝ գիտության նվիրել»<sup>1</sup>:

Տրամաբանական է, որ Մ. Աբեղյանը լեզվի կանոնավորման խնդիրների լուծումը պիտի բխեցնեի լեզվում կատարվող փոփոխություններից, կիրառական տատանումներ ունեցող կամ, ինչպես ասում են, տարբերակային ձևերի՝ զուգաձևությունների, զուգորոշությունների, անալոգիական կազմությունների բազմազանության մեջ ընտրություն կատարելուց, պիտի կարևորեր գրական հայերենի նորմավորման աշխատանքները և նոր օրենքներ ու օրինաչափություններ սահմանեի հայերենի համար՝ կենդանի խոսքի անընդհատ շարժման մեջ զարգացման միտումները տեսնելու, լեզուն ճիշտ ու կատարյալ դարձնելու ձգտման սկզբունքներով: Ի վերջո նա պիտի եզրակացներ՝ ժամանակի հետ կերպարանափոխվող, վերանորոգվող, նորմավորվող գրական լեզուն է միայն կենսունակ և ընդունակ բավարարելու այն նպատակին, որին ծառայում է, այսինքն՝ «դառնալ մի ընդհանուր հարմարավոր գործնական միջոց մույն լեզվով խոսող և գրող մարդկանց մտավոր հաղորդակցության համար»<sup>2</sup>:

Իր լեզվաքննական աշխատանքների մասին խոսելիս գիտնականն ամփոփում է. «Երբեք նորաձևության փափագը չէ եղել մեզ առաջնորդ այս փոփոխությունների համար, այլ միայն ճշտության և կատարելության ձգտումը և այն միտքը, թե ամեն լեզու ընդհանուր քերականության հետ ունի և իր առանձնահատուկ քերականությունը: Այս պատճառով ի նկատի ունենալով նորագույն հետազոտությունները քերականության մասին՝ հայերենի բոլոր խնդիրները կրկին ու կրկին քննության ենթարկել և երկար կշռադատելուց հետո միայն այս կամ այն փոփոխությունը մտցրել»<sup>3</sup>:

Ավելին, Աբեղյան ուսուցիչը մատնանշում է գրական լեզվի ընդհանրականացման և նրանում կատարված յուրաքանչյուր կանոնական փոփոխության, փոփոխություններից օրինաչափությունների վերածված

---

<sup>1</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, Եր., 1985, էջ 635:

<sup>2</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 51:

<sup>3</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, էջ 499:

կանոնների՝ նորմերի տարածման ճանապարհը՝ հաղորդակցության սերտությունն ու մտավոր գորեղ հաղորդակցությունը դպրոցի ու գրական լեզվի միջոցով: Նա գրում է. «Գրական լեզուն գրի և դպրոցի միջոցով հնարավորություն ունի իր ազդեցությունը միակերպ թողնելու ամեն տեղ, ... նույնիսկ ապրող սերնդից հետո եկող հաջորդների վրա: Նրա տարածման գլխավոր միջոցն է դպրոցը, որ ... ամեն տեղ սովորեցնում է գրական լեզվով միատեսակ մտածել, խոսել ու գրել...»<sup>4</sup>:

Ամեն ինչ գտնվում է հավիտենական շարժման, փոփոխության մեջ: Այդ անընդհատ շարժման մեջ են նաև լեզվական ձևերը. հաղորդակցական սովորական գործընթացում էլ հակադրությունների պայքար և միասնություն կա, քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների վերածվելու աստիճանական կամ թռիչքային անցումներ կան: Խոսքային գործունեության ընթացքում լեզվական ձևերը ևս ծագում են, ապրում և մահանում իրենց հատուկ օրենքներով, և գիտնականը գիտության, նաև լեզվագիտության առաջընթացի ճանապարհն է ուրվագծում. «Որոնեցե՞ք այդ օրենքները, և եթե գտնեք, գիտությունը մի քայլ առաջ կլինի»<sup>5</sup>:

Լեզվի նորմավորման՝ կանոնարկման աշխատանքները պետք է սկսել լեզվում նկատվող, նկատելի կամ դեռևս նոր-նոր նշմարվող փոփոխությունների և դրանց հիմնապատճառների քննական ուսումնասիրությունից: Փոփոխությունների «ինչպիսին լինելու» հարցը լեզվաբանորեն բացատրելի է, իսկ թե ինչու են կատարվում այդ փոփոխությունները, այստեղ լեզվաբանությունը «լռում է»: Ըստ Մ. Աբեղյանի՝ լեզվաբանությունը, օրինակ, բացատրում է, թե ինչպե՛ս է ձայնեղ **բ** հնչյունը, վերածվելով իր հակադրությանը, դառնում անձայն **պ**, կամ ինչպես է, դիցուք, **մարդ** բառի վերջին **դ** հնչյունը դառնում **թ**, և այդ բառն այժմ արտասանում են **մարթ**, բայց թե ինչու է կատարվել առանձնապես այդ փոփոխությունը, դեռ վերջնականապես բացատրված չէ: Կամ հնարավոր չէ առանց ծաղրելի դառնալու տնտեսությամբ ու դասակարգով բացատրել,

---

<sup>4</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, էջ 51-52:

<sup>5</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, էջ 527:

թե ինչու **դադարել** դարձել է **դաթարել**, կամ հենց մեր օրով **մարդու** ձևը դառնում է **մարդի**<sup>6</sup>:

Գրական լեզվում փոփոխությունները դանդաղ են կատարվում, հաճախ աննկատելի: Ինչո՞ւ: Աբեղյանը բացատրում է. «Գրական լեզուն ենթակա է փոփոխությունների, բայց այդ փոխվելը պակաս ազատություն ունի: Հնչյունական այբբենարանի միջոցով գրական արտասանությունը համեմատաբար ավելի կայուն է, հնչյունական գրությունը գրական լեզուն որոշ չափով ազատ է պահում անհատների, բարբառների և այլ լեզուների հնչյունական ազդեցությունից: Գրական լեզվի ձևերն ու բառամթերքը գրականության միջոցով սևեռվում և մնայուն կերպարանք են ստանում. որոշ մատենագրությունների լեզուն դառնում է ամենքի համար ընդունելի, ընտիր և օրինակելի, դպրոցներում սովորում են այդ գրվածքները. ուստի հին շարահյուսական ձևերը, հին բառաձևերը, մասամբ և բառերի հին նշանակությունները ... համարվում են մի նորմա, որ ձգտում են պահել խոսելիս և ավելի ևս գրելիս: Երևան են գալիս բառաբաններ և գրական լեզվի քերականություններ, որոնցով ավելի ևս ճշտվում ու կանոնավորվում է գրական լեզուն և ձգտում միակերպ դառնալու: Եվ այսպես, քանի որ գրական լեզվով խոսողն ու գրողը հետևում են ավանդության, ուստի և այդ լեզվի փոփոխությունը համեմատաբար ավելի դանդաղ է կատարվում »<sup>7</sup>:

Ինչի՞ց է առաջանում լեզվի փոփոխությունը...

1. Լեզվական փոփոխությունների իսկական պատճառը լեզվի սովորական գործունեությունն է: Այստեղ չկա որևէ դիտավորյալ ներգործություն լեզվի վրա՝ բացի «վայրկյանի կարիքից, որ է՝ ցանկություններն ու մտքերը հասկանալի դարձնել ուրիշին: Լեզվի այս սովորական կիրառության, սովորական կենդանի խոսվածքի ժամանակ ահա ծագում են լեզվական նոր ձևերը, և ինչպես օրգանական բնության զարգացման մեջ, նույնպես և լեզվի զարգացման մեջ ծագած նոր լեզվական իրակությունների ավելի կամ պակաս նպատակահարմարությամբ որոշվում է նրանց պահպանությունը լեզվի մեջ կամ կորուստը: Ուստի լեզվի զար-

---

<sup>6</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, էջ 529:

<sup>7</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, էջ 50:

գացումը, այսինքն՝ նրա կրած փոփոխությունները ըմբռնելու համար պետք է ամենից առաջ տեսնել, թե ինչպես ենք սովորում խոսել, և ինչպես է ընթանում խոսվածքի գործունեությունն ընդհանրապես»<sup>8</sup>:

2. Ըստ Մ. Աբեղյանի՝ լեզվի փոփոխություններն առաջանում են նաև անհատական լեզուների փոփոխության ազդեցությամբ: Անհատը գիտակցաբար լեզու չի ստեղծում, նա գիտակցաբար շատ քիչ փոփոխություն է մտցնում լեզվի մեջ, և չի կարելի մերժել անհատների գիտակցաբար մտցրած փոփոխությունները. քերականները և բառարանագիրները շարունակ աշխատում են գրական լեզուն կանոնական օրինակափոխությունների ենթարկել, ճշտել ու կանոնարկել կիրառական տատանումներ ունեցող լեզվական շատ իրողություններ: Լեզվական ամեն փոփոխություն ծագում, սկսվում է անհատական կոնկրետ լեզուների մեջ, հենց **սովորական կենդանի խոսվածքի ժամանակ** (իսկ գրավոր լեզվի մեջ՝ գրելու ժամանակ) և ապա ընդհանրանում: Իր՝ «Հայոց լեզվի տեսությունը» քննադատողների հողվածներին պատասխանելիս գրում է. «Երբ ես այս լուսնին խոսում եմ, ... որևէ դիտավորություն չունիմ լեզվի վրա ազդելու, որևէ ուրիշ նպատակ չունիմ, բացի այս վայրկյանի կարիքից, որ է՝ իմ մտքերը հասկանալի դարձնել ունկնդիրներին: Բայց փոխվում է լեզուն իմ բերանում: - Անպայման: Եթե ոչ ուրիշ բան, բառերի և նախադասությունների հազարավոր նորանոր կապակցություններ են առաջ գալիս առանց իմ գիտակցության կամ եթե կուզեք, արտադրվում են իմ խոսվածքի մեջ կապակցություններ, որոնք առաջ գուցե երբեք չեն եղել ոչ մի ուրիշ խոսվածքի մեջ»<sup>9</sup>: Այսպես, նույն տեղում նա գրում է. «Այս **զգայել** բառը ես կազմել եմ ... **զգայություն, զգայարան** բառերի համապատասխան մի բայ ունենալու համար՝ **զգալ** բառը պահելով **զգացում** բառի համար»<sup>10</sup>, կամ՝ «**Մտապատկեր** բառը կազմվել է այն ժամանակ, երբ ես դեռ պատանի էի, և դրա կազմողը եղել է մանկավարժ Առաքել Բահաթրյանը »<sup>11</sup>: Մյուս կողմից՝ ամեն անհատ, խոսելով

<sup>8</sup> **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, էջ 15-16:

<sup>9</sup> **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, էջ 526:

<sup>10</sup> Նույն տեղը, էջ 505:

<sup>11</sup> Նույն տեղը, էջ 507:

և գրելով այդ լեզվով, ինչքան էլ դաբոցում և հին մատենագրություններից սովորած լինի «ուղիղ» խոսելու և գրելու կանոնները, ունի դարձյալ որոշ չափի ազատություն իր ձևով վերաստեղծելու լեզուն և իր կողմից ազդելու ուրիշ խոսողների և գրողների վրա: Այդ ազատությունն ու ազդեցությունը, անշուշտ, ավելի մեծ է խոսելիս, քան գրելիս, բայց ընդհանուր խոսակցական լեզվից անցնում է հետզհետե նաև գրավորին»<sup>12</sup>: Որքան ավելի մեծ է անհատի ազդեցությունը, այնքան ավելի շատ և շուտ են ընդհանրանում նրա լեզվի մեջ ծագած փոփոխությունները. ինչքան նոր բառեր, բառակապակցություններ ու կապակցության ձևեր են ստեղծում մեր քաղաքական ու պետական գործիչները, գիտնականներն ու գրողները իրենց խոսելու ընթացքում: Ուզում ենք Աբեղյանի հարցը կրկնել. « Ի՞նչ եք կարծում, նրանք մտադրվել են դիտավորյալ կերպով լեզվի մեջ փոփոխություն մտցնել: Մեծ միամտություն կլիներ ենթադրել այդ: Նրանք խոսելիս կամ գրելիս միայն մեկ նպատակ են ունեցել – իրենց մտքերը որևէ հարմար ձևով արտահայտել, և հենց այդ հարմար ձևը գտնելու ժամանակ լեզվի մեջ հաճախ նոր բան է մտնում, կամ հինը ձևավորվում»<sup>13</sup>:

3. Ցանկացած լեզու ենթակա է այլ լեզուների ազդեցությանը: Այսպիսի փոփոխությունները նույն եղանակով են առաջանում՝ նորից գիտակցաբար կամ անգիտակցաբար: Սկզբնաղբյուրը այն անհատներն են, որոնք խոսում են և՛ իրենց մայրենի լեզվով, և՛ թե մի ուրիշ լեզվով կամ հասկանում են այն: « Լեզվի զարգացումն այս ճանապարհով երբեք չի դադարել, հայերենը թե՛ հին, թե՛ նոր ժամանակներում մեծ ազդեցություններ է կրել ուրիշ լեզուներից, և այս եղել է հոգուտ մեր լեզվի զարգացման», - եզրակացնում է լեզվաբանը: Բայց և զգուշացնում է. «Երբ չափազանց մեծ է լինում մի լեզվի ազդեցությունը մի ուրիշ լեզվի, վերջինս նույնիսկ կորստի է մատնվում: ...Կարող է նույնիսկ ոչնչանալ»<sup>14</sup>:

---

<sup>12</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, էջ 51:

<sup>13</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, էջ 527:

<sup>14</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, էջ 47:

4. Գրական լեզուն ազդվում է հին գրական լեզվից, եթե կա այդպիսին, իսկ հայերենն ունի այդպիսիք՝ գրաբարն ու միջին հայերենը:

5. Գրական լեզուն ազդվում է բարբառներից, իսկ հայերենը հարուստ է մաս բարբառներով: Յուրաքանչյուր բարբառակիր, օգտագործելով գրական լեզուն իբրև ընդհանուր լեզու, ներմուծում է իր բարբառից բառեր ու դարձվածքներ, բառերի նոր նշանակություններ, շարահյուսական ձևեր և այլն, որոնք գրական լեզվի միջոցով հեշտությամբ ընդհանրանում են:

6. Գրական լեզվի փոփոխության մեծ գործոններից է մաս ժողովրդի ընդհանուր մշակույթի զարգացումը և գիտական մակարդակի բարձրացումը: Գրական լեզուն շարունակ հարմարվում է նոր մշակույթին, գիտության նոր նվաճումներին, որով և անընդհատ հարստանում է և ընդունակ դառնում ամեն ինչ արտահայտելու:

7. Լեզուն փոփոխվում է մաս հոգեբանական, մանկավարժական, մեթոդական և այլ պայմանների ներգործությամբ:

Մ. Աբեղյանը լեզվի նորմավորման հիմնախնդրում կարևորում է հետևյալ սկզբունքները:

- Ցանկացած գրական լեզվի համար միակերպ քերականության հետ անհրաժեշտ պայման է միակերպ ուղղագրությունը: Ավելին՝ գրությունը պետք է մոտեցնել արտասանությանը, և կենդանի արտասանությունը պետք է առաջնորդ լինի ուղղագրության համար՝ առանց ստուգաբանական և բառակազմական հակասությունների:
- Որևէ փոփոխություն չպետք է ավելի խառը դրություն մտցնի մեր լեզվի մեջ և մեր գրական լեզուները չպետք է ավելի հեռացնի իրարից:
- Շատ դեպքերում պետք է նկատի ունենալ ուրիշ ազգերի օրինակը:
- Մեծ և հիմնական փոփոխությունները երբեք միանգամից չպետք է անել. ամեն փոփոխություն պետք է աստիճանական և համա-

կարգային լինի. փոփոխել, բայց «առանց լեզուն ցնցումի ենթարկելու»<sup>15</sup>:

- «Ամեն անելի նորոգություն գիտական հիմունքներով պիտի կատարվի և այնպես, որ համապատասխան լինի մեր երկու զրական լեզուներին և ընդհանուր ընդունելի լինի»<sup>16</sup>:
- Մշակված կանոններն ընդունելի, պարտադիր, միասնական պիտի լինեն:
- «... Փոփոխությունը լինում է և լինելու է, կուզեք՝ գիտությամբ համարեք, կուզեք՝ տգիտությամբ..., և մենք անկարող ենք դրա առաջն առնել ...»<sup>17</sup>:

Մ. Աբեղյանն անդրադառնում է նաև **նորմավորման հարցերը կարգավորող մարմինների** խնդրին: Թվում է՝ շատ դեպքերում գրչի մի հարվածով, ձեռքի մի շարժումով կարելի է անկանոնությունները կանոնի տակ դնել, բացառությունները ջնջել և կանոններն ընդհանրացնել, բայց սա կվնասի լեզվին: Եթե հարցնես մի ֆրանսիացի գիտնականի, թե որն է ճիշտ ելքը, նա կպատասխանի. «**Ակադեմիան** միայն բավարար իշխանություն և հեղինակություն ունի այս վերանորոգությունը կատարելու...»: Նույն հարցին Մ. Աբեղյանը պատասխանում է՝ հարկավոր է մի **հեղինակավոր խորհուրդ**՝ մասնագետներից կազմված, որ լրջությամբ զբաղվի նորմավորման, լեզվի «վերանորոգության» հարցերով, և միայն «**հոգևոր իշխանությունների և գրագետների ձեռներեցությամբ կազմված բանիբուն մարմնի** որոշումը մեզ համար ընդունելի և պարտադիր կլինի»<sup>18</sup>...:

Աբեղյանական լեզվահոգսերն այսօր էլ արդիական են.

ա) Մերօրյա հայերենում էլ «լեզվի վերանորոգության» հիմնախնդիրը կա. լեզվագործածության և նորմավորման, լեզվապահպանման և

---

<sup>15</sup> **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ը, էջ 349:

<sup>16</sup> Նույն տեղը:

<sup>17</sup> Նույն տեղը, էջ 365:

<sup>18</sup> Նույն տեղը, էջ 366:

հայերենատարածման շատ հարցեր են կուտակվել, և դրանցից շատերի՝ կանոն դառնալու իրավունքի պահանջը կա...

բ) Ընդհանուր քերականության և այլ լեզուների օրինակներն անտեսելու, մեր լեզվի առանձնահատկությունները չտեսնելու-չկարևորելու, այն մեքենայական ընդօրինակության ենթարկելու:

գ ) Այսօր էլ լեզվի ընդերքը պեղելու, զարգացման ընդհանուր միտումներն զգալու, արդիական չափանիշներով հայերենի լեզվավիճակը պարզելու և հայերենն արժևորելու անհրաժեշտությունը կա...

դ) Մերժամանակյա հայերենում էլ, առանց լեզվացնցումների, աստիճանական և համակարգային փոփոխություններ կատարելու և մեր գրական լեզուները մի քայլ ևս իրար մոտեցնելու հիմնախնդիրների առաջնային լինելու կարևորությունը կա...

ե) Ճիշտ լեզվաքաղաքականություն վարելու և լեզվի նկատմամբ պետական հոգածության անհրաժեշտության, լեզվաշինական աշխատանքները ճիշտ ուղիով տանելու հիմնախնդիրները կան...

զ) Ի վերջո, հազարամյա հայերենը մաքր՝ուր պահելու և հայերեն՝ն հնչեցնելու հրամայականը կա...

**Քանալի բառեր** – *Նորմավորում, փարբերակներ, լեզվի փոփոխություն, քերականական փոփոխություններ, մշակված կանոններ, համընդհանուր և պարփադիր կանոններ, լեզվի նորմավորումը կարգավորող մարմիններ, երկու գրական լեզուների մերձեցում:*

**ЗАРИК АГАДЖАНЫН – Вопросы нормирования языка в работах М. Абегиана.** – Реалии любого языка постоянно изменяются вне зависимости от воли говорящих. М. Абегиан смог увидеть изменения в армянском языке своего времени и проделал огромную работу по нормированию языка. Он указал основной источник распространения нормы – школу. В своих трудах лингвист также указал на важность сближения двух литературных языков и создания органов, регулирующих процессы нормирования.

**Ключевые слова:** *нормирование, варианты, изменения в языке, грамматические изменения, разработанные правила, единое обязательное, общепотреб-*

*бительное, обязательные правила, органы, регулирующие нормирование языка, сближение двух литературных языков.*

**ZARIK AGHAJANYAN - The language standardization questions in M. Abeghyan's works** - All the realities of any language are constantly changing regardless of the speaking side. M. Abeghyan could see the changes of the Armenian language of his time and he spent a great job in the standardization of the language. He pointed school as the main source of expansion of the language. In his works the linguist also attaches great importance to the merging of two languages.

**Key words:** *Standardization, version, language changes, grammar changes, developed rules, compulsory rules, governing bodies of standardization of the language, the merging of two literary languages.*

**ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ  
ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՐԱՔԱՐ ՏԱՐՔԵՐԱԿՆԵՐՈՒՄ**

Հին հայերենը թեքական լեզու է և պահպանել է հնդեվրոպական հիմնալեզվի ձևաբանական հիմնական առանձնահատկությունները, այն է՝ մասնիկավորում, շեշտից կախված հնչյունափոխություն, տարբեր հոլովների հետ նախդիրների գործածություն: Հայերենին բնորոշ չեն հրեդեվրոպական թեքականական բազմաթիվ ձևեր ու իմաստներ, ինչպիսիք են, օրինակ, անվանական սեռի, երկակի թվի թեքականական կարգերը: Հին հայերենը ժառանգել է հնդեվրոպական հոլովական համակարգին բնորոշ երկու առանձնահատկություն ևս, որոնք վերախմբավորված են հայերենի լեզվական օրենքներին համապատասխան. ա) հնդեվրոպական յուրաքանչյուր հոլով եզակի, երկակի և հոգնակի թվերի համար ունենալ տարբեր վերջավորություններ, և բ) հնդեվրոպական միևնույն հոլովը բառերի հոլովման տարբեր հիմքերի համար կարող էլ տարբեր վերջավորություններ ունենալ<sup>1</sup>:

Պահպանելով, սակայն, հնդեվրոպական հոլովների իմաստները՝ հին հայերենը միաժամանակ ստեղծել է նոր ձևային՝ հոլովիչներ ու հոլովակերտ մասնիկներ, հոլովական իմաստներն արտահայտելու համար: Հոլովիչով որոշվում է բառի հոլովման տիպը, հոլովակազմիչով՝ հոլովը: Հոլովվում են հատուկ և հասարակ գոյականները, ածականները, թվականները, դերանունների մեծ մասը և դերբայները:

Հին հայերենն ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Գրաբարի որոշ թեքականներ ավելացնում են ևս չորսը՝ պատմական, պարառական, ներգոյական և կոչական, որոնք ունեն կիրառության առանձին կամ մասնակի դեպքեր, իսկ կոչականը ավելացվել է հունարենի թեքականության հետևողությամբ,

---

<sup>1</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հին հայերենի հոլովման սխառները և նրա ծագումը, Եր., 1959, էջ 134:

«մանաւանդ որ մեր թարգմանիչները յունարէնի յատուկ անունների կոչական ձեւերը փոխանցել են հայերէնի մէջ, ինչպէս՝ Պետրէ (Պետրոսից), Պատէ (Պատրոս-Պօղոս) և այլն: Մեր քերականները, հետեւելով յունարէնին եւ նկատելով յիշեալ ձեւերը, ընդունել են կոչականը եւ այդ ձեւերն էլ բերել են իրենց գրքերում իբրեւ օրինակներ»<sup>2</sup>: Գրաբարն ունի 5 պարզ՝ **ա, ե, ի, ո, ու** և 2 խառն՝ **ի-ա, ո-ա** հոլովումներ: Պարզ հոլովման դեպքում բառը եզակի և հոգնակի թվի թեք հոլովներում ունենում է մէկ հոլովիչ, խառն հոլովման դեպքում՝ երկու հոլովիչ, որոնցից մէկը հանդես է գալիս եզակի թվի սեռական, տրական, բացառական հոլովներում, իսկ մյուսը՝ եզակի թվի գործիական և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում: Գրաբարում հասարակ և հատուկ անունները հոլովվում են և՛ արտաքին, և՛ ներքին թեքմամբ: Ա արտաքին հոլովիչով թեքվում է հատուկ անունների մեծ մասը: Այս առումով այն իմաստային հոլովում է:

Անդրադառնալով *ա* արտաքին հոլովման քննութայանը՝ Մ. Աբեղյանը, կանոնավոր հոլովումները բաժանելով փոփոխվող և անփոփոխ բներով հոլովումների, վերջիններիս շարքում բերում է *այ* հոլովման պատկանող անունները՝ նշելով. «Այս հոլովման տրականը կազմվում է այ վերջավորութայամբ /տիտանայ/... Ունի երկու շեղում՝ *ի* (աշխարհի-աշխարհաւ) և *ո* (եկեղեցւոյ-եկեղեցեաւ): Առաջին շեղման տրականը կազմվում է *ի* վերջավորութայամբ, բացառականը՝ *է*, իսկ երկրորդ շեղման տրականը կազմվում է *ոյ* վերջավորութայամբ, բացառականը նույն տրականն է: Գործիականն ու հոգնակին բոլորն էլ *ա* ձայնավորով են հոլովվում»<sup>3</sup>: Այնուհետև ավելացնում է, որ անխառն *այ* հոլովման է պատկանում նաև հատուկ անունների մեծ մասը:

Գ. Ջահուկյանը, հետևելով գրաբարագիտության ավանդույթներին և քննելով հին հայերենի հոլովման ձայնավորահիմք, ձայնորդահիմք և տարահիմք 3 տիպերը, դրանց վերակազմավորումը հնդեվրոպական թեմատիկ, նաև աթեմատիկ հոլովումների հիման վրա, հին հայերենի ձայնավորահիմք հոլովումների շարքում բերում է *ա* արտաքին հոլովումը. «Մաքուր *ա* հոլովումը հանդիսանում է նոր ձեռքբերում՝ կազմավորված

<sup>2</sup> Առաքելյան Վ. , Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 19:

<sup>3</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 765:

փոխառյալ հատուկ անունների բազայի վրա»<sup>4</sup>: Այնուհետև հիմնավորում է այն տեսակետը, որ մաքուր *ս*-ով հիմքերը վկայված հնդեվրոպական արմատներ չունեն, դրանք փոխառյալ հատուկ անուններ են կամ դրանց համաբանությամբ հոլովվող նորակազմ ձևեր: Նա առանձնացնում է նշյալ հիմքերի երեք ենթատեսակ. ա) անուններ, որոնց *ս*-ն պահպանվում է բոլոր հոլովներում, բ) անուններ, որոնց *ս*-ն պահպանվում է միայն թեք հոլովներում, գ) անուններ, որոնց թեք հոլովներն ունեն *հս*-ով հիմք: Վերջին տիպի հոլովումը Գ. Ջահուկյանը հնդեվրոպական է համարում որոշ վերապահությամբ<sup>5</sup>:

Հատուկ անունների հոլովմանը պատմահամեմատական հայեցակետով անդրադարձել է նաև Վ. Առաքելյանը: Իր «Գրաբարի քերականություն» գրքի «Ձայնավոր պարզ հոլովում» ենթաբաժնում քննում է ձայնավորահանգ *ս* պարզ հոլովումը՝ այս հոլովման օտար ծագման տեսակետը հերքելու միտումով: Նրա համոզմամբ՝ հայ որոշ թարգմանիչներ հունարենի հայցականը նույնացրել են ուղղականի հետ, այսինքն՝ մի շարք անունների հայցականն ընդունել են իբրև ուղղական: Տեղանունների *ս* հոլովման բացառական հոլովաձևերի վկայված բարբառային օրինակները, Վ. Առաքելյանի պնդմամբ, ցույց են տալիս, որ դեռևս վաղնջական շրջանում *ս* պարզ հոլովումը եղել է հայերենում և կենդանի է ցայսօր, գործիմակ՝ Հաղբաա փեշերը, Քանաքեռա տակը<sup>6</sup>:

Աստվածաշունչ մատյանը բաղկացած է երկու մասից՝ Հին և Նոր կտակարաններից: Հին կտակարանը, որ գրվել է մ. թ. ա. VIII-II դդ. հին հրեաների խոսակցական լեզվով՝ եբրայերենով (հուն.՝ hebraios), ընդունում է հուդայականությունը և քրիստոնեությունը, իսկ մ. թ. I-II դդ. կոյնե հունարենով գրված Նոր Կտակարանը սուրբ գիրք է քրիստոնեության համար:

Տարբերակվում են եբրայերենի պատմական զարգացման չորս փուլեր՝ աստվածաշնչային, հետաստվածաշնչային, միջնադարյան և ար-

---

<sup>4</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 225:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 240:

<sup>6</sup> Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 24:

դի<sup>7</sup>: Եբրայերենը, աստվածաշնչյան առասպելի համաձայն, Աբրահամ հայրապետի և իր տոհմի լեզուն է, որը հայտնի է նաև քանաներեն, յուդայերեն անվանումներով, իսկ հռոմեական շրջանում՝ իվլի(թ) տերմինով: Աստվածաշնչյան եբրայերենն անցել է երկու ենթաշրջան՝ վաղ աստվածաշնչյան (մ. թ. ա. XII-VI դդ.) և ուշ աստվածաշնչյան (մ. թ. ա. V-II դդ.): Երկրորդ ենթաշրջանում աստիճանաբար ազդեցիկ դիրք է գրավում նաև արամեերենը, որով գրվում են Եզրասի և Դանիելի գրքերը: Հին Կտակարանի ամենահայտնի հունարեն «Յոթանասնից» կոչված թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում մ. թ. ա. 3-րդ դարում:

Դասական հայերենի ձևաբանական տիպը ներկայացնող յուրօրինակ բանալիներ են Հին և Նոր կտակարաններում գործածված անձնանունները, որոնք ընդունվել և յուրացվել են քրիստոնյա և ոչ քրիստոնյա տարբեր ազգերի կողմից: Նոր Կտակարանի անձնանունները Հին Կտակարանի անձնանունների համեմատությամբ իրենց թվաքանակով ավելի քիչ են: Փոքրաթիվ են նաև ավետարանիչների վկայած զուգաձև հոլովում ունեցող անձնանունները: Մատթեոսի, Մարկոսի և Լուկասի Ավետարաններում, օրինակ, եթե չհաշվենք միևնույն անվան կրկնվող ձևերը, երկու տարբեր հոլովումներով գործածված ընդամենը չորս անուն կա, որից առաջին երեք անուններն ավանդվել են Հին կտակարանից՝ *Յուդայի-Յուդայ, Յակովբու-Յակովբայ, Յովսեփու-Յովսեփայ, Մարեմայ-Մարիամու*:

Ըստ վիճակագրական մեր տվյալների՝ Նոր կտակարանը զուրկ է հոլովական զուգաձևությունների, դրա հիմքում ընկած է հոլովման միօրինակացման ձգտումը: Որպես հետևանք՝ *ի*-ով ձևերը կենսունակ են դառնում Նոր կտակարանում: Օրինակ՝ *Դաւիթ* անվան *Դաւթայ* սեռականի ձևը, որ հաճախված է Հին կտակարանում, Նոր կտակարանում այլևս կիրառական չէ: Նշանակում է՝ Նոր կտակարանի թարգմանիչները անձնանունների թեքման ժամանակ նախապատվությունը տվել են *ի* հոլովմանը, քանի որ *ա* արտաքին հոլովումը, կարելի է ասել, վերանալու գործընթացում էր: Այստեղ թերևս մեծ է եղել հայ թարգմանիչների ալեք-

---

<sup>7</sup> Հմնտ. **Հակոբյան Ա.**, Արդի եբրայերեն, Եր., 2003, էջ 17:

ասանդրյան մտածողության և Նոր կտակարանի ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությունը, որը, ի դեպ, դասական հունարենը չէ: Կոյնեն ավելի մոտ էր ժամանակակից հունարենին:

Աստվածաշնչում վկայված անձնանուններից *ա* արտաքին հոլովման են ենթարկվում հետևյալ անունները՝ *Ադամ-Ադամայ, Արշաիր-Արշարայ, Ենովք-Ենովքայ, Իսահակ/Սահակ-Իսահակայ, Սեմ-Սեմայ, Սեդրաք-Սեդրաքայ, Ղուկր-Ղուկրայ, Յեսու-Յեսուայ*: Այս հոլովման են ենթարկվում. 1) *-ա*-ով վերջավորվող անունները՝ *Աննա-Աննայ, Յուդա-Յուդայ, Ռեբեկա-Ռեբեկայ, Ռոմեյա-Ռոմեյայ, Սիմա-Սիմայ*, 2) *-ի*-ով վերջավորվող անունները՝ *Բեթելի-Բեթելիայ, Բարաքի-Բարաքիայ, Ելամեսի-Ելամեսիայ, Եսայի-Եսայիայ, Ղեի-Ղեիայ, Նեեմի-Նեեմայ*, 3) *-իս*-ով վերջացող անունները՝ *Եզերիա-Եզերիայ, Չաքարիա-Չաքարիայ, Լիս-Լիսայ*, 4) *-է*-ով վերջացող անունները՝ *Լաբանէ-Լաբանեայ, Մանովէ-Մանովեայ, Յովսէ-Յովսեայ*, 5) *-էլ*-ով ավարտվող անձնանունները՝ *Գաբայէլ-Գաբայիլայ, Հոսիայէլ-Հոսիայիլայ, Յեզաբէլ-Յեզաբիլայ* և այլն: Ա արտաքին հոլովման են պատկանում որոշ բացառություններով հունական *-աս, -էսս, -էս, -իոս, -իս, -ոս* վերջավորություններ ունեցող անձնանունները, որոնց *ս* ունեցող բաղադրիչները թեք հոլովներում հունարենի նմանողությամբ ընկնում են, իսկ *է* և *ի* ձայնավորները *ա* հոլովիչից առաջ դառնում են *ե*, սակայն այս հնչյունափոխությունը ոչ միշտ է գործում՝ *Ղուկաս-Ղուկայ, Եզրաս-Եզրայ, Եզեկիաս-Եզեկիայ, Անդրէաս-Անդրեայ, Արքեմիս-Արքեմեայ, Եղիազարոս-Եղիազարայ, Կղեոպարոս-Կղեոպարայ, Տիբերիոս-Տիբերեայ, Տիմոթէոս-Տիմոթեայ*:

Իրենց գործառական արժեքով *ա* հոլովման ձևերին գրեթե չեն զիջում *ի* հոլովման պատկանող անձնանունները՝ *Ահարոն-Ահարոնի, Եփրեմ-Եփրեմի, Եղիա-Եղիայի, Յաբեթ-Յաբեթի, Յիսուս Բրիարոս-Յիսուսի Բրիարոսի, Սառա-Սառայի, Սիմոն/Սիմովն-Սիմոնի, Մամբրէ-Մամբրէի, Մովսէս-Մովսիսի* (այս անունը հունարենում պատկանում է III հոլովման և սեռականում պահպանում է *ս*-ն), *Պաղոս-Պաղոսի, Պելրոս-Պելրոսի, Ռուբէն-Ռուբենի, Սրեփանոս-Սրեփանոսի*:

Որպես օրինաչափություն՝ *-ել*-ով վերջացող անձնանունները մեծ մասամբ ենթարկվում են *ի* հոլովման՝ *Դանիել-Դանիելի, Աբել-Աբելի, Հաբել-Հաբելի, Փանոել-Փանոելի, Մաղաղիել-Մաղաղիելի, Մամոել-Մամոելի* և այլն: Չափազանց քիչ են *ու* հոլովման պատկանող անձնանունները՝ *Աբրահամ-Աբրահամու, Լաբան-Լաբանու, Յովհաննէս-Յովհաննու, Յովսէփ-Յովսէփու, Մարիամ-Մարիամու*:

Հին և Նոր կտակարաններում հատուկ անուններ են դիտվում տեղանվանական հիմքով և տեղանվանակերտ **-ցի** ածանցով կազմված մականունները, որոնք ենթարկվում են *ո* պարզ հոլովման: Նման անուններ եղել են հայերենի անվանադրման բանաձևում: Դրանք կիրառվում էին հայ իրականության մեջ հատկապես հոգևորական դասի լեզվում՝ ցույց տալով տվյալ անձի ծննդավայրը: Մականունները տարբերակվում են ըստ ծագման հիմքերի. ունենք քաղաքանուններից, գյուղանուններից, գավառների, աշխարհների, երկրների անուններից առաջացած բանաձևեր: Դրանց մի մասն այժմ որպես հատուկ անուն չի դիտարկվում: Տեղանվանական հիմքով մականունները անձնանունների հետ կազմում են բաղադրյալ հատուկ անուններ՝ *Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի, Տիբոն Քեյրացի, Ագար Եգիպտացի, Ելովմ Խեացի, Եղիազար Դամասկացի, Մարիամ Մագդաղենացի, Մամբրէ Ամովրիացի, Յիսուս Նազովրեցի, Յուդա Իսկարիովրացի*: Հին Կտակարանում շատ են նման անունների առանձին գործածությունները, որոնք եզակի թվի հոլովածներում արտահայտում են նաև ազգային պատկանելություն՝ *Եթովպացի, Կիպրացի, Փղշրացի*, իսկ հոգնակի թվում՝ հավաքականության իմաստ՝ *Գալիլեացիք, Եգիպտացիք, Եթովպացիք, Եբրայեցիք, Իսրայելացիք, Հռովմայեցիք, Մամարացիք, Քանանացիք, Քաղղեացիք* և այլն: Ցի-ով վերջավորվող բոլոր անունները *ո* պարզ հոլովման են՝ *Եթովպացույ, Քեյրացույ, Մամբրէի Ամովրիացույ, Յուդայի Իսկարիովրացույ, Սողոմացուց, Գոմորացուց*: Այս անունների հոլովումը ձևային է:

Հին հայերենում բառերի ձևափոխությունները միօրինակ չէին, քանի որ «բունի գաղափարը հայերենից ջնջված էր, և ուղղական հոլովը հոլո-

վական որևէ նշանից զուրկ էր»<sup>8</sup>: Իսկ բունը, ինչպես գիտենք, հնդեվրոպական հիմնալեզվի քերականական օրենքով արմատից և վերջավորությունից անկախ է, որը, սակայն, հետագայում սերտաճում է վերջավորությանը և ընկալվում է իբրև մեկ մասնիկ՝ առանց բնի խտրության կրգվելով այլ բառերի<sup>9</sup>: Հնդեվրոպական միասնությունից անջատվելով՝ հայերենի շեշտը կայունացել է վերջընթեր վանկում, որի հետևանքով փոփոխության է ենթարկվել նաև վերջին վանկի ձայնավորը կամ վերջին վանկն ամբողջությամբ: Ուստի որոշ հոլովումների դեպքում տեղի էր ունենում հոլովման տիպերի շփոթ, որն էլ հանգեցրել է հոլովական գուգաձևությունների առաջացմանը: Հոլովման կանոնների շփոթություն է առաջանում հատկապես փոխառյալ անունների պարագայում, որոնք հոլովվում են փոխատու կամ փոխառու լեզվի կանոնների համաձայն, դա էլ իր հերթին պատճառ է դառնում միևնույն անվան տարբեր հոլովումների պատկանելու: Սա վկայում է այն մասին, որ լեզվում առկա քերականական ձևերի տարբերությունները պայմանավորված են ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական գործոններով: Դրանք առաջանում են օտար լեզուների ազդեցությամբ կամ համաբանությամբ և ընդհանրանալով լեզվի մեջ՝ ձևաբանական փոփոխությունների պատճառ են դառնում: Փոխառյալ անունները ենթարկվում են փոխառու լեզվի ձևաբանական և շարահյուսական, ինչպես նաև հնչյունական օրենքներին: Այս տեսակետից հատկապես ուշագրավ են աստվածաշնչյան անձնանունների փոխառությունները, որոնք կատարվել են հիմնականում հունարեն-հայերեն հնչյունական տառադարձության դասական սկզբունքով:

Ինչպես հայտնի է, հայ թարգմանիչներն իրենց ձեռքի տակ երբայական բնագիր չունենալու պատճառով Աստվածաշունչը նախ՝ ասորերենից, այնուհետև՝ հունարենից են հայերեն թարգմանել: Ուստի անձնանունները, որոնք պատկանում են միջազգային բառաշերտին և այս առումով անթարգմանելի են, տառադարձվել են հունարենի, ինչպես նաև հայերենի հնչյունական օրենքներին համապատասխան:

---

<sup>8</sup> Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 520:

<sup>9</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 395:

Այսպես, օրինակ, երբայերենի *g* և *z* հնչյունները հունարենում դարձել են *u*<sup>10</sup>, 'Abessalwvm>Աբխսոյն (ասոր.՝ Աբխաղոյն, եբր.՝ *Abišālom*), 'Elisabet>Եղիսաբէթ (ասոր.՝ Եղիշաբէթ, եբր.՝ *Elīšēba*), 'Iṣāyā /Իշայա/ երբայական անունը հունարենում տառադարձվել է 'Hσσίας>Եսայի, 'Thsouō>Յեսու, 'Ismaḡl>Իսմայէլ, Σίμων>Սիմոն/Սիմոն (եբր.՝ *Šimon*), Σαμουήλ >Սամուէլ (եբր.՝ *Šamuēl*) և այլն: Բառամիջում փակ վանկում հունարենում սղվում է **u** ձայնավորը՝ 'Obdiou>Աբդիու (եբր.՝ 'Obadiā) և այլն: Հունարենի *l* հնչյունը հայերենում դարձել է *l* կամ *ղ*, *ֆ* հնչյունը դարձել է *փ*՝ 'Abessalwvm>Աբխսոյն, Loukaς>Ղուկաս, Παυλος>Պաւղոս, Solomōn>Սողոմոն, Στεφανος>Ստեփանոս, Fίλιππος>Փիլիպպոս, Felίx>Փելիքս: Բառասկզբում *h*-ի փոխարեն երբեմն *h* կարող է գրվել՝ **h** ձայնավորի սղմամբ՝ 'Hσσίας >Եսայի և այլն:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ *u* արտաքին հոլովումը օտար լեզուների ազդեցությամբ կամ փոխառության ճանապարհով առաջացած հոլովում է: Փաստորեն այս հոլովման պատկանող մի խումբ անձնանուններ հինգերորդ դարում՝ գրաբարի դասական շրջանում, զուգահեռաբար հոլովվել են նաև *h* հոլովիչով: *U=h* և այլ զուգաձև հոլովում ունեցող անձնանունների քննությունը ակնհայտ է դարձնում լեզվական այն իրողությունը, որ հայերենի զարգացման մեսրոպյան շրջանում արդեն նկատելի էր *h* հոլովման ընդհանրանալու միտումը, թեև պահպանվում է նաև *u* հոլովումը:

Հոլովական այսպիսի զուգաձևություններ ունեն հատկապես ամենահաճախ գործածվող անունները, որոնց մեծ մասը հետագայում հայկականացվել է՝ Անանիա-Անանիայի= Անանիայ, Երեմիա-Երեմիայի= Երեմիայ, Եփրեմ-Եփրեմի= Եփրեմայ, Դավիթ-Դավիթ= Դավթայ, Չարա-Չարայի= Չարայ, Յակոբ/ Յակովբ / Յակոբոս-Յակոբայ= Յակոբոս, Յովնան-Յովնանոս= Յովնանայ, Յովնաբան-Յովնաբանոս= Յովնաբանայ, Յովսէփ-Յովսէփայ= Յովսէփոս, Մաթուսաղա-Մաթուսաղայի= Մաթուսաղայ, Ընաւոն-Ընաւոնեայ= Ընաւոնի, Տիմոթէոս-Տիմոթէի= Տիմոթեայ, Փարէս-Փարեսայ= Փարեսի, Փիլիպպոս-Փիլիպպեայ= Փիլիպպոսի և

<sup>10</sup> Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Եր., 1951, էջ 59:

այլն: Այս գուգաձևությունների մեջ *ի* կամ *ու* թեքույթները *ա*-ի համեմատությամբ գրեթե հավասարապես են գործածված, իսկ որոշ անուններում գերազանցում են դրանց:

Մեր կողմից նշված գուգաձևություններում *ի* հոլովման գործածության հաճախականությունը պարզելու համար իբրև սկզբնաղբյուր մենք վերցրել ենք Թ. Աստվածատուրյանի հեղինակությամբ 1895 թ. Երուսաղեմում հրատարակված «Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց» մեծածավալ աշխատությունը: Ըստ մեր վիճակագրական տվյալների՝ համաբարբառից քաղված օրինակների մեջ *Երեմիա* անձնանունը *ի*-ով հոլովված է 9 անգամ, *ա*-ով 3, *Դաւիթ*-ը՝ *ի*-ով 302 անգամ, *ա*-ով՝ 18, *Եփրեմ*-ը՝ *ի*-ով 51 անգամ, *ա*-ով՝ 37, *Եղիազար*-ը՝ *ու*-ով 28 անգամ, *ա*-ով՝ 1, *Լաբան*-ը՝ *ու*-ով 12 անգամ, *ա*-ով՝ 4, *Շմաւոն*-ը՝ *ի*-ով 41 անգամ, *ա*-ով՝ 1, Փարէւս-ը՝ *ի*-ով 6 անգամ, *ա*-ով՝ 2, *Փիլիպպոս*-ը՝ *ի*-ով 5 անգամ, *ա*-ով՝ 2:

Իսկ *ա* հոլովումը ավելի տարածված է հետևյալ անուններում՝ *Յուդա*-ն *ա*-ով հոլովված է 383 անգամ, *ի*-ով՝ 27, *Յակոբ*-ը /*Յակովբոս*, *Յակոբոս*/ *ա*-ով 127 անգամ, *ու*-ով՝ 13, *Յովսեփ*-ը՝ *ա*-ով 58 անգամ, *ու*-ով՝ 14, *Յերոբոամ*-ը՝ *ա*-ով 29 անգամ, *ու*-ով՝ 9:

Ամփոփելով արձանագրենք, որ հատուկ անունների արտաքին հոլովման տիպը արդեն հիմնարկորդ դարում վերանում էր: Այդ իրողության հիմքում, մեր կարծիքով, ընկած էր լեզվական գործոնը: Վարագ Առաքելյանի պնդմամբ՝ *ա*-ով հոլովվող անունները գուգահեռաբար ավելի շատ *ի*-ով են հոլովվում, քանի որ *ա*-ից հետո գրվող *յ*-ն, որ *ի*-ին ավելի մոտ հնչյուն է, սեռական հոլովում հավանաբար արտասանվել է, որպեսզի բնից տարբերվի: Իսկ լիահունչ արտասանության դեպքում *յ*-ն դառնում է *ի*: Այս օրինաչափությունը բնորոշ էր հին հայերենին և նրա բարբառներիս<sup>11</sup>:

Ընդհանրացնելով կարող ենք ասել՝ անձնանունների հոլովական գուգաձևությունները արդյունք են հետևյալ պատճառների՝ ա) երկու և ավելի հոլովումների փոխներթափանցման, բ) համաբանության, գ)

---

<sup>11</sup> Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 27:

հայերենում հնդեվրոպական շեշտի փոփոխության, դ) փոխառյալ անունների հոլովման շփոթի:

**Քանալի բառեր** – *Հին և Նոր կրակաբաններ, հոլովում, հոլովիչ, հոլովակազմիչ, հոլովական զուգաշխուրթուններ, երբայական անջնանուններ, մականուններ:*

**АЛВАРД ХАЧАТРЯН – Параллельное склонение антропонимов в Ветхом и Новом Завете на грабаре.** – Антропонимы Ветхого и Нового Завета являются своеобразным ключом, который открывает тайники морфологического строя древнеармянского языка. Большинство библейских имен принадлежат к внешнему склонению типа «u»: Ադամ-Ադամայ, Սէմ-Սէմայ, Ղովս-Ղովսայ и т.д. Эти имена образуют отдельную группу «ի-u». Входящие в нее имена склоняются и по типу «u», и по типу «ի»: Եփրեմի-Եփրեմայ, Դաթի-Դաթայ, Չարայի-Չարայ, Շմաունի-Շմաունայ, Եզրի-Եզրայ и т.д.

В отличие от Ветхого Завета, антропонимы Нового Завета не имеют параллельного склонения и чаще всего принадлежат к склонению типа «ի».

По нашим статистическим подсчетам, склонение «ի» доминирует, и антропонимы, которые имеют параллельное склонение, чаще встречаются в форме «ի», чем «u». Таким образом, очевидно, что еще в классическом периоде древнеармянского языка склонение «ի» начинало преобладать и становилось универсальным.

**Ключевые слова:** *Ветхий и Новый Завет, склонение, тип склонения, форма склонения, параллельное склонение, иудейские антропонимы, псевдонимы.*

**ALVARD KHACHATRYAN- Parallel declination anthroponyms in the Old and New Testament on grabar.-** Anthroponyms Old and New Testaments are a kind of key that opens the recesses of morphological structure of old Armenian language. Most biblical names belong to an external type declination «u»: Ադամ-Ադամայ, Սէմ-Սէմայ, Ղովս-Ղովսայ and so on. These names form a separate group «ի-u», belonging to the names of the incline and the type of «u», and the type of «ի»: Եփրեմի-Եփրեմայ, Դաթի-Դաթայ, Չարայի-Չարայ, Շմաունի-Շմաունայ, Եզրի-Եզրայ etc. . In contrast to the Old Testament, the anthroponyms of New Testament have parallel decline and often belong to a decline of type «ի».

According to statistical estimates, the decline «ի» dominates and anthroponyms who have the parallel decline, are more common in form «ի», than «ւ». Thus it is clear that even in the classical period of old Armenian language decline «ի» began to dominate and became universal.

**Key words:** *Old and New Testaments, declination, declension type, form of declination, a parallel declination, Jewish antroponmys, pseudonyms.*

**ԲԱՅԱՀԱՅՏՉԻ ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ**

Անգնահատելի է Մ. Աբեղյանի կատարած վճռական դերը արևելահայ գրական լեզվի գիտական քերականության ստեղծման գործում. նա առաջինն էր, որ, ձեռքբազատվելով ավանդական քերականագիտության կադապարային մոտեցումներից, արդի հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրությունը հասցրեց մի նոր՝ բարձր մակարդակի և շարահյուսությունը, որի քննությունը մինչ այդ սահմանափակվում էր ասպարեզում եղած քերականական աշխատությունների «Համաձայնություն» («Բաղդաստիւն», «Շարամանութիւն») բաժնով<sup>1</sup>, դարձրեց ձևաբանությանը հավասարաթեք համակարգված մի ճյուղ: Գրական լեզվի համակարգային առանձնահատկությունները խորությամբ ու հանգամանորեն ուսումնասիրելով՝ Մ. Աբեղյանը ներկայացրեց արդի հայերենի կառուցվածքի բազմակողմանի, ամբողջական նկարագրությունը և ժամանակակից քերականագիտության հիմքը դրեց, ուստի վրստահաբար կարելի է ասել, որ այս առումով հայ շարահյուսագիտությունը բաժանվում է երկու շրջանի՝ ավանդական և աբեղյանական: Անվանի գիտնականի լեզվաբանական ուսումնասիրությունները հիրավի կարևորագույն դեր խաղացին հայ քերականագիտության տարբեր բնագավառներում, և սխալված չենք լինի, եթե փաստենք, որ այսօր էլ մեր լեզվի քերականական զանազան իրողություններ ու երևույթներ մեկնաբանելիս առաջին հերթին իբրև ելակետ ընդունվում են հենց նրա

---

<sup>1</sup> Համաձայնություն ասելով՝ հասկանում էին և՛ խոսքի մասերի կապակցությունը՝ *շարահյուսություն* տերմինի առումով, և՛ կապակցության եղանակը: Տե՛ս **Այսրընեան Ա.**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866; **Պալասանեան Ս.**, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1884; **Չամչեանց Մ.**, Քերականութիւն հայկազեան լեզուի, Մոսկվա, 1859; **Աւետիքեան Գ.**, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815; **Տէր-Յարությունեան Մ.**, Քերականութիւն հայոց լեզուի, Կ. Պոլիս, 1826; **Մելիք-Թանգեան Ն.**, Աշխարհաբարի քերականութիւնը, Շուշի, 1893:

դրույթներն ու տեսակետները: Մա, անշուշտ, վերաբերում է նաև գոյականական անդամի լրացումներին առնչվող հարցերին:

Շարահյուսագիտության մեջ ընդունված տեսակետ է, որ նախադասության գոյականական անդամը ունի երեք տեսակ լրացում՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, սակայն ավանդական քերականագիտության՝ հիշյալ հարցին վերաբերող պատկերացումները էականորեն տարբերվում էին այն մեկնաբանություններից, որոնք հետագայում այս առթիվ տրվեցին Մ. Աբեղյանի կողմից, ուստի նախքան արեղյանական ըմբռնումները ներկայացնելը հարկ ենք համարում համառոտ անդրադառնալ դրանց:

Ընդհանուր առմամբ շարահյուսական խնդիրները ուսումնասիրության առարկա դարձան՝ սկսած լատինատիպ և հունա-լատինատիպ քերականությունների շրջանից, երբ ձևաբանական ու շարահյուսական մակարդակների հստակ տարանջատում դեռևս չկար, և, հետևաբար, որոշակիորեն տարբերակված չէին խոսքի մասերն ու նախադասության անդամները: Շարահյուսական հարցերի ուսումնասիրությունը հիմնականում ընդգրկում էր խոսքի մասերի միջև կապակցության եղանակների, կետադրության, նախադասության անդամների շարադասության և խոսքի կառուցման ընդհանուր սկզբունքների քննությունը<sup>2</sup>: Տարբեր խոսքի մասերի, այդ թվում նաև գոյականների և ածականների կապակցության դրսևորումներին անդրադառնալով՝ քերականները փաստորեն բերում էին գոյականական լրացումների օրինակներ՝ առանց, սակայն, դրանք շարահյուսորեն անվանելու: Այսպես՝ Կդեմես Գալանոսը կապակցության եղանակները քննելիս նշում էր, որ գոյականը առանց շաղկապի կապակցվում է գոյականի հետ այն դեպքում, 1) երբ դրանք դրված են նույն հոլովով, այսինքն՝ «մինն է յայտնիչ միւսոյն» (փաստորեն նկատի ուներ բացահայտիչ-բացահայտյալը՝ «Պետրոս՝ վէմ հաւատոյ»), և 2) երբ երկու գոյականներից մեկը դրված է սեռական հոլովով (այսինքն՝ հատկացուցիչ է՝ «երկիւղ տեսռն», «այր քաջ զօրութեան): Շրջողերը ևս, խոսելով անունների համաձայնության մասին, նշում էր,

---

<sup>2</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 58-296:

որ գոյականը գոյականի հետ համաձայնում է թվով և հոլովով. հասկանալի է՝ խոսքը բացահայտիչ-բացահայտյալի մասին է՝ «Պօղոս առաքեալ՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի», իսկ ածականի համաձայնությունը գոյականի հետ փաստորեն ածական կամ դերբայ որոշչի ու գոյական որոշյալի համաձայնությունն է՝ «Վասն կենացն յաւերժական, բազմա համարձակութեամբ»<sup>3</sup>:

Ինքնատիպ քերականությունների հեղինակները գոյականին լրացնող բառերի կախումային հարաբերությունները հիմնականում քննում էին ըստ խոսքի մասերի՝ ածական անվան տակ հասկանալով ածականը և՛ իբրև խոսքի մաս, և՛ իբրև նախադասության անդամ, այսինքն՝ որոշիչ, իսկ մյուս անվանումները գործածում էին շարահյուսական առումով՝ հատկացուցիչ և բացահայտիչ, հետևաբար և գոյականական անդամի համար առանձնացնում էին միայն երկու տեսակ լրացում՝ հատկացուցիչ և բացահայտիչ<sup>4</sup>: Առաջինը սահմանելու հարցում քիչ թե շատ միասնականություն նկատվում էր՝ չնայած այն հանգամանքին, որ երբեմն **հատկացուցիչ** տերմինով նշում էին նաև ածականով արտահայտված որոշիչը՝ տարբերակելով այն իբրև **ածական հատկացուցիչ** («**Բարի** մարդը իր **բարի** գործերից է ճանաչվում»)՝ **Բացահայտիչ** տերմինը գերազանցապես գործածվում էր գոյական որոշիչը (տեսակ-սեռ, անհատ-տեսակ հարաբերակցությամբ), ինչպես նաև բուն բացահայտիչն անվանելու համար՝ ելնելով իշխող այն տեսակետից, թե գոյականն ու ածականը, լինելով տարբեր խոսքի մասեր, չեն կարող նախադասության մեջ նույն պաշտոնը կատարել:

Բացահայտչի թերևս առավել սպառիչ բնորոշումը տվեց Մ. Չամչյանը՝ հաշվի առնելով դրա և՛ իմաստային, և՛ քերականական առանձնահատկությունները. «Յորժամ ի բանս կամինք զգոյական անուն ինչ բացայայտել՝ թէ յինչ միտս դնի, և կամ փոխանակ որոյ նշա-

<sup>3</sup> **Չահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 59, 201:

<sup>4</sup> Ն. Մելիք-Թանգյանն առանձնացնում էր նաև որոշիչը, սակայն գոյականական լրացումները նույնպես որոշակիորեն չէր գատում միմյանցից՝ որոշ դեպքերում շփոթելով բացահայտիչն ու որոշիչը:

<sup>5</sup> Տե՛ս **Պալասանյան Ս.**, նշվ. աշխ., մաս 3-րդ, էջ 19-20: Հմմտ. **Այտընյան Ա.**, նշվ. աշխ., էջ 146-147:

նակէ, յարեմք ի նոյն գայլ միս ևս անուն գոյական՝ թուով և հոլովի համաձայն մմին առանց շաղկապի, և գայն կոչեմք **բացայայտիչ**»<sup>6</sup>: Հատկանշական է, որ ըստ որոշ քերականների՝ միայն հատուկ անունները կամ տեսակ նշող գոյականները կարող էին բացահայտիչ դառնալ սեռի անունների համար՝ *զինուոր* մարդ, *Հոռոմ* քաղաք, արքայ *Արուաշէս*, այն է՝ միայն մասնավորի միջոցով կարելի էր բացահայտել ընդհանուրը (Մ. Չամչյանց, Ա. Այտընյան, Վ. Չալրիսյան): Քերականներից ոմանք էլ, ընդհակառակը, այն տեսակետն էին հայտնում, որ ընդհանուր հասկացությունն է բացահայտում մասնավորը, ինչպես՝ բազէ *թռչունը*, բօա *օջը*, թզենի *ծառ*, Գալիթ *արքայ* ևն (Ս. Պալասանյան, Գ. Ավետիքյան): Այս մոտեցումները, անշուշտ, հետևանք էին այն իրողության, որ քննական քերականություններում ևս շատ դեպքերում դեռևս հստակորեն չէին տարբերակվում խոսքի մասերն ու նախադասության անդամները:

Գոյականական անդամի լրացումներին, մասնավորապես բացահայտչին առնչվող վերոհիշյալ կարծիքները քերականագիտության մեջ ընդունված մնացին մինչև Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատության ասպարեզ գալը, որում հեղինակը հանգամանալից ու համակարգված քննությամբ նորովի ներկայացրեց իր մոտեցումներն ու հիմնավոր տեսակետները:

Ինչպես հայտնի է, Մ. Աբեղյանը դիմավոր բայը համարեց բուն խոսքը՝ նախադասությունը, կամ խոսքի էական մասը, իսկ նախադասության մյուս անդամները՝ բայի նկատմամբ խոսքի ստորադաս մասեր (այսինքն՝ լրացական անդամներ)՝ դրանց թվում նշելով նաև վերադիրը: Ըստ նրա բնորոշման՝ վերադիրը այն լրացումն է, որը, դրվելով գոյականի վրա, որևէ կողմից պարզում, լրացնում է նրա նշանակությունը. ընդ որում, ցանկացած գոյական, անկախ իր կատարած պաշտոնից, կարող է վերադիր ունենալ: Նա վերադիրները բաժանեց երկու խմբի՝ **մականուն** և **բացահայտիչ**. մականուն անվանեց «այն ածական կամ գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան վրա առաջից և որոշում, պարզում են անվան նշանակությունը, ինչպես՝ **բարձր** լեռներ.- **երեք**

<sup>6</sup> Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ.աշխ., էջ 145:

մարդ.- **այս** տունը.- **խնձորի** ծառ»<sup>7</sup>: Այսպիսով, Աբեղյանը մեկ ընդհանուր (մականուն) տերմինի տակ միավորեց գոյական ու ածական որոշիչները, ապա իր մտեցման հիմքում դնելով բացահայտչի գրաված դիրքի և բացահայտյալի հետ նրա համաձայնության հատկանիշները՝ բավականաչափ հստակեցրեց բացահայտչի սահմանումը. «**Բացահայտիչ** ասվում են այն գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան և դերանվան վրա ետևից՝ այն հոլովով, որով դրված է բացահայտյալը, այսինքն այն անունը կամ դերանունը, որի նշանակությունը որոշում է բացահայտիչը: Օրինակ՝ Անուց, Բագրատունյաց **մայրաքաղաքից**, շատ հեռու չէ Երազգավորսը: Խոսքովը՝ Տրդատ քազավորի **որդին**՝ մի անտառ տնկել տվավ Մամիկոնյանց նահապետի՝ **Վաչեի** ձեռքով...»<sup>8</sup>: Ինչպես տեսնում ենք, ըստ այս բնորոշման՝ բացահայտիչ նա համարում է միայն գոյականով արտահայտված հետադաս վերադիրը, որը լրացնում է կա՛մ գոյականին, կա՛մ դերանվանը՝ քերականորեն համաձայնելով դրանց հետ: Մականուն վերադիրից բացահայտիչը հստակորեն տարբերակելու համար նա ընդգծում է վերջինիս ետադաս դիրքի և խոսքիմասային արտահայտության կարևորությունը՝ գրելով. «Բացահայտիչը կարելի է շուռ տալ և դնել բացահայտյալից առաջ ինչպես մի մականուն վերադիր: Այսպես վերևի օրինակները լինում են՝ Բագրատունյաց **մայրաքաղաք** Անուց շատ հեռու չէ Երազգավորսը: Տրդատ քազավորի **որդի** Խոսքովը մի անտառ տնկել տվավ Մամիկոնյանց **Վաչե** նահապետի ձեռքով»: «Բացահայտիչ լինում են միայն գոյականները. ածականը կարող է բացահայտիչ դառնալ, երբ գոյականաբար է գործածվում»<sup>9</sup>: Իր այս միտքը Աբեղյանը հիմնավորում է՝ նշելով, որ վերադիրներից բացահայտիչը միշտ է դրվում բացահայտյալից հետո, և հատկապես ընդգծում է, որ այդ շարադասությունը շրջում չէ, մինչդեռ մականունները միայն շրջումով կարող են իրենց լրացյալից հետո դրվել

<sup>7</sup> **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 320: Մ. Աբեղյանը վերադիրների շարքին է դասում նաև հատկացուցիչը՝ անվանելով այն սեռական վերադիր:

<sup>8</sup> Նույն տեղը:

<sup>9</sup> **Աբեղյան Մ.**, նշվ.աշխ, էջ 321:

և լոկ այն ժամանակ, երբ լրացյալ անունն ուղղական հոլովով է արտահայտված <sup>10</sup>:

Ելակետ ունենալով իր բայակենտրոն տեսությունը՝ Աբեղյանը տարբերակեց ստորադասական կապակցության երկու տեսակ՝ **կախում** (խնդրառություն կամ վարում) և **ներունակություն**: Ներունակության հարաբերության մեջ, ինչպես նշում է նա, լրացման ցույց տված գաղափարը մտածվում է իբրև լրացյալի մեջ արդեն պարունակված կամ լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի կրկնությունը այլ բառով, այնպես որ լրացումը, իր լրացյալին ստորադասվելով հանդերձ, խոսքի մեջ մի տեսակ *նրան հավասար պաշտոն է վարում* կամ թե լծորդվում, գուգորդվում է նրան և *իր հոլովական շևով կախված չէ նրանից* ( ընդգծ. մերն է - Գ. Ն.). մինչդեռ կախման մեջ, ընդհակառակը, լրացումը բոլորովին այլ պաշտոն է կատարում և իր հոլովական ձևով կախված է լրացյալից: Ներունակությամբ գուգաղղվում են ոչ միայն ենթական ու ստորոգյալը, այլև բացահայտիչն ու բացահայտյալը. սրանք հավասարագոր անդամներ են, հաստատում է նա, և յուրաքանչյուր բացահայտյալ իր մեջ արդեն պարունակում է բացահայտչի գաղափարը, այսինքն՝ վերջինս բացահայտյալի կրկնությունն է մի ուրիշ բառով և ստորադաս լինելով հանդերձ՝ նախադասության մեջ նրան համարժեք դեր է կատարում: Աբեղյանն իրավացիորեն նկատում է, որ հոլովական համաձայնությունը բացահայտիչ-բացահայտյալի՝ միևնույն գերադաս անդամն ունենալու, այն է՝ միևնույն շարահյուսական պաշտոնը կատարելու արդյունք է: ««Անուց՝ Բագրատունյաց մայրաքաղաքից հեռացա» խոսքի մեջ, գրում է նա,- բացահայտիչը՝ «Բագրատունյաց մայրաքաղաքից», իր բացահայտյալի վերաբերմամբ մի կրկնություն է ուրիշ բառով, որի ցույց տված գաղափարն արդեն պարունակվում է «Անուց» բացահայտյալի մեջ. բացահայտչի բացառական հոլովը կախված է իսկապես ոչ թե բացահայտյալից, այլ «հեռացա» բայի նշանակությունից»<sup>11</sup>: Սա նշանակում է, որ երկուսն էլ, միևնույն առարկայի անվանումը լինելով, նույն հարաբերության մեջ են իրենց համար գերադաս մի անդամի հետ և

<sup>10</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, էջ 447:

<sup>11</sup> Նշվ. աշխ., էջ 324; հմմտ. էջ 671-672 :

միայն վերջինիս թելադրանքով են դրվում համապատասխան քերականական ձևով, ինչից և կարող ենք եզրակացնել, որ բացահայտիչ-բացահայտյալ կապակցության մեջ հիմնականը ոչ թե հոլովական, այլ իմաստային-շարահյուսական համաձայնությունն է:

Անշուշտ, վերն ասվածը լիովին համոզիչ կլիներ, եթե անտեսեինք տրամաբանական մի հակասություն, որը ժամանակակից քերականագիտության մեջ ևս նկատվում է: Խնդիրն այն է, որ բացահայտիչ-բացահայտյալ հարաբերության ստորադասական բնույթն ընդունելու պարագայում անպատասխան է մնում այն հարցը, թե ինչպես կարող են լրացումն ու իր լրացյալը՝ իբրև համարժեք անդամներ, հավասարապես լրացնել միևնույն գերադաս անդամին, և ինչպես կարող է նույն լրացումը միաժամանակ երկու տարբեր անդամների լրացնել:

Աբեղյանի ուշադրությունից դուրս չեն մնում բացահայտչի և բացահայտյալի հոլովական, թվային և դիմային համաձայնության մանրամասնությունները, որոնց անդրադառնալիս, սակայն, նա այնքան էլ հետևողական չէ և բերում է նաև այնպիսի օրինակներ, որոնք հակասում են բացահայտչին տված իր բնորոշմանը: Հիշեցնենք, որ ըստ այդ ձևակերպման՝ բացահայտիչ դառնում են միայն գոյական վերադիրները՝ դրվելով անվան և դերանվան վրա վերջում, մինչդեռ բերված օրինակներում կան և՛ տարբեր դերանուններով կամ փոխանուն ածականներով ու թվականներով արտահայտված բացահայտիչներ, և՛ բացահայտյալի պաշտոնով կիրառված դերբայական կապակցություններ: Այդ օրինակները հանգեցնում են այն մտքին, որ բացահայտիչ կարող են լինել ոչ միայն գոյականները, ինչպես հաստատում է սահմանումը, այլև նյութական իմաստ ունեցող այլ խոսքի մասեր ևս՝ լրացնելով նախադասության ամենատարբեր անդամների: Ահա մի քանի օրինակ. «Բնությունն **ինքը** կբժշկի»»; «Նրա մորը՝ **իրեն** հայտնեցին»»; «**Մենք չորսս** միասին ծունկ չորեցինք նրա առաջ»»; «**Ինքս առաջինն** ուղևորվեցա դեպի այն դասարանը»»; «**Դրանց երկուսն** էլ մի տեղ կապեցեք»»; «Դուրս գալ քաղաքի փառավոր տանից և ապրել գյուղի այդ տեսակ մի հյուղում, **դա** արդարև չափազանց զգալի էր ինձ»»; «Անհայտության մեջ ապրել, անհայտու-

թյան մեջ մեռնել, **այդ** է իմ ցանկությունը»<sup>12</sup>: Նշենք, որ այսօրինակ հակասության հանդիպում ենք նաև ժամանակակից քերականություններում, որոնց հեղինակների կողմից բերվող օրինակներում քիչ չեն տարբեր խոսքի մասերով ու ամբողջական կապակցություններով, անգամ նախադասություններով արտահայտված բացահայտիչ-բացահայտյալներ:

Աբեղյանը տարբերակեց բացահայտչի մի առանձին տեսակ, որը շարահյուսության մեջ ընդունված է **մասնական** բացահայտիչ անվամբ և իմաստային, ձևային ու շարադասական հատկանիշներով տարբերվում է բուն բացահայտչից: Իմաստային տեսակետից մասնական բացահայտիչը, ինչպես հայտնի է, յուրահատուկ է նրանով, որ բացահայտյալի իմաստը պարզաբանում է ոչ լրիվ ընդգրկումով, կարող է դրվել բացահայտյալից և՛ առաջ, և՛ հետո, իսկ ձևային տեսակետից բնորոշվում է կապակցման բառային միջոցներով՝ *իբրև*, *որպես* կապերի պարտադիր առկայությամբ: Հենց անկայուն շարադասությունն ու իմաստային երկվությունն էլ հիմք են տալիս եզրակացնելու, որ մասնական բացահայտիչը ոչ միայն գոյականին, այլև բային է լրացնում, ինչը և իրավացիորեն նկատում է Աբեղյանը՝ կարևորելով նրա առաջադաս դիրքը և բացահայտյալի առկայությունն ու կատարած պաշտոնը խոսքում. «Երբեմն բացահայտյալը, երբ մի դերանուն է և ենթակա, չի դրվում, կամ **իբրև** բառով բացահայտիչը դրվում է բացահայտյալից առաջ և այն ժամանակ ստանում է հիմունքի կամ ձևի պարագայի նշանակություն: Օրինակ՝ Տեր Մուկուչն անծանոթ էր քաղաքներում ընդունված այս կարգերին. ուստի հեռվից տեսած լինելով մեզ, իբրև քահանա, շտապել էր մեզ ողջունելու.- Իբրև գյուղական քահանա, նա մինչև անգամ ավելի բան գիտեր, քան սպասելի էր (Մուր.)<sup>13</sup>»:

Ամփոփելով մեր խոսքը՝ ընդգծենք, որ Մ. Աբեղյանի՝ քերականական ամենատարբեր իրողությունների վերաբերող թարմ պատկերացումներն ու համոզիչ ըմբռումները նրա հետևորդների համար նորանոր տեսակետներ ու կարծիքներ առաջադրելու, նոր տեսություններ զար-

<sup>12</sup> **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, էջ 419:

<sup>13</sup> Նշվ. աշխ., էջ 420:

զացնելու, ինչպես նաև զանազան վիճահարույց խնդիրներ հստակեցնելու հիմք դարձան՝ արդի շարահյուսագիտությունը հասցնելով գիտական բարձր մակարդակի:

**Բանալի բառեր** – *վերադիր, որոշիչ, հարկացուցիչ, մականուն, բացահայրիչ, համաչայնություն, ներունակություն, շարադասություն, մասնական բացահայրիչ, պարագա:*

**ГОАР НЕРСЕСЯН – Абегиновское понимание приложения (аппозиции).** – В данном докладе рассматриваются разные точки зрения об определениях имен существительных в традиционной грамматике, в частности, о приложении (аппозиции). Также представляются результаты основательных и систематизированных исследований М. Абегиана по данному вопросу. Он внес ясность и четкость в определении приложения, назвав определения имен существительных препозицией, и разделил их на две группы – атрибут и приложение. Он представил в новом свете согласование приложения и определяемого, классифицировав это согласование как имманентность, выделил новый тип приложения – частичное приложение, который в некоторых случаях небезосновательно называл обстоятельством обоснования или обстоятельством об-раза действия.

**Ключевые слова:** *препозиция, согласованное и несогласованное определение, атрибут, приложение, согласование, имманентность, порядок слов, частичное приложение, обстоятельство.*

**GOHAR NERSESYAN. - Abeghyan's interpretation of apposition.** - The purpose of this paper is to consider the noun, attribute, particularly apposition in classical grammar from different point of view. It also presents Abeghyan's results of systematized studies on this problem. He brought in clarity in apposition and named it pre-apposition of noun and divided it into two groups: attribute and apposition. He also classified this co-ordination as immanency and constructed a new type of a sentence-partial apposition and mentioned it as adverbial modifier.

**Key words:** *attribute, coordinated and uncoordinated definition, apposition, sequence, immanency, word order, partial apposition, adverbial modifier.*

**ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՉՈՒԳԱԴՐԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Յուրաքանչյուր լեզու աշխարհի երևույթները, հատկանիշներն ու հարաբերությունները արտահայտում է իրեն հատուկ միջոցներով ու ձևերով: Տիպաբանական լեզվաբանության սկզբունքներով հաճախ է կատարվում որևէ քերականական կարգի՝ երկու կամ ավելի լեզուների համեմատական քննություն: Տիպաբանական լեզվաբանությունը զբաղվում է լեզուների՝ օրյեկտիվ ու միասնական սկզբունքով նկարագրությամբ, հիմնական, էական հատկանիշների բացահայտումով ու խմբավորումով, ընդհանուր օրինաչափությունների սահմանումով:

Հետաքրքրական է եղանակի քերականական կարգի ու հատկապես հրամայական եղանակի գուգադրական-տիպաբանական քննությունը: Հիմնվելով ցեղակից ու ոչ ցեղակից մի քանի լեզուների՝ հայերենի, հունարենի, ռուսերենի, գերմաներենի, անգլերենի, վրացերենի, նորվեգերենի ընդհանուր ու տարբերակիչ ձևաիմաստային հատկանիշների վրա՝ գուգահեռաբար քննել ենք հրամայական եղանակը՝ իր նրբիմաստներով: Հետաքրքրական է տարբեր լեզուներում հրամայական եղանակը ժամանակային այս կամ այն ոլորտին վերագրելը, որոշ լեզուներում, բացի երկրորդ դեմքից, հրամայական եղանակի առաջին ու երրորդ դեմքերի առանձնացումը:

Եղանակի կարգը եղանակավորման լեզվական ավելի ընդհանրական կարգի քերականական (ձևաբանական) դրսևորումն է<sup>1</sup>: Ըստ Ջահուկյանի՝ «եղանակավորումը հաղորդող (խոսող) սուբյեկտի և հաղորդման օբյեկտիվ բովանդակության, այլ կերպ ասած՝ հաղորդողի վերաբերմունքի դրսևորումն է ոչ միայն բայի հարացույցի, այլև եղանականիշ բառերի, հնչերանգի, շարադասության միջոցով»<sup>2</sup>: Եղանակի բայական

<sup>1</sup> Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 194:

<sup>2</sup> Ջահուկյան Գ. Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 227-228:

կարգը իրացնում է եղանակավորության մեկ կողմը՝ *իրականություն - ոչ իրականություն* հակադրությունը, և այլ եղանակավորումներ այս կարգով չեն իրացվում<sup>3</sup>: Առաջին աստիճանում խոստով իրականության և իր ասածի միջև կապ է հաստատում՝ ներկայացնելով այդ կապը որպես օբյեկտիվ, երկրորդ աստիճանում այս կապի մասին արտահայտում է իր կարծիքը՝ այն որակելով սուբյեկտիվ գնահատական: Եղանակը՝ որպես ստորոգման հիմնական միջոց, բայական հիմնական կարգերից է<sup>4</sup>: Եղանակի կարգի միջոցով այն, ինչ հաղորդվում է նախադասությամբ, ներկայանում է այս կամ այն ժամանակային հարթությունում (անցյալ, ներկա, ապառնի) կամ դիտվում է ժամանակային որևէ հարթությունից դուրս, որպես ինչ-որ մի ցանկալի, անհրաժեշտ, հնարավոր, ենթադրելի բան: Հաղորդվածի՝ ժամանակային որոշակիության և անորոշության հատկանիշների տարբերակման համար հիմք են ընդունում սահմանական եղանակ և, այսպես կոչվող, ոչ իրական եղանակներ հակադրությունը:

Եղանակի քերականական կարգը բոլոր լեզուներում միակերպ արտահայտություն չունի: Եղանակավորում ունեն իրականալիություն արտահայտող ձևերը, որոնց մեջ որոշակիորեն առկա է խոստովի տեսանկյունը (հայեցակետը): Իրականալիության պլանը ներկայանում է երեք եղանակային շարքերով: Մ. Աբեղյանը եղանակը բնութագրում է որպես «խոստովի վերաբերմունքը խոսքի բովանդակության նկատմամբ»<sup>5</sup>: Այս սահմանման մեջ գիտակցվում են խոստովի դերը և այն, որ խոսքը հարաբերության մասին է: Մ. Աբեղյանը իր տարբեր աշխատություններում անդրադարձել է և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի հրամայական եղանակին՝ առաջին դեպքում առանձնացնելով հրամայական ներկա և հրամայական ապառնի ժամանակաձևեր, իսկ երկրորդ դեպքում հրամայական

---

<sup>3</sup> Տե՛ս **Գաբրիելյան Վ.**, Եղանակավորությունը և եղանակը հայերեն և անգլերեն լեզուներում, ատենախոսություն, Եր., 1994, էջ 55:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 55:

<sup>5</sup> **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 220:

եղանակին ժամանակ չվերագրելով<sup>6</sup>: Ըստ նրա՝ երեք եղանակներով՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, կարելի է կազմել դատողության խոսքեր, որոնցով արտահայտվում է մեր դատողությունն իբրև իրական, հնարավոր կամ անհրաժեշտ: Բայց խոսքը կարելի է արտահայտել նաև իբրև կամք ու հրաման կամ արգելք, որով հրամայում կամ արգելում ենք մեկին մի բան անել<sup>7</sup>:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ հրամայական եղանակը իր բնույթով ժամանակային տարբերություններ չի տալիս<sup>8</sup>:

Հրամայական եղանակին բնորոշ է բազմիմաստությունը. այն արտահայտում է գործողության կատարման հրաման, հորդոր, խնդրանք, թելադրանք, կոչ, ողջույն, զգուշացում, պատվեր, պատվիրան, պատգամ և այլն<sup>9</sup>:

Ըստ Ռ. Իշխանյանի՝ հայերենի պարզ դիմավոր բայերը քերականական եղանակի երկու արտահայտություն ունեն՝ 1. հրամայական, որ գոյանում է հրամայական դիմավոր բայերի յուրահատուկ արտահայտությամբ ու բովանդակությամբ, և 2. ոչ հրամայական<sup>10</sup>: Ըստ արտահայտության՝ ունենք քերականական համանիշների առատություն, անկայուն զուգահեռություններ, օրինակ՝ *գրե՛ք և գրեցե՛ք*, ընդ որում՝ այստեղ *ց*-ից գուրկ զուգահեռները համանուն են ըղձական հոգնակի երկրորդ դեմքին: Գրական ձևերի դիմանիշ մասնիկներն են եզակի՝ *ս* և *իր* փոփոխակները, հոգնակի՝ *սցեք* և *եք* փոփոխակները, ընդ որում, վերջինն էլ ունի իր *եցեք* փոփոխակը:

Հրամայական եղանակը սուբյեկտիվ վերաբերմունքի եղանակ է: Այն արտահայտում է խոսքի պահին ունեցած սուբյեկտիվ վերաբերմունքը ցույց տված գործողության նկատմամբ: Միակ եղանակն է, որ չի կարող հարցական հնչերանգով հնչել: Ժամանակի տեսակետից հրամայական

---

<sup>6</sup> [https://hy.wikisource.org/wiki/Հայերենի\\_աշխարհաբար\\_քերականութիւն/Բայի\\_խոսքի\\_ուճակ](https://hy.wikisource.org/wiki/Հայերենի_աշխարհաբար_քերականութիւն/Բայի_խոսքի_ուճակ):

<sup>7</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Չ, Եր., 1974., էջ 243:

<sup>8</sup> Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 272:

<sup>9</sup> [http://raber.asj-oa.am/256/1/15\\_Yuzbashyan\\_\(153\).pdf](http://raber.asj-oa.am/256/1/15_Yuzbashyan_(153).pdf).

<sup>10</sup> Տե՛ս Իշխանյան Ռ., Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Եր., 1971, էջ 109:

եղանակով արտահայտվում է մի գործողություն, որը պետք է կատարվի խոսելուց, հրամանը, կարգադրությունը տալուց հետո, բայց թե ինչ ժամանակամիջոցում՝ հայտնի չէ, որովհետև հայտնի չէ, թե գործողությունը փաստորեն պետք է կատարվի<sup>11</sup>, թե՞ ոչ<sup>11</sup>: Վերաբերելով խոսքից հետո եկող ապառնի անորոշ ժամանակին՝ հրամայականով արտահայտվում են ժամանակային երկու իմաստներ՝ կոնկրետ հրամայական կամ հրամայական արդի իմաստով և հրամայական ընդհանուր իմաստով: Սահմանական ներկա **ուտում եմ** բայաձևը կարող է նշանակել թե՛ այս բուպեին՝ խոսելիս, թե՛ ընդհանրապես, այնպես էլ հրամայականը կարող է արտահայտել կատարվելիք գործողություն, որն ունի թե՛ ներկայի (արդի հրամայական) իմաստ և թե՛ ընդհանրապես ապառնի բոլոր ժամանակների համար տեղի ունենալիք գործողության (ընդհանուր հրամայական) իմաստ, օրինակ՝ *1. Գնա՛ Կրուն: 2. Հուսա՛ և սպասի՛ր:*

Ռուս քերականության մեջ նշվում է, որ հրամայականը ժամանակի քերականական կարգ չունի<sup>12</sup>: Հիմնականը գործողության կատարման ազդակի առկայությունն է: Կարևոր է հրահանգը, որով խոսողը դրդում է խոսակցին, որպեսզի խոսակցիցը կատարի գործողությունը<sup>13</sup>: Ըստ իրավիճակի՝ հրամայականով մատնանշվածն է վերաբերում ապագային, քանի որ խոսողը դրդում է խոսակցին կատարել կամ չկատարել գործողությունը, որը խոսելու պահից հետո է լինելու: Հրամայական եղանակը կարող է խոսակցին ուղղված լինել շարունակելու այն գործողությունը, որը արդեն խոսելու պահին ընթացքի մեջ է, օրինակ՝ *Курите, курите-дѣлѣ, дѣлѣ*: Այս դեպքում հրամայականով ասվածը, միևնույնն է, հղված է ապագային՝ շարունակելու համար խոսելու ընթացքում կատարվող գործողությունը:

Ռուսերենում<sup>14</sup> հրամայական եղանակը ձևավորվում է ներկա ժամանակի հիման վրա՝ վերջավորությունների միջոցով՝ *пиши, скажи* -

<sup>11</sup> Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959, էջ 129:

<sup>12</sup> <http://www.bibliotekar.ru/russkiy-yazik-2/170.htm>.

<sup>13</sup> [http://www.let.leidenuniv.nl/pdf/S&R/fortuin\\_polisemija\\_imperativa.pdf](http://www.let.leidenuniv.nl/pdf/S&R/fortuin_polisemija_imperativa.pdf)---p. 2.

<sup>14</sup> <http://www.goldrussian.ru/obrazovanie-povelitelnogo-nakloneniya.html>.

пиши **те**, скажи **те**: Եթե ներկա ժամանակի հիմքը վերջանում է -j-  
ով, (чита[j] **ют**, сто[j] **ят**), հրամայական եղանակի եզակի թվի  
վերջավորությունը հենց այդ հիմքն է՝ **читай, стой**:

—**ить** մասնիկ ունեցող բայերը հրամայականում ունենում են и- վեր-  
ջավորությունը, որը երբեմն շեշտակիր է (поместить—поместí,  
присудить—присудí), երբեմն շեշտակիր չէ (кроить—крой, поставить—  
поставь).

Նախամասնիկների առկայության դեպքում տարբերություններ են  
նկատվում՝ бросить- **брось, выбрось, выброси**.

Бить, шить, лить և նման բայերը ունեն հրամայականի հետևյալ  
ձևեր՝ бей, шей, лей.

Անորոշի հիմքում -ва- մասնիկն ունեցող բայերը, որոնք ներկայում  
կորցնում են այդ մասնիկը, հրամայականում պահպանում են ва-ն՝  
давать- да[j]ют- давай.

Մի քանի անկանոն բայեր ունեն հատուկ կազմություն՝ ехать —  
поезжай (մեկնել-մեկնիր) есть — ешь (ուտել-կեր), дать — дай (տալ-  
տո՛ւր), лечь — ляг (պառկել-պառկիր):

Ռուսերենում հրամայական եղանակը կարող է ունենալ հոգնակի  
թվի առաջին դեմք՝ сыграем в шахматы, бежим на речку. Կատարյալ  
կերպի բայերին կարող է միանալ те մասնիկը, որը քաղաքավարական  
տարր է՝ поедемте, вернёмтесь. **Давай, давайте** բառերը հաճախ կիրառ-  
վում են միացյալ գործողություն ցույց տալու համար՝ давайте читать (ե-  
կեր կարդանք), давайте обедать (եկեր ճաշենք).

Հրամայական եղանակի երրորդ դեմքի ձևերը ռուսերենում ունեն  
վերլուծական կազմություն **пусть (пускай, да)** + ներկա կամ ապառնի  
ժամանակի երրորդ դեմք:

Հրամայական եղանակին կարող է միանալ մեղմացուցիչ ка մասնի-  
կը՝ **Сходи-ка** за хлебом:

Հրամանը կարող է ուժգնացնել смотри բառ-մասնիկը. *Смотрите, не  
опоздайте!* (տեսե՛ք չուշանար):

Հունարենում<sup>15</sup> տարբերակում են հրամայական եղանակի երկու տեսակներ՝ պարզ *հրամայական* (Απλή Προστακτική) և *շարունակական հրամայական* (Συνεχής Προστακτική), որոնցից առաջին դեպքում տրրվում է հրաման, որը մեկ անգամ պետք է կատարվի, մյուս դեպքում ինչոր բան պիտի կատարվի մի քանի անգամ կամ մշտապես:

Առաջին տիպի բայերի շարունակական հրամայականը կազմվում է՝ 1. ներկա ժամանակի բայերի հիմքին -ε կամ -ετε վերջավորությունների կցումով՝ *γράψε-γράφετε* (գրի՛ր-գրե՛ք), *αγόραζε-αγοράζετε* (գնի՛ր-գնե՛ք), 2. -α կամ -ατε ավելացնելով՝ *ρώτα-ρωτάτε* (հարցո՛ւ-հարցրե՛ք): Միայն եթե հիմքը եռավանկ է, այն ընկնում է վերջից երրորդ վանկի վրա, 3. -α կամ είτε ավելացնելով՝ *οδηγα-οδηγείτε* (վարի՛ր-վարե՛ք): Պարզ հրամայականը կազմվում է կատարյալի հիմքի վրա նույն-ε կամ -ετε ավելացնելով՝ *γράψε-γράψετε*: Մյուս տիպի բայերի շարունակական հրամայականը կազմվում է բայի ներկայի հիմքին -α կամ -ατε ավելացնելով՝ *ρώτα-ρωτάτε*:

Արգելական հրամայականը կազմվում է *μην* ժխտական մասնիկի միջոցով՝ *μήν κάνεις-μην κάνετε* (մի՛ արա, մի՛ արեք), *μήν πες-μην πεστε* (մի՛ ասա, մի՛ ասեք), *μην εξηγείς-μην εξηγείτε* (մի՛ բացատրիր-մի՛ բացատրեք):

Վրացերենի հրամայական եղանակը առանձին ձևերով բայաշարք չունի, թեև առանձին ներկայացնելու փորձեր են կատարվում: Առանձին ձևեր չունենալով՝ երկրորդ դեմքում անցյալ կատարյալի եզակի և հոգնակի երկրորդ դեմքն է հրամայական հնչերանգով գործածվում: Վրացերենում առանձնացվում են նաև հրամայական առաջին և երրորդ դեմքեր, որոնք նույնպես չունեն հատուկ առանձին ձևեր, այլ երկրորդ ու երրորդ ստորադասականի բայաձևերն են հատուկ հնչերանգով ներկայացնում: Անժխտելի է այն փաստը, որ հնչերանգը կարող է կարևոր տարբերակիչ դեր կատարել, և լեզուն հակված է մի ուրիշ, արդեն եղած ժամանակաձևը օգտագործելու հրամայական հնչերանգով հրաման արտահայտելու համար: Օրինակ՝ հայերենում՝ **խաղա՛, գրե՛ք**: Խոսակ-

<sup>15</sup> bebris.ru/2012/10/26/повелительное-наклонение-в-греческо/.

ցական հայերենում ևս կա այդ երևույթը: Ենթադրական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ դեմքը շեշտված արտասանությամբ գործածում ենք հրաման արտահայտելու համար: Օրինակ՝ *Կգրես*: Լեզվի համար օրենք է, որ մեկ կարգը արտահայտվում է կամ ձգտում է արտահայտվել մեկից ավելի միջոցներով, և ընդհակառակը, մեկ միջոցը գործածվում է կամ ձգտում է գործածվել մեկից ավելի կարգեր արտահայտելու համար: Սրանք լեզվում տեղի ունեցող հակադարձ գործընթացներ են մենիմաստությունից դեպի բազմիմաստություն, բազմիմաստությունից դեպի մենիմաստություն: Այս շարժումը գոյություն ունի լեզվի գոյության ընթացքում<sup>16</sup>: Վրացերենի արգելական հրամայականի տարբերակներից է ներկա կամ ապառնի ժամանակների հետ ԵՅ մասնիկի գործածությունը: Բուն հրամայականն ունի անմիջական ապառնու նշանակություն. գործողության իրացումը նախատեսվում է հաղորդակցման ակտին, խոսելու պահին անմիջաբար հաջորդող դրվածքում: Անցյալ կատարյալի ձևը հրամայականի համար է գործածվում, երրորդ ստորադասական եղանակների ձևը՝ ՅՐ մասնիկի հետ՝ արգելականի: Վրաց լեզվաբանական գրականության մեջ նշված է, որ անցյալ կատարյալի աննախաբայ ձևերը հրամայական եղանակի դեպքում ներկա ժամանակի իմաստ են ունենում: Վրաց լեզվաբաններից ոմանք այն կարծիքին են, որ հրամայականը դուրս է ժամանակային բնույթի հակադրություններից, ուստի այն ապառնի ժամանակ անվանելը ճիշտ չէ: Փ. Էրթելիշվիլին նշում է, որ հրամայականությունը այնպիսի երևույթ է, որ կարող է ներկա լինել կամ ապագայում իրականանալ<sup>17</sup>:

Անգլերենում հրամայականը եզակի և հոգնակի թվեր չի տարբերակում. հրաման կամ խնդրանք արտահայտելու համար օգտագործվում է բայի անորոշ դերբայը (այսինքն՝ բայի հիմքը)՝ առանց to մասնիկի :

Ըստ Օտտո Ջեսպերսենի՝ քանի որ հրամայականի, անորոշի, սահմանականի մեծ մասի և ողջ ներկա ստորադասականի համար նույն ձևն է նշվում, ուստի դրանք կարելի է համարել նույն ձևի տարբեր գործա-

<sup>16</sup> Պողոսյան Պ., նշվ. աշխ., էջ 7:

<sup>17</sup> Գոգոլաշվիլի Գ., Վրացերեն բային խոնարհման համակարգը, Թբիլիսի, 1988, (վրացերեն), էջ 307:

ույթներ, ինչի հետ սկզբունքորեն չի կարելի չհամաձայնել<sup>18</sup>: Պարզապես կան համատեքստերով, որոշակի շարահյուսական միջավայրերով պայմանավորված նույն ձևի տարբեր կիրառություններ:

Նշելով, որ անգլերենում երկու բայական վերջավորությունների (-s սահմանական ներկա եզակի երրորդ դեմքում և ed կանոնավոր բայերի անցյալի բոլոր դեպքերում) առկայության պատճառով համապատասխան և այլ հարաբերություններ արտահայտվում են օժանդակ բայերի, նախդիրների օգնությամբ և շարադասության փոփոխությամբ, մի շարք քերականներ ճիշտ են համարում բայաեղանակ հասկացությունից հրաժարումը, քանի որ եղանակավորությունը այդ լեզվի բնույթի պատճառով դրսևորվում է ոչ թե ձևաբանական, այլ ուրիշ միջոցներով:

Հրամայական եղանակը հասցեագրված կամքի արտահայտիչ է. խոսողի կամքն ավելի որոշակիորեն է թելադրվում խոսակցին: Սրանով է բացատրվում հրամայականում երկրորդ դեմքի գերազանցական կիրառությունը նաև ֆրանսերենում, օրինակ՝ *Junuh'ը-Parle!*: Ֆրանսերենի հրամայականում առկա է նաև հոգնակի թվի առաջին դեմքի ձևը: Դա բացատրվում է նրանով, որ **մենք**-ը փաստորեն հավասար է **ես+դու (դուք)** (nous =je +tu (vous)), որը և ստեղծում է հրաման-առաջարկի արտահայտության հնարավորություն: Հայերենում մման դեպքերում գործածվում է ըղձականի ձևը՝ *Partons!-Մեկնենք*<sup>19</sup>:

Հրամայական եղանակը ֆրանսերենում ունի ներկա (Impératif présent) և անցյալ ժամանակները (Impératif passé): Անորոշում -ir և -re վերջավորությունն ունեցող բայերը ունեն հենց այն ձևերը, ինչ սահմանական ներկայում, օրինակ՝ tu applaudis – դու ծափահարում ես, Applaudis! –ծափահարի՛ր, արգելականը՝ N'applaudis pas!:

Իսկ, այսպես կոչված, հրամայական անցյալը ֆրանսերենում շատ քիչ կիրառություն ունի: Յույց է տալիս գործողություն, որն անհրաժեշտ է կատարել մինչև ինչ-որ ապառնի ժամանակաշրջանի գալը կամ ինչ-որ սպազա գործողությունից առաջ:

---

<sup>18</sup> **Գաբրիելյան Վ.**, նշվ. աշխ., էջ 136:

<sup>19</sup> **Մուրադյան Ա.**, Ֆրանսերենի և հայերենի ձևաբանական համակարգերի զուգահրակական ուսումնասիրություն, Եր., 1986, էջ 76-77:

**Նորվեգերենում** հրամայական եղանակը կազմվում է ներկայի – և վերջավորության անկումով (արմատական հիմքով): Օրինակ՝ *Sitten-Sitt*: Արգելական հրամայականը կազմվում է *Ikke* մասնիկով:

Արդի գերմանագիտությունը, առաջարկելով սահմանականի ու ըղձականի առանձնացումը, ըստ տեղի ունեցած և իրականում տեղի չունեցած գործողությունների հակադրության, այդ հակադրությունից դուրս է թողնում հրամայական եղանակը այն հիմնավորմամբ, որ վերջինս իր բնույթով հակադրվում է սահմանականին և կազմում է ըղձականին և առանձին քերականական կարգ<sup>20</sup>: Ըստ գերմանացի քերականների՝ հրամայականը բնութագրվում է միայն ներկա ժամանակաձևով: Առկա է քաղաքավարական հրամայականը, որը գործածվում է ինչպես մեկ անձի, այնպես էլ մի քանիսին դիմելիս, օրինակ, *Schreiben Sie – գրե՛ք*: Քաղաքավարական ձևը համընկնում է սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի թվի երրորդ դեմքի հետ:

Նշված լեզուների հրամայական եղանակի քննությունից պարզվում է հետևյալը:

1. Հրամայականի ձևավորման համար ամենաառաջնայինը հնչերանգն է, որը մի շարք լեզուներում միակ գատորոշիչն է այս եղանակի կազմության համար:

2. Բոլոր լեզուներն ունեն հրամայական եղանակ, սակայն որոշ լեզուներում՝ անգլերենում, վրացերենում, հրամայականը չունի իր սեփական ձևերը և եղանակաժամանակային ուրիշ ձևերն է կիրառում հրամայական հատուկ հնչերանգով: Մի շարք քերականներ հենց այս պատճառով անիմաստ են համարում նշված լեզուներում հրամայական եղանակի հարացույցը ներկայացնելը: Հայերենի հոգնակի թվում ներկայի հիմքով կազմված բայերը համընկնում են ըղձական եղանակի հետ, իսկ եզակի թվում *ա* խոնարհման բայերը համընկնում են ըղձական երրորդ դեմքի հետ, որոնք կարելի է քերականական համանուններ կոչել: Ֆրանսերենում ևս անորոշում *-ir* և *-re* վերջավորություններ ունեցող բայերը ունեն հենց այն ձևերը, ինչ սահմանական ներկայում:

---

<sup>20</sup> Տե՛ս Glinz H., *Die innere Form des Deutschen*, munchen, 1995, էջ 111: Տե՛ս **Գաբրիելյան Յ.**, Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Եր., 2006, էջ 68:

3. Քանի որ հրամայական եղանակը հասցեագրված կամքի արտահայտիչ է, խոստովի կամքն ավելի որոշակիորեն է թելադրվում խոսակցին կամ խոսակիցներին, հենց դրանով էլ բացատրվում է հրամայականում հիմնականում երկրորդ դեմքի կիրառությունը: Հիմնականում ունի երկրորդ դեմք, եզակի և հոգնակի թվեր, սակայն որոշ լեզուներում հատուկ ձևեր ունի հրամայական հոգնակի թվի առաջին դեմքը:

4. Հրամայական եղանակը ներկայանում է բուն հրամայական և հորդորական հրամայական տարբերակներով: Առաջին ձևերը արտահայտում են խոստովի տեսանկյունից հարկադրաբար, հրամայաբար իրացվելիք գործողություն և ունեն սուր շեշտադրություն, երկրորդները՝ խոստովի հորդորով իրականանալի գործողություն՝ թույլ շեշտադրությամբ<sup>21</sup>: Հորդորական հրամայականը, ինչպես իմաստային դաշտում լեզվական գրեթե բոլոր երևույթները, հատուկ է մեր դիտարկած լեզուներին:

5. Ժամանակի կարգը լեզվի ամենակարևոր հաղորդակցական-քերականական կարգերից է, որ ասույթը բայի միջոցով կապում է խոսքի առկայացող իրողության՝ խոսքային գործունեության հետ: Ժամանակի քերականական կարգը ժամանակային հարաբերություններ է իրականացնում այնքանով, որքանով որ այդ հարաբերություններն առկայանում են անցյալ<--->ներկա<--->ապառնի տիրույթների փոխադարձ անցումների շնորհիվ: Դա լեզուների ընդհանրական հատկանիշն է, որը գործողության կամ իրողության ժամանակը հարաբերում է ասույթի արտաբերման ժամանակին:

Լեզվաբանների մեծ մասը հրամայական եղանակին ժամանակի վերագրումը անիմաստ է համարում, քանի որ այս եղանակում ժամանակային հակադրություններ չեն ստեղծվում: Ժամանակային բնութագրում տվող լեզվաբանները տալիս են ներկա կամ ապառնի ժամանակային բնութագրումը: Հետաքրքրական է այն վաստը, որ նույն իմաստային բնութագրումն ունեցող ձևերը որոշ լեզուներում դիտվում են ներկա, որոշ լեզուներում՝ ապառնի: Այստեղ թերևս կարևորվում է կա՛ն ներկային անմիջապես հաջորդելու պահը, կա՛ն հրամայականի իրականալիության

---

<sup>21</sup> Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 195:

հատկանիշը: Հիշենք, որ ներկայի սահմանները շատ լայն են, ու հենց բուն ներկայով դրված գործողությունը շարունակելի է: Հրամայական եղանակն արտահայտում է խոսքի պահին ունեցած տրեյելտիվ վերաբերմունքը ցույց տված գործողության նկատմամբ: Հետաքրքիր է նաև այն տեսակետը, ըստ որի՝ հրամայականն ունի ներկա և ապառնի ժամանակներ, որոնցից ներկան ցույց է տալիս մեկանգամյա, իսկ ապառնին՝ շարունակական գործողություն: Մեր ուսումնասիրած լեզուներից հունարենն ունի այդ երկու առանձին ձևերը՝ պարզ հրամայական և շարունակական հրամայական:

6. Հրամայական եղանակի ձևերը հիմնականում ոչ անցյալի դաշտում են. միայն ֆրանսերենին է հատուկ, այսպես կոչված, անցյալ հրամայականը, որը ցույց է տալիս ապառնի ինչ-որ գործողությունից առաջ կատարվելիք գործողություն, որը անցյալ համարելը խիստ պայմանական է:

7. Հրամայական եղանակը որոշ լեզուներում կազմվում է ներկայի հիմքից, երբեմն՝ հենց ներկա ժամանակի վերջավորության անկումով, որոշ լեզուներում՝ անցյալի հիմքից:

8. Եղանակավորությունը ասույթի բովանդակության և իրականության հարաբերությունն է: Եղանակավորության ոլորտում ընդգրկվում են հաստատումն ու ժխտումը, հաղորդակցության նպատակադրումը, նախադասության տարբերակումները ըստ գործողության իրական կամ ոչ իրական բնույթի, ըստ խոսողի՝ իր ասածի մեջ համոզվածության և այլն<sup>22</sup>: Արգելական հրամայականը հիմնականում կազմվում է դրական ձևերից ժխտում ցույց տվող բառ-մասնիկների միջոցով: Այն լեզուներում, որոնց արգելական որոշ ձևեր ունեն դրականից և՛ տարբերվող, և՛ չտարբերվող կազմություն, միտում ունեն նախապատվություն տալու դրականից կազմվող ձևերին:

9. Հրամայականի հարացույցը թեև ամբողջական չէ, երբեմն ներկայացվում է եղանակաժամանակային ձևերի շարքերից առանձին, սակայն բոլոր լեզուների ամենահին բայական կարգերից մեկն է, որը, սա-

---

<sup>22</sup> Տե՛ս **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 57:

կայն, ժամանակի ընթացքում փոխել է իր արտահայտման ձևերը, իսկ իմաստային առումով փոփոխությունները մեծ չեն:

Մեր ուսումնասիրած բոլոր լեզուներում առկա են արմատական կազմություն ունեցող հրամայականի ձևեր: Օրինակ՝ նորվեգերենում, գերմաներենում, մասամբ ռուսերենում: Իսկ մյուս լեզուներում ամենահաճախական գործածություն ունեցող անկանոն մի շարք բայեր ունեն մաքուր արմատական կազմություն:

10. Որոշ լեզուներում բայերի մի քանի խմբեր, հիմնականում անկանոնությունները պահպանված են հենց հրամայականում. դրանցից ամենակարևորը հրամայականի՝ տարարմատ հիմքով կազմություններն են: Այստեղ նշենք, որ մույն իմաստ ունեցող բայերը նշված լեզուներում կազմվում են տարարմատ հիմքով:

11. Հրամայական եղանակում որոշ քերականներ առանձնացնում են երրորդ դեմքի ձևեր, որոնք, մեր կարծիքով, որևէ եղանակիչի և ուրիշ եղանակի միացյալ գործածությունն են, թեև իմաստային դաշտում հրամայականի իմաստ իրոք կա: Օրինակ՝ ռուսերենում **пусть (пускай, да)** մասնիկները գործածվում են ներկա կամ ապառնի ժամանակների հետ:

Հայերենում դրան համապատասխանում է *թող + ընշական* կառույցը:

12. Գերմաներենում, ռուսերենում, ֆրանսերենում առկա են հրամայականի քաղաքավարական ձևեր:

**Բանալի բառեր** – *հրամայական եղանակ, խոնարհում, արգելական հրամայական, նորվեգերեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, վրացերեն:*

**ШУШАНИК ГЕВОРГЯН – Сравнительный и типологический анализ императива.** – Основываясь на общих и различительных свойствах, определяющихся формой и лексическим значением слова некоторых родственных и не родственных языков, таких как армянский, греческий, русский, немецкий, английский, грузинский и норвежский, мы провели параллельный анализ повелительного наклонения в этих языках. Большинство лингвистов считает, что нет смысла приписывать время повелительному

наклонению, так как в этом наклонении не создаются временные контрасты. Однако лингвисты, которые описывают время, дают ему временное описание настоящего и будущего времен.

Интересно отметить тот факт, что некоторые виды, которые имеют смысловое описание, в некоторых языках рассматриваются как настоящее, а в других как будущее время. Здесь, видимо, важно следование после настоящим или же реализационное качество повелительного наклонения, т.к. данное наклонение является выразителем адресованной воли, воля говорящего диктуется слушателю более определено. Именно этим объясняется более частое употребление второго лица в повелительном наклонении, которое в основном имеет форму 2-ого лица, ед. и мн. числа, однако в некоторых языках форма первого лица мн. числа повелительного наклонения имеет особые формы.

**Ключевые слова:** *императив, время, спряжение, obstructивный императив, норвежский язык, греческий язык, французский язык, немецкий язык, английский язык, грузинский язык.*

**SHUSHANIK GEVORGYAN - Typological analysis of imperative.** - Based on general and form- meaning features of several languages of the same tribe and of not the same tribe -Armenian, Greek, Russian, German, English, Georgian, Norwegian we parallelly examined imperative mood. Most linguists consider nonsense the attribution of tense in imperative mood in languages that we studied, because there aren't created temporal contrasts. The linguists which give temporal characterization give present and future time description. Interesting is the fact, that the forms which have similar semantic characterization in some languages are shown as present and in others as future. Here the imperative mood is an expression of addressing will: the speakers will is dictated more specifically to the interlocutor and that explains the usage of imperative second person. The imperative mood commonly has second person, singular and plural numbers, but in some languages the first person of imperative plural has special forms.

**Key words:** *imperative, tense, conjugation, obstructive imperative, Norwegian, Greek, French, German, English, Georgian.*

**ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ ԻԲԲԵՎ ԳՐԱԲԱՐԱԳԵՏ**

Մեծանուն գիտնական Մ. Աբեղյանը գրաբարի ուսումնասիրությունը կատարում է «Գրաբարի համառօտ քերականություն» (Վաղարշապատ, 1907 թ.), «Գրաբարի դասագիրք»՝ երկու մասով (առաջին գիրք՝ Թիֆլիս, 1915թ., երկրորդ գիրք՝ Թիֆլիս, 1916 թ.), և «Գրաբարի քերականություն» (Յերեվան, 1936 թ.) աշխատություններում: Վերջինս վերահրատարակվել է Աբեղյանի Երկերի Զ հատորում (1974 թ.):

«Այժմ գրաբարի քերականություն միայն իբրև միջոց պիտի ծառայի մեր հին լեզուն հասկանալու համար և ապա պիտի օգնի մեր լեզուի կազմությունը և պատմական զարգացումը բացատրելուն»<sup>1</sup>: Հեղինակը գրաբարին նվիրված իր առաջին աշխատությունը ուղղում է միջնակարգ դպրոցի բարձր դասարանի աշակերտներին: Գրքի երկրորդ վերահրատարակությունը՝ «Գրաբարի քերականություն» ընդհանրական անվանումով, «լոյս է ընծայվում մեր բարձրագույն դպրոցների ուսանողների և առհասարակ նրանց համար, որոնք ցանկանում են մեր հին լեզուն ուսումնասիրել, - գրում է հեղինակը, -այժմ գրաբարի քերականությունն միայն իբրև միջոց պիտի ծառայի մեր հին լեզուն հասկանալու համար և ապա պիտի օգնի մեր լեզուի կազմությունը և պատմական զարգացումը բացատրելուն»<sup>2</sup>:

Մ. Աբեղյանը փոքրիկ առաջաբանից հետո «Գրաբար և աշխարհաբար» կոչվող բաժնում ակնարկային ձևով ներկայացնում է գրաբարի և աշխարհաբարի տարբերությունները, որոնք հիմնականում վերաբերում են ձևաբանությանը և շարահյուսությանը, քանի որ «բառակազմութեան նկատմամբ գրաբարն ու աշխարհաբարն իրարուց առանձին տարբերություն չունին»<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, Յեր., 1936, էջ 4:

<sup>2</sup> Աբեղյան Մ., Գրաբարի համառօտ քերականություն, Վաղարշապատ, 1907, էջ 3:

<sup>3</sup> Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, էջ 7:

Շարահյուսության համար հեղինակն առանձնացնում է «կողմնակի խնդիրների» գործառույթը. նրանք հիմնականում հետադաս են, ինչպես «Լեառն Չիթենեաց, կին մի և այլն»: Որոշիչները բնորոշում է իբրև մականուններ, որոնք հետադաս դիրքում համաձայնում են լրացյալին, իսկ նախադաս դիրքում՝ ոչ, չնայած կան նաև նախադաս դիրքում համաձայնության օրինակներ, ինչպես՝ **մեծի գորութեան և քաջին գորավարին**<sup>4</sup>:

Չնաբանության քննությունը հեղինակը սկսում է բայից: Անորոշ դերբայը ներկայացնում է 4 լծորդությամբ՝ **ալ, ել, իլ, ուլ, և գոլ** բայը, որը ո լծորդության միակ բայն է: Ածանցավոր բայերը ներկայացնելուց հետո անցնում է անցյալ կատարյալի հիմքի բացատրությանը. այն հեղինակն անվանում է «բայերի բուն» և տարբերակում է աց-ով և եաց-ով ձևեր: Կատարյալի արմատական հիմքի կառույցները բնորոշում է «հիմքն իբրև բուն»: Յուրաքանչյուր դերբայ ներկայացնում է կազմության առանձնահատկություններով՝ օրինաչափությունների և բացառությունների ամբողջական ընդգրկմամբ: Դիմավոր բայի համար Մ. Աբեղյանը «Գրաբարի համառօտ քերականութիւն» աշխատության մեջ առանձնացնում է երկու եղանակ՝ սահմանական և հրամայական, իսկ վերահրատարակված գրքում արդեն նշում է 3 եղանակ՝ սահմանական, ստորադասական, հրամայական<sup>5</sup>:

Սահմանական եղանակի համար ներկայացնում է սահմանական ներկա, անցյալ անկատար, ապառնի Ա ժամանակաձևերը. վերջինս ստորադասական առաջին ապառնու բայաձևերի աբեղյանական անվանումն է, ըստ որում, հարացույցում դրանց դիմաց փակագծում գրում է *Մր.* (էջ 23): Որպես հրամայական եղանակ առանձնացնում է ապառնի Ա և արգելական ներկա, այսինքն՝ արգելական հրամայականի ձևերը:

Ապառնի Ա նշումով գրաբարագետը ներկայացնում է ա լծորդության համար -*այջիր, -այջիբ*, ի և ե լծորդությունների համար՝ -*իջիր, -իջիբ* վերջավորությունները, որոնք դիպվածաբար հանդիպում են քարգմա-

<sup>4</sup> Աբեղեան Մ., Գրաբարի համառօտ քերականութիւն, էջ 7:

<sup>5</sup> Աբեղեան Մ., Գրաբարի համառօտ քերականութիւն, էջ 21, Գրաբարի քերականութիւն, էջ 28:

նական գրականության մեջ և գրաբարի այլ քերականների կողմից չեն առանձնացվում: *Իջիր, իջիք*-ը՝ հորդորական հրամայականի կանոնավոր հանդիպող վերջավորություններ: Ու լծորդության բայերը ապառնի Ա չունեն<sup>6</sup>: Այս կառույցները՝ իբրև հրամայականի ձևեր, Մ. Աբեղյանը պահպանում է նաև մյուս աշխատություններում բերված հարացույցներում: Ներկայի հիմքի նույն ձևերը հայագետն առանձնացնում է նաև վերահրատարակության մեջ: Միայն ստորադասական ապառնի Ա ձևը հանում է սահմանական եղանակի կազմից:

Կատարյալի հիմքից կազմվող բայաձևերը հեղինակը տալիս է ներգործակերպ, կրավորակերպ և խառը խոնարհման հարացույցներով, ըստ որում, սահմանականի համար առանձնացնում է անցյալ կատարյալ և ապառնի բայաձևերը, որոնք ստորադասական երկրորդ ապառնու հարացույցի միավորներն են: Այստեղ արդեն փակագծում *Սյր. նշումը* չունի: Հրամայական ներկան բուն հրամայականի ձևերն են, իսկ ապառնի Բ-ն՝ հորդորական հրամայականի: Վերահրատարակության մեջ դրանք կոչում է ստորադասական ապառնի Բ՝ մնացածը թողնելով նույնը (էջ 32):

Հարացույցներից հետո «Գիտելիք» վերնագրով հեղինակը տալիս է կառուցվածքային մեկնաբանումներ: Հարացույցներով ներկայացվում է պատճառական բայերի խոնարհումը, ապա բացատրվում է անցյալ դերբայի կազմությունը: Անկանոն բայերի ցանկը Մ. Աբեղյանը տալիս է ավելի լայն ընդգրկումով, քան այլ գրաբարագետները՝ ներառելով ոչ միայն խոնարհման և հիմքակազմության առանձնահատկություններով բայերը, այլև առանձին բայեր, որոնք այս կամ այն կառույցում կարող են առանձնահատկություններ ունենալ, օրինակ՝ *սփածանիւմ, պրծանիւմ, զառածիւմ-զառածանիւմ, ծիրիւմ-ծիրանիւմ* ձևերի *սփածայ* (կանոնավոր) և *սփածեսայ*, ինչպես նաև *պրծեսայ, զառածեսայ, ծիրեսայ* անկանոն<sup>7</sup> ձևերը:

---

<sup>6</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, Գրաբարի համառոտ քերականություն, էջ 23:

<sup>7</sup> Անկանոն և պակասավոր բայերին անդրադառնում է նշվ. աշխատության առաջին հրատարակության 37-54 էջերում, երկրորդ վերահրատարակության 45-58 էջերում:

Բաղադրյալ ժամանակաձևերի ամբողջական հարացույցները ներկայացնելուց հետո հեղինակը անդրադառնում է ժամանակների գործածությանը: Յուրաքանչյուր ժամանակաձևի գլխավոր և երկրորդական քերականական իմաստով գործածությունները 2 հրատարակություններում էլ հեղինակը ներկայացնում է ամբողջական ընդգրկմամբ և բնագրային հարուստ նյութի փաստագրմամբ: «Գրաբարի դասագիրք» աշխատության Բ մասում հեղինակը անդրադառնում է ժամանակաձևերի կիրառություններին և իրավամբ նշում է, որ ստորադասական I և II ապառնիների սահմանը և «դրանց տարբերությունն հնագույն մատենագիրների մեջ անգամ արդեն շփոթուած է, և այն երկու ժամանակները մեծ մասամբ նույն նշանակությունն և գործածությունն ունին» (էջ 136): Հաճախ ստորադասական ապառնի Ա-ն թարգմանվում է սահմանական ներկայով: Ի թիւս այլ օրինակների՝ բերում է հետևյալ օրինակը. «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի խրում» (էջ 136): Նույնը վերաբերում է նաև եղանակիչ բայերի քննությանը: Նրանց ձևագործառական հատկանիշների մանրակրկիտ վերլուծությունը հեղինակը կատարում է ձևաբանական և շարահյուսական մակարդակներում՝ ամբողջացնելով գրաբարի բայական համակարգի քննությունը:

«Գրաբարի դասագիրք» ձեռնարկի մեջ խոնարհման համակարգը ներկայացված է նույն ձևով, ինչ «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ: «Գրաբարի դասագրքի» առաջին մասում հեղինակը բայի համար առանձնացնում է 3 եղանակ, ըստ որում, սահմանականի համար ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ ժամանակաձևերը, ստորադասականի համար՝ ապառնի առաջին և ապառնի երկրորդ ձևերը. «Հրամայականն ունի երեք ժամանակ՝ ներկայ, ապառնի առաջին և ապառնի երկրորդ: Ներկայի բացասականը **մի՛** մակբայով արգելական է և առանձին ձև ունի: Ուլ-ով վերջացող բայերը չունին հրամայական ապառնի առաջին ժամանակը»<sup>8</sup>, որի համար հեղինակը պահպանում է առաջին աշխատության մեջ տեղ գտած –*այջիր*, –*այջիք*, –*ի*

<sup>8</sup> Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, առաջին գիրք, Թ., 1915, էջ 97:

ջիր, -իջիր՝ դիպվածային, միայն Աստվածաշնչի և թարգմանական այլ գրականության մեջ հանդիպող մեղմ հրամայականի ձևերը: Հարացույցները և նրանց մասին տեսական վերլուծությունը Մ. Աբեղյանը կատարում է անկատար և կատարյալ ժամանակների հակադրությամբ, որը պահպանում է նաև իր հետագա աշխատություններում, այնինչ «Գրաբարի համառոտ քերականություն» աշխատության մեջ ներկայի հիմքից կազմվող ժամանակաձևերն անվանում է «լծորդի ձևեր», իսկ կատարյալի հիմքից կազմվող ժամանակաձևերը՝ «բնի ձևեր» կամ ժամանակներ: Հրամայական ներկա նշումով իր բոլոր աշխատություններում Մ. Աբեղյանը ներկայացնում է բուն հրամայականի ձևերը, իսկ Ա ապառնի Բ-ի տակ՝ հորդորական հրամայականի ձևերը, ըստ որում, *հորդորական հրամայական* եզրը հեղինակը չի գործածում: Ապառնի Ա-ի տակ տեղ գտած կառույցները Մ. Աբեղյանը ներկայացնում է հավանաբար պահպանելու համար ապառնի Ա (անկատար ժամանակաձև) և ապառնի Բ (կատարյալ ժամանակաձև) կերպային հակադրությունը՝ հարացույցում նշելով *աղաջիր, աղաջիրք, սիրիջիր, խօսիջիր, խօսիջիրք* ձևերը, որոնց կողքին բնի (կատարյալի) ժամանակների մեջ ապառնի Բ նշմամբ բերում է *աղասջիր, աղասջիրք, սիրեսջիր, սիրեսջիրք, մարուսջիր, մարուսջիրք, ածջիր, ածջիրք, փախիջիր, փախիջիրք* ձևերը, որոնք ներկայացնում են հորդորական հրամայականի ընդունված պատկերը: Ինչպես տեսնում ենք, հեղինակի մոտեցումները բայական կարգերի վերաբերյալ աստիճանական զարգացում են ստացել: Ստորադասական եղանակը՝ իբրև առանձին եղանակային եզր, հեղինակը առանձնացրել է «Գրաբարի դասագրքում» և ապա՝ «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ: «Համառոտ քերականութեան» մեջ ստորադասական առաջին և երկրորդ ապառնիները սահմանական եղանակի պարզ ժամանակաձևեր էր համարում<sup>9</sup> : Ծանոթության մեջ գրում է. «Սահմանական եղանակի առաջին ապառնին քերականները սովորաբար դնում են իբրև Ստորադասական եղանակ»<sup>10</sup>: Նախնական գիտելիքներ տալով հողովների և նրանց կազմության առանձնահատկությունների մասին՝ Մ. Աբե-

<sup>9</sup> Աբեղեան Մ., Գրաբարի համառոտ քերականություն, էջ 21:

<sup>10</sup> Աբեղեան Մ., նշվ. աշխ., էջ 21:

դյանը կանոնավոր հոլովումներ վերնագրի տակ առանձնացնում է **ի, ու, ոյ, այ** հոլովումները, որի մեջ քննում է ավանդաբար ընդունված **ի-ա, ո-ա** խառն հոլովման բառերը, բայց դրանք անվանում է «**ի և ո**» շեղման բառեր, իսկ **այ** արտաքին հոլովումը՝ անխառն ա ձայնավորով հոլովում<sup>11</sup>: **Ան** հոլովման տակ դնում է ավանդական անվանումներով **ա** և **ի-ա** խառն ներքին հոլովման բառերը: **Եր-եղ** հոլովման տակ առանձնացնում է **ե** ներքին հոլովման բառերը:

Մ. Աբեղյանը կանոնավոր հոլովումների կազմության առանձնահատկությունները բացատրելիս ներկայացնում է տվյալ հոլովման բառաշարքերը ձևային և իմաստային հատկանիշների հնարավորինս ամբողջական ընդգրկմամբ: Հեղինակը չի գործածում *արտաքին* և *ներքին, պարզ* և *խառն հոլովումներ* եզրույթները:

Կանոնավոր հոլովումների մեջ ներկայացնում է տվյալ հոլովման պատկանող ոչ միայն գոյականները, այլ նաև թվականները (*մի-միոյ*), ածականները (*մանր-մանու-մանունք*), դերանունները (*մեր-մերոյ*), դերբայները (*խաղալ-խաղալոյ, խաղացեալ(ք)-խաղացելոյ, խաղացելոց*):

Անկանոն հոլովումների տակ է դնում *այր, փէր, մայր, քոյր, ար, կին, փրկիկ* բառերը, ինչպես նաև *ծանաթ* և *փոքր* բառերը: Հոլովումների մեջ փոխանցումները ներկայացնելուց հետո տալիս է չհոլովվող բառերի շարքը, դրանք են *-իւն* ածանցով մի շարք բառեր, օր.՝ *գոչիւն, թնդիւն, դղրդիւն*, կրկնակի փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով՝ *պարսանեկիկ, մանկիկ, նասակիկ*:

Գերանվանական հոլովման տակ Մ. Աբեղյանը քննում է հարցական, անորոշ, անձնական, ցուցական, որոշյալ, փոխադարձ դերանունները, առանձնացնում է նաև այն ձևերը, որոնք ունեն մակբայական նշանակություն, ինչպես՝ *այսր, այդր, այնր, ասորի, այդի, անորի, ասր, այդր, անդ* ձևերը:

«Շարահյուսություն» բաժնում քննում է ձայնարկությունը, որ հարաբերական դերանունը, շաղկապները, նախադրական կամ մակբայական բառերը (*յեպ, զկնի* ևն), այսինքն՝ նախադրությունները<sup>12</sup>:

<sup>11</sup> Տե՛ս **Աբեղեան Մ.**, Գրաբարի քերականություն, էջ 95-99:

<sup>12</sup> Նույն տեղը, էջք 194-207:

Առանձին քննության է ենթարկում նախդիրներն իրենց կիրառական դաշտի գրեթե բոլոր գործառնություններով, հողերը, համաձայնությունն ու շարադասությունը: Մանրակրկիտ քննության է ենթարկում գրաբարի հոլովների և անորոշ դերբայի կիրառությունները:

«Խոսքի կազմության» մեջ անդրադառնում է խնդիրներին. ներգործական և կրավորական սեռի բայերի հետ գործածվող խնդիրները անվանում է սեռի խնդիրներ, իսկ մնացած խնդիրները՝ բնության խնդիրներ, ըստ որում, ենթակայի և խնդրի հետաքրքիր սահմանում է տալիս. «Բայի դեմքի լրացումը, յենթական մեր հին քերականները կոչում են «անուն բայի» կամ «տեր բայի», իսկ բայիմաստի լրացումները՝ խնդիր»<sup>13</sup>:

«Գրաբարի համառօտ քերականություն» աշխատության մեջ շարահյուսություն բաժին չի առանձնացվում: Գերանվանական հոլովումից հետո բացատրվում է «Հոլովների գործածությունը», ածականից հետո ներկայացված են հողերը, նախադրությունները, ներառյալ նախդիրները, սպա՝ շաղկապը և ձայնարկությունը<sup>14</sup>:

«Գրաբարի քերականություն» աշխատությունն արդեն գրաբարի հնչյունական համակարգի, ձևաբանության և շարահյուսության ամբողջական վերլուծությունն է, տեսական աշխատանք և ոչ միայն դասագիրք:

Այս տեսանկյունից ներկայացնենք «Գրաբարի դասագիրք» ձեռնարկի կառուցվածքը՝ հաստատելու մեր վերոբերյալ միտքը: Առաջին գիրքը սկսվում է բնագրային տեքստերով, որոնց հաջորդում է «Բառացուցակ և քերականական կանոններ» բաժինը, որտեղ Մ. Աբեղյանը քննում է «բառադասությունը», որ վերաբերում է հատկացուցչի և ածական վերադրի հետադաս շարադասությանը, այնուհետև ընդհանուր նըշվում են հոլովների առանձնահատկությունները, նախդիրները և նրանց գործածությունը:

---

<sup>13</sup> Տե՛ս Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, էջ 146:

<sup>14</sup> Տե՛ս Աբեղյան Մ., Գրաբարի համառօտ քերականություն, էջք 146-204:

Գերբայաների փոքրիկ, ակնարկային վերլուծությունից հետո հեղինակն անցնում է խոնարհմանը<sup>15</sup>:

Փաստորեն այս աշխատանքը ծառայում է գործնականում արագ գրաբար սովորեցնելու նպատակին, ավելի որոշակի՝ գրաբարից աշխարհաբար թարգմանություն կատարելուն:

Ածականին առավելապես շարահյուսական մակարդակի միավորի սահմանում է տալիս: «Գրաբարում, ինչպես և աշխարհաբարում, ածականները խօսքի մեջ վարած պաշտօնով միայն տարբերում են իբրև ածական անուն կամ մականուն, մակբայ կամ մակածական. օրինակ՝ քաջ այր, քաջ գիտեմ, քաջ յայտնի: Մակբայների և մակածականների կիրառութեան համար առանձին գիտելիք չկայ»<sup>16</sup>:

Ըստ որում, ստացական դերանունները թվարկելիս հեղինակը գործածում է *դերանուն* եզրը, բայց գոյականի հետ հղովման հարացույցը ներկայացնելիս գործածում է *սրբացական-ածական* անվանումը<sup>17</sup> (*ծառայ իմ, ծառայի իմոյ, ծառայի իմում* և այլն):

Դասագիրքը կառուցված է այն սկզբունքով, որ յուրաքանչյուր թեմայի քննության ժամանակ հնարավորինս շատ բնագրային օրինակներ ընդգրկվեն և թարգմանական նրբություններ բացահայտվեն:

Դասագրքի Ա և Բ մասերը ընդգրկում են քերականությունը, բնագրային հարուստ հատվածներ, բառարաններ: Կառուցվածքային առումով նրանք ունեն տարբերություններ. I գիրքը կազմված է «Յօդուածներից», որը բառերի և բառաձևերի մեկնաբանությունն է, և քերականական տվյալ իրողության մեկնաբանությունից, օրինակ՝ բառացանկ է տալիս՝ բառեր և բառաձևեր՝ իրենց բացատրություններով, ապա Ա բաժինն է, որը բառադասությանն է վերաբերում, Բ-ն՝ ուղղական և հայցական հղովների, գ նախդրին և հղովական համակարգին վերաբերող մի շարք այլ իրողությունների, այնուհետև անդրադառնում է խոնարհմանը, զուգընթաց դարձյալ բառերի և բառաձևերի բացատրություններն են, վերջում Եղիշեի երկի բառարանն է: Բ գիրքը կառուցվածքային

---

<sup>15</sup> Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, գիրք առաջին, էջ 98 -112:

<sup>16</sup> Աբեղեան Մ., Գրաբարի համառոտ քերականություն, էջ 154:

<sup>17</sup> Տե՛ս Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, գիրք առաջին, էջ 126:

առումով ավելի հստակ է՝ տեքստեր, քերականություն և բառարան, ընդ որում, տեքստերը գերակշռող ընդգրկում ունեն: Կարևոր է բնագրային քարգմանության մեջ համանիշների ճիշտ ընդգրկումը (էջ 113-141, II գիրք): Հեղինակը խիստ կարևորում է բնագրերի ճիշտ քարգմանությունը, հատկապես ուշադրության կենտրոնացումը համանիշ բառերի վրա, որով հագեցած են գրաբարյան բնագրերը: 2-րդ մասում քերականական գիտելիքը հավաքված է<sup>18</sup>, քանի որ առաջին գրքում «քերականական կանոններից առնուած են, ինչպես պահանջում է ծրագիրը, կանոնավոր հոլովում և խոնարհում, մի քանի դերանունների հոլովում, բառերի շարադասութիւն ու համաձայնութիւն և պատահած նախդիրների գործածութիւն»<sup>19</sup>:

«Գրաբարի դասագիրքը» կազմված է 2 գրքից. I գիրքը սկսվում է քարգմանության համար նախատեսվող բնագրային հատվածներով: Տրվում են բառացուցակներ, որոնցով հագեցած է դասագիրքը: Բառացուցակները բառերի և բառաձևերի բացատրություններ են: Այնուհետև «Քերականական կանոններ» վերնագրով տրվում են նախդիրների գործածության կանոններ: «Բառադասության» մեջ հեղինակը ներկայացնում է հատկացուցչի (սեռական վերադիր) և հետադաս որոշչի շարադասության և համաձայնության առանձնահատկությունները<sup>20</sup>: Անդրադառնում է նաև հոլովների կիրառությանը: Հետո ներկայացնում է խոնարհման և հոլովման համակարգերը, որոնք նույնն են, ինչ «Գրաբարի քերականության» մեջ: Գիրքն ունի հարուստ բացատրական բառարան:

II գիրքը ևս սկսվում է բնագրային տեքստերով: Նրանց հաջորդում է «Քերականություն» բաժինը, որը սկսվում է հոլովների մեկնաբանությամբ, ապա անդրադառնում է բայական համակարգին: Առանձին բաժնով՝ «Շարահիսութիւն», ներկայացնում է գրաբարի շարահյուսական իրողությունները. ա) համաձայնություն, բ) հոլովների գործածութիւն, գ) նախդիրների գործածութիւն, դ) բայի ժամանակների գործածութիւն, ե) յոդերի գործածութիւն, զ) որ յարաբերական, է) դերբայների գործածութիւն:

---

<sup>18</sup> Տե՛ս Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, Բ գիրք, էջք 113-141:

<sup>19</sup> Աբեղեան Մ., Գրաբարի դասագիրք, Ա գիրք, էջ 4:

<sup>20</sup> Աբեղեան Մ., նշվ. աշխ., Ա գիրք, էջք 91-93:

Այնուհետև այբբենական կարգով ներկայացնում է բացատրական բառարան: Ազդեցիկ է վաստակաշատ հետազոտող Մ. Աբեղյանի գիտական ավանդը ինչպես հայագիտության մեջ ընդհանրապես, այնպես էլ գրաբարագիտության մեջ մասնավորապես: Հեղինակը գրաբարի քերականությունը ներկայացնում է իր ամբողջության մեջ: Բոլոր խոսքի մասերը իրենց ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններով տեղ են գտել Մ. Աբեղյանի աշխատություններում: Դասագրքերը ունեն բացատրական բառացանկ:

**Բանալի բառեր** – *գրաբարագիր, դասագիրք, քերականություն, չափանություն, շարահյուսություն, հոլովում, խոնարհում, անկանոն բայեր, հոլովման համակարգի բացառություններ:*

**АНАИТ ЮЗБАШЯН – М. Абегиан как исследователь древнеармянского языка.** – Наша работа представляет собой сравнительный анализ трудов выдающегося ученого М. Абегиана, посвященных изучению грабара – древнеармянского языка. Ученый высоко ценил знание древнеармянского языка, а его изучение считал очень важным. М. Абегиан – автор учебников по грамматике древнеармянского языка. Огромен вклад талантливого лингвиста как в исследовании современного армянского языка, так и в древнеармянского.

**Ключевые слова:** *специалист по древнеармянскому языку, учебник, грамматика, морфология, синтаксис, склонение, спряжение, спряжение неправильных глаголов, исключения в системе склонения.*

**Anahit Yuzbashyan- M. Abeghian as a researcher of Old Armenian.** - Our work is a comparative analysis of the works of the outstanding scientist M. Abegyan devoted to the study of Grabar - Old Armenian. M. Abeghian highly valued knowledge of ancient languages, and its study is considered very important. He is the author of textbooks on grammar of Old Armenian. Huge contribution of a talented linguist in the study of the modern Armenian language, as well as in Old Armenian.

**Key words:** *specialist of Old Armenian, textbook, grammar, morphology, syntax, declension, conjugation, conjugation of irregular verbs, exceptions in the system declines.*

**ԱՃԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ  
ՓՈԽԱՔԵՐԱԿԱՆ ԻՄԱՏՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Բաղադրյալ բառերի փոխաբերական իմաստները առաջանում են երկու ճանապարհով: Դրանք կարող են ժառանգված լինել հիմք-բառի (բաղադրող հիմքի) փոխաբերական նշանակությունից կամ էլ ինքնուրույնաբար ստեղծվել նորակազմ բառում:

Առավել հաճախ ժառանգվում և յուրացվում են նախահիմքերի փոխաբերական նշանակությունները: Փոխանվանական կիրառությունները սակավադեպ են անցնում նոր կազմությանը: Սա կապված է ինչպես նախահիմքի խոսքիմասային պատկանելության, այնպես էլ բառային իմաստի հետ<sup>1</sup>: Եվ եթե փոխաբերական իմաստը յուրացրած բաղադրությունը ինքն էլ ունի փոխաբերական իմաստ, ապա փոխանվանական նշանակության փոխանցման դեպքում նոր կազմված բաղադրությունը փոխանուն չի լինում: Համեմատենք սառք ածականի և նույնահիմք սառչել (սառել) բայի ուղղակի և փոխաբերական իմաստները<sup>2</sup>. Սառք «*ած. 1. Ցածր կամ հարաբերականորեն ցածր ջերմաստիճան ունեցող, ցածր ջերմությամբ, ցուրտ (եղանակի՝ օդի ևն մասին): Ս. օդ՝ եղանակ: 2. Տևական և ցուրտ եղանակով, տևական ցրտերով: Ս. աշուն: 3. Սակավ ջերմություն սովող՝ պարունակող՝ ճառագայթող: Չմռան ս. արև: 4. Սովորական ջերմությունը չունեցող, սովորականից պակաս ջերմությամբ: Ս. շեռքեր՝ մարմին: 5. Սառած, ոչ բավարար տաքությամբ: Ս. քեյ՝ ճաշ: 6. Սառեցրած, սառեցնելով պահած: Ս. կերակուր՝ խաշ՝ ջուկ: 7. Սառեց-*

<sup>1</sup> Հմմտ. **Ермакова О.**, Лексические значения производных слов в русском языке, М., 1984, с. 81-82.

<sup>2</sup> Այս և հետագա բացատրությունները որոշ կրճատումներով բերված են **Է. Աղայանի** «Արդի հայերենի բացատրական բառարանից» (հտ. 1-2, Եր., 1976), ինչպես նաև ակադեմիական բառահատոր «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից» (հտ. 1-4, Եր., 1969-1980): Համապատասխան նշումները՝ Է. Աղայանի բառարանի համար՝ ԱՀԲԲ, Ակադեմիականի համար՝ ԺՀԼԲԲ:

րած կամ առանց տաքացնելու մատուցվող՝ տրվող: *Ս. ուրեղեղեններ՝ նախաճաշ*: 8. Ջեռուցումից զուրկ կամ բավականաչափ չջեռուցված, ցուրտ: *Ս. սենյակ՝ քնակարան*: 9. Բարեխառն գոտուց դեպի բևեռը տարածվող՝ գտնվող: *Ս. կլիմա*: 10. *փխբ*. Կրքից՝ ավյունից՝ խանդից զուրկ, ոչ կրակոտ: *Ս. բնավորություն՝ խառնվածք*: 11. *փխբ*. Ջգացմունքայնությունից զուրկ, բանականությամբ կշռադատված՝ հավասարակշռված: *Ս. դատողություն*: 12. *փխբ*. Որևէ բանի նկատմամբ հետաքրքրություն չցուցաբերող, անտարբեր: [...] 15. *փխբ*. Հոգեկան ջերմությունից զուրկ, խիստ, չոր: *Ս. հայացք՝ վերաբերմունք*: [...] 18. *փխբ*. Ոչ սիրավիր, սիրո՝ ջերմության զգացմունքից զուրկ, անտարբեր: **Սասնել** «չք. 1. Սառույցի վերածվել, սառցային վիճակի փոխարկվել (հեղուկների մասին): 2. Սառույցի շերտով պատվել, երեսը՝ մակերեսը սառույց կապել: 3. Սաստիկ ցրտից՝ սառնամանիքից մարմինը փայտանալ՝ մեռնել: 4. Սաստիկ մըրսել, ցրտից վնասվել: *Չեռքերը սասնել են*: 5. Տաքությունից զրկվել, սառը դառնալ: *Թեյը սասնել է*: 6. *փխբ*. Մարելուն մոտ լինել, թեժությունը կորցնել: *Ծխելով քեծացնում էին չիբուխների սառած կրակը (Ա. Բակունց)*: 7. *փխբ*. Անարտահայտիչ՝ անփայլ դառնալ, փայլը՝ արտահայտչականությունը կորցնել: *Աչքերը սասնել է*: 8. *փխբ*. Մնալ որպես հետք: *Սեղմված շրթունքներին սասնել է ցավի արտահայտությունը*: 9. *փխբ*. Ընդարմանալ, փայտանալ, շարժունությունը կորցնել: *Իվան քեյը կմկմաց, լեզուն կարծես սասնել էր, չէր շարժվում (Ա. Բակունց)*: 10. *փխբ*. Աշխուժությունը՝ եռանդը կորցնել: 11. *փխբ*. Մեղմանալ, թուլանալ: *Կրքերը սասնեցին*: 12. *փխբ*. Մեկի նկատմամբ ունեցած զգացմունքը թուլանալ, անտարբեր դառնալ մեկի նկատմամբ: [...] 15. *փխբ*. Չարմանքից՝ հուզմունքից ևն քար կտրել, շշմել [ԱՀԲԲ]:

Բայի փոխաբերական նշանակությունները ածականի նույնատիպ իմաստների ժառանգումն են, խարսխված են վերջիններիս վրա: Համեմատենք նաև *չոր* և *չորեղ*, *փափուկ* և *փափկել* բառազույգերը. **Չոր** *ս.* 1. Ոչ խոնավ, խոնավությունից զուրկ: 2. Ոչ անձրևային, երաշտ: [...] 6. Չորացած, թառամած: [...] 8. Կարծր, ամուր, պինդ: 9. Նիհար, վտիտ,

ճարպից գուրկ: 10. Աղբատիկ, անշուք: [...] 12. Կոպիտ, բիրտ<sup>3</sup>: Եվ **Չոքնեյ նք** չոր՝ կոպիտ պատասխանել, հանդիմանել, կշտամբել [ԺՀԼԲԲ]: Այս բայը ժառանգել է նախահիմքի փոխաբերական նշանակություններից միայն մեկը: **Փափուկ սծ**. 1. Այնպիսին, որ հեշտությամբ սեղմվում՝ ճնշվում է ձեռք տալիս, ոչ կոշտ, կակուղ: 2. Փխրուն: 3. Նուրբ, քնքուշ, գիրգ, փափուիկ (մարմնի մասին): [...] 7. Մեղմ, բարեխառն, ոչ սուր: [...] 12. Թույլ, ոչ ուժեղ, թեթև: 13. Մեղմաբարո, մեղմ բնավորություն ունեցող, հեգ: [...] 15. Բարեսիրտ, գթառատ, զգայուն: [...] 22. Ոչ խիստ, մեղմությամբ ասված՝ արտահայտված<sup>4</sup>: **Փափկեյ** 1. Փափուկ՝ կակուղ դառնալ: [...] 3. **փխք**. Մեղմանալ, համառությունը՝ կամակորությունն անցնել: 4. **փխք**. Խեղճանալ, ընկճվել: 5. **փխք**. Սիրտը լցվել [ԱՀԲԲ]: Նման է պատկերը նաև այլ խոսքի մասերի համադրման ժամանակ. **Ասպեք գ.**, 1. (**պարս**): Հեծյալ իշխանավոր (ժառանգական պատվանուն Բագրատունիների տոհմի նախարարների): 2. (**պարս**): Միջնադարյան Եվրոպայում՝ հեծյալ ազնվական: [...] 5. **գ.**, **սծ**. Անճնուրաց, հավատարիմ, վեհանձն և ազնիվ (տղամարդ): 6. **փխք**. Որևէ (դրական կամ բացասական) հատկությամբ խիստ աչքի ընկնող մարդ, հերոս: Եվ **Ասպեքունքուն գ.**, 1. Ասպետ լինելը: 2. Ասպետի վարքագիծ [ԱՀԲԲ]: Այս բառի երկրորդ իմաստը (թեև չունի **փխք**. նշումը) նախահիմքի 5-րդ և 6-րդ իմաստների զարգացումն է:

Այլ է պատկերը փոխանունության պարագայում: **Սամույր** գոյականը փոխանվանաբար նշանակում է «1. սամույրի մորթի և 2. սամույրի մորթուց կարված մուշտակ»: **Սամույրե** // **Սամուրե** ածականի կերտման համար հիմք է ծառայել այս՝ փոխանվանական նշանակությունը, սակայն նորակերտ ածականը արդեն փոխանուն չէ, այլ ունի ուղղակի նշանակություն՝ պայմանավորված նախահիմքի փոխանվանական իմաստով (սամույրե մուշտակ՝ գլխարկ «սամույրի մորթուց կարված մուշտակ՝ գլխարկ»): Կամ՝ **Արևմուտք** և **Արևմույսն**. **Արևմուտք** գ., 1. Աշ-

<sup>3</sup> Այս բառի 8-12-րդ իմաստները հայերենի բացատրական ոչ մի բառարանում չունեն ոճական որևէ նշում (այսինքն՝ ներկայացված են իբրև բառի ուղղակի իմաստներ), թեև բացահայտորեն փոխաբերական նշանակություններ են:

<sup>4</sup> Այս բառը ևս «Արդի հայերենի բացատրական բառարանում» չունի ոչ մի փոխաբերական իմաստ, թեև այդպիսին պետք է նկատվեն 7-22-րդ նշանակությունները:

խարհի չորս կողմերից մեկը՝ արևելքին հակադիր, հորիզոնի արևամուտի կողմը: [...] 3. Արևմտյան երկրներ, Եվրոպա: [...] 5. *փխք*.<sup>5</sup> Արևմտաեվրոպական կապիտալիստական աշխարհը: 6. *փխք*. Առհասարակ արդի կապիտալիստական աշխարհը: ***Արևմտյան*** *ած*. 1. Դեպի արևմուտք ընկած, արևմուտքում գտնվող: [...] 3. Արևմուտքին (3) հատուկ [ԱՀԲԲ]: Այստեղ ևս ածականը ժառանգել է նախահիմքի փոխանվանական իմաստը՝ չդառնալով փոխանուն:

Նկատելի է, որ առավել հաճախ նախահիմքի փոխաբերական իմաստը ժառանգում, յուրացնում են այնպիսի բաղադրությունները (ածանցավոր, նաև բարդ բառերը), որոնց իմաստը դարձվածայնացած չէ<sup>6</sup>: Այսպես, գոյականական հիմքերից հայերենի ամենաարտադրողական - *ական*, - *ալին*, - *ե* // - *յա*, նաև - *եղեն*, - *ենի* ածանցներով կազմված ածականները կանոնավորապես ժառանգում են նախահիմքի նաև փոխաբերական նշանակությունները: Օրինակ՝ ***Ապրուկ*** *գ*. 1. (*պարս.*): Արտադրության միջոցներից գուրկ և իր տիրոջ սեփականությունը հանդիսացող մարդ՝ ստրկատիրական (ինչպես նաև ֆեոդալական ու կապիտալիստական) հասարակարգի պայմաններում, ստրկատիրական հասարակարգի շահագործվող ու կեղեքվող դասակարգի ներկայացուցիչ: 2. Ուրիշի մասնավոր սեփականությունը հանդիսացող մարդ: 3. *փխք*. Տնտեսական շահագործման, քաղաքական կախվածության ևն հետևանքով ազատությունից՝ ինքնիշխանությունից գուրկ մարդ: 4. *փխք*. Բռնակալական լծի ենթարկված մարդ: 5. *փխք*. Օտար բռնակալության տակ ընկած մարդ՝ ազգ՝ ժողովուրդ: 6. *փխք*. Մեկի կույր կամակատարը դարձած մարդ: 7. *փխք*. Ամբողջապես որևէ բանի տրված՝ գերի դարձած

---

<sup>5</sup> Այս և հաջորդ նշանակությունների մոտ բառարանում նշված է *փխք*. (=փոխաբերական իմաստ). վրիպակ է, պետք է լիներ *փխնն*. (=փոխանունություն):

<sup>6</sup> Դարձվածայնացած է այնպիսի բաղադրյալ բառի իմաստը, որի բացատրության մեջ, բացի բաղադրիչների նշանակություններից, կա լրացուցիչ, այդ բաղադրիչներից ոչ մեկով չբացատրվող իմաստ. այսպես՝ *փղպիսր* նշանակում է ոչ թե «փղերի հիվանդություն», այլ «հիվանդություն, որի ժամանակ մարդու մարմնի որոշ մասեր (հատկապես ոտքերը) արտակարգ կերպով հաստանում ու մեծանում են»: Այստեղ «մարդ», «մարմնի մաս (հարկապես ոտքեր)», «հասարանալ», «մեծանալ» իմաստները ոչ մի նյութական արտահայտություն չունեն. դրանք խոստով կամ կարդացողը ուղղակի պետք է իմանա իր նախորդ փորձից կամ պարզի բառարաններով: Այս բառի իմաստը դարձվածայնացած է:

մարդ, որևէ բանի գերի: 8. *փիւք*. Ստրկամիտ՝ ստրկահաճո՞ն մարդ: **Սպրկահական** *սծ*. 1. Ստրուկին՝ ստրկության հատուկ՝ վերաբերող: 2. Ստրկական բնույթ կրող: 3. *փիւք*. Շատ ծանր, անտանելի, տաժանակիր: 4. *փիւք*. Կույր հետևողություն՝ հնազանդություն հանդիսացող, կույր հնազանդության վրա հիմնված [ԱՀԲԲ]: **Գրանհիւք** *գ. (հնք.)*: Բյուրեղային ապար, որ բաղկացած է դաշտային սպաթից, փայլարից և կվարցից: 2. *սծ. փիւք*. Շատ ամուր, կարծր: **Գրանհիւքե** // **Գրանհիւքյա** *սծ*. Գրանիտից կերտած՝ շինած: 2. *փիւք*. Չոր ու խիստ, անկարեկից, դաժան: 3. *փիւք*. Ամուր, հաստատուն, անհողորդ [ԱՀԲԲ]: **Ժայռ** *գ*. 1. Պարսպաձև բարձրացած քարային մեծ զանգված: 2. Գետնից բարձրացող կամ գետնին ընկած մեծ քար, խոշոր քար: 3. *փիւք*. Դժվարություն, արգելք: 4. *փիւք*. Ասվում է անդրդվելի ու համառ մարդուն: 5. *ս. փիւք*. Ամուր, անխորտակ, հաստատուն, անասան: **Ժայռեղեն** *ս*. 1. Ժայռից կազմված, ժայռ հանդիսացող: 2. Ժայռից կառուցված՝ շինված: 3. Ժայռոտ: 4. Ժայռի նման հսկա՝ վիթխարի: 5. *փիւք*. Ամուր, հաստատուն: 6. *փիւք*. Շուտ չհուզվող, ամրասիրտ: 7. *փիւք*. Համառ, անդրդվելի: 8. *փիւք*. Անգութ, քարասիրտ [ԺՀԼԲԲ]: Նաև՝ *բամբակ – բամբակե // բամբակյա, երեխա – երեխայական, ոսկի – ոսկեղեն, արծիվ – արծիվենի* և այլն, և այլն:

Որակական անականներից *-ություն* անանցով կազմված վերացական գոյականները նույնպես հիմնականում յուրացնում են այդ անականների նաև փոխաբերական իմաստները, ինչպես՝ **Սուր** *սծ*. 1. Լավ կտրող, հատու: [...] 5. *փիւք*. Նուրբ, զգայուն, զարգացած: *Ս. տեսողություն՝ զգացողություն*: 6. *փիւք*. Թափանցող, խորաթափանց: *Ս. միւրք*: 7. *փիւք*. Ընդունակ, թափանցամիտ: 8. *փիւք*. Սրամիտ: *Ս. խոսք՝ արտահայտություն*: 9. *փիւք*. Կծու, խոցող, խայթող: *Ս. պարասիտան՝ փրավորանք*: 10. *փիւք*. Սաստիկ, ուժգին: *Ս. կարիք՝ պակաս*: 11. *փիւք*. Չզայարանների վրա սաստիկ կերպով ազդող՝ ներգործող, ուժեղ: *Ս. հուր՝ համ՝ ցավ*: 12. *փիւք*. Ուժեղ՝ զարգացած զգացողություն ունեցող: *Ս. աչքեր՝ ականջներ*: 13. *փիւք*. Բուռն կերպով զարգացող՝ ընթացող: *Ս. բորբոքում*: 14. *փիւք*. Շատ լարված, տազնապալից: *Ս. վիճակ*: Եվ **Սրություն** *գ*. 1. Սուր լինելը, սուրի հատկությունը: 2. Սուր՝ սրամիտ արտահայտու-

բյուն՝ խոսք, սրամտություն: 3. Լարվածություն, սաստկություն, ուժգնություն: 4. Կծուություն, կծվություն [ԱՀԲԲ]: Նասն՝ **Կենդանի** գ., *ած.* 1. Շարժվելու և զգալու ընդունակ էակ, կենդանական մարմին՝ էակ: 2. Կենդանական բոլոր արարածները ի հակադրություն մարդու: [...] 5. *ած.* Կենդանություն ունեցող, ողջ, ապրող: [...] 7. *փիսք.* Աշխույժ, առույգ, կայտառ, շարժուն, վառվռուն: Կ. *Խաղ՝ շարժում:* 8. *փիսք.* Արտահայտիչ, վառ: Կ. *Պատրկեր՝ նկար՝ դիմագծեր:* 9. *փիսք.* Բուռն, ջերմ: **Կենդանություն** գ. 1. Կենդանի լինելը, գոյություն ունենալը, կյանք: [...] 3. *փիսք.* Աշխուժություն, եռուզեռ [ԱՀԲԲ]:

Մակբայները ևս փոխաբերական իմաստները կարող են ժառանգել նախահինք գոյականից կամ ածականից. **Էջ** գ. 1. Միասնբակավորների կարգին պատկանող կենդանի, որ ընտելացված է և ծառայում է որպես բեռնակիր (նաև հեծանելի), ավանակ: [...] 9. *փիսք.* Ապուշ՝ բթամիտ՝ անհասկացող մարդ: 10. *փիսք.* Գռեհիկ՝ անտաշ մարդ: Եվ **Էշավարի մկ.** 1. Էշի մման: 2. *փիսք.* Կոպտորեն, գռեհկաբար: 3. Հիմարաբար [այս իմաստը, ինչպես նաև Ակադեմիական բառարանում առանձնացված «*հիմար, անմիտ*» և «*կոպտաբար, գռեհիկ կերպով*» նշանակությունները չունեն *փիսք.* նշումը] [ԱՀԲԲ]: Կամ՝ **Խոզ** գ. 1. Խոշորամարմին, կարճոտն, երկար դնչին կռճիկանման կլոր թթով կճղակավոր կաթնասուն, որի ընտանին բուծվում է միս, ճարպ ստանալու համար: 2. *փիսք. (խսկց.):* Կեղտոտ՝ փնթի մարդ: 3. *(խսկց.):* Անբարեհամբույր՝ ոչ մարդամոտ՝ ոչ բարեկամասեր մարդ: 4. *(խսկց.):* Երախտամոռ՝ անշնորհակալ մարդ [Ակադեմիականում կա նաև «*գեր՝ մարմնեղ մարդ*» փոխաբերական իմաստը]: **Խոզաբար** մկ. 1. Կեղտոտ՝ փնթի կերպով, փնթիաբար: 2. Անբարեհամբույր՝ անշնորհակալ կերպով: 3. Ազահորեն, անկուշտ կերպով [ԱՀԲԲ]: **Ջեղմ** *ած.* 1. Տաք, ջեռ: 2. Բուռն, կրքոտ, եռանդուն, բոցավառ [կրկին չունի *փիսք.* նշումը]: 3. *փիսք.* Ջերմություն՝ բուռն զգացմունք արտահայտող՝ պարունակող: 4. *փիսք.* Սրտագին, բոցավառ, խանդավառ: 5. *փիսք.* Մտերիմ, հարազատ: 6. *փիսք.* Մերտ, մոտիկ,

մտերմության՝ բարեկամության վրա հիմնված: **Չերմորեն մկ.** Ջերմ կերպով<sup>7</sup> [ԱՀԲԲ]:

Ընդհանրապես նկատելի է, որ ածականների փոխաբերական իմաստները առավել հաճախ են անցնում ածականահիմք կառույցներին (բայերին և գոյականներին, նաև մակբայներին):

Գոյականների փոխաբերական նշանակությունները համեմատաբար սակավ են փոխանցվում նույնահիմք բաղադրություններին: Սա բացատրվում է նրանով, որ փոխաբերական նշանակությունները ոչ միայն գոյականին տալիս են նոր իմաստ (տեղի է ունենում իմաստի ընդլայնում), այլև հաճախ փոփոխում են այդ բառերի հասկացական կարգերը<sup>8</sup>: Կարող է կատարվել *կենդանի (թռչուն, միջատ) → առարկա կամ անձ* անցում, օրինակ՝ **Աղվես** «1. Շների կարգին պատկանող սուր դնչով, երկար թավամազ պոչով, վայրի գիշատիչ գազան»: → [...] «4 (**բրբ.**) Հարսանիքի ժամանակ հարսի կամ փեսայի տունը հարսանքավորների գալն ավետող անձ: 5. (**բրբ.**) Փայտ, որն օգտագործվում է սայլի մի մասը մյուսին կապելու համար: 6. (**նոր, սպորտ.**) Աղվեսորս կոչվող ռադիոսպորտի մարզիկ» [ԺՀԼԲԲ, ԱՀԲԲ]: Հնարավոր են նաև *անձ → առարկա* կամ *առարկա → անձ* անցումները, օրինակ՝ **Տահարակ** «1. Փայտի տափակ երկարավուն ոչ հաստ շերտ, որ տրոցելով կտրում են գերանից» → [...] «11. *փիսք.* Բութ՝ անզգա (մարդ) [ԱՀԲԲ]<sup>9</sup>: Փալաս «1. Լաթի՝ շորի կտոր, որ սովորաբար գործածվում է որպես ջնջոց՝ կարկատանացու ևն» → [...] «5. *փիսք.* Թույլ՝ կամազուրկ (մարդ)» [ԱՀԲԲ]: Իսկ հետևյալ անցումներում կատարվել է նաև հասկացական կարգի փոփոխություն. *առարկա → մեծ քանակ կամ ծավալ. Ծով* «1. (*աշխարհ.*): Օվկիանոսի մաս. առավել կամ պակաս չափով ցամաքով շրջապատված դառնաղի ջրով ջրային մեծ տարածություն» → .... «6. *փիսք.* Որևէ

---

<sup>7</sup> Հայ բառարանագրության մեջ ընդունված սկզբունքներով՝ եթե բաղադրյալ բառը բացատրված է հոլման եղանակով ու չունի հատուկ նշում, թե հիմք-բառի հատկապես որ իմաստին է կատարված այդ հղումը, ապա բացատրությունը վերաբերում է նախահիմքի բոլոր (այդ թվում՝ նաև փոխաբերական) նշանակություններին:

<sup>8</sup> Հմմտ. **Ермакова О.**, նշվ. աշխ., էջ 84:

<sup>9</sup> Խոսակցական լեզվում այս բառը փոխաբերաբար ունի նաև «չատ նիսար և հաճախ բարձրահասակ (մարդ)» իմաստը, որը բառարաններում չի արձանագրված:

բանի չափազանց մեծ քանակություն. *մարդկանց ծ., ծաղիկների՝ դրոշակների ծ.:* [...] 8. *փխբ.* Մեծություն, խորություն, սաստկություն (վշտի, զգացմունքների, մտքերի ևն). *Հայոց վշտի մեծ ծովի մեջ փառասպում է իմ հոգին (Հ. Թումանյան):* 9. *փխբ.* Անսահմանափակություն, անսպառություն, որևէ բան անսահմանափակ՝ անսպառ լինելը՝ ունենալը: *Մայա-Նովա՝ իսելքի ծով ա:* [...] 11. *փխբ.* Լայնարձակ ասպարեզ, որևէ բանի ոլորտ՝ միջավայր: *Կյանքի ծ., նենգությունների ու խարդավանքների ծ.»* [ԱՀԲԲ]: **Սաբ** «1. Երկրի մակերևույթից զգալիորեն վեր խոյացած բնական բարձրություն՝ բարձունք, լեռ» → [...] «8. *փխբ.* Որևէ բանի մեծ կույտ՝ դեզ: 9. *փխբ.* Որևէ բանի մեծ ու ծանր՝ ճնշող բեռ, ծանր՝ ճնշող՝ խորունկ զգացում» [ԱՀԲԲ]: *Մռարկա* → *վերացական հասկացություն.* **Աղ** «1. Քլորից ու նատրիումից կազմված սպիտակ բյուրեղային նյութ, որ գործ է ածվում կերակրի մեջ և տնտեսական ու արդյունաբերական զանազան նպատակներով» → «2. *փխբ.* Համ, էություն: *Նրանք են աղը, աղը կյանքի, նրանք են փայլը աշխարհի (Ե. Չարենց):* [ԺՀԼԲԲ]: **Ոսկի** «1. (*քիմ.*): Քիմիական տարր. դեղնավուն ազնիվ մետաղ, որ օգտագործվում է քանկագին իրերի ու զարդերի համար և իբրև արժեքի չափանիշ» → [...] «6. *փխբ.* Ազնիվ, բարի, դրական հատկություններով օժտված: *Ո. մարդ՝ ընկեր:* [...] 8. *փխբ.* Վառ, շքեղ, պերճ: *Ո. երազներ»* [ԱՀԲԲ]: Գոյականների փոխանվանական կիրառությունների դեպքում նույնպես տեղի են ունենում իմաստային անցումներ. *շրնչավոր առարկա (կենդանու անուն)* → *անշունչ առարկա*, ինչպես՝ կենդանի → այդ նույն կենդանու միսը, մորթին (*խոզ, ոչխար* կամ *աղվես, գայլ, սամույր*): Կամ՝ *անշունչ առարկա* → *անձ (շնչավոր)*, ինչպես երգչական ձայների դեպքում՝ *Բաս* «1. Տղամարդկային ամենացածր ու թավ ձայնը: 2. Այդ ձայնն ունեցող երգիչ» [ԱՀԲԲ], *տենոր, բարիտոն, ալտ, սոպրանո*:

Այսպիսի իմաստային անցումները գոյականահիմք կազմություններին դժվարությամբ են փոխանցվում: Նոր բառերը սովորաբար ժառանգում են նախահիմքի կամ միայն ուղղակի (առավել հաճախ), կամ միայն փոխաբերական (համեմատաբար սակավ) իմաստները: Այսպես, **աքլորանալ** («1. Գոռզգանալ, սնապարծել: 2. Հոխորտալ» [ԱՀԲԲ]),

**Էշանալ** («1. Ապուշ կարել, հիմարանալ: 2. Քարանալ, անելիքը չիմանալով՝ սառած մնալ: 3. Խաբվել, մոլորվել» [ԱՀԲԲ]), **օջանալ** («1. Օձապտույտ ձև ստանալ: 2. *փխք*. Փանտանալ, չարանալ, խստանալ: 3. *փխք*. Նեղել, տանջել» [ԺՀԼԲԲ])<sup>10</sup>, **շնանալ** («1. Շնություն անել, պոռնկություն անել: 2. Խորամանկ՝ վարպետորդի դառնալ» [ԱՀԲԲ]) և նման կազմությամբ բառերը ժառանգել են նախատիպերի միայն հատկանշային (փոխաբերական) իմաստները և չեն նշանակում «աբրո՛ր՝ էշ՝ օձ ևն դառնալ»: Եվ ընդհանրապես հատկանշային նշանակությունները հեշտ են փոխանցվում բաղադրություններին<sup>11</sup>: Այդ պատճառով էլ ածականների փոխաբերական իմաստները (որոնք նույապես հատկանիշ են ցույց տալիս) անցնում են նույնահիմք բայերին և գոյականներին, ինչպես՝ **Փափուկ ս.** [...] 7. *փխք*. Մեղմ բնավորություն ունեցող, մեղմաբարո, հեզ, բարի, սիրալիք: [...] 8. *փխք*. Փափկասուն: 9. *փխք*. Նորը ձևով՝ մեղմությամբ ասված՝ արտահայտված: 10. *փխք*. Բարեսիրտ, գթառատ, զգայուն: [...] 14. *փխք*. Նրբանկատություն՝ փափկանկատություն պահանջող: 15. *փխք*. Մեղկ, հեշտալի: 16. *փխք*. Չգայուն, թույլ<sup>12</sup>: Եվ **Փափկել չք.** [...] 4. *փխք*. Մեղմանալ, համառությունը՝ կամակորությունը անցնել, զիջող դառնալ: 5. *փխք*. Խղճով դառնալ, հոգատար՝ զգայուն դառնալ, **Փափկություն գ.** [...] 2. *փխք*. Նրբություն, քնքշություն: [...] 4. *փխք*. Մեղմություն: 5. Նրբանկատություն, փափկանկատություն [ԺՀԼԲԲ]: Նաև՝ **Սառք սծ.** [...] 10. *փխք*. Կրքից՝ ավյունից՝ խանդից գուրկ, ոչ կրակոտ: 11. *փխք*. Չգացմունքայնությունից գուրկ, բանականություն կշռադատված՝ հավասարակշռված: 12. *փխք*. Որևէ բանի նկատմամբ հետաքրքրություն չցուցաբերող, անտարբեր: 13. *փխք*. Սառնարյուն, իր գործողությունների ու վարքագծի մեջ չափազանց գուսպ՝ չափավոր ու հավասարակշիռ: [...] 15. *փխք*. Հոգեկան ջերմությունից գուրկ, խիստ, չոր: [...] 18. *փխք*. Ոչ սիրալիք, սիրո՝ ջերմության զգացմունքից գուրկ, անտարբեր: Եվ **Սառչել չք.** [...] 12. *փխք*. Մեկի նկատմամբ ունեցած զգացմունքը թուլանալ, անտարբեր դառնալ մեկի

<sup>10</sup> «Արդի հայերենի բացատրական բառարանում» այս բառն ունի «օձ դառնալ» նշանակությունը:

<sup>11</sup> Հմմտ. **Ермакова О.**, նույն տեղում:

<sup>12</sup> Ի դեպ, «Արդի հայերենի բացատրական բառարանում» այս բառի 23 նշանակություններից ոչ մեկի մոտ չկա *փխք*. նշումը:

նկատմամբ: 13. *փխբ.* Ջերմությունը՝ բուռն զգացողությունը կորցնել: *Սառնությունը* գ. [...] 5. *փխբ.* Անտարբերություն: 6. *փխբ.* Աշխուժություն՝ ավյունի բացակայություն: 7. *փխբ.* Չորություն, անբարեհամբուրություն: 8. *փխբ.* Սառնասրտություն [ԱՀԲԲ]:

**Բանալի բառեր** – *բառակազմություն, բառակազմական հիմք, փոխաբերական իմաստ, փոխանունություն, դարչվածայնացած իմաստ, ածականների, մակբայների, բայերի կազմություն:*

**МАНУК ФАЛАКЯН – Усвоение переносных значений производящих основ аффиксальных слов армянского языка.** – Переносные значения производных слов возникают по двум причинам. Они могут быть унаследованы от переносного значения производящей основы или самостоятельно возникать в новом производном слове. В большинстве случаев наследуются метафорические значения базисного слова, а метонимные значения передаются новому слову редко, только в единичных случаях.

Более регулярно переносные значения производящей основы усваивают такие производные слова, у которых лексические значения не фразеологичны. Слова с фразеологичной семантикой в большинстве случаев не усваивают переносного значения основы.

**Ключевые слова:** *словообразование, словообразовательная основа, переносное значение, метонимия, фразеологичность лексического значения, образование прилагательных, деепричастий и глаголов.*

**MANUK FALAKYAN – Assimilation of the Figurative Meaning of the Components in Derivatives.** - The figurative meaning of compound words can be formed in two ways . As these words consist of two or more components , one of the components may modify the other, and the figurative meaning of the base word will define the meaning of the whole modifier. There are some well-established permanent compound modifiers that have become solid over a longer period . In most cases the metaphoric meaning of the component is transferred. As for their metonymic meanings, usually they are not kept in the new word. Components with phraseological semantics don't take the figurative meaning of the base words.

**Key words:** *word-formation, morpheme, figurative meaning, metonymy, phraseological meaning, formation of adjectives, adverbs and verbs.*

**ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԱՐԳԻ ՄԱՄՈՒԼՈՒՄ**

Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կալում, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր<sup>1</sup>:

Ժամանակակից հայերենի դարձվածաբանական համակարգում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում դարձվածքային նորաբանությունները, որոնք ավելի լավ են բնութագրում մեր՝ փոփոքկալից, քաղաքական հարուստ իրադարձություններով լի կյանքը, որը բնութագրելու համար ավելի շատ են պահանջվում խոսքի դիպուկություն, կանոնավորություն ու մտքի արտահայտման յուրահատուկ հակիրճություն:

Առաջին հայացքից թվում է, թե մեր օրերում դարձվածքներ չեն առաջանում, այսինքն՝ դարձվածքային նորաբանություններ չեն լինում: Մինչդեռ իրականում, ինչպես լեզվում եղած արմատների ու ածանցների գոգորդմամբ ու համադրմամբ կազմվում են նոր բառեր (կամ եղածները նոր իմաստներ են ձեռք բերում), այնպես էլ, նոր երևույթներ ու հարաբերություններ պատկերավոր կերպով բնութագրելու կամ անվանելու համար մարդիկ ստեղծում են նոր դարձվածքներ կամ եղածներին նոր իմաստներ են վերագրում, կատարվում են դարձվածքների իմաստների տեղաշարժեր, դարձվածքներ են պատճենվում այլ լեզուներից:

Դարձվածքային նորաբանությունները պայմանավորված են հասարակական-քաղաքական կյանքի հախուռն փոփոխություններով և հանդես են գալիս նրա բոլոր ոլորտներում ու լեզվի բոլոր ոճերում և հատկապես մամուլում: Դարձվածքային նորաբանությունները դասակարգվում են չորս խմբի՝ դարձվածքային նորաբանություններ, պոտենցիալ դարձ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 296:

վածքներ, դիպվածային դարձվածքներ և հեղինակային դարձվածքային նորաբանություններ<sup>2</sup>:

Դարձվածքի ընդհանուր իմաստի և դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի մեջ գոյություն ունեցող հարաբերության տեսակետից հայերեն դարձվածքները բաժանվում են երեք խմբի՝ դարձվածքային սերտաճում, դարձվածքային միասնություն և դարձվածքային կապակցություն:

Դարձվածքային սերտաճումները իմաստային տեսակետից բառային անբաժանելի, անքակտ այնպիսի կապակցություններ են, որոնց մեջ բառերը, ամբողջապես կորցնելով հանրորեն ընդունված իրենց բառային իմաստները և տվյալ կառուցվածքում վերաիմաստավորվելով, դառնում են դարձվածքի սոսկ ընդհանուր, ամբողջական իմաստի բաղադրատարր՝ չցուցաբերելով իրենց բառային և իմաստային ինքնուրույնությունը:

Մեր ուսումնասիրած մամուլի էջերում հանդիպել ենք դարձվածքային սերտաճման նորաբանությունների հետևյալ օրինակների՝ **հոգու ճարտարապետ** (Իրավաբանը մարդկային հոգու ճարտարապետն է) («Ոգնի», 30.04-11), **նարնջագույն անչրի** (Նարնջագույն անձրևի սպասումով) («Ավանգարդ», 27.04-11), **գրքային տերևաբախ** (Գք. 12.09.11), **հավային համերաշխություն** («Ավանգարդ», 23.12-11), **դալարի դիոլ** (Այդ երբ էր, որ քաղաքական գործիչներից մեկին գործող նախագահը «Դատարկ դիոլ» անվանեց, հետագայում վերջինս դարձավ նրա ամենահավատարիմ զինակիցներից ու ջատագովներից մեկը) («Հրապարակ», 30.04.11), **ճամբար փախածներ** (Ճամբար փախածների անունները թվարկելը պարզապես անհնարին է) («Հրապարակ», 30.04.11):

Դարձվածքների մյուս տեսակը դարձվածաբանական՝ դարձվածքային միասնությունն է: Դարձվածքների այս խմբի մեջ մտնում են դարձվածաբանական այնպիսի միավորներ, որոնք դարձվածքային սերտաճումների նման իմաստաբանորեն նույնպես անբաժան են և ամբողջական, բայց, ի տարբերություն նախորդների, սրանց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձ-

---

<sup>2</sup>Տե՛ս **Քաղիկյան Խ.**, Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000, էջ 109:

վածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին, փոխաբերական իմաստով: Գարձվածքների այս կարգին առաջին հերթին բնորոշ է պատկերավոր իմաստը: Գարձվածքային սերտաճումը և դարձվածքային միասնությունը՝ իբրև իմաստային տեսակետից անբաժանելի միավորներ և բառերի համարժեքներ, հաճախ միավորվում են մեկ խմբի մեջ և կոչվում են խոյուններ կամ խոյունատիկ արտահայտություններ: Մամուլում մեզ հանդիպած դարձվածքային միասնություններ են հետևյալները՝ **բրեժնեյան համբույրներ** («Ոգնի», 31.05.11), **վարդերի հեղափոխություն** («Ավանգարդ», 28.09.11), **ղնովի ժպիտ** (ԳԹ, 12.09.11), **սառը բջնամանք** (ԳԹ., 12.09.11) և այլն:

Իդիոմներից տարբերվում են դարձվածքային կապակցությունները և դարձվածքային արտահայտությունները, որոնք իմաստային տեսակետից անբաժան բառերի համանշանակներ չեն, այլ իմաստաբանորեն տարրալուծվող դարձվածքներ, որոնց դարձվածքային ընդհանուր իմաստը բխում է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստներից<sup>3</sup>: Սրանց առանձնահատկությունն այն է, որ ունեն իրենց զուգահեռ ազատ կապակցությունները, դարձվածքի մեջ մտնող բաղադրիչները հաճախ կարող են փոխարինվել հոմանիշ բառերով: Գարձվածքային նորաբանություններում ևս շատ ենք հանդիպել դարձվածքային կապակցության օրինակների, ինչպես **արաբական կրակ, արաբական գարուն, անառակ որդու ուրացումը, դարչնագույն ամպեր, դեղին անչրև, կանաչ քախիծ, նարնջագույն անչրև** և այլն:

Լեզվում մեծ թիվ են կազմում հատկապես մարմնի մասերի անվանումներով բաղադրված դարձվածքային միավորները: Վիճակագրական տվյալներով՝ լեզուների դարձվածքային ֆոնդի համակարգում քվային քանակով մարմնի մասերի անուններով կազմված դարձվածքային համակարգն է գերիշխողը (գլուխ բառով՝ 691, աչքով՝ 660, սրբտով՝ 395, ձեռքով՝ 380, ոտքով՝ 345, բերանով՝ 268, լեզվով՝ 180, քրով՝ 166, ականջով՝ 145, մատով՝ 78, ատամով՝ 65, մագով՝ 40 և այլն): Մարմնի մասերի անվանումներով մեզ հանդիպել են հետևյալ նորաբա-

---

<sup>3</sup> Տե՛ս **Սուրիսայան Ա.**, նշվ. աշխ., էջ 303:

նությունները՝ *«հանդիսասրեսի» աչքերով հեղուկ* (Եթե արաբական մյուս երկրներում տեղի ունեցող իրադարձություններին հետևում էինք գուտ «հանդիսատեսի» աչքերով... («Երկիր», 31.01.12): *Թախիծ ծորաց աչքերից* (Ցանկացավ այցելել հոր շիրիմին. թախիծ էր ծորում աչքերից) («Ավանգարդ», 28.03.12): Ինչպես նաև՝ Եվ հենց համախոհների այդ խումբը Ռուսաստանը դուրս բերեց քաղաքացիական պատերազմի փակուղուց, *կոպրեց մեջքը ահաբեկչության*, («Երկիր», 17.01.12): Իսկ ավելի լավ է չկորցնել իրականության գագաղությունը և *ուրբերը մեկնել սեփական կուսակցության վերմակի չափով* (ՀՀ, 18.11.11), *«Ուրբը թռչակիդ չափով մեկնիր»* («Ավանգարդ», 14.03.12): Նշենք նաև, որ վերջին երկու դարձվածքային նորաբանությունները ստեղծվել են *ուրբը իր կարպեպի (վերմակի) չափ մեկնել* դարձվածքի նմանողությամբ և նույն իմաստն ունեն:

Ինչպես գիտենք, ժողովրդախոսակցական դարձվածքային համակարգում մարմնի մասերի անվանումներով ԳՄ-ներից հետո երկրորդ տեղն են գրավում տվյալ ժողովրդի ընտելացրած կենդանիների ու թռչունների, ինչպես նաև իր շրջապատում ապրող կենդանիների, թռչունների, գազանների, սողունների անվանումներով կազմված ԳՄ-ները: Մամուլում կենդանիների ու թռչունների անվանումներով կազմված բազմաթիվ նորակազմությունների ենք հանդիպում: Այսպես՝ *«Ամենաչքեղ փայլանով էլ էշը նույն էն է»* («Ավանգարդ», 15.02.12), *ոսկեգօծ պոչով սվանակ* (Նա պիտի ձգտեր «Բենթլիի» կամ իր ժամանակների չափանիշով, գոնե ոսկեգօծ պոչով ավանակի): («Երկիր», 26.11.11): *Առնկապազը հրահրել* («... Տարածքային կառույցների առավել ակտիվ անհատներին պետական կառույցներում նոր պաշտոններով գայթակղելով՝ ուզում են կուսակցությունից առնետավազը հրահրել): («Երկիր», 28.01.12): *Ջայլամի քաղաքականություն վարել* (Սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններն էլ վարում են ջայլամի քաղաքականություն) («Ավանգարդ», 28.03.11):

Դարերի ընթացքում, ելնելով կյանքի փորձից, ժողովուրդը գույներն էլ է իմաստավորել՝ մի գույնի հետ կապելով բախտավորության ու կյանքի, մյուսի հետ՝ դժբախտության ու մահի պայմանականություն, և այդ-

պիտով գույների անվանումները դարձել են կյանքի այս կամ այն կողմի խորհրդանիշ: Եվ իսկապես, մարդը դարեր շարունակ իր գործունեության ընթացքում, սովորաբար սև գույն ունեցող իրերն օգտագործել է տխուր առիթներով՝ որպես սգո, ողբերգության, անհաջողության նշան կարմիրը՝ ընդհակառակը՝ ուրախության, հաղթանակի, տոնահանդեսի, կանաչը՝ գարնան, կյանքի ծաղկունքի, երիտասարդության, կապույտը՝ երազանքի, նույնիսկ ցնորքի, անհասանելության, սպիտակը՝ մաքրության, անաղարտության, պարզության և այլն, թեև տարբեր ժողովուրդներ գույների նկատմամբ ունեն տարբեր վերաբերմունք:

Ինչպես համագործածական ԴՄ-ներում, այնպես էլ դարձվածքային նորաբանություններում քիչ չեն այնպիսի դարձվածքները, որոնք կազմվել են գունանունների և այլ բառերի գուգորդմամբ: Այսպես լրագրողը **կանաչ** ածական գունանունը, գուգորդելով **քախիծ** գոյական անվան հետ կազմել է **կանաչ քախիծ** (ԳԹ, 12.09.11) դարձվածքային նորաբանությունը, որի միջոցով թախծին կարծես թե փորձել է լուսավորություն հաղորդել: Վարդագույն գունանունով խորհրդանշվում է ուրախ, պայծառ, տրամադրություն, ցանկալի, երջանիկ կյանք: «**Կյանքին վարդագույն ակնոցով նայել**» դարձվածքի նմանողությամբ մանուկում կազմվել է նորագույն ԴՄ՝ **վարդագույն** ածականը համադրելով հեռուստատեկրան գոյականի հետ: Այսպես՝ **Մեր վարդագույն հեռուստաէկրանից** մեզ է հրամցվում ծաղկող ու զվարճացող «Վիրտուալ» մի երկրի պատկեր («Երկիր», 28.01.12):

Խորհրդանշական բազմազան իմաստներ ունի նաև **սև** ածականը, որով ավելի շատ ԴՄ-ներ են կազմվում, քան մյուս գույների անուններով: Այսպես՝ «Տեսել է նաև **սպվերը սև արևի**» («Երկիր», 04.11.11): Կամ օրինակ՝ **խելքը հացի հեպ ուրեղ** դարձվածքի նմանողությամբ լրագրողը ստեղծել է **խելքը սև խավիարի հեպ ուրեղ** դարձվածքային նորաբանությունը՝ «Բայց նրանք իրենց խելքը **սև խավիարի** հետ հո չեն կերել, որ սովորական շահույթներով բավարարվեն» («Ավանգարդ», 23.12.11): Մանուկում հանդիպել են նաև այսպիսի օրինակներ՝ **դեղին անչրե, նարնջագույն անչրե, անգույն օրեթ** և այլն:

Գրավոր խոսքը՝ գրական ստեղծագործությունը, գիրքը, հոդվածը և այլն, սովորաբար վերնագիր են ունենում: Ահա այստեղ էլ դարձյալ անփոխարինելի է դարձվածքի դերը. որպես վերնագիր ճիշտ ընտրված դարձվածքը շատ տարողունակ կերպով է ներկայացնում հոդվածի կամ ստեղծագործության բովանդակությունը: Մի քանի տասնյակից անցնող բազմաբնույթ լրագրերը (ըստ իրենց ուղղվածության ու պատկանելության) մեր դարձվածքային հարուստ շտեմարանից ընտրում են իրենց թերթերի ուղղվածությանն ու հոդվածների բնույթներին համապատասխան դարձվածքներ ու դրանցով ոճավորում իրենց խոսքը, ներգործում ընթերցողների վրա, ընդգծում ասելիքի կարևորությունը և ավելի հետաքրքիր դարձնում իրենց թերթերը:

Լրագրողները մեծ մասամբ վերցնում են պատրաստի դարձվածքներ ու անփոփոխ գործածում որպես վերնագրեր: Այսպես՝ **«Տաշած քարը գետնին չի մնա»**, **«Սառույցը շարժվեց»**, **«Ուս ուսի տված»**, **«Գե արի ու էջը ցեխից հանի»**, **«Կարմիր լույս վառել»**, **«Երկաթե դիմակ»**, **«Որքան ջրեր են հոսել»** և այլն:

Լրագրողները, սակայն, բացի պատրաստի դարձվածքներից, վերնագիր են ընտրում իրենց ստեղծած դարձվածքային նորաբանություններից: Օրինակ՝ **«Ուրբը մեկնել թռչակի չափով»** («Ավանգարդ», 14.03.12), **«Ցուցակն ընդ ցուցակսն»** («Երկիր», 25.11.11), **«Հավային համերաշխություն»** («Ավանգարդ», 23.12.11), **«Բրեժնևյան համբույրներ»** («Ոգնի», 31.05.11), **«Գրքային տերևաթափ»** (ԳԹ, 1.04.11), **«Չյունն օդում չեն բռնում»** («Երկիր», 09.02.12):

Լրագրողները երբեմն էլ դարձվածքները օգտագործում են որպես վերնագրի կամ արդեն եղած դարձվածքի մի բաղադրիչ մաս: Այդպիսի վերնագրեր շատ են հանդիպում: Այսպես՝ **«Շառից, տեսախցիկներից հեռու»** («Երկիր», 09.12.12), **«Գյուղացիական դաշտից «տեղափոխել» են քաղաքացիական դաշտը»** («Ավանգարդ», 27.04.11), **«Նարնջագույն անչրևի սպասումով»** («Ավանգարդ», 27.04.11), **«ՀՀԿ-ն ժողով արեց ու որոշեց՝ սալյուրը ներսում են խփում»** («Երկիր», 03.11.11), **«Էլի քաղաքացու «գրպանին» են կաչում»** («Երկիր», 02.02.12) և այլն:

Ինչպես արդեն նշեցինք, շատ դարձվածքներում ևս լրագրողները, հաճախ որպեսզի ավելի սաստկացնեն դարձվածքի ներգործուն ուժը, ավելի խիստ ներգործեն ընթերցողի վրա, ինչպես նաև ելնելով հողվածի ոգուց և ուղղվածությունից, դարձվածքի կազմում նույնպես փոփոխություն են կատարում: Երբեմն դարձվածքից որևէ բառ են հանում, երբեմն՝ ավելացնում, ավելի հաճախ բարբառային և ժողովրդախոսակցական դարձվածքները բերում են գրական տեսքի՝ աշխատելով չխաթարել նրա իմաստը, որպեսզի այն չանդրադառնա դարձվածքի բովանդակային կողմի վրա և երկիմաստության տեղիք չտա: Օրինակ՝ *սևին սապոնն ինչ կանի, խեին՝ իրսպր* ժողովրդախոսակցական դարձվածքը «Երկիր» թերթը ոչ միայն կրճատում է, այլ փոխում *սապոն* բարբառային բառը *սևին օճառն ինչ կանի* ձևով, կամ *սայր փեղից չի շարժվում* դարձվածքը «Ավանգարդը» ձևափոխել է *սայր մինչև օրս մնում է փեղում* ձևով, իսկ, օրինակ, *խելքը հացի հեկ ուրեկ* ժողովրդախոսակցական դարձվածքը «Ավանգարդը» ձևափոխել է *խելքը սև խավիարի հեկ ուրեկ* ձևով, կամ *ուրիշի չեռքով կրակից շագանակներ հանել* դարձվածքը «Ավանգարդ» թերթը ձևափոխել է *արարների չեռքով Սիրիայից «շագանակներ»* հանել ձևով և դարձրել նյութի վերնագիր՝ «*Արարների չեռքով Սիրիայից «շագանակներ»*» հանելու մեխանիկան» («Ավանգարդ», 23.12.11): *Երկու կրակի (ջրի, քարի) արանքում* դարձվածքը «Ազգ» թերթը ձևափոխել և նյութի վերնագիր է դարձրել հետևյալ կերպ՝ «*Ռեալ պոլիտիկի և մարդու իրավունքների արանքում*» («Ազգ», 22.02.11), իսկ «Երկիր» թերթը նույն դարձվածքը գործածել է հետևյալ երկու տարբերակներով՝ «*Ռուսական մուրճի և արևմտյան սայի արանքում*» («Երկիր», 25.11.11) և «*Երկու փնտրվարողների արանքում*» («Երկիր», 05.11.11):

Եվ այսպես, մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ժամանակակից մամուլում շատ են հանդիպում բազմաթիվ դարձվածքային միավորների, որոնց մի մասը լայն տարածում գտած համագործածական դարձվածքներ են, մի մասը՝ լրագրողների կողմից փոփոխությունների ենթարկված, մի մասն էլ՝ նորաստեղծ: Վերջիններս կարող են ընդունվել ու

դառնալ համագործաձայն, դրանց մի մասն էլ կարող է շրնդունվել և մնալ որպես դիպվածային:

**Քանալի բառեր** – *դարձվածք, դարձվածքային նորարանություն, պո-  
տենցիալ դարձվածքներ, դիպվածային դարձվածքներ, հեղինակային  
դարձվածքային նորարանություններ, դարձվածքային սերտանում,  
դարձվածքը վերնագիր:*

**РЕБЕКА МАРГАРЯН – Фразеологические неологизмы в современной прессе.** – Наше исследование показало, что в современной прессе можно ежедневно встретить фразеологические единицы, часть которых является общеупотребительными фразеологизмами. Одна часть подверглась изменениям журналистами, другая же – была создана ими. Подобные фразеологизмы могут быть приняты журналистами и народом и стать общеупотребительными, или же быть не признанными и остаться в качестве случайных фразеологизмов.

**Ключевые слова:** *фразеологизм, фразеологический неологизм, потен-  
циальные неологизмы, случайные фразеологизмы, фразеологические сращения,  
фразеологическое единство, название фразеологизма.*

**REBEKA MARGARYAN - Idiomatic neologisms in modern press.** - Our study has shown that numerous phrasal units can be found in modern media every day. Some of these units are the widespread commonly used phrases; some changed by journalists and some newly created. The latter can be accepted by other journalists and the people and become commonly used; some part of these may not be accepted and remain as random.

**Key words:** *phrase, phrasal neologism, potential phrases, random phrases,  
phrasal concretion, phrasal cohesion, phrase headline.*

**ԱՐԱԲԵՐԵՆԻՑ, ՊԱՐՍԿԵՐԵՆԻՑ ԵՎ ՀՈՒՆԱՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ  
ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ Մ. ՀԵՐԱՅՈՒ  
«ՋԵՐՄԱՆՑ ՄԻԻԹԱՐՈՒԹԻՒՆ» ԵՎ Բ. ՍԵՐԱՍԱՏՅՈՒ  
«ԳԻՐՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ» ԵՐԿԵՐՈՒՄ**

Միջնադարյան գիտական մատենագրության մեջ իրենց բովանդակությամբ և լեզվական իրողություններով աչքի են ընկնում հատկապես բժշկագիտական աշխատությունները: Դրանք հիմնականում կրում են արաբական գիտության ազդեցությունը: Հայ բժիշկները, արաբական բժշկության նվաճումներն օգտագործելով, չեն դառնում կրկնօրինակողներ, այլ ստեղծում են ինքնատիպ երկեր, որոնց մեջ առանձնանում է հատկապես Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատությունը: Դեղաբուժության մեջ Հերացին առաջնային տեղը տալիս էր բուսաբուժությանը՝ ելնելով ինչպես հայկական բժշկության, այնպես էլ Արևելքի զարգացած երկրների դարավոր փորձից: Ուստի պատահական չէ, որ «Ջերմանց մխիթարութիւն» երկում գործածված են մեծ թվով բուսանուններ, որոնց մի մասը փոխառված է այլ լեզուներից, մասնավորապես՝ արաբերենից, պարսկերենից ու հունարենից: Արաբական գիտությունը, միջնադարում հասնելով էական բարձունքների, մեծ դեր է կատարել հայ գիտական մտքի զարգացման գործում: Միջին հայերենի փոխառությունների մեծագույն մասը կազմում են հենց արաբերեն բառերը: Հաճախ հնարավոր չէ ճշգրիտ որոշել մի ամբողջ շարք բառերի փոխառության անմիջական աղբյուրը, այսինքն՝ տվյալ բառը ուղղակիորեն արաբերենի՞ց կամ պարսկերենի՞ց, թե՞ այդ լեզուներից որևէ մեկի միջնորդությամբ է հայերենին անցել: Այն բառերը, որոնք պարսկերենում և արաբերենում ունեն համարժեքներ, ինչպես նաև միջին հայերենում չեն դրսևորվում տառադարձության տարբեր արտահայտություններով, մենք համարել ենք արաբական փոխառություններ՝ նկատի ունենալով արաբական գիտության այն մեծ ազդեցությունը, որ կար «Ջեր-

մանց մխիթարութիւն» երկը ստեղծելու ժամանակաշրջանում: Ուշ միջնադարում Սեբաստիայում իր վերածնունդն ապրեց հայ բժշկագիտական միտքը: Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկության տունարի» երկը կարող է դասվել միջնադարյան հայ գործնական բժշկության կարևոր արժեքների շարքը: Այս աշխատանքում նա անդրադարձել է ներքին հիվանդություններին, նյարդային համակարգի զանազան ախտահարումներին, շնչական ուղիների, սրտի, լյարդի, երիկամների, փայծաղի և սեռական օրգանների հիվանդություններին: Հետևելով իրենից առաջ ապրած հայ բժշկապետների տեսակետներին, ինչպես նաև հենվելով իր բժշկական փորձից եկող եզրահանգումների վրա՝ Բ. Սեբաստացին որևէ հիվանդություն նկարագրելիս նախ խոսում է տվյալ հիվանդությունն առաջացնող պատճառների մասին, իսկ հետո ներկայացնում է դրանց բնորոշող ախտանիշներն ու բուժման ձևերը: Բունիաթ Սեբաստացին իր աշխատությունը գրել է 1630 թ., այսինքն՝ Մ. Հերացու երկից 446 տարի անց: Մեզ հետաքրքիր էր տեսնել, թե ուշ շրջանի հեղինակը բժշկագիտական եզրերը գործածելիս վերոնշյալ լեզուներից որին է նախապատվությունը տալիս: Ուսումնասիրությունից ակնհայտ դարձավ, որ արաբական փոխառյալ եզրերը գերակշռում են, այսինքն՝ թե՛ վաղ և թե՛ ուշ միջնադարում մեր բժիշկները մեծապես օգտվել են արաբական գիտության նվաճումներից:

Մ. Հերացին խնդրո առարկա երկում գործածել է արաբերենից փոխառված մեծ թվով բժշկագիտական բառեր, որոնք ոչ միայն տարբեր հիվանդություններ նշանակող, այլև կազմախոսության և դեղագործության բնագավառներին առնչվող անվանումներ են: ա) *Հիվանդություններ* (թվով՝ 20)՝ **դեկ** - հյուծող տենդ, **գուգամ** – հարբուխ, **թաշանուճ** - հյուսվածքի կամ մարմնի որևէ մասի կծկում, ստնգանք, **թուխմայ** - ստամոքսի խցանում, **խումրայ** - մաշկային սուր բորբոքային հիվանդություն, կարմիր քամի, **կոլինջ** – որովայնի սուր ցավ, **հումայի մուհրիղայ** – այրող ջերմ, տենդ, **հումմայի եաիմիայ** - միօրյա ջերմ, **հարսանիթե** - կարմրուկ, **դպնայիպայ** - եռօրյա օրընդմեջ ջերմ, **նոպայ** - հիվանդագին պրոցեսի հանկարծակի սրացում, **նուզլայ** - հարբուխ, **շահմի** - ճարպային ուռուցք, **շատրալ ըղբ** // **շատր ալ դիպ** - ընդմիջվող ջերմ, **շաւսայ** -

լանջամիզի բորբոքում, **սավտայի** - սիրուց խելագարված, **սարաքան** - քաղցկեղ, **սիլ** - թոքախտ, **սքթայ** - ուղեղի կաթված: ք) *Կազմախոսություն* (թվով՝ 2)՝ **կիֆալ** - երակ, որից արյուն են առնում, կեֆալիկ երակ, **սափն** - սաֆեն երակ: գ) *Դեղագործություն* (թվով՝ 22)՝ **ակրաբադին** // **ախրապատին** - դեղագիրք, **այարիճ** -բաղադրյալ դեղ, **ափիոն** // **աֆիոն** - ափիոն, **եսրիճփեկրայ** - մի տեսակ դեղախյուս, **թրպուք** - ուժեղ ներգործող լուծողական, **իսվիտաճ** // **սպիտաճ** - սպիտակադեղ, **կուրս** // **դուրս** - գնդիկաճն դեղահատ, պաստիլ, **հապ** - հաք, դեղահատ, **ճոսրիչ** - խյուս, **մաճուն** - դեղախյուս, **մուպուխ** - եփուկ, խաշուկ, **մորիամ** - քսուք, ծեփոն, սպեղանի, **նուկրայ** - դեղորայք եփելու աման, **նուսխա** - դեղատոմս, **սուք** - պատրաստուկ, **սդուտ** - քիթը քաշելու դեղամիջոց, **սփուփ** - դեղափոշի, **տապաշիր** - հնդկեղեգի մոխիրը՝ թրջած և գնդաճն չորացրած, **տլէ** - կակղացուցիչ դեղամիջոց, սպեղանի, **տիմէտ** - ջերմախյուս, տաք ծեփելիք, **շիպ** - շիբ, շարապ - օշարակ:

Մխիթար Հերացին իր բժշկարանում գործածել է արաբերեն այլ բառանուններ, որոնք վերաբերում են ընդհանուր բժշկագիտությանը: Այդ կարգի բառերից են՝ **բուխար** - գոլորշի, **բուրիան** // **բուրան** - ճգնաժամ, **թպտիր** // **թուպիր** - բուժում, **խլտ** - հեղահյուք, **կարուրայ** - միզաման, **հոկնա** - հոգնա, կլիզմա, **մաճաս** - զարկ, պուլս, **մուփառեհ** // **մուֆառեհ** - 1. ա. կազդուրիչ, 2. գ. կազդուրիչ դեղամիջոց, **շառոտել** // **շառտել** - կտրվածք անել, **պաղամ** // **պղամ** - լորձ, մաղձ, **սփրայ** - դեղին մաղձ, **փատլայ** - մարմնի մեջ մնացած ավելորդ, անպետք նյութերը:

Ինչպես նկատում ենք, Հերացին տենդեր է առանձնացրել՝ միօրյա տենդ՝ **հունմայի եսիմիայ**, եռօրյա օրընդմեջ ջերմ՝ **դպնայիպայ**, ընդմիջվող ջերմ՝ **շատրալ ըրք**, այրող ջերմ՝ **հունայի մուերիդայ**, հյուծող տենդ՝ **դեկ**: Հարբուխի համար երկու տարբեր բառ է գործածում՝ **գուգամ**, **նուզլայ**, որոնք հոմանիշ են և անցել են պարսկերենին: Այսպիսով, արաբերենից փոխառյալ բժշկական բառ-տերմինները թվով 56-ն են: Ըստ բառարաններում եղած վկայությունների՝ դրանք առաջին անգամ հանդիպում են «Ջերմանց մխիթարություն» երկում: Պետք է նշենք նաև, որ բժշկարանում գործածված շուրջ հինգ տասնյակ արաբերեն բժշկագիտական բառ-տերմիններից միայն հատուկենտ բառեր են վերապրել

ժամանակակից գրական հայերենում՝ հապ (հաբ), **հոկնայ** // հուկնայ (հոզնա), **նուպայ** // նուպէ (նուպա), շիպ (շիբ):

Բժշկությանը վերաբերող պարսկերեն բառերն արաբերենի համեմատությամբ մեծ թիվ չեն կազմում. մի հանգամանք, որը պայմանավորված է միջնադարյան հայ իրականության մեջ պարսկական բժշկագիտության թույլ ազդեցությամբ: Այսուհանդերձ, հայ բժշկագիտության դասական հեղինակների գործերը վկայում են որոշակի թվով պարսկերեն բժշկական բառ-տերմիններ, որոնք իմաստային մասնավորմամբ հիմնականում տարբեր հիվանդությունների ու ախտահարումների, բուսական և կենդանական ծագում ունեցող զանազան դեղանյութերի անվանումներ են<sup>1</sup>: Այսպես, Հերացին իր «Ջերմանց մխիթարութիւն» երկում գործածել է այդպիսի 10 բառ՝ ա) *Հիվանդություններ՝ ընդհանուր բրժշկությանն առնչվող բառանուններ՝ քրսամ* - լանջամիզի բորբոքում, **հու** - արյունոտ քարախ, **մարաշայ** - արյունոտ խոց, **սարսամ** - մենինգիտ, բ) *Դեղանյութեր՝ անգուժատ // անկժատ* - գարշահոտ բուսական խեժ, **լախլախայ** - անուշահոտ քսուք, **սրքնճուպին // սրքնճպին** - քացախամեղր, **քաֆուր** - քափուր, **քիթրայ // քիթրէ** - գազ բույսի ցողուններից ստացվող խեժ:

Հերացին ընդհանուր բժշկությանն առնչվող հունարեն 27 բառ է գործածել: Դրանց մեծ մասը հիվանդությունների, մասնավորապես՝ ջերմի տեսակների անուններ են: Սա, իհարկե, բնական է, քանի որ «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության հիմնական նպատակը հենց ջերմի տեսակները ներկայացնելն է, իսկ ինչպես արդեն նշել ենք, Իմաստուն բժիշկը, որպես օրինաչափություն, տվել է նաև հիվանդության կամ ջերմի օտար, այս դեպքում՝ հունարեն անվանումը: *Բժշկությանը վերաբերող* հունական փոխառյալ բառերը հետևյալն են՝ **անփիլիոս // անփիլոս**<sup>2</sup> - ջերմի տեսակ, **ափիմեռինոս** - ամենօրյա ջերմ, **ափիմեռոս** - միօրյա

<sup>1</sup> Տե՛ս **Ղազարյան Ռ.**, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 121:

<sup>2</sup> Չնայած նրան, որ «անփիլիոս // անփիլոս» բառի ծագումը և մեկնությունը գտել ենք միայն **Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի** «Միջին հայերենի բառարան»-ում, սակայն, պետք է նշենք, որ նրանք էլ կասկածով են ստուգաբանում՝ համարելով այն «թերևս հուն. a nefelas» բառից ծագած (ՄՀԲ, 67):

ջերմ, **բասիլիկ** // **բասիլիկե** - բասիլիկ երակ, **դիակայիս** - սուր, այրող տենդ, **եփթեսիստ** - թոքախտ, **ըկտիկոն** - հյուծող, թոքախտային, **իլ** - ըստ հին բժշկության՝ կենդանի օրգանիզմում գոյություն ունեցող չորս գլխավոր տարրերը՝ արյուն, դեղին մաղձ, լորձ, սև մաղձ, իմիտետոստեոս - կիսաերեքօրյա ջերմ, **լիպիրիայ** - ջերմի տեսակ, **կաթուղիկե**<sup>3</sup> բազկի երակ, կարկինոս<sup>4</sup> - քաղցկեղ, **կափսոս** - ջերմի տեսակ, **դլմոնայ**<sup>5</sup> // **կիմուլիայ** - կավեղեն հող, որ գործածվել է իբրև օճառ և դեղ, **միթոիտոս** - բաղադրյալ հակաթույնի տեսակ, **ռուստուպիլ** - կարմիր քամի, մաշկի սուր բորբոքային հիվանդություն, **սակամոնի** - սակամոնի բույսից ստացվող խեժանյութ, **սիկառոս** - կոշտ ուռուցք, **նեխիս** // **սինեյսոս** - տևական ջերմ՝ տենդ, **տետոստեոս** // **տետոստեոս** - քառօրյա ջերմ, **տեքսիս** - այրող տենդ, **տիստրիտեոն** – կրկնակի եռօրյա ջերմ, **տրիտեոս** - եռօրյա՝ օրամեջ ջերմ, **փթիոս** - թոքախտ, **փլեդմոնի** // **փլեդմոնի** - ենթամաշկային ճարպաշարակցական շերտի տարածում բորբոքում, **քսանթին խապին** - դեղին մաղձ, **Ֆայդարայ** - դառնահամ:

Բ. Մերաստացին իր բժշկարանում գործածել է արաբերենից փոխառված բժշկագիտական մեծ թվով բառեր, որոնց մեջ գերակշռում են հիվանդությունների անվանումները, դեղագործությանն ու կազմախտությանը վերաբերող բառերն ավելի սակավաթիվ են. ա) *Հիվանդություններ* (թվով՝ 72)՝ **արիլայ** - փտախտ, կերցավ, **եարադան** // **արադան** - դեղնություն, դեղնախտ, **եարադան-ի ասվար** - սև դեղնություն, **գաթը-ը-ռիա** // **գաթ-ըլ-ըռեայ** - թոքացավ, թոքերի բորբոքում, **գաթ-ըլ-սատր** -

<sup>3</sup> «*Կաթուղիկե*» բառը «*կաթուղիկե*» ձևով հանդիպում է 5-րդ դարի մատենագրություններից սկսած՝ «ընդհանրական քրիստոնեական (եկեղեցի)» իմաստով, սակայն միջնադարյան բժշկագիտական աշխատությունների մեջ, այդ թվում նաև «Ջերմանց մխիթարութիւն» երկում գործածված է «*կաթուղիկե*» ձևով և նշանակում է «*մեծ երակ, բազկի երակ*». «*Ջերակն գոր կարէս զկաթուղիկէն առ կամ ի բասիլիկէն*» (124): Քանի որ բառը իմաստավորված է, համարում ենք միջինհայերենյան փոխառություն:

<sup>4</sup> «*Կարկինոս*» բառը նույնպես հունարենից փոխառված է եղել դեռևս գրաբարյան շրջանում՝ «*խեցզեղրին*» իմաստով, մինչդեռ Հերացին այն գործածում է նոր՝ «*քաղցկեղ*» իմաստով. «*Նա այրնէ գայն ցաննէ՝ որ անուանի սարաթան. հորուն կարկինոս ասէ*» (113):

<sup>5</sup> «*Դլմոնայ*» բառը, ըստ Հ. Աճառյանի, հունական փոխառություն է և մեզ է հասել արաբ. Qimāliyya տառադարձությունից աղավաղվելով (Աճ, ՀԱԲ, 3, 169), նույն կարծիքն ունի նաև Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 482):

ստոծանու հատվածի բորբոքում, **գաթըճամ** - կողոսկրերի ներքին բաղանթի բորբոքում, **զիկ** - ջրգողության մի տեսակ, որի ժամանակ փորը ուռչում է տիկի նման, **զուգամ** - քթի լորձաթաղանթի բորբոքում, հարբուխ, **ըռոյաֆ//ռոյաֆ** - քթի արյունահոսություն, **ըսթոխա//ըստըխասայ** – այտուց, **ըսթոխա-իլահնուն** - մկանների այտուց, **ըրքնիսա-** նստատեղի նյարդի բորբոքում (ichias), **էխսի-ըլ-տամ** - լուսնոտություն կամ հիստերիա՝ կապված էնդոկրին խանգարումների հետ, **թաշանուն** - ջրածգություն, կծկումներ, **թարֆ-ի տամս** – արյունահոսություն, **իմթիլա** - շատակերություն, դժվարամարսություն, **ինթիհալ-ի քապտի** - լյարդի բորբոքում, **լերդատապ** (hepatitus), **ինֆիթահ-ի աֆֆահ-ի ըրուք** - արյան բացթողում երակից, **խսհալ** – լուծ, **լակոա** – դիմային նյարդի լուծանք, **խանագիր-** պարանոցի ավշային գեղձերի բորբոքում՝ խոզախտ, **խատար** - վերին և ստորին ծայրանդամների քմրություն, անգգայացում, **խաֆահան** - սրտի արագ և ուժեղ բաբախում, սրտի թրթռում, **էշամ** - քթի պոլիպ, **խնախ** - կոկորդի խեղդամահ անող հիվանդություն, **խնախ-ի քալթի** - խեղդամահություն սրտից, **խորա** – կերցավ, **խուլինն** - որովայնի խիթք, փորի սաստիկ ցավ, **հայգ** – դաշտան, **հասպա** - կարմրուկ, հարսանիք, **հարարաթ-ի յագիգա-** մարմնի բնական ջերմություն, **հարարաթ-ի նառի** - այրող տաքություն, որ լինում է կաթվածի ժամանակ, **հուզագ** - գլխուղեղի նյարդի բորբոքում, **հունմայ-ի մուհրիդա** - բառացի՝ այրող տենդ, **հունմայ-ի ուռուպայ** - չորեքօրյա ջերմ, **դուտրուպ** - մելամաղձոտության տեսակ, **դուրուխ-ըլ- մասանա** - մաշկի ծակոտիների փակում, **ճունուն** - հոգեկան խանգարում, **ճուտամ** - բորոտություն, **մաթիա-** արտադրություն, **մալխուլիա** - մելամաղձություն, **յըդր** - ոտքերի դող, որն առաջանում է վախից, **նուզլայ** - վերին շնչուղիների բորբոքում, **նքրիս//նկրիս** - հողացավ, **պահաղ** - քարաքոս, մանր պալարներ մաշկի վրա, **պաւասիր** - ավելորդ աճած միս, թութք, **պաւասիր-ի անֆ** –քթի մեջ աճած միս, **պաւասիր-ի էմա** -սովորական թութք, **պարաս** - մաշկի ցանային հիվանդություն, **պօհրան** - տազնապ, կրիզիս, **սարա** – ընկնավորություն, **սարսամ** - միջնադարի հայ բժիշկները այս հիվանդության տակ հասկանում էին ուղեղի և նրա թաղանթների հիվանդություն, **սէլաս-ըլ-պավլ** - ականա միզարձակություն, **սիլ** - թոքախտ, բարակացավ, **սոալ** - հագ, **սոալ-ի**

**խաֆիֆ** - թեթև հագ, **սուալ-ի միճաա** - սովորական կամ բնական հագ, **սուպաթ/սուպաթ-ի սահարի** - քնախտավորություն, **սուսոտա** - անոթների կամ ներքին օրգանների խցանում, **սքթայ** - ուղեղային կաթված, **վաճար-ըլ-մաֆասիլ-** հողացավ, **վարամ** - որևէ օրգանի փոքրիկ ուռուցք, պալար, **տալ-ոլ-հայեա** - ձկնամաշկություն, **տայ-ոլ սայլապ** - մազաթափություն, աղվեսացավ, **տայուն-ըլ-ֆիլ** - փղախտ, **տավվար** - գլխապտույտ, **ուֆունաթ** - բորբոքում, **ֆալիճ** - անդամալուծություն, **ֆեսատ** - ֆունկցիայի խանգարում: ք) *Կազմախոսություն* (թվով՝ 6)՝ **ամա-յի տղաղ/ամայ ալիտի դաղ** - բարակ աղիքի ստորին հատվածը՝ գալարադի, **աքալ** - կենտրոնական մեծ երակ, **շախախ** - քունք, **շիրիեան** - գլխավոր զարկերակ, **տմաղ** - ուղեղ, **ուսայլիմ-** ձեռքի երակներից մեկը: գ) *Դեղագործություն* (թվով՝ 22)՝ **ախրապատին** - միջնաղարյան դեղագրքեր դեղաբանության և դեղագործության վերաբերյալ, **այարիճ** (= ճարիշ, մաճուն) - դեղորայքային շիլա, որը շատ տարածված է եղել միջնաղարյան բժշկության մեջ, **այեարիճ** - **ի լուղազիայ** - հատուկ բաղադրությամբ դեղախառնուրդ, որը օգտագործվել է որպես թուլացնող միջոց, **այարիճ-ի Ֆայդարա** - բառացի՝ աստվածային կամ մաքրող դառնություն. օգտագործվել է որպես թուլացնող և որդամող միջոց, **ըտամահիկոն//ւստամահիկոն** - հաբ, որն ունի միզամուղ և լեղամուղ հատկություն, **հապ** - մի քանի դեղամիջոցներից պատրաստված դեղախառնուրդ, **դուրս** - մի քանի դեղամիջոցներից պատրաստված բարդ դեղախառնուրդ, **մորհամ** - բաղադրյալ դեղերի ընդհանուր անուն, որը գործածվում է արտաքին վերքերի վրա դնելու համար, **տմէտ** – սպեղանիով վիրակապ:

*Ընդհանուր բժշկագիտությանը* վերաբերող բառեր՝ **թպտիր** - հիվանդության դարմանում, բուժում, **խլտ** - օրգանիզմի չորս հեղուկներից մեկը՝ արյուն, լորձ, սև և դեղին լեղի, **մահլուճ** - ապաքինված, բուժված, **սաֆրա** - մաղձ՝ դեղին մաղձ, **սէվտա** - սև մաղձ: Բ. Մեքաստացին ևս իր երկում պարսկերեն շատ քիչ բառ –տերմիններ է գործածում: ա) *Հիվանդություններ, ընդհանուր բժշկությանն առնչվող բառանուններ՝* **գալամ** - խոց, վերք, **գէիր** - թույն, թունավոր նյութ, **գիպհան** - կոկորդի ուռուցք, խեղդամահ անող ծանր հիվանդություն, **թոխմա** - շատ ուտելուց առա-

ջացած ստամոքսացավ, դժվարամարսություն, **մատարգատ** - ժառանգական հիվանդություն, **սրածայ** - գեղձերի բորբոքում, **քեապուս** – մրդձավանջ: բ) *Դեղակյություն՝ մինթին* (հապ-ի մինթին) - մի շարք դեղամիջոցներից պատրաստված դեղախառնուրդ, որն օգտագործվում էր որպես միզամուղ: գ) *Կազմախոսություն՝ խուրտա* - ոտքի թաթի մանր ոսկորները, **փին** – ճարպ: Ի տարբերություն Մ. Հերացու՝ Բ. Սեբաստացին հունարենից փոխառյալ ընդամենը հինգ եզր է գործածել՝ **բասիլիկ** - բազկի մեծ երակ, **էլասու** - աղիքի գալարում, ոլորում, **թրիաք** - հակաթոյն, **մանիա** - խենթություն, խևություն, **սպեղանի** - վիրակապ՝ զանազան նյութերից բաղադրված մածուցիկ կաշուն դեղ:

Այսպիսով, երկու հեղինակների երկերի քննությունից պարզ դարձավ, որ՝ ա) թե՛ Հերացին, թե՛ Սեբաստացին ավելի շատ արաբերենից փոխառյալ բժշկագիտական եզրեր են գործածել: բ) Մի շարք հիվանդությունների համար երկու հեղինակներն էլ նշում են արաբերեն միևնույն եզրերը, օր.՝ *հարթուխ՝ գուգամ, նուզլայ, ջղաձգություն՝ թաշանուճ, թոքախար՝ սիլ, ուղեղի կաթված՝ սքթայ, այրող ջերմ՝ հունմայի մուրիղայ*, իսկ բաղադրյալ կամ, այսպես կոչված, *դեղորայքային շիլայի* համար կա երեք եզր՝ **այարիճ, ճոարիձ** (խյուս), **մաճուն** (դեղախյուս): **Հապ//հաք**-ը և **դուրս**-ը հավասարապես գործածվում են որպես մի քանի դեղամիջոցներից պատրաստված դեղախառնուրդ: գ) Միևնույն հիվանդության կամ դեղորայքի համար երկու բժիշկներին էլ գործածում են թե՛ արաբերեն և թե՛ պարսկերեն եզրեր, օրինակ՝ Բ. Սեբաստացին *դժվարամարսություն* եզրի համար գործածում է արաբերեն **ինթիլա** և պարսկերեն **թոխմա** բառերը, Մ. Հերացին *քաղցկեղ*-ի համար՝ արաբերեն **սարաթան** և հունարեն **կարկինոս**, *թոքախար*-ի համար՝ հունարեն **փթիոս** և արաբերեն **սիլ** բառերը: դ) Միևնույն հիվանդության կամ դեղորայքի համար երկու հեղինակները տարբեր եզրեր են գործածել, օր.՝ *կարմրուկ*-ի համար Մ. Հերացին գործածում է **հարսանիթ** (արաբ.), իսկ Բ. Սեբաստացին՝ **հասպա** (արաբ.): ե) Հերացին ջերմերի բազում տեսակներ է նշում, որոնց մեջ գերակշռում են հունարեն եզրերը (11 հունարեն, 4 արաբերեն), իսկ Սեբաստացին ընդամենը չորս տեղ է նշում, այն էլ՝ արաբերեն:

**Բանալի բառեր – Մ. Հերացի, Բ. Սերապիացի, արարերենից, պարսկերենից, հունարենից փոխառյալ բժշկագիրական տերմիններ, հիվանդությունների անուններ, կազմախոսական և դեղագիրական հասկացությունների անուններ:**

**НАИРА ПАРОНЫАН – Заимствованная медицинская научная терминология из арабского, иранского и греческого языков в трудах М. Гераци «Джерманц мхитарутюн» и Б. Себастици «Врачебная книга».** – В Средневековье по своему содержанию особенно выделялись научные труды по медицине. Армянские врачи создают самобытные труды, в числе которых отдельно следует отметить сочинение Мхитара Гераци «Джерманц мхитарутюн». «Врачебную книгу» Буниата Себастици справедливо можно считать одной из самых значимых в числе трудов армянского средневековья по практической медицине. Буниат Себастици написал свою книгу в 1630 году, т.е. спустя 446 лет после труда Гераци. Было интересно проследить, которому из выше перечисленных языков автор более поздней работы отдал предпочтение в выборе терминологии.

Исследования трудов обоих авторов позволяют нам сказать, что и Гераци и Себастици более всего заимствовали медицинские термины из арабского языка. Оба ученых для ряда заболеваний употребляют одни и те же арабские термины, например: насморк/грипп – зугам, нузлай, туберкулез – сил. Интересно также, что оба автора для одной и той же болезни или лекарства употребляют и арабские, и иранские термины, и, напротив, для одной и той же болезни или лекарства оба ученых употребляют различные термины. Мхитар Себастици выделяет разные виды горячек, которые в большей степени обозначает греческими терминами (11 греческих и 4 арабских заимствования), в то время как Буниат Себастици выделяет всего четыре вида горячки, используя только лишь арабскую терминологию.

**Ключевые слова:** *М. Гераци, Б. Себастици, медицинские научные термины, заимствования из арабского, иранского и греческого языков, названия болезней, анатомические и фармацевтические термины.*

**NAIRA PARONYAN-Medical terms borrowed from Arabic, Persian and Greek in Mkhitar Heratsi's "Comfort to Fevers" and Buniat Sebastatsi's "Book of Treatment".** - In Medieval literature especially medical works are outstanding with their contents and linguistic phenomena. Armenian doctors were creating unique works in which Mkhitar Heratsi's book "Comfort to Fevers" is especially notable. Buniat Sebastatsi's "Book of Treatment" can be classified as one of the main values of medieval practical medicine.

Buniat Sebastatsi wrote his work in 1630, i.e. 446 years after M. Heratsi's work had been written. We were mainly interested in finding out which of the above mentioned languages were given preference to by the late period author, when using medical terms. The examination of the works of the authors showed that both Heratsi and Sebastatsi mainly used medical terms borrowed from Arabic. An interesting fact can be highlighted; for a number of diseases both authors mention the same Arabic terms, e.g. coryza-զուգամ, նուզլայ (zugam, nuzlay), tuberculosis- սիլ (sil), burning fever- հումայի մուհրիղայ (humayi muhrighay), whereas for composite medications he uses the following three terms-այարիճ (ayarich), ճարիշ (chuarish), մաճուն (machun). It's also worth mentioning that these two doctors have a common typical feature; both of them used Arabic and Persian terms for the same disease or medication and vice versa, for the same disease or medication both authors used different terms. Heratsi mentions different kinds of fevers among which the Greek terms are prevailing (11 Greek, 4 Arabic), whereas Buniat Sebastatsi mentions only four Arabic fevers.

**Key words:** *M. Geraci, B. Sebastatsi, medical scientific terms borrowed from Arabic, Iranian and Greek names of diseases, anatomical and farmatsepticheskie terms.*

**ՀԵՂԻՆԱԿԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՏԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Լեզվական կոնցեպտը մասնագիտական գրականության մեջ դժվար սահմանվող հասկացություններից է: Սակայն սրա ընդհանուր նկարագիրը հանգում է հետևյալին. այն խմբային, անհատական - հոգեբանական, ինչպես նաև ազգային- մշակութային գործոններով բնորոշվող երևույթ է մարդու գիտակցության մեջ, որն արտահայտվում է լեզվական կամ խոսքային միջոցներով: Կոնցեպտը գիտակցության լեզվական և ոչ լեզվական սուբյեկտիվ բովանդակությանն է առնչվում: Լեզվի գործնական կիրառման կոնցեպտայնացման մասին է գրում գիտության բացառիկ երախտավորներից մեկը՝ Է. Աթայանը. «Լեզվի գործնական կիրառումը փաստական շրջապատում իրադրությունների և արարքների շղթայի մի օղակ է, որը կարող է պարզեցվել մինչև տարրական բիհեյվիորիստական սահմանումների աստիճանը (ամմիջական առարկայական իրադրության բացակայության դեպքում անգամ սահմանափակ լեզվական պրաքսիսն իր ուղեղում շարժում է երևակայության առաձիգբանաստեղծական հիմունքի մի մնանակ): Այնուհանդերձ, լեզվական կիրառումների ինչպես ներուճակ- տեսական և գործուն-էսքետիկական, այնպես էլ իրային- գործնական շերտում ուժի մեջ է մնում կոնցեպտայնացման սկզբունքը»<sup>1</sup>:

Պետք է նշել, որ թարգմանաբանության ոլորտում այս խնդրին գրեթե չեն անդրադարձել, չնայած այն սերտորեն կապվում է հատկապես գեղարվեստական թարգմանության թե՛ տեսական, թե՛ գործնական հիմնախնդիրներին:

Գեղարվեստական թարգմանության առանձնահատկությունների քննության ժամանակ հաշվի են առնվում տարբեր գործոններ՝ թարգմանության միավորի և խոսքաշարի փոխկապակցվածությունը, ենթա-

---

<sup>1</sup> **Աթայան Է.**, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 364:

տեքստը, գեղարվեստական երկի ազգային առանձնահատկությունները, դրա ստեղծման և դրանում ներկայացված ժամանակաշրջանը և այլն: Այսինքն՝ թարգմանչից պահանջվում է ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական գործոնների ըմբռնում:

Թարգմանության ընթացքում չափազանց կարևոր դեր է կատարում նաև հոգեբանությունը: Բնագրի լեզվական նշանի ճիշտ ընկալումը և դրա ճիշտ վերարտահայտումը թարգմանության լեզվում սերտորեն կապվում է հեղինակի լեզվական կոնցեպտի ընկալման հետ:

Ա. Շվեյցերը<sup>2</sup>, օրինակ, առանց «կոնցեպտ» եզրույթն օգտագործելու, խոսում է տեքստը ձևավորող գործոնների մասին, որպիսիք են լեզվի համակարգը, լեզվական նորմը, թարգմանության նորմը, ազգային գունավորումը, ժամանակաշրջանը և ավելացնում է գրական ավանդույթի հասկացությունը: Սրան կարելի է գումարել լեզվական ավանդույթը (ձևավորված, ընկալելի բառային շղթաներ, ձևաբանական գույքաձևություններ, նույնանիշների իմաստային տարբերակում) և թարգմանական ավանդույթը: Այսպես, անգլերենից, ֆրանսերենից կամ գերմաներենից կատարված թարգմանություններում հաճախ են պահպանվում բնագրի դիմելաձևերը՝ *միսս, միսսիս, սրբ, լեդի, մադամ, մայր, ֆրաու*, իսկ ռուսերենից կատարվածներում *господин, госпожа, сударь, сударыня* բառերը միշտ փոխարինվում են հայերեն համարժեքներով:

Գեղարվեստական թարգմանության մասին խոսելիս անդրադառնում ենք նախ թարգմանչի կատարած անհրաժեշտ քայլերին, որոնցից առաջինը բնագրի տեքստի ընկալումն է: Սրա արդյունքն արդեն թարգմանական տեքստն է՝ հասցեագրված ընթերցողին: Որպես կանոն՝ հաջողված թարգմանությունը չի մատնում կամ գրեթե չի մատնում իր՝ վերարտադրություն լինելը: Գրեթե, որովհետև ընթերցողը, այնուամենայնիվ գլխի է ընկնում, որ իր ձեռքին բնագիր չէ, այլ թարգմանություն: Հայտնի փաստ է՝ առանց կորուստների թարգմանություն չի լինում:

Օտարալեզու ընթերցողների հասկացողության (ընկալման) բացթողումները թարգմանական գեղարվեստական գրականություն ընթերցե-

---

<sup>2</sup> Տե՛ս Швейцер А., Теория перевода, М., 1988, с. 67:

լիս կարելի է բացատրել «համագործակցող» ազգերի աշխարհի կոնցեպտուալ և լեզվական պատկերների կոնցեպտներում եղած անհամապատասխանությամբ, ինչը ոչ միշտ են հաշվի առնում թարգմանիչները: Այս երևույթը կարելի է համեմատել նույն կոնցեպտի տարբեր պատկերումների հետ, ասենք, նկարչության ոլորտում: Քրիստոնյա ազգերի համար Հիսուսի կերպարն ունի ընդհանրական որոշակի գծեր: Նրան ոչ որ զանազ կամ գեր չի պատկերացնում, բայց Ա.Ֆրիկայում կարող ենք հանդիպել սևամորթ Հիսուսի, իսկ ռուսական սրբապատկերներում նա նման է սլավոնի:

Բերենք մեկ այլ օրինակ: «Պետություն» հասկացությունն ընդհանրական է հայերիս և ռուսների համար, սակայն տարբեր է ամերիկացիների և ֆինների համար: Մենք հաճախ նույնացնում ենք «պետություն» և «իշխանություն» հասկացությունները, ինչը չեն անում ամերիկացիները կամ ֆինները:

Կոնցեպտի մասին խոսելիս Ս. Ասկոլդովը գրում է. «Իմացության (ճանաչողության) կոնցեպտներն ընդհանրական են, գեղարվեստական կոնցեպտները՝ անհատական: Իհարկե, գեղարվեստական ստեղծագործությունը, ամբողջությամբ վերցրած, անհատական է. բայց այն մասնաա դիտարկելիս մենք չենք կարող չնկատել, որ այդ մասերը միշտ ինչ-որ միատարր բանի անորոշ ծավալի ենթահանրագումար են (փոխարինող հանրագումար)»<sup>3</sup>:

Իհարկե, գեղարվեստական տեքստի միավորը հնարավոր չէ պոկել ողջ խոսքաշարից, սակայն թարգմանության գործընթացի անբաժան բաղադրիչն է վերլուծությունը, որի ժամանակ թարգմանիչը ստիպված է լինում մասնատել ստեղծագործությունը, ուշադրություն դարձնել կոնկրետ բառին կամ բառակապակցությանը: Որոշ դեպքերում հենց բառի կամ բառակապակցության ընկալումն է որոշում թարգմանության ճակատագիրը: Այսպես, եթե ռուսերենից հայերեն թարգմանելիս թարգմանիչը верить//веровать, правда//истина հոմանշային զույգերի վերարտահայտման ժամանակ դրանց իմաստն ընթերցողին հասցնելու ելք չգտնի,

---

<sup>3</sup> **Аскольдов А.**, Концепт и слово// Русская словесность, М., 1997, с. 9.

մենք գործ կունենանք թարգմանչական սխալի հետ: Կամ՝ *вещий Олег*// *знающий Олег* բառակապակցություններից առաջինն ավելի լայն հնարավորություններ ունի, քան երկրորդը, ուստի թարգմանելիս անհրաժեշտ է տեսնել դրա կապը կոնկրետ խոսքաշարի հետ:

Լեզվական կոնցեպտի իր մեկնաբանությունն է առաջարկել նաև Դ. Լիխաչը: Նա ավելի լայն հասկացություն է բերում՝ կոնցեպտոսֆերա- կոնցեպտոլորտ<sup>4</sup>, պնդելով, որ կոնցեպտը ոչ թե անմիջականորեն ի հայտ է գալիս բառիմաստից, այլ բառի բառարանային իմաստի և մարդու անձնական և ժողովրդական (ազգային) փորձի բախման հետևանք է: «Դիտարկելով, թե ինչպես է ընկալվում բառը, նշանակությունը և կոնցեպտը, մենք չպետք է բացառենք մարդուն: Կոնցեպտի հնարավորություններն ավելի լայն և հարուստ են այնքան, որքան լայն և հարուստ է մարդու մշակութային փորձը»<sup>5</sup>:

Կոնցեպտները, լինելով «հաղորդագրություններ» (message), կարող են տարբեր կերպ ընկալվել հասցեատերերի կողմից: Ճիշտ է, խոսքաշարը, որի կազմում կոնցեպտը հաղորդվում է հասցեատիրոջը, սահմանափակում է այդ հնարավորությունները, ինչը շատ կարևոր է գիտության մեջ և հատկապես պոեզիայում: Խոսքաշարի դերը հնարավոր չէ անտեսել հատկապես թարգմանության ժամանակ: Եվ եթե «կոնցեպտն ավելի հարուստ է այնքանով, որքանով հարուստ է կոնցեպտը գործածող մարդու ազգային, խավային, դասակարգային, մասնագիտական, ընտանեկան և անձնական փորձը»<sup>5</sup>, ապա թարգմանչին պետք է ներկայացվի գեղարվեստական տեքստի հեղինակին համագորգիտելիքների պաշար ունենալու պահանջը:

Բնագրի բանալի - կոնցեպտը ընթերցողին փոխանցելու խնդրին անդրադառնալիս ուզում ենք նշել մի կարևոր հանգամանք՝ ուղիղ (անմիջական) և միջնորդավորված թարգմանությունների տարբերությունը: Գաղտնիք չէ, որ ոչ վաղ անցյալում հայերեն թարգմանությունների մի մասը (մեղմ ասած) ոչ թե կատարվում էր ուղղակի բնագրի տեքստից,

---

<sup>4</sup> **Лихачев Д.**, Концептосфера русского языка, М., 1993, с. 151.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 152:

այլ ռուսերենից: Երևի ավելորդ է նշելն անգամ, որ անուղղակի կամ միջնորդավորված թարգմանության բերած կորուստներն անհամեմատ շատ են հատկապես գեղարվեստական ստեղծագործության կոնցեպտների տեսակետից:

Ասվածը պարզաբանելու նպատակով դիտարկենք Անտուան դը Մենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանի» երկու թարգմանությունների առանձնահատկությունները: Հիշեցնենք միայն, որ Էքզյուպերիի երկը բերում է երկու կոնցեպտ կամ մեկ հակադրամիասնություն՝ մեծահասակ և երեխա՝ սրանից բխող բոլոր հետևանքներով: 2001 թ. լույս տեսած թարգմանության «հիմքը» ռուսերեն տեքստն է, այսինքն՝ Նորա Գալի թարգմանությունը, իսկ 2015 թ. հրատարակվածն ուղիղ թարգմանություն է: Ասենք նաև, որ վերջին տարիներին Էքզյուպերիի ստեղծագործությունը միանգամից մի քանի հայերեն վերարտահայտում ունեցավ: Քննության համար ընտրել ենք, սակայն, մեկը, որն իրականացրել է Սամվել Գասպարյանը: Միջնորդավորված թարգմանությունը Սադաթել Հարությունյանինն է: Ռուսերենի թարգմանչուհին հայտնի անուն է իր ասպարեզում, սակայն ավելի հաճախ աշխատել է անգլերեն տեքստերի հետ: Կանխավ «զոհաբերենք», որ նրա «Փոքրիկ իշխանը» հեռու է Էքզյուպերիի երկից. որոշ դեպքերում տեսնում ենք կոպիտ միջամտություններ: Օրինակ՝

Les grandes personnes ne comprennent jamais riens toutes seules, et c'est fatigant, pour les enfants, de toujours et toujours **leur donner des explications**<sup>6</sup>.

Взрослые никогда ничего не понимают сами, а для детей очень утомительно без конца **им все объяснять и растолковывать**<sup>7</sup>.

Բնագրի տեքստում խոսքը պարզապես բացատրություններ տալու մասին է, ճշգրիտ է, իսկ թարգմանության մեջ՝ կոպիտ՝ **растолковывать** բառի հավելման շնորհիվ: Պարզ երևում է, որ այն միանգամայն ավելորդ է: Ցանկանալով ուժգնացնել բնագրում արտահայտված իմաստը՝ թարգմանչուհին աղավաղել է այն: Այս աղավաղումը սարդում է

<sup>6</sup> Antoine de Saint-Exupéry, Oeuvre, M., 1967, «Прогресс» с. 354.

<sup>7</sup> Антуан де Сент-Экзюпери, Маленький принц, М., 1979, «Правда», с. 268.

միջնորդավորված թարգմանության մեջ: «Մեծահասակները իրենք երբեք և ոչինչ չեն հասկանում, իսկ երեխաների համար շատ է հոգնեցուցիչ, երբ ստիպված են լինում **ամեն ինչ նրանց բացատրել ու գլուխները մտցնել**»<sup>8</sup>: Ուղղակի թարգմանությունն արդեն բնագրի ճիշտ վերարտահայտումն է:

«Աշխարհում չկա մի մեծահասակ մարդ, որն ինքնուրույն որևէ բան հասկանա, իսկ երեխաների համար չափազանց ձանձրալի է **օրնիբուն բացատրություններ տալ նրանց**»<sup>9</sup>: <sup>1\*</sup>

Նկատենք՝ մեծահասակ-երեխա հակադրությունը «Փոքրիկ իշխանում» թշնամանքի կամ անարգալից վերաբերմունքի հետք անգամ չունի, սակայն ռուսերենում և հայերեն միջնորդավորված թարգմանության մեջ հենց դա ենք տեսնում:

Հետևյալ օրինակը կապված է կոնցեպտոլորտի կիսատ իմացության կամ պարզապես անուշադրության հետ: Գուցե և որոշ թարգմանիչների բնորոշ անհարկի հետախուզության արդյունք է, ինչի մասին խոսում է իտալացի ժամանակակից գրող, աշխարհահռչակ Ումբերտո Էկոն (ի դեպ, նա մասնագիտությամբ բանասեր է, զբաղվել է նշանագիտությամբ և թարգմանաբանությամբ): Նա ծաղրում է այն թարգմանիչներին, որոնք բնագրում որոնում են այն, ինչ չկա, «հայտնաբերում են» ինչ-որ գաղտնի տեղեկատվություն՝ ընթերցողին ցույց տալով սեփական ինտելեկտուալ կարողությունները: Իսկ բնագիրը և, իհարկե, գրողը հայտնվում են տուժողի կարգավիճակում<sup>10</sup>:

Ներկայացնենք օրինակը.

Les grandes personnes m’ont conseillé de laisser de côté les dessins de serpents boas ouverts ou fermés, et de m’interésser plutôt à la géographie, à l’histoire, au calcul et à **la grammaire** (էջ 354): Взрослые посоветовали мне не рисовать змей ни снаружи, ни изнутри, а побольше интересоваться географией, историей, арифметикой и **правописанием** (էջ 268):

<sup>8</sup> Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, Փոքրիկ իշխանը, Եր., 2001, էջ 5:

<sup>9</sup> Նույն տեղում, Եր., 2015, էջ 7:

<sup>1\*</sup> Այսուհետև բնագրից և թարգմանություններից բերված օրինակների էջերը կնշենք դրանց կողքին:

<sup>10</sup> Эко У., Откровения молодого романиста, М., 2013, с. 85-87.

«Մեծահասակներն ինձ խորհուրդ տվեցին օձ չնկարել ոչ դրսի և ոչ էլ ներսի կողմից, այլ հետաքրքրվել աշխարհագրությամբ, պատմությամբ, թվաբանությամբ և **ուղղագրությամբ**» (էջ 5):

«Մեծահասակ մարդիկ ինձ խորհուրդ տվեցին ոչ թե վիշապօձեր նկարել դրսից կամ ներսից, այլ զբաղվել աշխարհագրությամբ, պատմությամբ, թվաբանությամբ և **քերականությամբ**» (էջ 7):

Ինչպես տեսնում ենք, երեխայի նկարչական «շնորհքը» չտեսնող մեծահասակները նրան խորհուրդ են տալիս ուսումնասիրել տարբեր առարկաներ, որոնցից մեկը քերականությունն է: Այո՛, ֆրանսիացի երեխան, այն էլ՝ ազնվական, անգամ 6 տարեկանում պետք է քերականություն ուսումնասիրեր: Դժվար է Ն. Գալին մեղադրել ֆրանսերեն **քերականություն** և **ուղղագրություն** բառերը չիմանալու համար: Ամենայն հավանականությամբ, թարգմանչուհին մտածել է, որ երեխայի համար վաղ է քերականություն ուսումնասիրելը: Տեսնում ենք, որ այս սխալը կրկնում է Ս. Հարությունյանը, որովհետև նրա առջև ռուսերեն թարգմանությունն էր: Իսկ ուղիղ թարգմանության տեքստում նման սխալը բացառվում է:

Հաջորդ օրինակում բախվում ենք միանգամից երկու հետաքրքիր փաստի: Մենտ-էքզյուպերիի հերոսը (հենց ինքն է. գրողը նաև օդաչու էր), որ մեծահասակների պատճառով այդպես էլ նկարիչ չդարձավ, սովորում է ինքնաթիռ վարել: Ռուսերեն տեքստում նա միանգամից դառնում է օդաչու՝ **я выучился на летчика**, սակայն հայերեն թարգմանություններում, նույնիսկ միջնորդավորված թարգմանության մեջ պահպանվել է բնագրի իմաստը: Հաջորդ արտահայտությունն արդեն վերաբերում է աշխարհագրության օգտակարությանը, ինչը Ս. Հարությունյանի թարգմանության մեջ չի հասկացվում:

J'ai donc dû choisir un autre métier et **j'ai appris à piloter des avions**. J'ai volé un peu partout dans le monde. Et la géographie, c'est exact, m'a beaucoup servi. Je savais reconnaître, du premier coup d'oeil, la Chine de l'Arizona. **C'est très utile, si l'on égaré pendant la nuit** (էջ 354).

Итак, мне пришлось выбирать другую профессию, и **я выучился на летчика**. Облетел я чуть ли не весь свет. И география, по правде сказать, мне очень пригодилась. Я умел с первого взгляда отличить

Китай от Аризоны. Это очень полезно, если ночью собьешься с пути (էջ 268):

Եվ այսպես, ես ստիպված էի ուրիշ մասնագիտություն ընտրել և **սովորեցի ինքնաթիռ վարել**: Ես ամբողջ աշխարհը գրեթե ման եմ եկել: Եվ, ճիշտ որ ասեմ, աշխարհագրությունն ինձ շատ պետք եկավ: Առաջին իսկ հայացքից կարողանում էի Չինաստանն ու Արիզոնը իրարից տարբերել. **Երբ գիշերները շեղվում ես ճանապարհից, շատ կարևոր է այդ իմանալը** (էջ 5-6):

Եվ այսպես, ես ստիպված էի ընտրել ուրիշ մասնագիտություն և **սովորեցի ինքնաթիռ վարել**: Ինքնաթիռով եղել եմ աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Եվ, ճիշտը որ ասեմ, աշխարհագրությունն ինձ շատ է օգնել: Բավական է՝ մի հայացք գցելի և Չինաստանը հեշտությամբ զանազանում էի Արիզոնայից: **Եթե մարդ գիշերը շեղվում է ճանապարհից, աշխարհագրություն իմանալը նրան անպայման կօգնի** (էջ 7):

Նկատենք, որ թե՛ ռուսերեն, թե՛ ռուսերենից կատարված թարգմանությունները այս պարբերության վերջին արտահայտությունը գրեթե բառացի են վերարտահայտել՝ **C'est très utile, si l'on égaré pendant la nuit.- Это очень полезно, если ночью собьешься с пути.- .... Երբ գիշերները շեղվում ես ճանապարհից, շատ կարևոր է այդ իմանալը**: Բայց եթե ֆրանսերեն և ռուսերեն տեքստերից պարզ հասկացվում է, որ օգտակարը աշխարհագրության իմացությունն է, ոչ թե միայն Արիզոնը Չինաստանից զանազանելը, սպա հայերեն տեքստը կիսատ է մնում: Կարծում ենք՝ Ս. Գասպարյանն իր ուղիղ թարգմանության մեջ ճիշտ է վարվել՝ մի քիչ բնագրից հեռանալով՝ **Եթե մարդ գիշերը շեղվում է ճանապարհից, աշխարհագրություն իմանալը նրան անպայման կօգնի**: Թարգմանիչը հավելել է **աշխարհագրություն** բառը, և արտահայտության իմաստը հասկանալի է դարձել: Էքզյուպերիի հերոսն այս դրվագում փորձում է «գնահատել» լուրջ բաներով զբաղվելու՝ մեծահասակների տված խորհուրդը և նշում է, որ աշխարհագրությունն իրեն օգուտ է տվել:

Դառնանք մեծահասակ-երեխա կարևոր կոնցեպտին: Երեխան հասկ է առել, բայց մեծահասակների մեջ շարունակում է փնտրել հարազատ մեկին: Նա դարձյալ փորձարկում է նկարի գործարարը:

Quand j'en rencontrais une qui me paraissait un peu lucide, je faisais l'expérience sur elle de mon dessin numéro 1 que je toujours conserve'. Je voulais savoir si elle était vraiment compréhensive. Mais toujours elle me répondait : «C'est un chapeau». Alors je ne lui parlais ni de serpents boas, ni de **forêts vierges**, ni d'étoiles. Je me mettais à sa portée. Je lui parlais de bridje, de golf, de politique et de cravats. Et **la grande personne** était bien contente de connaitre un home aussi raisonnable (էջ 354):

Когда я встречал взрослого, который казался мне разумней и понятливей других, я показывал ему свой рисунок ном.1- я его сохранил и всегда носил с собою. Я хотел знать, вправду ли этот человек что-то понимает. **Но все они отвечали мне:** «Это шляпа». И я уже не говорил с ними ни об удавах, ни **о джунглях**, ни о звездах. Я применялся к их понятиям. Я говорил с ними об игре в бридж и гольф, о политике и о галстуках. И **взрослые** были очень довольны, что познакомились с таким здравомыслящим человеком (էջ 268):

Երբ հանդիպում էի մի որևէ մեծահասակի, որն ինձ մյուսներից ավելի հասկացող ու խելացի էր թվում, ես նրան ցույց էի տալիս իմ հ. 1 նկարը, որը միշտ մոտս էի պահում: Ես ուզում էի իմանալ, թե այդ մարդը իսկապես մի բան հասկանում է: Բայց **բոլորն էլ ինձ պատասխանում էին.** «Դա գլխարկ է»: Եվ ես այլևս նրանց մոտ չէի խոսում ո՛չ վիշապօձերի, **ո՛չ ջունգլիների** և ո՛չ էլ աստղերի մասին: Ես հարմարվում էի նրանց մտածողությանը: Ես նրանց հետ խոսում էի բրիջ և գոլֆ խաղալու մասին, քաղաքականության և փողկապների մասին: Եվ **մեծահասակները** շատ գոհ էին մնում, որ ծանոթացել են ինձ նման առողջ դատողության տեր մարդու հետ (էջ 6):

Երբ հանդիպում էի մի որևէ մեծահասակի, և նա ինձ գոնե մի քիչ խելացի էր թվում, նրա վրա փորձարկում էի իմ թիվ 1 նկարը, որը միշտ ինձ հետ էր: Բայց **նա միշտ նույն պատասխանն էր տալիս.** «Սա գլխարկ է»: Եվ ես նրա հետ այլևս չէի խոսում ո՛չ վիշապօձերի, **ո՛չ կուսական անտառների,** ո՛չ էլ աստղերի մասին: Ես իջնում էի նրա մակարդակին. խո-

սում էի բրիջից, գուֆից, քաղաքականությունից ու փողկապներից: Եվ **այդ մարդը** շատ գոհ էր լինում՝ կարծելով, թե հանդիպել է իր նման խելամիտ մեկին (էջ 8):

Չեր ուշադրությունը հրավիրենք մեջբերվող հատվածում եղած հակադրության վրա: Ստեղծագործության հերոսը գտնում է մեկին՝ եգալիին, որն իրեն ավելի խելացի է թվում, քան մյուսները: Իսկ ահա ռուսերեն տեքստում այդ մեկը շատ արագ վերածվում է մի քանիսի՝ **все они отвечали мне: Уоујнн է միջնորդավորված թարգմանության մեջ՝ բոլորն էլ ինձ պատասխանում էին:** Խախտվում է մեկին գտնելու և անգամ այդ մեկի կողմից անպատասխան մնալու իմաստը: Էլ չենք խոսում կոպիտ սխալի մասին՝ **de forêts vierges- о джунглях- ջունգլիների** (մասին): Պարզաբանենք, թե ինչու չէր կարելի գործածել **ջունգլի** բառը: Սա սովորական բառ չէ, կարելի է ասել՝ սա ռուսերենում և հայերենում մի հասկացություն է դարձել, որն իր հետ բերում է դաժան պայքարի և միայնության գաղափարները: Իսկ «Փոքրիկ իշխանի» երազող հերոսն ուզում էր զրուցել կուսական անտառների մասին, որոնք նրա համար իր հեքիաթի մի մասն են: Ինչպես տեսնում ենք, **ջունգլի**-ն բնավ չի համապատասխանում երազողի լեզվական կոնցեպտին:

Բնականաբար անմիջական թարգմանությունը զերծ է այս թերություններից: Թեպետ պետք է նշենք, որ եթե ֆրանսերեն **la grande personne** –ը արտահայտությունը սեռը չի որոշակիացնում, ապա հայերենում **մարդ** ասելով՝ անմիջապես պատկերացնում ենք տղամարդու: Ուստի խախտվում է Էքզյուպերիի՝ մեծահասակների սեռը չնշելու սկզբունքը: Սակայն սա երևի այն դեպքն է, երբ թարգմանիչներն անգոր են, որովհետև ռուսերենում և հայերենում գտել են միակ համարժեքը:

Ainsi, si vous leur dites: «La preuve que le petit prince a existé, c'est qu'il était ravissant, qu'il riait, et qu'il voulait un mouton. Quand on veut un mouton, c'est la preuve qu'on existe», elles hausseront les épaules et **vous traiteront d'enfant!.....**

Les enfants doivent être très indulgent envers les grandes personnes (էջ 359):

Точно так же, если им сказать: «Вот доказательства, что Маленький принц – на самом деле существовал: он был очень, очень славный, он

смеялся, и ему хотелось иметь барашка. А кто хочет барашка, тот, безусловно, существует»,- если сказать им так, они только пожмут плечами и **посмотрят на тебя, как на несмышленного младенца.** ...Дети должны быть очень снисходительны к взрослым (էջ 274):

Ճիշտ այդպես, եթե նրանց ասես. «Ահա ձեզ ապացույցներ, որ, իրոք, Փոքրիկ իշխանը եղել է, որ նա շատ, շատ լավն էր, ծիծաղում էր և շատ էր ուզում գառնուկ ունենալ, իսկ ով ուզում է գառնուկ ունենալ, նա անպայման գոյություն է ունեցել»: Եթե այսպես ասես, նրանք միայն ուտերը կթոթվեն ու ձեզ կնայեն այնպես, **ինչպես կնայեին մի անգետ մանկիկի վրա:...** Երեխաները մեծահասակների նկատմամբ պետք է ներողամիտ լինեն (էջ 12):

Կամ՝ եթե նրանց ասես. «Փոքրիկ իշխանն իրոք գոյություն է ունեցել, որովհետև նա շատ հմայիչ էր, որովհետև ծիծաղում էր և ցանկանում էր ոչխար ունենալ, իսկ երբ մեկը ցանկանում է ոչխար պահել, ուրեմն նա իսկապես գոյություն ունի», ապա նրանք միայն ուտերը կթոթվեն և **քեզ միամիտ երեխայի տեղ կդնեն:...**

Երեխաները պետք է միշտ ներողամիտ լինեն մեծահասակների նկատմամբ (էջ 21-22):

Ֆրանսերենում **vous traiteront d'enfant** արտահայտության մեջ երեխան որևէ կերպ չի բնութագրվում: Երեխայի կոնցեպտն ինքնին ենթադրում է միամտություն (համենայն դեպս, հերոսին հակադրվող մեծահասակների համար), ուստի կարիք չկար որևէ որոշիչ հավելելու: Այնինչ ռուսերենում երեխան վերածվում է անհասկացող մանկիկի՝ **несмышленный младенец**, իսկ միջնորդավորված թարգմանության մեջ՝ **անգետ մանկիկի**: Ուղղակի թարգմանության մեջ շեշտված է երեխայի միամտությունը: Երևում է, որ թարգմանիչները ձգտել են ընթերցողին բացատրել հեղինակի ասածը, սակայն խախտել են էքզյուպերիի ստեղծած հակադրությունը՝ մեծահասակ- երեխա:

Եզրակացնենք: Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» այն ստեղծագործություններից է, որոնք ունեն իրենց բնորոշ կոնցեպտուորտը: Ընդ որում, այն չունի ազգային ընդգծված գունավորում, իսկ նրա հերոսները՝ նկարիչ չդարձած օդաչուն և փոքրիկ իշխանը, իրենք են վերածվել յուրօրինակ կոնցեպտի և ստեղծել լեզվական ու-

րույն աշխարհ, իրենց կոնցեպտների աշխարհը: Իհարկե, սույն աշխատանքում գլխավորապես ուշադրություն դարձրինք թարգմանիչների բառընտրությանը, որովհետև հեղինակի լեզվական կոնցեպտի հիմնական արտահայտությունը տալիս են հենց բառերը, բառերն են ձևավորում նաև կոնցեպտուորտը: Եթե անգամ խոսում ենք թարգմանության միավորի մասին, ապա առաջին հերթին նկատի ենք ունենում բառը: Տ. Կազակովան նշում է, «որ թարգմանիչը, տեքստի և նրա միավորների տեղեկատվական աստիճանները տարբերակելով, այսինքն՝ դրանց տեղեկատվական կշիռը գնահատելով, տեքստը բաժանում է նշանների, որոնք տվյալ համակարգում ներկայացնում են հասկացություններ կամ դատողություններ, և ինչ-որ միջոցով որոշում է դրանց համեմատական տեղեկատվական արժեքը: Դիտարկումներն ապացուցում են, որ ընկալման ժամանակ տեքստի տեղեկատվական հենարանը ամենից հաճախ տեքստում բառով կամ բառակապակցությամբ արտահայտված հասկացություններն են: Շատ ավելի հազվադեպ են մնան հենարանները դառնում նախադասություններ, որոնք արտահայտում են ծավալուն դատողություններ»<sup>11</sup>:

Նշենք նաև, որ ողջ ստեղծագործության կոնցեպտուալ հագեցվածությունը (բովանդակալից լինելը) արտահայտվում է ոչ միայն տեքստի բառային ռեսուրսներով, այլև տեքստը կազմելու գույգորդական (ասոցիատիվ) շարքերով, ոճական, քերականական, ինչպես նաև գրային (գրաֆիկական) հնարքներով: Այս փուլը թարգմանչի համար պակաս կարևոր չէ:

«Փոքրիկ իշխանի» թարգմանությունների հյանցիկ քննությունն ապացուցում է, որ հեղինակի մտահղացումը, հեղինակի լեզվական կոնցեպտը ճիշտ են վերարտահայտվում անմիջական (ուղիղ) թարգմանության ժամանակ: Սակայն կան թարգմանություններ, որոնք համապատասխանում են «բացառությունը հաստատում է օրենքը» արտահայտությանը: Այդպիսին է, օրինակ, Ռոբերտ Բյորնսի բանաստեղծությունների՝ Վահագն Դավթյանի թարգմանությունը: Այն միջնորդավորված է,

---

<sup>11</sup> Казакова Т., Художественный перевод. Теория и практика, Санкт-Петербург, 2006, с. 61.

ռուսերենից է, սակայն ավելի լավ է արտահայտել բնագրի թե՛ իմաստային, թե՛ հուզական նրբերանգները, քան ռուսերենը, որը, ի դեպ, վարպետ թարգմանիչ է կատարել (Սամուիլ Մարշակ): Գուցե սրա գաղտնիքը թաքնված է բնագրի և հայերենի կոնցեպտոլոգրսոներում:

**Քանալի բառեր** – *կոնցեպտ, կոնցեպտոսֆեր, թարգմանության միավոր, ուղիղ թարգմանություն, միջնորդավորված թարգմանություն, Անյոուան դը Սենյը - Էքզյուպերի:*

**МАРИАМ КИРАКОСЯН – Индивидуально-авторский концепт и перевод.** – В статье рассматривается вопрос воспроизведения авторского концепта в прямых и опосредованных переводах. Анализ русского и двух армянских переводов (опосредованного и прямого) «Маленького принца» Антуана де Сент-Экзюпери показал, что сохранение авторского концепта в иноязычном тексте возможно лишь в случае прямого перевода. Данное произведение выбрано для исследования, потому что оно не имеет особой национальной окраски и выстроено именно на языковом концепте автора. В работе в основном анализируется перевод слов и словосочетаний, потому что, таким образом, сущность поставленного вопроса выражается ярче.

**Ключевые слова:** *концепт, концептосфера, единица перевода, прямой перевод, опосредованный перевод, Антуан де Сент-Экзюпери.*

**MARIAM KIRAKOSYAN – The Author’s Linguistic Concept and the Translation.** – The report touches upon the issue of the expression of the linguistic concept of the author in direct (immediate) and indirect translations. The analysis of a Russian and two Armenian (correspondingly indirect and direct) translations of “The Little Prince” by Antoine de Saint-Exupéry reveals that it is possible to maintain the linguistic concept of the author in case of direct translation. The above-mentioned work was selected for this study, because it does not have any specific national coloring and is constructed on the linguistic concept of the author. The present paper mainly refers to the translation of words and word combinations, as in that way the essence of the issue under analysis becomes particularly vivid.

**Key words:** *concept, conceptsphere, translation unit, direct translation, indirect translation, Antoine de Saint-Exupery.*

**ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՄԱՐԺԵՔ  
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԱՍ**

Յանկացած տեքստում (հատկապես գեղարվեստական) հանդիպում են բազմաթիվ իրողություններ, որոնք այլ լեզուներում իրենց համարժեքները չունեն. նրանց մեծ մասը, առանձին վերցրած, իրականում անթարգմանելի է կամ ունի թարգմանության յուրահատուկ սկզբունքներ: Դրանք են տերմինները, եղանակավորողները, էկզոտիզմները, օտարաբանությունները, դիմելաձևերը, գրական լեզվից շեղումները, հատուկ անունները, հարանշանակային բառերը և այլն: Այս բոլորը պատկանում են անհամարժեք բառապաշարին (անվանումը պայմանական է): Իրականությունները այդ բառապաշարի մաս են կազմում: «Իրականությունները բառեր կամ բառակապակցություններ են, որոնք անվանում են մեկ ժողովրդի կենցաղին, մշակույթին, սոցիալական և պատմական զարգացմանը բնորոշ իրողություններ և այլ լեզուների համար օտար են: Լինելով ազգային և պատմական բներանգի կրող՝ դրանք, որպես կանոն, չունեն իրենց համարժեքները ուրիշ լեզուներում և հետևաբար չեն թարգմանվում ընդհանուր սկզբունքներով, այլ պահանջում են յուրահատուկ մոտեցում»<sup>1</sup>:

Իրականությունները դասակարգվում են մի քանի սկզբունքներով՝ առարկայական, տեղական, ժամանակային, թարգմանական: Առաջին երեքը ունեն բազմաթիվ ենթատեսակներ, օրինակ՝ **աշխարհագրական անուններ և ֆիզիկական երևույթներ** (ստեպ, պուշտա, սամում, տորնադո), **ցեղերի և կենդանիների անվանումներ** (կիվի, կոալա), **ազգային հագուստ, տարազ** (կիմոնո, սարի, տմբրերո, փարաջա, չուխա), **ուտելիքներ և ըմպելիքներ** (սպագետի, կումիս, լավաշ, կենդել, էյլ, շչի, մածուն, սածիլի, բորշ), **կենցաղ** (համամ, սաունա, չայխանա, յուրտ, վիզ-

<sup>1</sup> Влахов С., Флорин С., Непереводимое в переводе, М., 1986, ст. 55.

վամ), **փոխադրամիջոցներ** (ռիկչա, գոնդոլ, եռաձի (тройка)), **արվեստ** (կազակապար (казачок), լեզգիճկա, քոչարի, բլյուզ, կաստանյետ, գոպակ, դուդուկ, կաբուլի, տրուբադուր, կոբզար, բարո, գեյշա, ռամազան, քամադա), **հումորային կամ հեգնական անվանումներ** (խախտլ, ֆրից, յանկիներ, ախպար, անգրեզ, բոշ), **զինվորական գործ** (լեզեռն, ֆալանգ, օրդա, արբալետ, մուշկետ, խանչալ, ֆինկա, կատյուշա, յաթաղան, ատաման, եսաուլ, ուրյադնիկ, ենիչերի, բաշիբոզուկ) և այլն:

Բնագրի լեզվի համար իրակությունները լինում են սեփական և օտար<sup>2</sup>: Սեփական իրակությունների մեծ մասը տվյալ լեզվի համար բնիկ բառեր են, և դրանք որպես իրակություն տարբերակելը երբեմն բարդ է լինում: Օրինակ՝ ռուսերենի համար սեփական են *самовар, боярин*, բուլղարերենի համար՝ *баклуца* (տափաշիշ գինու համար), *zeza* (հովվի ձեռնափայտ), *кавал* (սրինգ), հայերենում՝ *աղանձ, քան, տիկ, մածուն, դուդուկ, քոչարի* բառերը: Երբեմն օտար լեզուներից փոխառված իրակությունները չեն տարբերվում բնիկներից, օր.՝ *բութ, սեպուհ, ակիշ* (պարսկերենից), *շերամ* (ասորերենից), *խաիր* (արաբերենից): Բնագրի համար օտար իրակությունները կան փոխառություններ են (*մզկիթ, հինա, կազակ*), կան պատճենումներ (*ինքնառե, գյուղխորհուրդ*), կան էլ ուղղակի տառադարձություններ (*բապուկ, կաֆյան*), որոնք սովորաբար մնում են մեկուսացված, կան էլ նորաբանություններ (*бразеники – գինարբուներ, кабак - օղեպուր*): Իրակությունները լեզվի մեջ են քափանցում հիմնականում գրականության և թարգմանությունների միջոցով: Օրինակ՝ Ն. Գոգոլը գրել է ուկրաինական թեմաներով, Լ. Տոլստոյը և Մ. Լերմոնտովը՝ կովկասյան, Գ. Սարյանը՝ իրանյան: Իսկ ինչ վերաբերում է թարգմանությանը, ապա հին շրջանի թարգմանիչները խուսափում էին իրակությունները տառադարձելուց, նույնիսկ փորձում էին օտար միջավայրը փոխարինել սեփականով: Ասվածի ապացույցը Հովի. Թումանյանի թարգմանություններն են: Սեր օրերում, սակայն, թարգմանիչները հակառակ սկզբունքին են դավանում. ավելի շատ տառադարձում են՝ աշխատելով պահպանել բնագրի բներանգը:

---

<sup>2</sup> Влахов С., Флорин С., Непереводимое в переводе, М., 1986, ст. 65-66:

Թարգմանաբանության տեսության մեջ առանձին խումբ են կազմում **տարածաշրջանային, միջազգային և լոկալ կամ մեկուսացված** իրակությունները: Տարածաշրջանային են մի քանի ժողովուրդների (պարտադիր չէ հարևան) լեզուներում տարածված բառերը: Կան, այսպես կոչված, թուրքաբանություններ, ուկրաինաբանություններ, խորհրդաբանություններ: Օրինակ՝ **բուշևիկ, կոլխոզ, ուստա, իմամ, կազակ, կորգար, մոլլա**: Միջազգային իրակությունները, ինչպես հուշում է տերմինը, կան մի շարք լեզուների բառապաշարում և ամրակայվել են բառարաններում: Նույնիսկ այս դեպքում նրանք սովորաբար պահպանում են իրենց ազգային բներանգը, չնայած առաջին հայացքից հակասություն կա միջազգային և ազգային տերմինների միջև: **Կովբոյ, սոմբրերո, գեյշա, կավվադոս** իրակությունները վերը նշվածներից են: Լոկալ իրակությունները բարբառային կամ սոցիալական խմբերին պատկանող բառեր են: Օրինակ՝ Լև Տոլստոյը իր «Կազակներ» վիպակում գործածել է կազակների կենցաղը բնութագրող բազմաթիվ բառեր, որոնք ձևով գրական ռուսերեն են, իսկ իմաստով՝ բարբառային: Օր.՝ **няня** – նշ. է *ընկեր, закуска* – *թխվածք* և *կոնֆերներ, избушка* – *սենյակ*, որտեղ պահում և մշակում են կաթը: Նման բառերը թագմանելիս պետք է շատ զգույշ լինել, քանի որ վերջիններս դասվում են «թարգմանչի կեղծ բարեկամների» շարքում: Հայերենի համար լոկալ իրակություններ կարելի է համարել **լաճ, լառ, բիճա, դայի, չորթան, ժածիկ** և նման բառերը:

Իրակությունները ընդհանրություններ ունեն մի շարք իրողությունների՝ հարանշանակային բառերի, տերմինների, փոխառությունների, էկզոտիզմների, օտարաբանությունների հետ: Սակայն այս բոլոր բառախմբերը անհրաժեշտ է իրարից տարբերակել մանավանդ թարգմանության ժամանակ, որովհետև դրանցից յուրաքանչյուրն ունի թարգմանության իր սկզբունքները, օրինակ՝ իրակությունը կարելի է փոխանցել նաև նկարագրության, բացատրության միջոցով, իսկ տերմինը թարգմանելիս այդ սկզբունքը բացառվում է:

**Իրակություն և հարանշանակային բառեր:** Հարանշանակությունը (коннотация) բառի հավելյալ իմաստն է կամ նրա հիմնական իմաստին ուղեկցող իմաստային, ոճական նրբերանգները, որոնք ծառայում են

հուզական, գնահատողական վերաբերմունքի դրսևորմանը: Օրինակ՝ **կռուկը** հայերենում հայրենիքի կարոտի, պանդխտության խորհրդանիշն է, ռուսերենում՝ գարնան, իսկ ֆրանսերենում՝ *անբարոյական կնոջ*, այդ պատճառով հանրահայտ «Летят журавли» ֆիլմը ֆրանսերեն քարգմանվել է «Թռչում են արագիլները»: Իրակությունները ևս հարանշանակային բառերի շարքին են դասվում, որովհետև պատմական և ազգային բներանգ ունենալը արդեն հարանշանակություն է:

**Իրակություն և տերմին:** Առաջին հայացքից մեծ մնանություն կա իրակության և տերմինի միջև: Ավելին, կա բառերի մի խումբ, որը կարելի է հավասարապես և՛ իրակություն, և՛ տերմին համարել: Իսկ նրանց տարբերությունը հետևյալն է: Իրակությունները օժտված են ազգային կամ պատմական բներանգով և մեծ մասամբ գործածվում են գեղարվեստական գրականության մեջ: Տերմինը պատկանում է որևէ գիտաճյուղի, տարածվում է իր անվանած առարկայի տարածման հետ և պատկանում է ամբողջ մարդկությանը: Իրակությունները տերմիններից տարբերվում են նաև ծագմամբ. տերմինների մեծ մասը ստեղծվում է արհեստականորեն, իսկ իրակությունները ստեղծվում են բնական բառակազմության միջոցով: Եթե տերմինը ոճական գործառույթ է կատարում, ապա վերածվում է իրակության, օր.՝ **ջունգլի** բառը կարող է և՛ իրակություն, և՛ տերմին լինել: Մեկ այլ օրինակ. **տափաստան** (step) բառը, որ նշանակում է անտառագուրկ խոտով ծածկված սովորաբար անձայրածիր հարթ տարածություն, որն ընկած է կլիմայական չոր գոտում, տերմին է: Նույն տափաստանը Հունգարիայում անվանում են **պուշտա**, Հարավային Ամերիկայում՝ **պամպա**, Հյուսիսային Ամերիկայում՝ **պերիա**: Վերջին երեք դեպքում գործ ունենք իրակությունների հետ<sup>3</sup>:

**Իրակություն և փոխառություն:** Հստակ չէ նաև փոխառության և իրակության սահմանազատումը: Տարածված է այն կարծիքը, թե բոլոր իրակությունները փոխառություններ են: Սակայն փոխառությունը համարվում է փոխառու լեզվի միավոր: Իսկ եթե բառը միայն մեկ անգամ է լեզվում գործածվել (իրակությունների դեպքում դա հաճախ է պատա-

---

<sup>3</sup> Влахов С., Флорин С., 624. աշխ., էջ 16 - 18:

հում), ապա այն դժվար է փոխառություն համարել: Բառը փոխառյալ է դառնում, երբ բազմիցս գործածվում է լեզվում, ներառվում է բառարաններում: Օրինակ՝ ռուսերեն բառերը անգլերենին են անցել հիմնականում անգլիացի վաճառականների հաշվետվություններից՝ **царь, указ, квас, самовар** ևն: Այդ բառերը անգլերենում ոչ թե տարածվել են նրանց անվանած առարկաների տարածման հետևանքով, այլ փոխանցվել են շփման արդյունքում: Իմիջիայլոց, **гвар, կվաս** բառերը փոխառություններ են նաև հայերենում, իսկ **սամովար** բառի համարժեքը հայերենում ստեղծվել է պատճենման ճանապարհով՝ **ինքնատ**:

Փոխառված իրակությունը կարող է ձևով, արտասանությամբ, շեշտադրությամբ տարբեր լինել, քանի որ տարբեր են փոխատու և փոխառու լեզուները: Այսպես, բուլղարերենում ռուսերեն բառերը հայտնվել են հետևյալ տեսքով՝ **баба я'га, тре'пак, кикимо'ра** և այլն: Ինչպես երևում է օրինակներից, սովորաբար նման բառերը արտասանվում են փոխառու լեզվի շեշտադրությամբ: Բայց կարող են լինել նաև բացառություններ, օրինակ՝ հայերեն փոխառնված մա՛նգո, կակաո բառերում շեշտվում է առաջին վանկը, չնայած հայերենում շեշտը դրվում է բառի վերջին ձայնավորի վրա: Այդ պատճառով նման դեպքերում նախապես անհրաժեշտ է շեշտով առանձնացել շեշտակիր ձայնավորը:

Փոխառված իրակությունները ընդունված է անվանել **հատկական**<sup>4</sup>: Նշենք նաև, որ փոխառված իրակությունները չեն դադարում իրակությամբ լինելուց:

**Իրակություններ և օտարաբանություններ (варваризм):** Հայ լեզվաբանության մեջ **варваризм** տերմինը երկու համարժեք ունի՝ **օտարաբանություն** և **խորթաբանություն**: «Հայերենագիտական բառարանում» օտարաբանությունը սահմանված է հետևյալ կերպ. «Օտարալեզու՝ այլալեզու բառ, դարձվածք, արտահայտություն, արտասանություն, հնչյուն, որ գործածվում է մայրենի լեզվում, թափանցում է նրա մեջ, և որի օտարամուտ լինելը (մերժված լինելը մայրենի լեզվում) խոսող հանրության կողմից գիտակցվում է, և կամ որի համարժեք բնիկ միավորը առ-

<sup>4</sup> Տե՛ս **Եգեկյան Լ.**, Հայոց լեզու, Եր., 2005, էջ 121:

կա է մայրենի լեզվում»<sup>5</sup>: Իսկ «Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկում» **варваризм** բառին երեք տարբեր մեկնաբանություններ կան: Առաջին դեպքում հայերեն համարժեքը **խրթաբանություն** տերմինով է փոխանցված, որը «տվյալ լեզվի բառակազմական և կամ քերականական կանոնների խախտմամբ ստեղծված բառ, բառաձև կամ արտահայտություն է: Հմմտ. Мы хотим (փոխանակ՝ мы хотим)»<sup>6</sup>: Մնացած երկու դեպքում կիրառվում է **օտարաբանություն** տերմինը, սակայն տարբեր իմաստներով: Առաջին դեպքում այն նշանակում է «օտարալեզու բառ կամ արտահայտություն, որը գործածվում է այլազգիների սովորույթը, կյանքի և կենցաղի առանձնահատկությունները (իրակությունները) ներկայացնելիս՝ շարադրանքին տեղական երանգավորում հաղորդելու համար»<sup>7</sup>: Այս իմաստով օտարաբանությունները նույնացվում են իրակությունների հետ: Այսինքն՝ չյուրացված իրակությունները կարելի է օտարաբանություններ համարել: Մեկ այլ իմաստով օտարաբանությունները բնորոշվում են հետևյալ կերպ. «Որևէ լեզվում գործածվող, բայց չյուրացված, երբեմն գրադարձված օտար բառ կամ արտահայտություն: Հմմտ. անգլ. okay, ֆր. o.k., գերմ. okay, իսպ. okey, ֆր. merci > merci, մերսի»<sup>8</sup>: Այս դեպքում օտարաբանությունները մասամբ նույնանում են էկզոտիզմների հետ: Այսինքն՝ ստացվում է, որ օտարաբանությունները լայն հասկացություն են և կարող են ներառել տարբեր շերտեր: Նշենք նաև, որ լեզվաբաններից ոմանք օտարաբանությունները ավելի շուտ բառագիտական և ոճագիտական կարգեր են համարում, որոնք չունեն իրենց համարժեքը թարգմանաբանական գրականության մեջ: Այսպիսով, կան տարբերություններ իրակության և օտարաբանության միջև: Իրակություններ լինում են նաև սեփական լեզվում և պարտադիր չէ, որ նրանք ձևով օտար լինեն: Իրակությունները իրենց համարժեքները չունեն այլ լեզուներում և, ի տարբերություն օտարաբանությունների, կարող են մուտք գործել փոխառու լեզվի բառապաշար:

<sup>5</sup> **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Եր., «Հայաստան» 1987, էջ 626:

<sup>6</sup> **Նազարյան Ա., Բաղդասարյան Հ.**, Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Եր., 2000, էջ 107:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 107:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 107-108:

**Իրակություններ և Էկզոտիզմներ:** «Էկզոտիզմները քիչ հայտնի, սովորաբար ոչ հնդեվրոպական լեզուներից փոխառնված բառեր և արտահայտություններ, որոնք գործածվում են խոսքին յուրօրինակ երանգավորում հաղորդելու նպատակով: Հմնտ. Гягь, аул, bungalow, bambou, piraya»<sup>9</sup>: Այս դեպքում ևս, չնայած առաջին հայացքից իրակությունների և Էկզոտիզմների միջև եղած նմանությանը, այս երկու իրողությունները տարբերվում են միմյանցից: Էկզոտիզիմները տեղական, տարածքային կամ յուրահատուկ բներանգ են հաղորդում, իսկ իրակությունները՝ ազգային: Իրակությունները նաև ժամանակային երանգավորում ունեն, իսկ Էկզոտիզմները՝ ոչ: Էկզոտիզմ են նաև մի քիչ տարօրինակ, երբեմն փոխաբերական իմաստով բառերը: Էկզոտիզմները ևս համարում են օտարաբանությունների մի տեսակ<sup>10</sup>:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք ասել. 1/ Իրակությունները ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, նրանք անվանում են ազգային և պատմական իրողություններ և պատկանում են որևէ ժողովրդի: 2/ Իրակությունները ընդհանրություններ ունեն տերմինների, հարանշանակային բառերի, փոխառությունների, օտարաբանությունների, էկզոտիզմների հետ, բայց միաժամանակ տարբերվում են նրանցից: Թե բառը բառապաշարի որ շերտին է պատկանում, կարելի է հասկանալ միայն բնագրից և թարգմանելիս պիտի կիրառել թարգմանական այն սկզբունքը, որը պահանջում է տվյալ իրողությունը:

**Բանալի բառեր** – *բարգմանություն, իրակություն, տերմին, հարանշանակություն, փոխառություն, օտարաբանություն, խորթաբանություն, անհամարժեք բառապաշար, բներանգ:*

---

<sup>9</sup> Նազարյան Ա., նշվ. աշխ., էջ 206-207:

<sup>10</sup> St'ia Влахов, С., Флорин С., Непереводимое в переводе, с. 47-48:

**АНАИДА МОВСИСЯН- Реалии как составная часть безэквивалентной лексики.** - Реалии – это слова или словосочетания, которыми обозначаются явления, присущие быту, культуре, социальному и историческому развитию какого-либо народа и не свойственные другим языкам. У реалий много общего с терминами, заимствованиями, коннотациями, варваризмами, экзотизмами. О том, к какому лексическому слою относится данное слово, можно судить на основе исходного текста и, исходя из обстоятельств, применить тот или иной принцип перевода.

**Ключевые слова:** *перевод, реалия, термин, коннотация, заимствование, варваризм, безэквивалентная лексика.*

**ANAIDA MOVSISYAN - The realities as part of the non-equivalent lexicon.**-Realias are words or phrases, which denote the phenomena inherent to everyday life, culture, social and historical development of a nation and which are not typical for other languages. Realias have a lot of common things with terms, borrowings, connotations, barbarisms and exoticisms. One can judge to which lexical layer belongs the word on the basis of the original text and one can apply this or that principle of translation, proceeding from the circumstances.

**Key words:** *translation, realia, term, connotation, borrowing, barbarism, culture-specific vocabulary.*

**ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ**

Կիրառական էթիկական նորմերը համընդհանուր և կանոնակարգված սահմանումներ են, որոնք գործածվում են միջանձնային հաղորդակցման տարբեր ոլորտներում՝ գործնական, պաշտոնական, ընկերական և այլն, և ենթադրում են հանրային կյանքի բարեկրթության կանոնների պահպանում, դրանով թելադրված որոշակի վարքի դրսևորում, նաև դրա նկատմամբ ցուցաբերած վերաբերմունք: Էթիկական նորմերի պահպանումը, մասնավորապես գործնական հարաբերությունների ժամանակ, պայմանավորված է նաև յուրաքանչյուր ժողովրդի ներագային շփումների յուրահատկությամբ և մատնանշում է հասարակական կյանքի որոշակի մակարդակ:

Հասարակական, քաղաքական, տնտեսական հարաբերություններում հաղորդակցումը՝ մասնավորապես բանավոր խոսքի միջոցով, բազմաբնույթ է՝ պայմանավորված անձի սոցիալ-հոգեբանական նկարագրով, կրթվածության մակարդակով, կարգավիճակով, գործունեության բնույթով: Խոսքը իր դրսևորման եղանակով, ոճական և այլ կողմերով թեև կրում է անհատական բնույթ, այսուհանդերձ իր հիմքով նաև հասարակական երևույթ է: Հաղորդակցումը ենթադրում է ոչ միայն անձերի, սոցիալական խմբերի, այլև ժողովուրդների փոխհարաբերություններ, ինչն էլ նշանակում է լեզվական, մշակութային ավանդույթների, էթիկական տարբեր արժեքներ կրողների շփումներ՝ այստեղից բխող առանձնահատկություններով:

Խոսքի մշակույթը թե՛ բովանդակության և թե՛ դրսևորման ձևերի ամբողջություն է, արժեքների համընդունված համակարգ, որի կիրառության ապահովումը կիրթ հասարակության և կիրթ անհատին բնութագրող երևույթ է: Բանավոր խոսքի մշակույթի ամենաբարձր մակարդակը՝ որպես օրինաչափություն, նախ և առաջ դրսևորվում է հասարակության վերնախավային շերտում՝ պայմանավորված վերջինիս՝ որպես առավել

կրթված և զարգացած խավի ինտելեկտուալ հատված լինելու հանգամանքով (նկատենք, որ այս առանձնահատկությունը լիարժեք գործում է կայացած երկրներում և թերևս որոշակի վերապահությամբ կարող է առնչվել հայաստանյան կյանքի այսօրվա իրողությանը): Լեզվի նորմի պահպանման և կիրառության տեսակետից այն գրեթե անթերի է և բավարարում է նրան ներկայացվող պահանջները, որոնք են՝ ճշգրտություն, տրամաբանականություն, հստակություն, սեղմություն, արտահայտչականություն և այլն<sup>1</sup>: Այս առումով էլ մասնավորապես բանավոր խոսքի հաղորդակցման ընթացքում արժևորվում են (երկխոսություն, բանավեճեր և այլն) էթիկական, նաև ուղղագրական-ուղղախոսական, քերականական բոլոր նորմերին հետևելու անհրաժեշտությունը, դրանք կիրառելու հետևողականությունը, նպատակին ծառայեցնելու մտայնությունը: Քաղաքավարության նորմերին են առնչվում ձայնի տոնայնության բարձրացման, ոչ պատշաճ, կտրուկ և կոպիտ արտահայտությունների գործածության բացառումը ոչ միայն պաշտոնակիցների, այլև անմիջական ենթակայության տակ գտնվող ծառայակիցների նկատմամբ:

Կրթական բարձր ցենզ (գնահատական) ունեցող հասարակության փոքր հատվածը՝ որպես խոսքի մշակույթի կրող, հարկ է, որ տիրապետի լեզվի գործառական ոճերի բոլոր տեսակներին և առանձնահատկություններին: Միայն լեզվի ամբողջ հարստության և հնարավորությունների ճանաչումը, բարձր պատրաստվածությունը պարտականությունները գործնականորեն կատարելու լավագույն նախապայման կարող են լինել, իսկ դրանք բազմաբնույթ են՝ հրապարակային ելույթներ, բանավեճեր, հարցազրույցներ, շնորհանդեսներ, շնորհավորանքների հղում, փաստաթղթերի կազմում, գործնական հանդիպումներ, խորհրդատվություն, պաշտոնական ընդունելություն և այլն:

Լեզվի իմացության քիչ ավելի ցածր՝ միջին մակարդակ ունեցողները, թեև ավելի պակաս հետևողականություն են ցուցաբերում գրական լեզվի նորմերի նկատմամբ, այնուամենայնիվ գրական և բանավոր խոսքի կանոններից շեղումները այստեղ համակարգային բնույթ չեն կրում: Կիրա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Введенская Л., Павлова Л., Катаева Е.**, Русский язык и культура речи, М., 2005, с. 91-94:

նության առումով այն ամենագանգվածայինն է, այսինքն՝ բնորոշ է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներին:

Բանավոր խոսքին առաջադրվող պահանջները հանգում են մասնավորապես բառապաշարի, ձևակերպումների ըստ պատշաճի կիրառմանը, կանոնական և ոչ կանոնական ձևերի տարբերակմանը, արտասանական նորմերի պահպանմանը, օտարաբանությունների, ժարգոնի, հասարակաբանությունների և գոեհկաբանությունների, անհարկի բարբառայնության բացառմանը, լեզվական միջոցների ճիշտ ընտրությանը, դիմելվածների (շնորհավորանք, ողջույն և այլն) ըստ կարգի կիրառությանը, ինչպես նաև **դու**-ի և **Գուք**-ի հստակ սահմանագատմանը: Նկատենք, որ **դու** և **Գուք** անձնական դերանունների գործածությունը թելադրված է մի շարք հանգամանքներով՝ գործընկերային-պաշտոնական փոխհարաբերություններով, ջերմ բարեկամական և «չոր» գործնական շփումներով, նաև միջանձնային հարաբերությունների լարվածությամբ, հարկադրված քաղաքավարությամբ և այլն:

Բանավոր խոսքի էթիկական նորմերի շրջանակում գործնական հանդիպումների ընթացքում կարևորվում է գրույցի սկզբում բարևելու քաղաքավարական նորմը, մույմիսկ եթե դիմացինի հետ հաղորդակցվելու մտադրություն չկա: Ողջույնը բանավոր խոսքի մշակույթի անհրաժեշտ պայմաններից է: Դրա միջոցով որոշակիություն է ստեղծվում հաղորդակցվողների միջև. այն արտահայտում է նրանց հարաբերությունների մակարդակը և միտված է փոխըմբռնմանը: Որպես բարյացակամության և ջերմ վերաբերմունքի արտահայտություն՝ այն հատկապես կարևոր է գործնական հարաբերություններում, և հաճախ դրանից կարող է կախված լինել որոշման ընդունումը: Գործնական մակարդակում բարևելիս ժպտալը ամենօրյա հաղորդակցման անհրաժեշտ նորմերից է:

Լայն առումով էթիկան (բարոյագիտություն) հասարակության կամ որևէ խավի վարքբարքի կանոնների ամբողջականությունն է, որը պարտադրում է վարվելաձևի (էտիկետ) որոշակի կանոններ՝ միաժամանակ հարկավոր ուշադրություն դարձնելով նաև անձի արտաքին տեսքին, հագուստի ընտրությանը, կեցվածքին և այլն: Ի վերջո, այն քաղաքակիրթ վարքագիծ է, որը անհատի՝ շրջապատում ընդունելի, ճանաչելի

լինելու, համակրանքի արժանանալու նպատակադրումն է հետապնդում՝ ներառելով վերջինիս սոցիալական կարգավիճակը և արժանապատվությունը:

Խոսող-խոսակից-միջավայր հաղորդակցման տիրույթում, պայմանավորված ընկերական, բարեկամական, գործնական հաղորդակցման բնույթով, դրանք լեզվական այլևայլ միջոցներ են նախատեսում: Խոսքի գործածության ոլորտները տարբեր են, տարբեր է նաև հաղորդակցվողների սոցիալ-հոգեբանական կազմը, ուստի և վերոնշյալ նախապայմաններով սահմանված՝ դիմելաձևերի բազմազանությունը կախված է հանգամանքներից:

Գործնական շփումների ժամանակ անհատի խոսքի մշակույթը և ներքին մշակույթը կարևոր բաղկացուցիչներ են, և եթե առաջինը հենվում է լեզվական նորմերի իմացության վրա, ապա երկրորդը գնահատվում է բարոյական սկզբունքների, հասկացությունների տեսանկյունով՝ հատկապես սեփական խոսքը, պահվածքը արժևորելու և վերահսկելու ունակության ըմբռնումով:

Զրուցակցի վրա ազդեցություն գործելու միջոցները կարող են լինել թե՛ լեզվական և թե՛ հոգեբանական. պակաս կարևոր չէ նաև ժեստերի և դիմախառի դերը. վերջիններս խոսքի արտահայտչական հնարավորությունների մեծացմանը և տպավորիչ դարձնելուն են միտված: Վերոհիշյալ գործոնների կիրառության միասնականության մեջ է գրագետ, տրամաբանված, հուզական-արտահայտչական խոսքի արժեքը:

Վարվելակերպի հիմքում, ըստ ամենայնի, ընկած են նաև ազգային առանձնահատկությունները: Վարվելաձևի որևէ նորմ մի ժողովրդի կողմից կարող է ընկալվել որպես քաղաքավարության նշան, մինչդեռ մյուսի կողմից այն կարող է համարվել որպես անքաղաքավարություն գրուցակցի նկատմամբ: Այսպես՝ արևմտյան (եվրոպական) արժեքներ կրող ժողովուրդների համար ընդունելի է գործնական հանդիպումների ժամանակ «Ինչպե՞ս է Ձեր կնոջ, երեխաների առողջությունը» հարցադրումը, ինչը, սակայն, անթույլատրելի է հատկապես մահմեդական երկրներում (այնտեղ կնոջը վերաբերող ցանկացած հարց արգելված է):

Տարբեր ժողովուրդներ բարևելու, հրաժեշտ տալու, ներողություն խնդրելու և շնորհակալություն հայտնելու զանազան ձևեր ունեն՝ յուրահատուկ միայն էթնիկական այդ հանրությանը:

Անհատի հասարակական դիրքը, տարիքը, սեռը, մտերմության աստիճանը և այլն որոշիչ դեր են կատարում վարվեցողության ձևերի ընտրության հարցում: Խոսողի հոգեվիճակը (ոյուրագրգիռ, հուզական, հավասարակշռված և այլն), վերաբերմունքը զրուցակցի նկատմամբ (հեզմանական, թեական, հարցական), ինչպես նաև պահելաձևի այլ դրսևորումները՝ դեմքը ծամածռելը, խոժոռվելը, կեցվածքը, նայելաձևը (օրինակ՝ խոսակցին վերից վար նայելը անքաղաքավարության նշան է), կամ հաղորդակցման ընթացքում դիմացինի աչքերի մեջ նայելը (սա ևս ազգային առանձնահատկություն է), ձայնի տոնայնությունը (այն պետք է լինի հաստատուն. ինքնատիրապետումը անհրաժեշտ պայման է), ցածր կամ բարձր ինքնագնահատականը որոշիչ գործոններ են:

Յուրաքանչյուր ժողովրդի խոսքարվեստի էթիկական ըմբռումները այս կամ այն չափով հաստատագրված են նաև առածներում, ասացվածքներում, թևավոր խոսքերում, դարձվածքներում: Այսպես՝ քիչ ուտելը մարմնին է օգուտ, քիչ խոսելը՝ հոգուն, աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է, թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա, խոսք հասկացողին էլ, չհասկացողին էլ քիչ խոսելը բավական է, ճիշտ խոսքերը գեղեցիկ չեն, գեղեցիկ խոսքերն էլ ճիշտ չեն, ճիշտ խոսքը կատակով կասեն և այլն:

Խոսքային այս միավորներում ամփոփված են ժողովրդի՝ դարերի ընթացքում քննություն բռնած կենսափիլիսոփայությունը, իմաստությունը, ուստի և շատ հաճախ դրանք հնչում են որպես խրատներ, բարոյախոսական հորդորներ:

Մեփական արժանիքները (այդ թվում՝ նաև առավելությունները) գիտակցելը և չցուցադրելը ևս անհատի դաստիարակվածության ցուցիչներից են և փոխադարձ հարաբերությունների ընթացքում ավելի են արժևորվում:

Խոսքի բարեկրթության շրջանակներում են այլ հատկանիշներ ևս. դիցուք՝ շրջահայեցողությունը, ինչը ենթադրում է երկխոսության ընթաց-

քում ավելորդ և անտեղի հարցեր տալուց խուսափելը, ավելին՝ տրվելիք հնարավոր հարցերի կանխատեսելու ունակություն, դիմացիին հասկանալու և ընդառաջելու պատրաստակամություն: Այնուհետև՝ գնահատվող հատկանիշներից են համբերատարությունը և հանդուրժողականությունը, ասել է թե՛ պետք է հանգիստ արձագանքել խոսակցի անսպասելի և նույնիսկ ոչ կիրք հարցադրումներին, չկորցնել ինքնատիրապետունը և ի վերջո հարգել դիմացիին այլ, նաև հակադիր կարծիք ունենալու և արտահայտելու իրավունքը:

Մասնագիտական էթիկան բարոյական նորմերի, հասկացությունների, դատողությունների և վարքագծի ամբողջություն է, որը բնորոշ է հասարակական որոշակի խմբերի (այստեղ մարդկային գործոնը առավելագույնս է կարևորվում), պայմանավորված է վերջիններիս աշխատանքային գործունեությամբ, ինչպես նաև որոշակի իրադրությամբ: Բարոյական այս սկզբունքները պահպանելը անհատի համար պատվի և արժանապատվության հարց է, իսկ դրա շրջանցումը կամ խախտումը կարող է իմաստագրվել և արժեգրվել պրոֆեսիոնալ գործունեությունը:

Բանավոր խոսքը կարող է արտահայտվել տարբեր ձևերով, այդ թվում նաև՝ մենախոսության. այն ընդմիջելը թույլատրելի չէ, թերևս միայն ծայրահեղ դեպքերում, մասնավորապես երբ այն դուրս է գալիս տարրական պարկեշտության սահմաններից: Հայտնի արտահայտությունը, թե «խոսելու արվեստը նաև լսելու արվեստ է» ավելի քան տեղին է: Ավելի բարեկիրթ է խոսակցին մինչև վերջ լսելը, հետո նոր քաղաքավարի հարցադրում կատարելը՝ թերևս չմոռանալով մեղմասության արտահայտչական մեծ հնարավորությունների մասին<sup>2</sup>. Ինձ թվում է... Ես կարծում եմ... և այլն արտահայտությունների գործածությունը տեղին է:

Ավելորդ անկեղծությունը, ականջին փսիսալով ինչ-որ բան ասելը, քրի տակ փնթփնթացնելը, անփույթ վերաբերմունքը, աղավաղված արտասանությունը չեն տեղավորվում բարեկիրթ վարվեցողության ընկալումների սահմանում: Վերջինիս առնչվում են ինչպես բարևելու, այնպես էլ հրաժեշտ տալու կարգերը. այն չպետք է լինի շուտասելուկի պես, ընդունելի չէ նաև ուրախության չափից ավելի ցուցադրումը. ընդհանրա-

---

<sup>2</sup> Տե՛ս «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», Գիրք Բ, Եր., 2015, էջ 126:

պես պետք է արտահայտվել պարզ և անկեղծ. ձայնի կեղծ տոնայնությունը տեղին չէ:

Բանավոր հաղորդակցման հիմնական դրույթները սահմանում են վարքի առանձնահատկությունների դրսևորում նաև կոնֆլիկտային իրավիճակում. գործադրվող ջանքերը պետք է նպատակաուղղված լինեն հակասությունները, տարակարծությունները վերհանելուն, վերլուծելուն: Կարելի է կարծիք հայտնել, գնահատական տալ՝ ընդամին մնալով կառուցողական քննադատության շրջանակներում: Այստեղ նշանակալից է բանավեճի արվեստին տիրապետելու կարողությունը. հաջողության գրավական են ինչպես նյութի փաստարկված լինելը, այնպես էլ բանախոսի արագ կողմնորոշվելու, ապացուցել կարողանալու, եզրակացություններ կատարելու, ձայնին տիրապետելու ունակությունները<sup>3</sup>:

Արիստոտելյան հայտնի սկզբունքը՝ «ասել այն, ինչ պետք է ասել, չասել այն, ինչ պետք չէ ասել, և ասել այնպես, ինչպես պետք է», արդիական է բոլոր ժամանակներում:

Բանախոսը պետք է համեստ լինի իր ինքնագնահատականի մեջ, չպետք է սեփական կարծիքը պարտադրի խոսակցին, պետք է բացառի խոսքի ավելորդ կտրուկությունը, անպատեհ որակավորումներ տալը, ծաղրելը, հոգեբանական հարձակումը՝ դիմացինին հանկարծակիի բերելու նպատակով, ձայնի կամ շարժումների կրկնօրինակումը, շփոթեցնելը, ռեպլիկ տալը, մտքի նենգափոխումը:

Կան դիմելաձևեր, որոնք իրադրության հավասարակշռելուն են միտված. «Իսկ Դուք ի՞նչ եք կարծում...», «Ձեր կարծիքով ինչպե՞ս...» և այլն: Գործնական հաղորդակցման ժամանակ ուշադրության կենտրոնում պետք է պահել խոսակցի անձնական կարծիքը՝ նկատի ունենալով վերջինիս շահագրգռվածությունը տվյալ հարցի քննարկման գործում:

Կիրառական էթիկական նորմերը համընդհանուր հասարակական կանոններ են, և որոշակի իրավիճակում սոցիալական այս կամ այն խմբի կողմից դրա կիրառումը մի կողմից կապված է կենսագործունեության առանձնահատկությունների (որոշ դեպքերում այն ավելի գործնա-

---

<sup>3</sup> Տե՛ս նաև **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2, Եր., 1991, էջ 325-331:

կան բնույթ է կրում), իսկ մյուս կողմից՝ բարոյական ըմբռնումների, դաստիարակության հետ:

Սկզբունքային այդ դրույթները ամփոփում են մարդկային գործունեության ընդունված և հաստատագրված տարբեր ձևերը. դրանք համընդհանուր ճանաչում գտած վարքի չափանիշներ են՝ ազգային և մշակութային (ներառյալ կրթությունը և դաստիարակությունը) ավանդույթով ամրագրված, և մատնանշում են հասարակական կյանքի որոշակի մակարդակ:

**Քանալի բառեր** – *էթիկա, մասնագիտական էթիկա, խոսքի մշակույթ, լեզվական նորմ, բանավոր խոսք, բառապաշար, դարձվածք, բանավեճ:*

**СУСАННА ГАБРИЕЛЯН - Прикладные этические нормы.** – Общепринятые и систематизированные определения, которые применяются в различных сферах межличностной коммуникации – деловой, официальной, дружеской и др., и предполагают соблюдение цивилизованных норм общественной жизни, проявление определенного поведения, продиктованного в рамках соблюдения этих норм, а также отношения к этим нормам. Соблюдение этических норм, особенно в процессе деловых отношений, обусловлено также своеобразием внутринациональных общений каждого народа и указывает на определенный уровень общественной жизни.

**Ключевые слова:** *этика, профессиональная этика, культура речи, языковая норма, устная речь, лексика, фраза, дискуссия.*

**SUSANNA GABRIELYAN -The Ethical Norms of Oral Speech.**-Applied ethic norms are universal and regulated standards expressed in different spheres of interpersonal communication- business, formal, friendly and so on. They imply maintenance of the etiquette rules of public life, certain behavior conditioned by it and specific attitude towards it. The maintenance of ethic standards particularly in business relations is conditioned by a nation's internal interaction peculiarities and signals a certain level of social life.

**Key words:** *ethics, professional ethics, culture of speech, linguistic norm, oral speech, vocabulary, phrase, debate.*

**ԺՈՂՈՎՐԳ-ԱՅՈՍԱԿՅԱԿԱՆ ԲԱՌ-ԱՇԵՐՏԸ ԿՈՍՏԱՆ  
ՁԱՐՅԱՆԻ ՉԱՓԱՃՈՅՈՒՄ**

Հարուստ, բազմազան ու բազմատարր է Կոստան Ձարյանի բառապաշարը: Գրողը վարպետորեն օգտագործել է մեր բազմադարյան լեզվի բառազանձը՝ գրական ձևեր, բարբառներ, ժողովրդախոսակցական բառեր, փոխառություններ և օտարաբանություններ՝ ստեղծելով արևելահայ և արևմտահայ լեզուների մի յուրօրինակ «համաձուլվածք»: Կոստան Ձարյանը ժողովրդախոսակցական բառաշերտն օգտագործել է շատ հմտորեն, զգուշությամբ:

«Տատրագոմի հարսը» պոեմը Կ. Ձարյանի լավագույն ստեղծագործություններից է: Միջավայրի նկարագրությունը՝ բնության, բերքահավաքի, հարսանիքի տեսարաններ, առտնին գործեր, և հերոսների՝ ազգային լեզվամտածողությանը յուրահատուկ բառաձևերը նպաստել են պոեմի ժողովրդայնությանը: Սակայն պոեմը «հեղեղված» չէ բարբառային բառերով:

Անհերքելի ճշմարտություն է, որ լեզվի բառապաշարը ամենամեծ փոփոխություններն է կրում, շատ «զգայուն» է հասարակական կյանքի, գիտատեխնիկական առաջընթացի նկատմամբ, որի արդյունքում ստեղծվում են նոր բառեր ու արտահայտություններ, դուրս են մղվում հները: Այս կամ այն հեղինակը օգտվում է լեզվի հարուստ բառազանձից՝ կապված տվյալ երկի բովանդակության, ժամանակաշրջանի, թեմայի հետ:

Խոսել հայ բնաշխարհի, գյուղական թեմաների մասին նշանակում է զգալիորեն օգտվել ժողովրդախոսակցական բառաշերտի բառերից: Ակնհայտ է, որ վաղ աշխարհաբարի շրջանում (նաև սկսած միջին հայերենից) բարբառները մշտապես սնել են գրական լեզուն, եղել կենսատու աղբյուր, ինչպես Դ. Դեմիրճյանն է նշում. «հանցավոր կերպով

չօգտագործված վիթխարի հարստություն»<sup>1</sup>: Ասվածից չի ենթադրվում, որ այդ քեմայով գրված ստեղծագործությունները պիտի «հեղեղված» լինեն բարբառային բառերով, բարբառին բնորոշ քերականական ձևերով, որովհետև «ժողովրդայնություն տվողը բառերը չեն, այլ հարազատ, ժողովրդային լեզվամտածողությունը, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրրվում է հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ուշադիր դիտումով և հմուտ օգտագործմամբ: ...Բուն ժողովրդական պատկերավորումներն են ապահովում լեզվի ժողովրդայնությունը, բայց ոչ երբեք բարբառային բառերը»<sup>2</sup>:

Մեզանում հաճախ բառապաշարի գրական շերտին հակադրում են բարբառայինը, որը բնավ չի նշանակում սոսկ բարբառային կամ գավառական բառեր. ոչ գրական բառաշերտը ներառում է նաև ժողովրդախոսակցականը: Այդ բառաշերտերը ծագմամբ ժողովրդական են, սակայն կիրառության ոլորտներով, հաճախականությամբ, ոճական արժեքով տարբեր են: Ընդունված է բարբառային բառերն ու արտահայտություններն անվանել *գավառաբանություններ*, իսկ ժողովրդախոսակցական բառաշերտի բառերը՝ *հասարակաբանություններ*: Այս երկու բառաշերտերը նույնը չեն. գավառաբանությունները մեղ, տարածքային սահմանափակություն ունեն, հաճախ անմատչելի ու անհասկանալի են տվյալ բարբառին չտիրապետող անհատին, իսկ հասարակաբանությունները համագործածական, հասկանալի բառեր են և մի տեսակ համազգային խոսակցական լեզու են ձևավորում՝ առանց տարածքային սահմանափակման: Ինչպես իրավամբ նշում է Ս. Մելքոնյանը, «բոլոր այն բառերն ու ձևերը, որոնք գրական չեն, խառը անվանումով կոչվում են բարբառային, գավառական, ժողովրդական, խոսակցական և այլն:... Ինչ որ գրական չէ, բարբառային է» և հավելում է. «...Բարբառային բառերն ու ձևերը իրենց էությամբ, գրական նորմայի նկատմամբ ունեցած առնչությամբ միատեսակ չեն. դրանց մի մասը մեղ տեղային բնույթի է, անմատչելի հանրության համար և բավականին հեռու գրական նորմայից, իսկ մյուս մասը համեմատաբար ավելի ընդհանրական նշանակություն

<sup>1</sup> **Ղեմիրճյան Պ.**, Սովետական գրականություն, ք. 9, Եր., 1951, էջ 125:

<sup>2</sup> **Սևակ Պ.**, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Եր., 1948, էջ 124:

և կիրառություն ունի»<sup>3</sup>: Խոսակցական բառաշերտը ավելի մոտ է գրականին, և հաճախ որոշ բարբառային բառեր, հղկվելով և մշակելով խոսակցական լեզվում, անցնում են գրական լեզու. այլ կերպ ասած՝ ժողովրդախոսակցական բառաշերտը միջին օղակ է բարբառ-գրական լեզու բառաշրթայում, օրինակ՝ *իլիկ, լոլիկ, լղար, լուսնկա, մոշ, պարարտ, բանջար* և այլն:

Առօրյա-խոսակցական բառաշերտում կարող են հանդիպել նաև գոեհկարանություններ, օտարաբանություններ, նաև կենցաղագրական բառաշերտի (գյուղական կենցաղին բնորոշ) բառեր: Մյուս տարբերությունն այն է, որ «բարբառային բառերը պատկանում են բառապաշարի ոչ կենսունակ (ոչ գործուն) ոլորտին, ուստի և, սովորաբար, գրական լեզվի նորմայի սահմաններից դուրս են և, բնականաբար, գործածական չեն նորմատիվ բնույթի այնպիսի գործառական ոճերում, ինչպիսիք են գիտական, պաշտոնական ոճերը»<sup>4</sup>:

Այսպիսով, հասկանալի է, որ ժողովրդախոսակցական բառաշերտը գործածվում է առօրյա-խոսակցական, գեղարվեստական, մասամբ նաև հրապարակախոսական ոճերում:

Քանի որ այս բառաշերտի բառերը հաճախադեպ գործածություն ունեն գեղարվեստական ոճում, կարելի է առանձնացնել խոսքի ոճավորման երկու տարբերակ. կա՛մ հեղինակային խոսքն է ոճավորվում, կա՛մ գրողը գործածում է այս բառաշերտը՝ կերպարների խոսքը անհատականացնելու, համոզիչ դարձնելու նպատակով: Ինչպես վկայում է Մ. Նալբանդյանը, «բոլոր զավառական բարբառների էական տարրերը, որ իրենց ձևով ու կազմությամբ ավելի ընդունակ են, պիտի ընկնեն ճարտար հեղինակների քուրայի մեջ և այնտեղից քիմիաբար միանալով՝ պիտի դուրս գան «ոչ որպես թլպատություն կամ անթլպատություն», այլ որպես նոր արարած»<sup>5</sup>:

Կ. Ջարյանը բարբառախոս կամ բարբառակիր չէր, և թերևս տեղին է հիշեցնել, որ ծնունդով լինելով արևելահայ՝ ամբողջ կյանքն ապրել է

<sup>3</sup> **Մելքոնյան Ս.**, Ակնարկներ հայոց լեզվի ոճագիտության, Եր., 1985, էջ 107:

<sup>4</sup> **Եգեկյան Լ.**, Հայոց լեզու, Եր., 2007, էջ 148:

<sup>5</sup> **Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1953, էջ 167-168:

տարագրության մեջ, հայերենով գրել սովորել է քսանհինգ տարեկանում Մխիթարյան միաբանությունում՝ հետագայում կատարելապես տիրապետելով ն'արևմտահայերենին, ն' արևելահայերենին: Բնութագրելով մեծ գրողի լեզուն՝ կարելի է ասել, որ նա գրում էր արևելահայերենով՝ արևմտահայերենի «մշտական ներկայությամբ», ուստի նրա խոսքարվեստը, բնականաբար, տարբերվում է մեր մյուս գրողների լեզվից. ասես երկու գրական լեզուների «համաձուլվածք» է, որով էլ նա թողել է ինքնատիպ, պատկերավոր լեզվով գրված հարուստ գրական ժառանգություն:

«Տատրագոմի հարսը» առաջին անգամ տպագրվել է 1930 թ. Բոստոնում, այնուհետև՝ 1958թ. Երևանում: Ինչպես վերը նշել ենք, հենց թեմայի ընտրությունն է որոշել ժողովրդախոսակցական բառաշերտի գործածության անհրաժեշտությունը: Կ. Ջարյանը չափավոր ու տեղին է գործածում այդ բառաշերտը, իր հերոսների խոսքը համեմուն կենսունակ, հյուսթեղ բառ ու բանով: Ինչպես ինքն է վկայում, «լեզվին կենդանություն տալու համար պետք է վերադառնալ հողին, սեփական հողին: Լեզուն իր հյուսթը առնում է հողից, ինչպես ծառը»<sup>6</sup>:

Նա ոճավորում է իր հերոսների խոսքը՝ գործածելով այդ միջավայրի համար բնորոշ խոսակցական բառեր, ձևեր ու արտահայտություններ: Բերենք բնագրային որոշ օրինակներ.

«**Աղջի՛**, ասա **հա, աղջի՛**. ասա **հա: Ծռում է** գլուխը, մինչ մեջը ըմբոստ մի ձայն է լայիս, **-Չեմ ուզի, դադո՛, չեմ ուզի, բարո...**(15): Մոմերը **մորսկան ծռել են** բոցը... Քահանայի ձեռքը դողում է... Չայնը քսվում է խրոպոտ գրաբարի մաշված խոսքերին՝ շինականների **պլզած** աչքերին: (14): ...Ու ահա զվարթ, **արասիչին տնկած** գլխի **կարարին**, թևերը պարզած թիերի նման, ...պարում է նագով **բազվոր** չովանը: Փշում է գուռնան **-Տմբյա, հա տմբյա...** (19)...**Խեթ լինի, ախպե՛ր...** այս անգամ **խեթ չէ**, թուրքերը եկել հարևան գյուղից աղջիկ են տանում, տավար ու նախիր (21), չովիվները բան չգիտեն **բողոք է**, որ կռիվ եղավ՝ **համա**, ուլքե՞ր ընկան, մեռան և ու՞ր գացին մեր կտրիճներ՝ ոչ որ գիտի (44)»:

<sup>6</sup> **Ջարյան Կ.**, Տեղի, ժամանակի և գրողի մասին, Սովետական գրականություն, Եր., 1970, թ. 6, էջ 103:

Վերը բերված հատվածները վկայում են, որ գյուղական միջավայրը, հերոսների զբաղմունքը, դեպքերի ընթացքը, երկխոսությունները գրական նորմավորված լեզվով ներկայացնելը համոզիչ ու տեղին չէր լինի:

Երբեմն ժողովրդախոսակցական բառերն ու արտահայտությունները համեմված են արևելյան աշուղական երգին բնորոշ տարրերով, որով նա ոճավորել է իր հերոսի՝ քրդի տղայի խոսքը. «Ո՛վ լե, լե, լե հայու աղջիկ... Ես քեզ համար *առնեմ* գոտի Հարուստ ու մեծ ակունքներով, Շիրազի լայն *խալիներով*, Շինեմ մի *քահար* Եվ մեր շեյխի կնոջ նման *Ո՛վ լե, լե, լե հայու աղջիկ*... Բեզ տամ պատիվ, անուշ *շերեթ*... (51)»:

Նշված բառաշերտի բառերի շարքում հանդիպում են օրինանքներ, բարենաաղթանքներ, ինչպես նաև անեծքներ, որոնք ևս հարազատ են ժողովրդի խոսքին, ստեղծում են ժամանակաշրջանի հավաստի կոլորիտ. «*Աստվածամե՛ր, լուսիդ մասրա՛ն, սրբիդ դուրքա՛ն*,... դու որ մայր ես լքված *հորքուկ աղջկանց, աչքիդ դուրքան*, գթա՛, գթա՛(49): *ճժե՛ր, շան փղաք*, ի՞նչ է, քնե՞լ եք... (38): *Հո՛ղը գլխին: Լույս չտեսնի՛ պաղի, մեռնի: Աղիքները չորանան: Արգանդի մեջ օջ բուսնի:* Sn, սա պես բան... *Տափը ճղվի, մեջը մքնի*... (57)»:

Շատ հաճախ հեղինակի խոսքին համապատասխան երանգավորում են տալիս ձայնարկությունները. «Հայու կնիկ՝ քրդի լաճի հետ փախչի՞... *Ի, ի՛, վա՛ յ, վա՛ յ* մեզ. *Ա՛յ* անհավատ, *ա՛յ* անամոթ, *ա՛յ* անանամու. -Քույրիկ, *վալլա՛ հ*, բան չիմացա: (44): Չիմվոր հովան, էլ գյուղ չեկավ: Լուր չխաբրեց, փող չդրկեց: *-Ամա՛ն*, ախպեր, լեռնեմ անդին, Մարդս տեսա՞ք: Տատրագոմի հարս Սանային մի բան չասի՞ն (45)»։ Ինչպես նշվեց, պոեմում միաձուլված են և՛ արևելահայերենի, և՛ արևմտահայերենի, և՛ գրական, և՛ խոսակցական լեզվի բառեր ու բառաձևեր: Պոեմի դիպաշարին համահունչ են բնության, հարսանիքի, առտնին գործերի տեսարանները:

«*Յավրում*, աշո՛ն, ասիր, *ախպար*, Կարասներիդ գինով հրավառ Ինչպես եղավ, որ վառեցիր, գինովցուցիր սիրտս տկար... *Յավրում, քույրիկ*, ես *խոմ* չեի, այլ իմ *ախպար* (54): Երդիկներից ծուխ է ելնում. Կչկչում են հավերը... *Մրսկան* ու փխրուն, կովի առջև եվ Սանան ոտաբոբիկ, լեռան գմբուխտ կրծքին՝ *չոքել է քուլիկ* մատներով կաթ է

կթում(22): Հովանը ահա **բոռում է**, կանչում, **շվկալով** զարնում ձեռքի ճիպտը...(23)»: Պոեմում հանդիպում են նաև դերանունների գործածության խոսակցական ձևեր (*աչ> է*). «-**է ն, է ն... է ն, է ն** դև էլաժ ձագր... **է ն, է ն, է ն, է ն...** (56)»:

Ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ են նաև հարադրությունները (անվանական, բայական), դարձվածքները, կրկնավորները, բազմապատկական բայերը: Ստորև ներկայացնենք դրանք առանձին՝ բնագրային ծավալում օրինակներով խոսքը չծանրաբեռնելու համար:

**Հարադիր բայեր. շուռ գալ** (16), **պար պարել** (17,55), **պտույտ գալ** (20, 37,) **պտույտ անել** (18, 22), **ծափ փալ** (19), **փափան անել, փափան գալ** (20), **ուժ փալ** (23), **փուլ գալ** (23), **բերանն առնել** (23), **քավալ գալ** (41), **ծունկի գալ** (42), **երգ երգել** (55), **բարև դրկել** (31) **հակինք կրկրել**(25), **ճոճ գալ** (40), **ոլոր անել** (27), **ոլոր փալ, ոլոր գալ** (30), **գրոհ փալ**(22) , **կուլ փալ** (20) և այլն: Երբ դաշտերում **հակինք կրկրած** մեծ հասկերը սկսեցին հասնել և խոնարհած իրենց գլուխը **փափան անել...** Անտառն ամբողջ խարշափելով **փափան եկավ** (20)...

Անսովոր են **փափան անել, փափան գալ, ցունց գալ** հարադրությունները, որոնց **փափան, ցունց** բաղադրիչները առանձին գործածություն չունեն: Ի դեպ, **փափան** բառը որոշչային տարբերակով նույնպես հանդիպում է:

Ինչպես գիտենք, հարադրավոր բայերի մի մասը կարող է վերաիմաստավորվելով վերածվել դարձվածքի՝ **աչք (աչքով) անել** (41), **քարոզ ասել** (27), **կաժան առնել** (52), **աչքերը պղզել** (33), և որոնք Մ. Աբեղյանի բնորոշմամբ «շրջաբանական ասություններ» են՝ խիստ բնորոշ մեր ազգային խոսքին ու լեզվամտածողությանը:

Պոեմում հանդիպում են նաև բնաձայնական հիմքերով կազմություններ՝ **շվկալ** (23), **ճոճոսլ** (27), **ճոռսլ** (21), **զվկալ** (28), **հոհոսլ** (29,45), **մոմոսլ** (36) և այլն, որոնք ևս բնորոշ են խոսակցական լեզվին:

Հաճախադեպ գործածություն ունեն գուգաբայական հարադրությունները՝ **թռչել-զնալ** (25), **գալ-ծածկել** (20), **փանել-շրջել** (22), **փանել-նեղել** (29), **գալ-փեսնել** (33), **կանչել-պոռալ** (47), **անցնել-զնալ** (34) և այլն: Գ. Սևակի կարծիքով՝ «կրկնավոր բարդությունները հարադ-

րության ամենանախնական տեսակն են, երբ միևնույն բառի կամ բառարմատի կրկնությամբ կազմվում է նոր բառ կամ իմաստային երանգ տրվում բառին»,<sup>7</sup> որոնք բնականաբար հնուց կային մեր լեզվում, սակայն այսօր էլ պահպանել են իրենց կենսունակությունը և՛ գրական, և՛ խոսակցական լեզվում, և՛ բարբառներում: «Այն առավել չափով գործում է ժողովրդական-խոսակցական լեզվում և, մասնավորապես, բարբառներում: Ա. Պապոյանը նշում է, որ «...այդ եղանակով ամեն օր ու ամեն ժամ մարդ ուզածի չափ կարող է կազմել նորանոր բառաձևեր...»<sup>8</sup>:

Պոեմում հանդիպում են բառի կամ արմատի կրկնությամբ ուղիղ և հնչյունավորված ձևերով և այլ հարադրություններ. **նարսք-չարսք** (18), **ալիք-ալիք** (28), **պիշ-պիշ** (15), **հարսյ-հուրսյ** (17), **դիոյ-գունուս** (18), **կամաց-կամաց** (19), **գիծ-գիծ** (24), **բուք-բորան** (25, 3, 6), **ալ-վալս** (50), **դես-դեն** (55), **մի-մի** (56), **բաժակ-բաժակ** (50) և այլն:

Լեզվի ժողովրդախոսակցական բառաշերտին հատուկ է նաև բազմապատկական բայերի գործածությունը: Կ. Չարյանը գործողության կրկնողականության իմաստ արտահայտելու համար բազմապատկական ածանցներից նախընտրում է **-ոյո** ածանցը.

Լռիկ, խստաղեմ, ընդմիշտ ուխտ արած պատերազմիկներ, Վայրի կատուի **ցարկոյոող** քայլով մագլցում էին ... (21): Խումբը դոփում է **ցարկոյոելով** ճեղքում գիշերը... **Ցարկոյում է** մթազին... (35, 16, 37, 44):

Հանդիպել ենք **կոխկոյոել** (30), **պարոյած** (47), նաև **կայծկլոող** (37, 42, 64, 65), **քաշկոյոել** (36), **բոցկլոացող** (48), **կծկլոալ** (55), **սողկլոալ** (37), **ճանկոյոել** (57), նաև արմատի կրկնությամբ ձևեր՝ **դողդողալ** (52, 67), **քաշքշել** (65) և այլն:

Նպատակ չունենալով պոեմի բառապաշարի շերտաբանական դասակարգում կատարելու՝ նշենք, որ պոեմում գործածված են նաև օտարաբանություններ, արևմտահայերեն բառեր, բարբառային քերականական ձևեր, հոլովական ձևեր, հոդերի գործածության, հոգնակիի կազմության գրաբարյան ձևեր, որոնք ևս նպաստել են նկարագրվող դեպքերն

<sup>7</sup> Սևակ Գ., Ժամանանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 160:

<sup>8</sup> Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Եր., 1970, էջ 21:

ու իրադարձությունները, գյուղական միջավայրն ավելի համոզիչ դարձնելուն: Նա կարողացել է հմտորեն օգտվել արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարներին բնորոշ ձևերից, կողք կողքի գործածել է հոմանշային գույգեր (երկու լեզուներով), ինչպես՝ **մեծողի-մեծ, էրիկ-ամուսին -մարդ, փակ-գոց, աղվոր-գեղեցիկ, ախպեր-ախպար, անդին-այն կողմ, նորեն-նորից- վերապին**: Բերենք օրինակներ. Սանան սիրտը ման է ամուսն խոր լուռության խոսքան դաշտում, դնում ձեռքը **գոց** ճակատին (35): ...Ապա չոքած, նա քսում է իր ճակատը դավախար **գոց** երկնքի պատերին (38): Սանան **աղվոր** լիճը ընկած արևի պես և մեղմաճեմ շինարի բոյի սավերն է նետում տղամարդկանց աչքերին (38): Ամա՛ն, **ախպեր**, լեռնեն անդին **մարդս** տեսա՞ք և այլն: «Այս երկճևությունը, բացի իմաստային նուրբ տարբերություններից, հնարավորություն է տալիս գրողին նաև պահելու հինգվանկանի հանգերը և խուսափելու կրկնություններից»<sup>9</sup>:

Կ. Չարյանին հանիրավի մեղադրել են (Ավ. Սևարոնյան, Համաստեղ), որ նա, չապրելով գյուղական միջավայրում, ստեղծել է հայ գյուղը պատկերող պոեմ, սակայն, ինչպես համոզվեցինք, դա նրան հաջողվել է: Արտերկրում ապրելու և նաև այլ լեզուներով ստեղծագործելու փաստը չէր կարող անհետևանք մնալ, չազդել գրողի ոճի, լեզվամտածողության, բառընտրության վրա:

Այսպիսով, քննելով պոեմի խոսակցական բառաշերտը, համոզվեցինք, որ հեղինակը կարողացել է վարպետորեն գործածել ժողովրդական հյութեղ ու կենդանի խոսքը՝ աննպատակ չծանրաբեռնելով ավելորդ բարբառային ձևերով: Պոեմի լեզվի քննությունը ցույց է տալիս, որ բառապաշարի մի զգալի շերտ են կազմում ժողովրդական ակունքներից քաղված բառերն ու բառաձևերը, դարձվածքները, հարադրությունները (անվանական և բայական), անեծքներ, բարեմաղթանքներ, գյուղաշխարհը բնորոշող (կարելի է ասել զբաղմունքային) բառաձևեր, օտարաբանություններ (հատկապես արևելյան լեզուներից), ձայնարկություն-

---

<sup>9</sup> **Գրիգորյան Ս.**, Կ. Չարյանի պոեմների բառապաշարային առանձնահատկությունները, «Համաստեքստ», Եր., 2012, էջ 140:

ներ, կրկնավորներ: Բավական համոզիչ լեզվական ու պատկերային համակարգ ունի պոեմը. ասես գրված է գյուղի մարդու ձեռքով:

*Պոեմում հանդիպում են նաև ժողովրդախոսակցական այլ բառեր՝ կպցնեք, շվարեք, յար, մամիկ, փափուչ, խեք, շառ, փավար, խալի, ճմռեք, դուշման, սայան\*:*

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք, որ Կ. Ջարյանի «Տատրագոմի հարսը» պոեմի բառապաշարը, գրողի բառընտրության հմտությունն ու լեզվական ճաշակը, ժողովրդախոսակցական բառաշերտի գործածման հմտությունը թույլ են տալիս եզրակացնելու, որ նա ստեղծել է մի նոր որակ՝ լեզվատճական ինքնատիպ, խիստ անհատական ձևերով, ազգային լեզվամտածողությամբ: Ինչպես ինքն է վկայում, «Լեզուն արյունի մեջ է, ինչպես տաղանդը, ինչպես հիվանդությունը, ինչպես ճաշակը...»:<sup>10</sup>

**Բանալի բառեր** – *բառապաշար, ժողովրդախոսակցական բառեր և արրահայտություններ, հարադրություններ, կրկնավոր բարդություններ, դարձվածքներ, փոխառություններ, օտարաբանություններ:*

**ГРАЦИН САРКИСЯН- Народно-разговорная лексика в поэзии Костана Заряна.** - Богата, многообразна и неоднородна лексика Костана Заряна. Писателем мастерски использована сокровищница нашего древнего языка: литературные формы, диалекты, народно-разговорные слова, заимствования и варваризмы – и создан своеобразный сплав восточноармянского и западноармянского языков. Костан Зарьян использует народно-разговорную лексику умело и осторожно, диалектные слова не наводняют поэму. Народности поэмы способствовало описание среды: природы, сбора урожая, свадебных сцен, повседневных дел, - а также специфические словоформы, присущие национальному языковому мышлению героев.

**Ключевые слова:** *лексика, народно-разговорные слова и выражения, сопоставления, итеративные сложные слова, фразеологические обороты, заимствования, варваризмы.*

---

\* Բերված բնագրային օրինակներում որոշ բառեր ընդգրկված չէին:

<sup>10</sup> **Ջարյան Կ.**, Տեղի, ժամանակի և գրողի մասին, Սովետական գրականություն, Եր., 1970, ք. 6, էջ 103:

**HRATSIN SARGSYAN- Folk-Colloquial Vocabulary in Kostan Zaryan's Poetry.** - Kostan Zaryan's vocabulary is rich, diverse and heterogeneous. The writer skillfully used the thesaurus of our ancient language: literary forms, dialects, folk-colloquial words, borrowings and barbarisms, and a unique fusion of the Eastern-Armenian and Western-Armenian languages has been created. Kostan Zaryan uses folk-colloquial vocabulary skillfully and carefully, dialect words do not flood the poem. The description of the environment, i.e. nature, harvesting, wedding scenes and everyday affairs, as well as the specific word forms inherent to the national linguistic thinking of heroes contributed to the folk character of the poem.

**Key words:** *vocabulary, folk-colloquial words and expressions, comparisons, iterative compound words, set phrases, borrowings, barbarisms.*

**ՀԱՐԱՊՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ Ա. ԱՄԱՍԻԱՑՈՒ  
«ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ**

Բայական հարադրություններ են կոչվում այն բաղադրությունները, որոնց բաղադրիչները, թեև պահում են իրենց ձևական անկախությունը, սակայն ունեն բառային իմաստի ամբողջականություն. «բաղադրիչների բառական իմաստները ներդրվում են մի ընդհանուր իմաստի մեջ»<sup>1</sup>: Այսինքն՝ հարադրություններին բնորոշ կարևորագույն հատկանիշը նրանց բաղադրիչների իմաստային միասնությունն է, որը հարադրությունները լեզվում ձեռք են բերում աստիճանաբար, երբ ժամանակի ընթացքում մթագնում է երբեմնի շարահյուսական կապակցությունների՝ բայի և նրա լրացման միջև գոյություն ունեցող քերականական ուղիղ կապը:

Մեր ուսումնասիրությունը նվիրված է Ա. Ամասիացու «Օգոստ բժշկութեան» երկում հարադրավոր բայերի կիրառությանը: Հարադրավոր բայերը, ինչպես միջին հայերենում ընդհանրապես, այնպես էլ «Օգոստ բժշկութեան» երկում բազմաթիվ են: Հայ լեզվաբանական գրականության մեջ հարադրավոր բայերն անվանվել են *բաղադրյալ, հարադրյալ, հարադրական, հարադիր, վերլուծական բայեր* եզրույթներով: Մեր աշխատանքում նախընտրել ենք *հարադրավոր բայեր* եզրույթը (այսինքն՝ հարադիր ունեցող բայեր): Հարադրավոր բայերը, որոնք բաղկացած են հարադրից և բուն բայական մասից, լեզվում կարող են գործածվել իմաստային մի շարք առանձնահատկություններով:

1. Բաղադրության բայիմաստը կարող է պայմանավորված լինել հարադրով: Օր.՝ *գործ արկանել<sup>2</sup>, ի քերանն առնուլ (245), ի խոց դառնալ (417)* և այլն: Այսպիսի օրինակներում բայերը հանդես են գալիս սպա-

<sup>1</sup> Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, Եր., 1962, էջ 163:

<sup>2</sup> Ամասիացի Ա., Օգոստ բժշկութեան, Եր., 1940, էջ 476: Այս և հաջորդ օրինակները վերցված են վերոհիշյալ գրքից: Այսուհետև փակագծերում կնշվի միայն էջը, իսկ «Օգոստ բժշկութեան» անվանումը կնշվի ՕԲ հապավմամբ:

սարկու կամ օժանդակ դերով, բաղադրությանը բայական իմաստ են հատրողում, գործողության վերացական իմաստ են արտահայտում, իսկ հարադիրները որոշում են բայի բովանդակությունը: Այսպիսի բաղադրություններ են կազմում *ածել, առնել, քերել, բռնել, գալ, զգել, դնել, ընկնել, լինել, կալ, կենալ, փալ, բաշել* և այլ բայերը:

2. Բաղադրության իմաստը կարող է պայմանավորված լինել բայով, այսինքն՝ բայը կարող է պահել իր բառային իմաստը, իսկ հարադիրը կարող է պարզապես ձևափոխել կամ սաստկացնել այն: Օր.՝ *արդարա երթալ* (47), *բոլոր պարել* (31), *ի դուրս ելանել* (25), *ի վայր իջնուլ* (13) և այլն: Այս խմբի բայերը կարելի է անվանել գործողության կամ եղելության պարագայական ուղղվածությունը և ընդհանրապես նպատակամիտվածությունը լրացուցիչ կերպով նշող կամ ընդգծող հարադրական բայեր<sup>3</sup>: Այսպիսի բայերն իրենց իմաստային յուրահատկություններով նմանվում են հունարենի, ռուսերենի, գերմաներենի և այլ լեզուների՝ արեղյանական եզրույթներով ասած նախդրավոր բայերին կամ նախաբայերով կազմվածների<sup>4</sup>:

3. Ե՛վ բայը, և՛ հարադիրը կարող են գրկվել իրենց բառային իմաստից և միասին հանդես գալ բոլորովին մոր, փոխաբերական իմաստով: Օր.՝ *խելքն փոխել* (503), *չափու անցնիլ* (57), *ոխ պահել* (55) և այլն:

Հարադրավոր բայերի իմաստային առանձնահատկությունները պայմանավորված են նրանով, որ թեև այդ բայերը բաղկացած են երկու բաղադրիչներից, սակայն ունեն մեկ բառային իմաստ և գործածվում են որպես մեկ բառ: Ուստի հաճախ լեզվում ունենում են իրենց՝ մեկ բառով կազմված համարժեքները, չնայած նրանց հետ բացարձակ նույնանիշներ չեն կազմում, որովհետև նրանցից տարբերվում են թե՛ բառային-քերականական, թե՛ ոճական մի շարք առանձնահատկություններով: Քերականական տեսակետից հարադիրն ու բայը միասին հանդես են գալիս իբրև մեկ խոսքի մաս և իբրև նախադասության մեկ անդամ:

---

<sup>3</sup> Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 175-176:

<sup>4</sup> Ընդգծված եզրույթները Մ. Աբեղյանին են: Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, Զ, Եր., 1974, էջ 138:

Հարադրավոր բայերի կարևոր հատկանիշներից է նաև այն, որ դրանք ունեն մեկ բառային շեշտ, որն ընկնում է հարադրի վրա: Օր.՝ *դու՛ս գալ* (175), *ի գնո՛ր կենալ* (156), *խաղա՛ջ առնել* (106) և այլն:

Իրենց կառուցվածքային առանձնահատկություններից ելնելով՝ հարադրավոր բայերը հարաբերակից են մի կողմից բառակապակցություններին (այս դեպքում բայի բաղադրիչները համարվում են ինքնուրույն, անկախ բառեր), մյուս կողմից՝ դարձվածքներին (երբ բաղադրիչները դիտվում են որպես մեկ բառային ամբողջություն): Բայական բառակապակցություններում բայի և նրա լրացման միջև հոլովառական, քերականական կապն ամբողջությամբ մթագնած չէ, և ակնհայտ է նրանց միջև խնդրային հարաբերությունը: ՕՔ-ում հանդիպող այդպիսի կապակցություններից են *գարհինն կիրել* (276), *զհոգան տրանել* (486), *զցան տրանիլ* (438) և այլ բայական բառակապակցությունները: Դրանք Ա. Աբրահամյանի բնորոշմամբ «անկայուն, ժամանակավոր շարահյուսական կապակցություններ են»<sup>5</sup>: Ի տարբերություն հարադրավոր բայերի, որոնց բաղադրիչները միասին մեկ բառ են կազմում, սովորական շարահյուսական կապակցությունների բաղադրիչները հանդես են գալիս իրենց բառային բուն նշանակություններով՝ հատկանշվելով համապատասխան խոսքի մասերի քերականական հատկանիշներով: Այսինքն՝ բառակապակցությունները չունեն հարադրավոր բայերի իմաստային կարևորագույն առանձնահատկությունը՝ բառիմաստի միավորվածությունը:

Հարադրավոր բայերը հարաբերակցվում են նաև դարձվածքներին՝ «բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություններին, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնված»<sup>6</sup>: Ինչպես տեսնում ենք, այս սահմանումը ճիշտ է նաև հարադրավոր բայերի համար՝ միայն մեկ տարբերությամբ: Եթե դարձվածքի ամենաբնորոշ հատկանիշը վերաիմաստավորված կապակցություն լինելն է, այսինքն՝ փոխաբերական իմաստ ունենալը, ապա հարադրավոր բայի համար դա պարտադիր չէ,

<sup>5</sup> Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 172:

<sup>6</sup> Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 5:

բանի որ հարադրավոր բայ է նաև այնպիսի կապակցությունը, որի իմաստը բխում է բաղադրիչների ուղիղ իմաստից: Դարձվածքի և հարադրավոր բայի միջև իմաստային այս սահմանազատումը ոչ բոլոր հայ լեզվաբաններն են ընդունել:

ՕԲ-ում կիրառվել են բազմաթիվ հարադրավոր բայեր, որոնք դարձվածքի արժեք ունեն<sup>7</sup>՝ *աղօթ կենալ* (473), *զծարան կտրել* (315), *գրուց տալ* (94), *էրիկ տալ* (158), *դեղնութիւն քշտել* (205), *խնացքն բառնալ* (47), *միտն պահել* (159)//*ի միտքն չգել* (397), *ի մտաց երթալ* (397), *ի չափու անցնիլ* (80), *ի ցնոր կենալ* (156), *խելքն անցնիլ* (470)//*ի խելաց երթալ* (240)//*խելքն ցրվիլ* (141), *ծաղր առնել* (52), *հասերեր առնուլ* (80), *չրի գրուցել* (144)//*խելքն փոխել* (503) և այլն:

ՕԲ-ի գրաբարյան և միջինհայերենյան հարադրավոր կազմություններն առանձնացնելիս առնչվել ենք այնպիսի խնդրի, ինչպիսին է հարադրավոր բայերի՝ բառարաններում ոչ ամբողջությամբ արձանագրված լինելու փաստը: Ե՛վ Ն՛ՀԲ-ում, և՛ Մ՛ՀԲ-ում հարադրավոր բայերի նկատմամբ երկակի մոտեցում է ցուցաբերվել: Մի դեպքում հարադրավոր բայն ամբողջությամբ ներկայացված է որպես գլխաբառ (օր.՝ *աղօթք անել*, *ամուսնոյ տալ*, *անեղբայր առնել*, *չեռն ընկնել*, *չերպակալ առնել*, *յանչն սրանալ* և այլն), մյուս դեպքում այն բերվում է որպես բաղադրիչներից մեկի՝ գլխաբառի առանձին կիրառություն (օր.՝ *գանգաւր այնել* բայը՝ *այնել* գլխաբառի տակ, *արեսն ասել* բայը՝ *արես* գլխաբառի տակ և այլն): Վերջինիս կերպ են ներկայացվում նաև բազմաթիվ դարձվածքներ (օր.՝ *ելանել ի վեր ի գլուխն*՝ հարբեցնել, *երթալ ի միտ ի վար*՝ խելքը կորցնել, *հանել ի քամին*՝ սպառել, վատնել և այլն): Սակայն բառարաններում առավել հաճախ բերվում են հարադրավոր բայերով նախադասություններ՝ առանց նշելու դրանցում գործածված հարադրավոր բայը: Օր.՝ *կենալ* բայի տակ բերված նախադասության մեջ կա *ծառայ կենալ* հարադրավոր բայը, *հասնիլ* բայի տակ՝ *հասնիլ ի վերայ* բայը և այլն:

---

<sup>7</sup> Մեր աշխատանքում շրջանցել ենք դարձվածքի էության, նրա դասակարգման և ընդհանրապես դարձվածքի իմաստային շրջանակները որոշելու հարցի շուրջ եղած տարբեր տեսությունները: Այդ մասին տես **Բեդիրյան Պ.**, նշվ. աշխ., **Գևորգյան Ե.**, Հայերենի դարձվածքները, Եր., 1987, **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 2008, **Եգեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007:

Այսպիսի օրինակները բավականին շատ են: Մեր աշխատանքում փորձել ենք սահմանազատել գրաբարյան և միջինհայերենյան կազմությունները: Այն հարադրավոր բայերը, որոնք նշված չեն գրաբարյան բառարաններում, և որոնք իրենց բաղադրիչների հատկապես քերականական ձևավորմամբ հարազատ են միջին հայերենին, բայց արձանագրված չեն ՄՀԲ-ում, մենք համարել ենք միջինհայերենյան կազմություններ:

ՕԲ-ում գործածված հարադրավոր բայերի հարադիրներն արտահայտվել են.

1. գոյականով. ինչպես գոյականն ու բայը կարող են իրար հետ բազմազան կապակցություններ կազմել՝ դրանցում հանդես գալով այլևայլ շարահյուսական կիրառություններով, այնպես էլ հարադրավոր բայերի գոյական հարադիրը և բայական բաղադրիչը դրսևորվել են բազմազան շարահյուսական հարաբերություններով: Ըստ այդմ՝ գոյական հարադիրը դրվել է.

ա) Ուղղական-հայցական հոլովով – *աղօթ կենալ* (473), *անչն բարկնալ* (506), *աւագան առնել* (180), *բան փանել* (313), *գործ արկանել* (476), *դադար առնուլ* (80), *խաղ ասել* (473), *խելքն անցնիլ* (470), *ցնոր քաշել* (506) և այլն:

բ) Նախդիրիվ հայցականով (սրանք բոլորը, բացի *ի գործ ածել* բայից (57), միջինհայերենյան ձևեր են՝ երբեմն *զ, ի* նախդիրների՝ գրաբարից տարբեր կիրառություններով) – **զ+հայցական** – *զխելքն ըմբռնել* (49), *զծարան կիրել* (315), *զռունչն քաշել* (33), *զրեհսութիւնն բռնել* (218), **ի+հայցական** – *ի բաղանիս մտանել* (305), *ի բան փանել* (474)//*ի գործ փալ* (231), *ի թարախ դառնալ* (259), *ի չի վարել* (94), *ի միրքն չգել* (397)//*ի միրք պահել* (31), *ի քուն լինալ* և այլն:

գ) Սեռական-տրական հոլովով – *հրոյ վառիլ* (50), *ոյրիցն կենալ* (52), *ի շարժման կալ* (46)//*ի շարժման լինել* (34), *ի սևու բշտել* (479):

դ) Բացառական հոլովով – *ի բանէ մնալ* (32)//*ի գործուն մնալ* (32), *ի թվէ անցնիլ* (402)//*ի թվու անցնիլ* (305), *ի կենացս զերծանիլ* (151), *ի մրաց երթալ* (157), *ի մրացն հանել* (157)//*ի սրբէն փանել* (486), *ի տեղաց շարժիլ* (35):

2. Ածականով, ածական հարադիրների հետ բաղադրություններ են կազմել հիմնականում *առնել (այնել), լինիլ (լինալ), կենալ, մնալ* բայերը: Շարահյուսական տեսակետից, որպես կանոն, այդ հարադրություններում ածական բաղադրիչը ստորոգելիական վերադրի, իսկ բայական բաղադրիչը հանգույցի դեր են կատարել: Ընդ որում, բոլոր օրինակներում էլ բարդության իմաստը որոշում է հարադիրը, իսկ բայական բաղադրիչը օժանդակ դեր է կատարում և գրկվելով իր հիմնական բառային իմաստից՝ որպես բայակազմիչ տարր է հանդես գալիս: Այդ բայերից են *աղէկ առնել (370), աղվոր առնել (59), ասնոր առնել (60), անամաչ լինիլ (47), անհոգ կենալ (158), անուշ առնել (255)* և այլն:

3. Դերանվանք. դերանուններով կազմվող հարադրավոր բայերն ընդհանրապես ոչ մեծ խումբ են կազմում հայերենում<sup>8</sup>: Դերանուններից որպես հարադիր գործածվում են հիմնականում գոյականին հարաբերակից *իրար, ինքը* դերանունները: Այդպես է նաև ՕԲ-ում: Հարադիր բայեր են կազմել *ինքը* դերանունը՝ բայի հետ հիմնականում *զ* և *ի* նախդիրներով կապակցվելով, և *իրար* փոխադարձ դերանունը՝ *զինք առնել (33), զինքն պահել (243)//զինքն պատրաստել (272), իրար ածել (47), յինքն քարշել (34), յիրար գալ (42)*: Երկու օրինակներում հարադրություն է կազմվել *բոլոր* որոշյալ դերանվանք՝ *բոլոր գալ (90), բոլոր պատել (31)*: Չայնավորով սկսվող բառերի վրա դրվող *ի* նախդրի հնչյունափոխված *յ* տարբերակի նախդրային իմաստն ավելի շուտ էր սկսել մթագնել, և արդեն միջին դարերում այն որպես նախդիր չէր գիտակցվում: Դա է պատճառը, որ *ի* նախդիր ստացած բառերը կրկնակի *ի* նախդիր էին ստանում, և սովորական էր *ի+յ+ չայնավորով սկսվող բառ* շարահյուսական կառույցի կիրառությունը: ՕԲ-ում հանդիպում ենք *ի յիր տեղն (6), ի յայս արուեստս (5), ի յերկրէ ի յերկիր (7), ի յանօրինաց և ի յայլազգացն (17)* օրինակների: Իսկ հարադրավոր բայերի շարքում գործածված են *ի յինքն առնուլ (25), ի յինքն քաշել (32)* բաղադրությունները:

4. Բայարմատով. ՕԲ-ում գործածված հարադրավոր բայերի բայարմատ հարադիրների մեծ մասն ինքնուրույն գործածություն չունի: Օր.՝

---

<sup>8</sup> Տե՛ս Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 123:

դուր գալ (175), ի թուրջ արկանել (197), ի կախ ընկնիլ (13), ի կուլ տալ (274), ինաս տանիլ (45), համբեր առնուլ (80) և այլն: Բայարմատով արտահայտված հարադիրների մի մասն էլ ինքնուրույն գործածություն ունեցող բառեր են: Օր.՝ կասս լինալ (363), մտիկ դնել (55), պատրաստ կալ (431)//պատրաստ կենալ (115) և այլն:

5. Մակբայով. սրանք տարածական նշանակությամբ այն բառերն են, որոնք բայական հարադրությունից դուրս մեկից ավելի խոսքիմասային իմաստ ունեն.

արտաքս – արտաքս երթալ (47), արտաքս ելնել (34)//յարտաքս ելնել (25), արտաքս հանել (36),

դուրս (դուս) – ի դուրս գալ (12), ի դուրս ելանել (273), ի դուս հանել (34),

ներս – ի ներս գալ (38), ի ներս տանիլ (423),

շուրջ – շուրջ գալ (313)//ի շուրջ գալ (11),

վայր (վար, վեր)<sup>9</sup> – ի վայր իջնուլ (13), ի վայր չգել (367), ի վար քաշել (122), վեր բերել (62), վեր գալ (13),

վեր – վեր տալ (484)//ի վեր տալ (13), ի վեր քաշել (30):

ՕԲ-ում առանձնացրել ենք *օտար շուրջ*<sup>+</sup> *մայրենի լեզվի շուրջ* կառուցված կառույցներ, որոնք ամբողջությամբ փոխառություններ համարելը ճիշտ չէ: Դրանք հիմնականում բայակերտումներ են, որոնք ստեղծվել են մեր լեզվին հատուկ բառակազմական կանոններով: Հ. Աճառյանն այդպիսի կազմությունների մասին խոսում է իր «Լիակատար քերականության»<sup>10</sup> բային վերաբերող բաժնում և առանձնացնում է մի կողմից փոխառյալ բայարմատով պարզ բայերը (աստր. *փրկել*, *քարզմանել*, հուն. *միռոնել*, *սաղմոսել*, արսկ. *քազմել/իմ*, *գրաւել* և այլն), մյուս կողմից՝ *անել*, *լինել* բայերով կազմված փոխառյալ հարադիրներով բաղադրությունները<sup>10</sup>: Այս բոլոր բայերն էլ Հ. Աճառյանը փոխառյալ բայեր է անվանում: Իսկ իր «Հայերեն արմատական բառարա-

<sup>9</sup> Վար և վեր բառերը վայր բառի երկու տարբեր հնչյունափոխությունների արդյունք են՝ այ>ա, այ>ե:

<sup>10</sup>Տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, IV, Բ, Եր., 1959, էջ 488-499:

նում» ներկայացնում է 50 բայ, որոնք նույնպես փոխառյալ է համարում (օր.՝ *կողպել, պաշտել, սափրել, սրսկել* և այլն): Անշուշտ, հեղինակը գիտակցել է, որ փոխառյալ են այս բայերի արմատները, սակայն որպես բառարանային գլխաբառ՝ ներկայացրել է ամբողջական բայաձևերը՝ թերևս դրանց բայարմատների ինքնուրույն գործածություն չունենալու պատճառով:

Հետագա լեզվաբանները՝ Ա. Աբրահամյանը, Գ. Ջահուկյանը, Լ. Հովհաննիսյանը, օտար բայահիմքով և հայկական մասնիկավորմամբ կազմություններն ամբողջովին փոխառություններ չեն համարում, քանի որ հնարավոր չէ փոխառել բայական-քերականական ձևերը (քերականական կառուցվածքային տարրերի փոխառությունն անհնարին է): Մնում է փոխառել բայական հիմնական ձևույթը և հայերենում ձևավորել մեր լեզվին հատուկ մասնիկավորմամբ:

Այսպիսի կազմությունների ուսումնասիրությունը հատկապես կարևոր է հայերենի զարգացման տվյալ շրջանում որևէ օտար լեզվի ազդեցությունն ավելի ճշգրիտ ներկայացնելու համար: Օր.՝ ՕԲ-ում ինչպես փոխառությունների մեծագույն մասը արաբական է, այնպես էլ այս կազմությունները գերազանցապես կազմվել են արաբերեն հիմնական ձևույթներով: Այդպիսի կազմությունների թիվը ՕԲ-ում 58-ն է: Դրանցից ընդամենը 8-ը գոյականներ են, 5-ը՝ ածականներ, 2-ը՝ մակբայներ, իսկ մեծագույն մասը՝ թվով 43-ը, բայեր են, որոնցից միայն 7-ն են համարական կազմություններ, իսկ 36-ը հարադրավոր բայեր են: Դրանցից են.

***զէն առնել* (60) – *արսկ. ziyān` վնաս բառից (վնասել, վնաս հասցնել), բաշանուն լինալ* (212) – *արաբ. tašannuj` կծկում բառից (կծկվել), խումար այնել* (52) – *արաբ. xumar` հարբած, գինով բառից (գինովացնել),***

***դվամ գալ* (343) – *արաբ., թուրք. qivam` խտություն բառից (թանձրանալ),***

***ճլէ առնել* (349) – *արաբ. jālā, պրսկ. jāla` փայլ բառից (փայլուն դարձնել),***

**պարասպար լինել** (502) – *պրսկ. barabar` հավասար բառից* (հավասարվել, հավասար լինել),

**քանչալ դառնալ** (105) – *պրսկ. kačal` ճաղատ բառից* (ճաղատանալ) և այլն:

ՕԲ-ում կիրառված հարադրավոր բայերի քննությունը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը կազմված է *առնել* (*այնել, անել, առնուլ*) բայով: Այս բայը, նախ դրվելով որակական ածականների վրա, գործողության պատճառականություն է արտահայտում: Ուստի դրանք հաճախ փոխարինվել են նույն ածականով և պատճառական ածանցով կազմված բայերով: Օր.՝ *ամուր առնել* (109)//*ամրացնել* (60), *անուշ առնել* (255)/-/*անուշցնել* (485), *քանչր այնել* (40)//*քանչրացնել* (179), *կակուղ առնել* (362)//*կակղացնել* (371) և այլն: *Առնել* բայը դեռևս գրաբարում հարադրավոր բայեր էր կազմում պատճառական կերպի իմաստով: Օր.՝ *բարչր առնել, ուրախ առնել* բայերը *բարչրացուցանել, ուրախացուցանել* բայերի համարժեքներն էին<sup>11</sup>: Այսինքն՝ *առնել* բայը պատճառական կերպի դրսևորման եղանակներից մեկն է, որը հատուկ է միայն հարադրավոր բայերին: Սրան հակառակ՝ *լինել* (*լինալ, լինիլ*) բայը չեզոք (նաև կրավորական) սեռի բայեր է կազմում՝ հարադրվելով և՛ ածական, և՛ գոյական հարադիրների հետ: Օր.՝ *աւաղ լինիլ, թեթև լինիլ, վարուժ լինալ, քուն լինալ* և այլն: *Առնել* և *լինել* բայերով հարադրավոր բայերի կազմությունը բնորոշ է նաև պարսկերենին, ուստի այսպիսի կազմությունների կադասպարը կարելի է համարել բառապատճենում, որը հատուկ էր հայերենին դեռևս գրաբարից: Բացի դրանից, ինչպես հայերենում, պարսկերենում նույնպես *առնել* բայով կազմությունները ներգործական սեռի իմաստ են արտահայտում, իսկ *լինել* բայով կազմվածները՝ չեզոք (նաև կրավորական)<sup>12</sup>: Գ. Ջահուկյանը նույնպես *առնել, լինել/իւմ, տալ* բայերով կազմված հարադրությունները իրանական ազդեցության հե-

<sup>11</sup> Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 261:

<sup>12</sup> Տե՛ս Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 178:

տևանք է համարում<sup>13</sup>: Նշենք, որ այս իրողությունը կարող է պայմանավորված լինել նաև երկու ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությամբ, մանավանդ որ նմանատիպ բայական հարադրությունները բնորոշ են նաև այլ լեզուների, օր.՝ անգլերենին, գերմաներենին և այլն:

Այսպիսով՝ ՕԲ-ից առանձնացրել ենք **256** հարադրավոր բայ, որոնցից միայն **12**-ն են գրաբարյան՝ *արտաքսելանել* (34), *շուրջ գալ* (313)/*ի շուրջ գալ* (11), *գհնութիւն գալ* (513), *ի գործ ածել* (57), *խրատ րալ* (157), *ծաղր առնել* (52), *ծունր դնել* (473), *կին առնուլ* (158), *միւր դնել* (6), *արթուն կենալ* (58), *պարտասար կալ* (431): Մնացած **244**-ը միջինհայերենյան կազմություններ են: Եթե այս խմբին ավելացնենք այն **36** բայերը, որոնք կազմվել էին օտար հարադրով, ապա հարադրավոր բայերի իրական թիվը կդառնա **280**: Հարադրավոր բայերի այսպիսի առատ գործածությունը կապված է ՕԲ-ի լեզվի և հեղինակի ոճի հետ: Հարադրավոր բայերի կիրառությունը, թեև հատուկ է հայոց լեզվին ամենավաղ շրջանից, սակայն միջին հայերենում ավելի լայն տարածում ուներ, որը պայմանավորված էր առաջին հերթին հարադրավոր բայերի իմաստային առանձնահատկություններով, խոսքին ավելի կենդանի շունչ, թարմություն, ազատություն տալու հատկությամբ, հետևաբար կենդանի խոսակցական լեզվում ավելի տարածված լինելու փաստով:

**Բանալի բառեր** – *միջին հայերենի բառապաշար, բայական հարադրություն, հարադրավոր բայ, դարձվածք, փոխաբերական իմաստ, միջինհայերենյան նորակազմություն*:

---

<sup>13</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Եր., 1987, էջ 563:

**АСТХИК КАРАПЕТЯН – Сложные глаголы в произведении Амирдовлата Амасиаци “Полеза медицины”.** - В статье представлены сложные глаголы, пишущиеся паздельно, но по смыслу единые, которые употреблялись в сочинении А.Амасиаци. Многие из этих новообразований (их 280) не включены в Словарь среднеармянского языка.

**Ключевые слова:** *лексика среднеармянского языка, глагольные сочетания, сложные глаголы, фразеологизм, переносный смысл, среднеармянские неологизмы.*

**ASTGHİK KARAPETYAN – Compare verbs in the work of Amirdovlat Amasiatsi “Use of medicine”.** - In the article the author presents compare verbs those have been widely used in the work “Use of medicine”. Many of them aren't mentioned in the Dictionary of Middle Armenian.

**Key words:** *lexicon of Middle Armenian, verbal combination, compare verb, idiom, figurative meaning, middle armenian neologism.*

**ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Գիտական միտքը խոսքի ուսումնասիրությամբ սկսել է զբաղվել դեռևս վաղ անցյալում: Խոսքի կառուցվածքի ու ծավալի, ձևի և բովանդակության, նրա արժանիքների ու թերությունների, ունկնդրի ու ընթերցողի վրա թողած զանազան տպավորությունների և այլ հարցերով առաջին անգամ զբաղվել են հին հույները, հռոմեացիները: Հայ իրականության մեջ ճարտասանությունը իր ձևավորումն ու զարգացումն սկսել է մեր թվականությունից առաջ՝ առաջին դարում: Սակայն գրավոր աղբյուրների բացակայության պատճառով անհայտ է մնում, թե ինչ զարգացում ու տարածում են ունեցել դրանք այդ ժամանակաշրջանում: Օտար աղբյուրներից հայտնի է, որ դեռևս 4-րդ դարում՝ Հունաստանում, մեծ հռետորի համբավ էր ձեռք բերել Պարույր Հայկազնը, որն իր գիտելիքների և բարձր ճարտասանական արվեստի համար ստացել է «խոսքի թագավոր» մականունը: Հայտնի է, որ 5-րդ դարի սկզբներից ճարտասանությունը հայոց դպրոցներում կարևոր առարկաներից մեկն է համարվել, այն ժամանակ ունեցել ենք նշանավոր հռետորներ ու ճարտասանության տեսաբաններ: Գրերի գյուտից հետո ստեղծվել է նաև ճարտասանական թարգմանական ու ինքնուրույն գրականություն: Դեռ այն ժամանակ հայերը հաղորդակից էին լինում հելլենիստական մշակույթին ու դիցաբանությանը, գրադաշտական կրոնին ու պարսկական առասպելաբանություններին և ստեղծում են իրենց սեփական առասպելաբանությունը, դիցաբանությունն ու վիպասանությունը: Բանավոր խոսքը (գրականությունը) բաղկացած էր ժողովրդական երգերից, զրույցներից ու առասպելներից, որոնք երգվում ու պատմվում էին ավանդաբար՝ փոխանցվելով սերնդեսերունդ: Վահագնի աստվածությունը, բացի Խորենացուց, հայտնի է նաև Ագաթանգեղոսից, Բուզանդից և Աստվածաշնչից. Խորենացու «Հայոց պատմության» մեջ նրա ծնունդը ներկայացվում է այլաբանորեն: Սիս թե ինչ է գրում Հ. Աճա-

ռյանը. «Պետք է նկատել, որ արեգակնաման աչքերով, հրամագ, բոցամորուս պատանյակի ծնունդը փոխաբերական գործածությամբ արտահայտել են իրենց ժամանակի հայերենը, ապրել ժողովրդի մեջ, դարեդար ենթարկվելով ձևափոխությունների, նույնացել 5-րդ դարի հայերենին»<sup>1</sup>: Այն ժամանակ վիպասանական երգերի քննությունը կատարվում էր միայն հայերենի մեջ եղած պարսկերեն, հունարեն, ասորերեն փոխառությունների և անծանոթ ու հնդեվրոպական բառերի տոկոսային հարաբերությամբ:

Ինչպես գիտենք, Հ. Աճառյանը 5-րդ դարի լեզվի բառապաշարը տարբերակել է ըստ գործառական-ոճական ոլորտների: Տարբերությունները նա բաժանել է երկու կարգի՝ ներքին և արտաքին: Ներքին տարբերություններ է համարում ճոխությունը, ասելիքի կանոնավորությունը, հումանիզմների առատությունը, քերականական կանոնների միօրինակությունը, դարձվածների վայելչությունը: Իսկ արտաքին տարբերություններում կան բազմաթիվ անհատական ձևեր, ոճեր կամ դարձվածներ և ասություններ, որոնք հատուկ են միայն մեսրոպյան հայերենին և անծանոթ հետին հայերենին: Մեսրոպյան շրջանի գրվածքները, թեև ոճով իրարից տարբեր են, բայց բառապաշարով ու քերականությամբ նույնն են: Այս դպրոցների բոլոր հեղինակներն էլ միևնույն բառարանն (այսինքն՝ բառապաշարը) ունեն և միևնույն քերականությունը: Նա ընդունում է, որ չորս դպրոցների տարբերությունը միայն ոճի մեջ է. մեկը՝ պարզ ու հեշտ, մյուսը՝ զարդարուն ու ծաղկավետ, երրորդը՝ հորդ ու առատ, չորրորդը՝ ծանր ու մութ, որն էլ յուրաքանչյուր հեղինակի կրթվածության արդյունքն է<sup>2</sup>:

Արդեն միջին դարերում հայ մատենագրության մեջ սկսում են ձևավորվել գրական նոր ժանրեր (բանաստեղծություն, գեղարվեստական արձակ), որոնց մեջ աչքի են ընկնում առակագրությունը, պատմվածքը, զրույցը, անեկդոտը և այլ տիպի գեղարվեստական երկեր. զարգացման նոր աստիճանի է հասնում գիտական գրականությունը: Մեծանուն գիտնական Մ. Աբեղյանը միջնադարյան հայ գեղարվեստական գրականու-

<sup>1</sup> Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 71:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 83-93:

թյունը բոլորովին նոր է համարում իր բովանդակությամբ, ոճով ու լեզվով, որը համապատասխանում էր ժամանակի առաջադրած պահանջներին՝ արտացոլելով ժողովրդական լայն զանգվածների ձգտումները, արտաքին թշնամիների դեմ մղած հերոսական պայքարը, կյանքի ու անդրաշխարհի մասին ստեղծված նոր, կրոնական մտածելակերպից տարբեր ըմբռումները: Այդ ժամանակաշրջանում լայնորեն տարածվում է 8-10-րդ դարերում ստեղծված ժողովրդի հերոսական էպոսը՝ «Մասունցի Դավիթը»: «Դյուցազնական վեպն ստեղծվում է մի ազգի մեջ այն շրջանում, երբ որ ազգը նոր է դուրս գալիս բնության յուր վրա բողած անսահման ճնշման տակից... Ազգը, հետզհետե հաղթելով բնության արգելքներին, նշմարում է յուր մեջ ուժ ու գորություն, և այդ ուժն ու գորությունն ամփոփում է ոչ հասարակ մարդկանց մեջ, այլ այնպիսի անձնավորությունների մեջ, որոնք գերբնական ուժ են ստանում աստվածներից»<sup>3</sup>: Վաղ միջնադարի ողջ ժողովրդական և հեղինակային ստեղծագործություններում, հին ժամանակներից սկսած մինչև Նարեկացի և Շնորհալի, խոսքի մեջ նկատելի է այլաբանական տարրը, որն արդյունք է աշխարհի դիցաբանական և աստվածաշնչյան ըմբռումների և դրանց հետևանքով ստեղծված գրական ավանդույթների: Այս շրջանում արդեն նկատելի է պատկերավորության միջոցների (համեմատություն, մակդիր և այլն) կիրառությունը: Հատկապես կարևորություն է տրվում բառի փոխաբերական գործածությանը, որը գեղարվեստական գրական լեզվում կարևոր նշանակություն է ունեցել: Տեղին է հիշել Արիստոտելի այն միտքը, որ նա արտահայտել է ոճի վերաբերյալ: Նա ոճը համարում է մի բան, որ անխուսափելի է յուրաքանչյուր բանավոր թե գրավոր խոսքի համար, որովհետև գրողը միշտ դիմում է լեզվական այս կամ այն միջոցին և ինչ-որ ձևով համապատասխանեցնում է ասելիքի բովանդակությունը ձևին: Իսկ ոճի գլխավոր հատկանիշներից մեկը համարել է պարզությունը և գրողներից պահանջել է դիմել ընդհանրացումների տիպականացման միջոցով: «Տիպականացումը մեզ համար միջոց է հասնել ընդհանուրի և ավելի բարձր գաղափարականություն արտա-

---

<sup>3</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Ը, Եր., 1985, էջ 33:

հայտել»<sup>4</sup>: Դեռ այն ժամանակ Արիստոտելը տիպականացում համարել է պատկերավորման-արտահայտչական համակարգը, որը հնարավորություն է տալիս կատարելու այդ ընդհանրացումները: «Ամենից կարևորն է հմտորեն օգտվել մետաֆորներից, պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է՝ կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը»<sup>5</sup>: Իսկ բառի փոխաբերական գործածությունը դարձույթների միակ և անկրկնելի գործածությունն է պատկերավորության հասնելու համար, քանի որ գեղարվեստական պատկերը ոչ միայն արվեստի յուրահատկության ուղղակի արտահայտությունն է, այլև նրա բոլոր հիմնական առանձնահատկությունների ըմբռնման ելակետը: Գեղարվեստական լեզվի էությունը լավագույնս ներկայացնող հանգամանքներից մեկը եղել և մնում է խոսքի գեղագիտական գործառույթը:

Այնուամենայնիվ, ինչպես Հունաստանում և Հռոմում, Հայաստանում նույնպես հռետորական արվեստը զարգացում չի ունենում: Խոսքի արվեստի նկատմամբ հետաքրքրությունը կրկին մեծանում է իտալական Վերածննդի ժամանակներում: Հայ իրականության մեջ ճարտասանությունը ձևավորվում է իտալերենի ազդեցության տակ 17-րդ դարում: Դարտասանության սկզբնավորողը Հովհաննես Հոլովն է (Կոստանդնուպոլսեցի), որն առաջին անգամ իր՝ «Համառոտութիւն ճարտասանական արուեստի» աշխատության մեջ մշակում է ճարտասանական-ոճաբանական տերմինաբանությունը՝ ներկայացնելով մեր լեզվի և խոսքի ոճական համակարգը: Նա առաջին անգամ դասակարգում և նկարագրում է խոսքի միջոցների այնպիսի հնարանքներ, ինչպիսին են փոխակերպությունները (նա կոչում է այլափոխություններ) և ձևերը: Նա է տալիս խոսքի բաժանումը կառուցվածքային մասերի, գաղափար խոսքի արժանիքների մասին (համառոտութիւն, հավաստիութիւն, պար-

---

<sup>4</sup> Արիստոտել, Պոետիկա, Եր., 1965, էջ 57:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 202:

զուրիւն և վայելչութիւն)<sup>6</sup>: Հեղինակի ըմբռնումով խոսքի ճշտության, պարզության և հասկանալիության հիմնական պայմանը բառերի ու նախադասությունների ճիշտ ընտրությունն է, քերականական կանոնների համաձայն դրանց ճիշտ գործածությունը, բառերի ճիշտ կապակցությունները և մտքի տրամաբանական կապը: Այս պահանջներին համապատասխանող խոսքը կարող է լինել ճիշտ, պարզ ու հասկանալի, որով և ապահովվում է հռետորական արվեստի առջև դրված երեք պահանջներից առաջինը՝ ունկնդիրներին համոզելը: Այլ են մյուս երկու պահանջների՝ հուզելու և գեղագիտական հաճույք պատճառելու պայմանները: Նա դրանք տեսնում է խոսքի կառուցման և արտահայտման ձևի մեջ: Այսինքն՝ խոսքի գեղեցկության միջոցներ են փոխակերպումները, որոնք նա, ինչպես արդեն ասացինք, կոչում է այլափոխություններ, իսկ հուզականության միջոցներ՝ ձևերը: Այնուհետև հայերենի ոճական համակարգի ըմբռնումը շարունակում են զարգացնել 18-րդ դարի առաջին կեսերի նշանավոր մտածողներ Խաչատուր Էրզրումեցին, Մխիթար Մեքաստացին, հետագայում՝ Ստեփաննոս Աղոնցը: Հատկապես Խաչատուր Էրզրումեցին քննում է փոխակերպություններն ու ձևերը, դասակարգում դրանք ըստ առաջացման եղանակների և ըստ կիրառության ոլորտների, նշում խոսքի մեջ դրանցից լավագույն ձևով օգտվելու ուղիները, բացահայտում խոսքի այն թերությունները, որոնք արդյունք են փոխակերպությունների և ձևերի անհաջող գործածությունների<sup>7</sup>:

Ի տարբերություն նախորդների, որոնք իրենց գրական օրինակների մեծ մասը բերում էին հունական ու հռոմեական դասական գրականությունից, Մեքաստացին դիմում է հայ մատենագիրներին, հատկապես Մ. Խորենացուն, Եղիշեին ու Գր. Նարեկացուն:

Հետագայում՝ արդեն 19-րդ դարի սկզբներին, առավել մեծ ներդրում ունի հայերենագիտության բնագավառում Արսեն Այտընյանը: Առանձնացնենք մեծանուն գիտնական Ա. Այտընյանի «Քննական քերականու-

---

<sup>6</sup> **Հովհաննես Հոլով**, Համառոտություն ճարտասանական արուեստի, Մարսել, 1674, էջ 46: Մանրամասն տե՛ս **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ. 1, Եր., , էջք 43-46:

<sup>7</sup> Տե՛ս **Պողոսյան Պ.**, Ոճագիտական ըմբռնումների ծագումն ու զարգացումը հին Հունաստանում և Հռոմում, Եր., 1975, էջ 8:

թիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատությունը, որում հեղինակը որոշակիորեն սահմանազատում է գեղարվեստական ստեղծագործության լեզուն: Նա «լեզուն քննում է հաղորդակցական և արտահայտչական ֆունկցիաների միասնության մեջ»<sup>8</sup>: Ըստ հասարակության զանազան խավերի, դասակարգերի՝ լեզուն ունենում է իր տարբերակային ձևերը, և Այտընյանը բնութագրում է դրանք սոցիալական, գործառական և տարածական հատկանիշներով՝ անվանելով մի դեպքում Ավագանվո լեզու կամ Ազատաց լեզու, Ուսումնական կամ Գիտնոց լեզու, հասարակ կամ Ընտանեկան լեզու, Գռեհիկ կամ Գեղջկաց լեզու<sup>9</sup>: «Ուրեմն խորհող ու խօսող մարդկությունն է, իւր լեզուին ձեռն ու կերպը տուողը», - գրում է հեղինակը և ավելացնում, որ մեծ գաղափարի տեր ժողովուրդը առատ և ճոխ լեզվի տեր է, գեղեցիկ մտքերի տեր ժողովուրդը՝ նաև գեղեցիկ լեզվի տեր: «Քանի որ լեզուն մտաց երեւեցուցիչն է, հարկ է, որ որչափ գաղափարներ որ միտքը ստանայ, այնչափ նոր տարրերով ալ լեզուն ճոխանայ, որչափ գաղափարներ, որ միտքը յօդէ, նոյնչափ յօդուածոյ բառեր (բարդութիւններ) օրըստօրէ երեսան ելլեն»<sup>10</sup>: Այտընյանը, նկատի ունենալով լեզվական միջոցների բացահայտումը, ընդգծում է, որ բառապաշարի շերտերը հարստանում են նոր տարրերով և արտահայտչամիջոցներով, որոնք դրսևորվում և բացահայտվում են հիմնականում գեղարվեստական խոսքում: «Սահմանազատելով գեղարվեստական ստեղծագործության լեզուն՝ նա առաջինն էր, որ որպես բանաստեղծական լեզվի կատարյալ դրսևորում նկատի ուներ չափածո խոսքը»<sup>11</sup>:

Արդեն 19-րդ դարում մեծանում է ֆրանսերենի ազդեցությունը հայերենի վրա, և այդ ժամանակաշրջանում խոսքի արվեստով զբաղվող հայ հեղինակների համար ընդհանուրը դառնում է այն, որ նրանց աշխատություններում ոճագիտական երկու գիտակարգերը՝ փոխակերպություններն ու ձևերը, որ իտալական ճարտասանության համակարգում

<sup>8</sup> **Ջահուկյան Գ.**, Լեզվաբանության պատմություն, հ. 1, էջ 435:

<sup>9</sup> **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 33:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>11</sup> **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 433:

առանձնացված էին միմյանցից, խառնվում են իրար՝ հանդես գալով չև ընդհանուր հասկացության տակ, որը Պ. Պողոսյանը համարում է գիտության մեջ հանդիպող ոչ հազվադեպ երևույթ և հետընթաց քայլ:

Հաջորդ սերնդի ճարտասանների վրա զգալի են դառնում ֆրանսիական, գերմանական և հիմնականում ռուս ոճաբանական դպրոցների ազդեցությունները:

Քանի որ լեզուն կոչված է արտահայտելու և արտացոլելու նյութական աշխարհի իրերի ու երևույթների առնչություններն ու հարաբերությունները, ուստի յուրաքանչյուր ժողովուրդ դարերի ընթացքում մշակում է լեզվական արտահայտչամիջոցներ ու եղանակներ, ստեղծում աշխարհի լեզվական ընկալման իր ձևերը, որոնք ձեռք են բերում պարտադրական բնույթ տվյալ լեզվով խոսող անհատների համար:

Ամփոփելով հարկ է նշել, որ հայերենը լեզվի պատմական զարգացման ընթացքում աչքի է ընկել ոչ միայն հարուստ բառապաշարով, դարձվածքներով, քերականական կառուցվածքով, այլև ոճական իրողությունների հարստությամբ ու գուգահեռ ձևերի բազմազանությամբ, պատկերավորման համակարգով ու արտահայտչամիջոցներով: Հայ իրականության մեջ հռետորական արվեստն իր ձևավորումն ու զարգացումն սկսել է դեռևս մեր թվականությունից առաջ՝ առաջին դարում: Արդեն 5-րդ դարի սկզբներից ոչ միայն ճարտասանությունը հայոց դպրոցներում կարևոր առարկաներից մեկն է համարվել, այլև ունեցել ենք նշանավոր հռետորներ ու ճարտասանության տեսաբաններ:

**Քանալի բառեր** – *ճարտասանական արվեստ, ոճագիրություն, փոխակերպություններ, այլաբերություններ, պատկերավորություն-արտահայտչականություն:*

**СИЛВА КОШАТАШЯН - Формирование стилистики в армянском языке.** - Таким образом, в процессе исторического развития армянский язык выделялся не только богатой лексикой, фразеологией, грамматической структурой, но и богатством стилистических явлений, разнообразием параллельных форм, системой описания и выразительными средствами. Риторическое искусство в Армении берет свое начало еще в первом веке д.н.э., а с начала пятого века в армянских школах риторика считалась одним из важнейших предметов обучения. И уже в тот период можно говорить об армянских знаменитых ораторах и теоретиках риторики.

**Ключевые слова:** *ораторское искусство, стилистика, трансформация, метафора, образность-выразительность.*

**SILVA KOSHATASHYAN - The Formation of Stylistics in the Armenian Reality.** - Thus, during its historical development the Armenian language has been marked not only by its rich vocabulary, idioms, grammatical structure, but also by the richness of stylistic phenomena and diversity of parallel forms, by its imagery system and expressive means. In the Armenian reality the formation and development of rhetoric dates back to the 1<sup>st</sup> century BC. Since the beginning of the 5th century rhetoric has been one of the important subjects at Armenian schools. Back then we also had many famous orators and theorists of rhetoric.

**Key words:** *rhetoric, stylistics, transformations, allegory, figurativeness-expressiveness.*

**ՉԳԱՑԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՏԱՅԻՆ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ  
ԱՐԳԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Չգացական բայերը մարդու հոգեվիճակի, զգացական, հուզական ապրումների և անհատական վերաբերմունքի արտահայտիչներն են. դրանց միջոցով դրսևորվում են նաև մարդու գործունեության ինտելեկտուալ (ճանաչողական), բարոյական, գեղագիտական և այլ հայեցակարգեր:

Արդի հայերենում զգացական բայերի վերաբերյալ որևէ համալիր հետազոտություն չկա. այդ բայերի իմաստային խմբավորման փորձերի կամ տերմինի հիշատակման (իմա՝ զգացական բայեր) հանդիպում ենք շարահյուսագիտության մեջ՝ խնդրառության, ուրիշի ուղղակի խոսքի ուսումնասիրության հետ կապված<sup>1</sup>: Այս կապակցությամբ Հ. Օհանյանը նշում է, որ թեև բայերի դասակարգման ուղղությամբ որոշակի աշխատանքներ տարվել են, բայց հետազոտողների նպատակը չի եղել բայերի իմաստային հատկանիշով դասակարգումն ու քննությունը. վերջիններս արժարժել են այդ հարցերը իրենց առջև դրված բուն խնդիրների լուսաբանման կապակցությամբ...<sup>2</sup>:

Մենք ուսումնասիրել ենք վերոնշյալ բայերը իմաստային տեսանկյունից՝ դիտարկելով այն իբրև բառաիմաստային խումբ (այսուհետ՝ ԲԻԽ)՝ կազմակերպված դաշտային սկզբունքով՝ միջուկի (նույնացու-

---

<sup>1</sup> Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Եր., 1957, Հայերենի շարահյուսություն, Եր., հ. 1, 1958 (ի թիվս այլ բայախմբերի՝ առանձնացրել է նաև զգացական և հոգեկան տարբեր վիճակ արտահայտողները), **Ա. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962 (վերաբերմունքի դրսևորման, զգայական ընկալման, հոգեկան այլ իրակությունների ցուցաբերման), **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974 (զգայական), **Վ. Քոչյան**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1975 (զգացական և ներքին հոգեկան վիճակ արտահայտող) և այլք:

<sup>2</sup> Տե՛ս **Օհանյան Հ.**, Մտածական և հոգեվիճակային բայերի խնդրառությունը ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, X, Եր., 1987, էջ 22:

ցիչ), եզրամասի, հատվող միավորների փոխհարաբերությունների հաշվառմամբ:

Հողվածի նպատակն է ուսումնասիրել մարդու գործունեության հոգեֆիզիկական ոլորտը՝ բացահայտելու այդ գործունեության լեզվական արտացոլումները, որոնք իրենց մարմնավորումն են գտնում զգացական բայերի մեջ (այսուհետ՝ ՉԲ), ուրվագծելու այդ ԲԻՄ-ի սահմանները՝ հիմք ընդունելով դասակարգման իմաստային չափանիշը, այսինքն՝ բառարանային բացատրությունը: Խմբավորումը կատարել ենք՝ նկատի առնելով միասնականացնող կարգային-բառային հետևյալ իմաստը. «Իր պահանջմունքների առարկաների նկատմամբ մարդու վերաբերմունքի սուբյեկտիվ արտացոլումն ու ապրումները որպես հոգեկան գործընթաց, որը դրսևորվում է հուզագոգացական տարբեր վիճակներով»<sup>3</sup>: Ջգացական ԲԻՄ-ի բառացանկը կազմել ենք, ըստ Է. Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանի<sup>4</sup> (այսուհետ՝ ԱՀԲԲ), համատարած ընտրանքի եղանակով: ՉԲ-երը դասակարգել ենք իմաստահարացուցային, շարակարգային և գործաբանական սկզբունքներով: Իմաստահարացուցային դասակարգումը կատարել ենք երկաստիճան համակարգով՝ առաջին աստիճանում արդի հայերենի բայական բառապաշարի զգացական ԲԻՄ-ը բաժանելով երեք դասի՝ առաջնային, երկրորդային և փոխաբերական զգացականների: Առաջնային զգացականների դասին ենք վերագրել այն բայերը\*, որոնք, որպես զգացական գործընթացի արտահայտություն, արձանագրված են ԱՀԲԲ-ում իրենց առաջին, երկրորդ, երբեմն նաև երրորդ<sup>5</sup> նշանակություններով (1430): Երկրորդային զգացականների դասին ենք վերագրել այն բայերը, որոնք արձանագրված են երրորդ-չորրորդական կամ այլ նշանակություններով (168): Փոխաբերական զգացականների դասին ենք վերագրել այն բայերը, որոնք արձանագրված են փոխաբերական նշումով (598): Դասակարգման երկրորդ աստիճանում առաջնային զգացականների հա-

<sup>3</sup> Տե՛ս **Նալչաջյան Ա.**, Հոգեբանական բառարան, Եր., 1984, էջ 60:

<sup>4</sup> Տե՛ս **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

\* Դասակարգելիս հիշյալ բառարանից քաղել ենք միայն **համադրական** բայերը:

<sup>5</sup> Ջգացական որոշ բայեր իրենց երրորդ նշանակությամբ հաճախագործածության շնորհիվ մտնում են առաջնային բայերի դաս, սակավագործածությամբ՝ երկրորդային:

րացույցը խմբավորել ենք ըստ ենթահարացույցների<sup>6</sup>՝ նկատի ունենալով մարդու հոգեկան գործընթացի տարբեր վիճակները: Ի տարբերություն առաջնային զգացականների՝ երկրորդային և փոխաբերական զգացականները գուրկ են իմաստային հակադրությունից, որովհետև միայն խոսքային իրադրության մեջ են ձեռք բերում զգացականության հատկանիշ և կապ ունեն խոսքային տարբերակայնության հետ, հետևաբար դուրս են մնում հարացուցային դաս դասումից:

Հ. Օհանյանը հիշյալ բայերի խնդրառությունը ուսումնասիրելիս իմաստային դասակարգման փորձ է արել՝ անվանելով դրանք *հոգեկիճակային*\* տերմինով. բայերի թիվը հասցրել է 150-ի՝ բաժանելով հետևյալ խմբերի՝ բայեր, որոնք արտահայտում են՝ 1. վախ, երկյուղ, 2. բարկություն, 3. ուրախություն, ծիծաղ, վիշտ ևն, 4. հուզմունք, վրդովմունք, տագնապ, մտահոգություն, հուսահատություն ևն, 5. հավիշտակություն, գայթակղություն, ոգևորություն, ներշնչանք ևն, 6. վարանում, շփոթմունք, ավստասանք ևն, 7. խելագարություն, ցնորվածություն ևն, 8. լաց, նիրհ, քուն ևն, 9. ձանձրույթ, զարմանք, կարկանդակություն ևն, 10. հպարտություն, պարծանք ևն, 11. մեծամտություն, լկտիություն, երեսառածություն, 12. ցանկություն, տենչանք ևն, 13. զզվանք, 14. ըմբոստություն<sup>7</sup>:

Ռուսագիտության մեջ զգացական բայերը (глаголы чувства, глаголы психической деятельности, глаголы эмоциональной деятельности) ու-

---

<sup>6</sup> Հարացուցային հարաբերությունների վերլուծության համար անհրաժեշտ նախապայման է **լեզվական միավորի իմաստային կառուցվածքը**, այսինքն՝ նրա **բաղադրիչայնությունը** (իմա՝ բառաիմաստային տարբերակների (**ՔԻՏ**) առկայությունը): Թեև **ՔԻՏ**-ի որևէ իմույթի **սեռային իմակը** կրկնվում է բոլոր **ՔԻՏ**-երում, բայց դրանք իրենց հերթին, ըստ **տեսակային իմակների**, ի հայտ են բերում նաև **իմաստային հակադրություններ**, և այդ հակադրամիասնությունն էլ ծնում է **ենթահարացույց, խումբ, ենթախումբ, շարք** ևն: Տե՛ս **Գոլտյան Ռ.**, Ասացական բայերի բառաիմաստային խումբը արդի հայերենում, Եր., 2014, էջ 22-23:

\* Մենք նախապատվությունը տալիս ենք **զգացական** տերմինին, որովհետև **հոգեկիճակը** անձի հոգեկան ակտիվության ընդհանուր բնութագիրն է որոշակի ժամանակահատվածում (տե՛ս **Ա. Նալչաջյան**, նշվ. բառ., էջ 136), իսկ **զգացմունքը**՝ ներհոգեկան գործընթաց (**դրան հատուկ է որոշակի տեսականությունը**՝ ՌԴ), հետևաբար **զգացական** տերմինը առավել բազմակողմանիորեն է ներկայացնում **զգացական բայերի** իմաստային հարուստ գունապնակը:

<sup>7</sup> Տե՛ս **Օհանյան Հ.**, նշվ. հոդվածը, էջ 81-85:

սումնասիրել են շատերը, սակայն նրանց հետազոտությունները ևս մասնակի են և վերաբերում են հիշյալ բայերի այս կամ այն տեսակին կամ դրանց առնչվող այլ խնդիրների<sup>8</sup>, պայմանականորեն ամբողջական ուսումնասիրություն կատարել է Լ. Վասիլը՝ հոգեկան գործունեության բայերը բաժանելով հետևյալ տեսակների՝ զգայության, ցանկության, ընկալման, ուշադրության, հուզական վիճակի (տրամադրության), հուզական ապրումների, հուզական վերաբերմունքի<sup>9</sup>:

**Մենք զգացական բայերի հարացույցը բաժանում ենք հետևյալ ենթահարացույցների՝ զգայական ընկալումների, բուն զգացականների, հոգեվիճակի կամ տրամադրության, կամքի, հոգեկան ներգործության:**

**Չգայական ընկալումների ենթահարացույցի** բայերը արտահայտում են զգայարանների վրա արտաքին աշխարհի կամ օրգանիզմի ներքին միջավայրի ֆիզիկական ու քիմիական գործոնների ազդեցությամբ տեղի ունեցող գործողությունները: **Չգայությունը** հոգեկան արտացոլման առաջին ու տարրական մակարդակն է, որտեղ առարկայի որևէ հատկություն արտացոլվում է մարդու գիտակցության մեջ<sup>10</sup>: **Չգայական ընկալումների ենթահարացույցի** մեջ մտնող բոլոր բայերը միավորվում են սեռային հետևյալ նույնականացնող իմակով. «**Չգայարաններով ընկալել՝ տպավորություններ ստանալ արտաքին աշխարհից**»: Ըստ իմաստային տարբերացուցիչների՝ ենթահարացույցը բաժանվում է հետևյալ խմբերի՝ բուն զգայականների, տեսողական ընկալման, լսողական, հո-

---

<sup>8</sup> St'u Жуковская Е., К проблеме семантической соотносительности элементов словообразовательного гнезда с глаголом эмоционального состояния в качестве исходного элемента, Классы слов и их взаимодействие, Свердловск, 1979, էջ 81-108, Жуковская Е., Семантический анализ ряда с глаголов эмоционального воздействия, Семантические классы русских глаголов, Свердловск, 1982, էջ 33-111, Чудинов И., Системные связи глаголов эмоционального состояния и отношения, Слово в системных отношениях на разных уровнях языка, Свердловск, 1984, էջ 42-48, Функциональный анализ глаголов говорения, интеллектуальной и эмоциональной деятельности (на материале художественной речи А. Платонова), Автореф. дисс. канд. филол. наук, Ростов-на-Дону, 1980, Бабенко Л., Текстовая конкретизация семантики глаголов чувств в художественной речи, Классы глаголов в функциональном аспекте, Сб. науч. тр., Свердловск, 1986, Фоменко Ю., Глаголы психического воздействия в русском языке, Вопросы теории русского языка, Новосибирск, 1975, Науч. труды, вып. 119 ևն:

<sup>9</sup> St'u Васильев Л., Семантика русского глагола, М., 1981, с. 43-108:

<sup>10</sup> St'u Նալչաջյան Ա., նշվ. բառ., էջ 59:

տառական, ճաշակելիքի, շոշափելիքի կամ հպման, ցավի, ջերմային զգայության:

**Բուն զգայական բայերի խումբ.** զգայական իմացությունը ամենից հաճախ մակերեսային, նկարագրական բնույթ ունի. այն մեզ տեղեկություններ է տալիս առարկաների և երևույթների արտաքին կողմերի ու հատկանիշների մասին, որոնք անմիջականորեն մատչելի են տեսողությանը, լսողությանը և մյուս զգայարաններին<sup>11</sup>: Չնավորվում է **զգայելու իմաստահավելիչով** (այսուհետև՝ **իմ-իչ**)՝ հետևյալ **իմաստային բանաձևով** (այսուհետև՝ **ԻԲ**). «**Ջգայարաններով ընկալել զգացվող, մտքով ըմբռնվող որևէ բան**»: **Նույնացուցիչը** (այսուհետև՝ **նույն-իչ**) զգայել-ն է, որի շուրջը խմբավորվում են **զգալ, ընկալել, կանխագգալ, նախագգալ, վկայել**<sup>12</sup> բայերը՝: **Ներկայանում է անզգայության բայերի ենթախմբով՝ զգայելու անկարողության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով.** «**Անզգա դառնալ, զգայությունը կորցնել**»: **Նույն-իչը անզգայանալ-ն է ընդարձանալ, թմրել, ուշաթափվել** բայերով: **Տեսողական ընկալման բայերի խումբ՝ տեսողական զգայության և տեսողության կենտրոնացման իմ-իչներով՝ հետևյալ ԻԲ-ով.** «**Տեսողական զգայարանները կենտրոնացնելով ընկալման առարկայի վրա՝ ընկալել, տեսնել մեկին կամ մի բան**»: **Նույն-իչը տեսնել-ն է՝ առակնել, արտահայել, նայել, չռել, պլշել** բայերով: Ըստ իմաստային տարբերացուցիչների՝ բաժանվում է հետևյալ ենթախմբերի՝ տեսողության նպատակաուղղվածության, երևակայական տեսողության, տեսողական ընկալման մատչելիության, տեսողական ընկալման միջոցի, տեսողական ընկալման կերպի, տեսողության գունային ընկալման, տեսողության կորստի: **Տեսողության նպատակաուղղվածության բայերի ենթախումբ՝ տեսողության նպատակաուղղվածության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով.** «**Ուշադրությամբ նայել մեկին կամ մի բանի՝ արդյունքը կամ հետևանքը տեսնելու նպատակով**»: **Նույն-իչը գննել-ն է՝ բուժագննել, ծանոթանալ, ճանաչել** բայերով: **Երևակայական տեսողության**

<sup>11</sup> Տե՛ս Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997, էջ 259:

<sup>12</sup> **Վկայել** բայի զգացական իմաստը (որևէ զգայության վկայությունը լինել) բացակայում է ԱՀԲԲ-ում՝ ՌԳ:

\* Հոդվածի ծավալը նկատի ունենալով՝ յուրաքանչյուր տեսակի համար բերում ենք 3-5 օրինակ:

**բայերի ենթախումբ.** այս գործընթացն իրականանում է տեսողական մտապատկերների օգնությամբ՝ տեսողության երևակայության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Մտովի պատկերացնելով՝ տեսնել մեկին կամ մի բան»։ Նույն-իչը երևակայել-ն է՝ երևութանալ, թվալ, պատկերացնել բայերով:

Տեսողական ընկալման մատչելիության ենթախումբ՝ տեսողական ընկալման մատչելիության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Տեսողական օրգաններով ընկալելու համար մատչելի լինել»։ Նույն-իչը նկատվել-ն է՝ հանդիպել, երևալ, տեսնվել բայերով: Ներկայանում է տեսողական ընկալման անմատչելիության բայերի շարքով՝ տեսողական ընկալման անմատչելիության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Տեսողական օրգաններով ընկալելու համար անմատչելի լինել, տեսողության դաշտից դուրս գալ»։ Նույն-իչը անհետանալ-ն է՝ կորչել, չքանալ, չքվել բայերով: Տեսողական ընկալման միջոցի բայերի ենթախումբ՝ տեսողության միջոցի իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Տեսանելի դառնալ տեսողության դաշտում հայտնված ինչ-որ բանի միջոցով»։ Եվ քանի որ միջոցները բազմազան են, նույնականացումը կատարվում է որևէ միջոցի շուրջ ճառագայթել, մթնել, լուսավորվել, ուրվագծվել բայերով: Տեսողական ընկալման կերպի բայերի ենթախումբ. ներկայանում է երկու շարքով՝ գաղտնատեսության և քողարկման: Գաղտնատեսության բայերի շարք՝ գաղտնատեսության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Գողունի՝ թաքուն նայել»։ Նույն-իչը հետևել-ն է՝ դարանակալել, ծիկրակել, հսկել բայերով: Քողարկման բայերի շարք՝ քողարկման իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Որևէ բանով ծածկելով՝ աննկատելի դարձնել»։ Նույն-իչը քողարկել-ն է՝ պատել, վարագուրել, սքողել բայերով: Տեսողության գունային ընկալման բայերի ենթախումբ. առարկաներից անդրադարձված կամ նրանց կողմից արձակվող լույսի տարբեր հաճախականության էլեկտրամագնիսական ալիքների արտացոլման արդյունքը որպես հոգեկան պատկեր<sup>13</sup>: Չնավորվում է որևէ գունային իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Որևէ գույնի շնորհիվ տեսանելի դառնալ»։ Եվ քանի որ գույները բազմազան են, նույնականացումը կատար-

<sup>13</sup> Տե՛ս Նալչաջյան Ա., նշվ.բառ., էջ 42:

վում է որևէ գույնի շուրջ գորշանալ, դեղնել, երփներանգել, շառագունել բայերով: **Տեսողության կորստի բայերի ենթախումբ՝ տեսողության կորստի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով.** «Տեսողությունից զրկվել, տեսողությունը կորցնել»: **Նույն-իչը կուրանալ-ն է՝ կկոցել, փառակալել, փառապատել** բայերով: **Ներկայանում է տեսողության մասնակի կորստի բայերի շարքով՝ աղոտ տեսողության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով.** «Մասնակիորեն կամ աղոտ տեսնել»: **Նույն-իչը նշմարել-ն է՝ բժոտել, բլշակնել, ընդ-նշմարել** բայերով: ***Լսողական ընկալման բայերի խումբ՝*** լսողական զգայության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Լսողական զգայարաններով ընկալել մեկին կամ մի բան»: **Նույն-իչը լսել-ն է՝ ականջել, անսալ, ունկնդրել** բայերով: ***Հոյրառական ընկալման բայերի խումբ՝*** հոտառական զգայության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Հոտառական զգայարաններով ընկալել մեկին կամ մի բան»: **Նույն-իչը հոտառել-ն է՝ արտաբուրել, բուրել, հոտոտել** բայերով: **Ներկայանում է հոտառության կերպի բայերի ենթախմբով՝ հոտառության կերպի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով.** «Ինչպե՞ս բուրել»: **Նույն-իչը հոտել<sup>1</sup>-ն է՝ գարշահոտել, ժանտահոտել, նեխահոտել** բայերով: ***Ճաշակելիքի բայերի խումբ՝*** ճաշակելու իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բանի համը որոշել, համտես անել»: **Նույն-իչը ճաշակել-ն է ըմբռնել, վայելել, ուտել, խմել, համտեսել** բայերով: ***Շոշափելիքի կամ հպման բայերի խումբ՝*** շոշափողական զգայության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Ձեռքը քսելով՝ դիպցնելով իմանալ՝ զգալ»: **Նույն-իչը շոշափել-ն է՝ հպվել, դիպչել, քսել** բայերով: ***Ցավի զգայության բայերի խումբ՝*** ցավի զգայության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մարմնական ցավ զգացվել»: **Նույն-իչը ցավել-ն է՝ կսկծալ, մորմոքել, մրմռալ** բայերով: **Ներկայանում է ցավագրկման բայերի ենթախմբով՝ ցավագրկման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով.** «Ցավից զրկել»: **Նույն-իչը ցավագրկել-ն է՝ անզգայացնել, բթացնել, ցավազերծել** բայերով: ***Ձերմային զգայության բայերի խումբ՝*** ջերմային զգայության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Ձերմային ազդեցությամբ որևէ փոփոխության ենթարկվել»: **Ձերմային զգայունականությունը ևս բազմազան է, կոնկրետ նույն-իչ չունի, ձևավորվում է հովանալ մրսել, շոգել, սառչել, տաքանալ** բայերով:

*Բուն զգացականների ենթահարացույց.* մարդու հույզերի և զգացմունքների աշխարհը չափազանց բարդ է ու բազմակերպ, հետևաբար դասակարգումն էլ դժվար է ու վիճահարույց՝ դրանց նրբերանգների և բազմազան դրսևորումների պատճառով: Ըստ հոգեբանության մեջ ընդունված դասակարգման՝ զգացմունքները բաժանվում են երեք խմբի՝ **ինտելեկտուալ, բարոյական և գեղագիտական զգացմունքների**<sup>14</sup>: **Ինտելեկտուալ զգացմունքների խումբ.** **ինտելեկտուալ** են այն զգացմունքները, որոնք մարդու մեջ առաջանում են **մտավոր գործունեության** ընթացքում: Չնավորվում է **բանական զգացողության իմ-իչով**՝ հետևյալ **ԻԲ-ով**. «**Իմացության գործընթացում մտավոր կարողությունների շնորհիվ զգալ որևէ բան**»: Այս տեսակը դրսևորվում է **ուշադրության, հետաքրքրության, կասկածանքի կամ անվճռականության բայերի խմբերով**<sup>15</sup>: **Ուշադրության բայերի խումբ.** զգայական օրգանների գիտակցական կենտրոնացումը ընկալման օբյեկտի վրա: Չնավորվում է **ուշադրության կենտրոնացման իմ-իչով**՝ հետևյալ **ԻԲ-ով**. «**Չզայարանների միջոցով որևէ օբյեկտ առանձնացնելով՝ պահել ուշադրության կենտրոնում՝ հոգեկան որևէ գործունեություն իրականացնելու նպատակով**»: Նույն-իչը աչալրջանալ-ն է՝ **զգոնանալ, զգուշանալ, կենտրոնանալ, տնտղել** բայերով: **Հետաքրքրության բայերի խումբ**՝ հետաքրքրության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ-ով**. «**Հետաքրքրություն ցուցաբերել որևէ մեկի կամ մի բանի նկատմամբ՝ որևէ բան իմանալու նպատակով**»: Նույն-իչը հետաքրքրվել-ն է՝ **որոնել, փնտրել, փնտրտել** բայերով: **Կասկածանքի կամ անվճռականության բայերի խումբ**՝ կասկածանքի իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ-ով**. «**Որևէ մեկի կամ մի բանի ճշտության վերաբերյալ կասկած, քերահավատություն ունենալը**»: Նույն-իչը կասկածել-ն է՝ **երկբայել, քերահավատալ, վարանել, տարակուսել** բայերով: **Բարոյական զգացմունքների խումբ.** մարդու բարձրագույն զգացմունքների այն տեսակը, որն առաջ է գալիս, երբ անձը բարոյական գործողություններ է կատա-

<sup>14</sup> Տե՛ս **Կովալյով** և այլք, Հոգեբանություն, Եր., 1970, էջ 371-372:

<sup>15</sup> Ինտելեկտուալ զգացմունքների մեջ են մտնում **նորի** (բայց քանի որ լեզվական արտացոլում չունի, դուրս է մնում լեզվական դասակարգումից, տե՛ս **Կովալյով** և այլք, նշվ. աշխ. էջ 372-373), **հումորի և հեզմանքի զգացումները** (դրսևորվում են ասացական բայերի միջոցով, տե՛ս **Ռ. Դոխտյան**, նշվ. մեճագր., էջ 54-55):

րում կամ խախտում է բարոյական նորմերը, դիտում ու գնահատում է ուրիշների բարոյական կամ հակաբարոյական գործողությունները<sup>16</sup>: Ձևավորվում է բարոյականության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «**Չզգացմունքները դրսևորել բարոյական նորմերին համապատասխան կամ շեղվել այդ նորմերից**»: Այս տեսակը դրսևորվում է սիրո, հարգանքի, պարտքի և պատասխանատվության, կարեկցանքի, ամոթի, զոջման, հպարտության, աստելության, չարության կամ նախանձի, խաբեության բայերի խմբերով: *Սիրո բայերի խումբ*՝ սիրո իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «**Մեկի՝ մի բանի նկատմամբ խորին կապվածություն զգալ, հակառակ սեռի անհատի նկատմամբ սիրո զգացմունք տածել**»: Նույն-իչը սիրել-ն է՝ գորովել, երկրպագել, սիրահարվել, սիրատածել բայերով: Ներկայացնում է կրքի բայերի շարքով՝ կրքոտության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «**Մեկի նկատմամբ կրքով լցվել, համակվել**»: Նույն-իչը կրքոտվել-ն է գրգռվել, վավաշոտել, տոփալ բայերով և բարեկամության բայերի ենթախմբով՝ բարեկամության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «**Մեկին բարեկամ դառնալ, հետը մտերմանալ**»: Նույն-իչը բարեկամանալ-ն է՝ ընկերանալ, խնամիանալ, հարազատանալ, մտերմանալ բայերով: *Հարգանքի բայերի խումբ*՝ հարգանքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «**Հարգանք տածել մեկի նկատմամբ, ճանաչել՝ գնահատել մեկի արժանիքները՝ վաստակը ևն**»: Նույն-իչը հարգել-ն է՝ ակնածել, երկյուղածել, մեծարել, պատվել բայերով: *Պարպրքի և պատասխանատվության բայերի խումբ*՝ պատասխանատվության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «**Որոշակի կերպով վարվելու՝ որոշ բան կատարելու պատասխանատվության զգացում ունենալ**»: Նույն-իչը պարտավորվել-ն է՝ հանձնառել, հոժարել, ստանձնել բայերով: Ներկայացնում է վստահության բայերի ենթախմբով՝ վստահության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «**Վստահ լինել մեկի, մի բանի նկատմամբ, մեկի, մի բանի պատասխանատվությունը դնել մեկի վրա**»: Նույն-իչը վրստահել-ն է՝ ապավինել, հավատալ, հուսալ բայերով: *Կարեկցանքի բայերի խումբ*՝ կարեկցանքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «**Ուրիշի կարիքին՝ նեղությանը՝ հուզմունքին կարեկից լինել**»: Նույն-իչը կարեկցել-ն

<sup>16</sup> Տե՛ս Նալչաջյան Ա., նշվ.բառ., էջ 31:

Է վշտակցել, ցավակցել, ցավել բայերով: Ներկայանում է խղճահարու-  
 քյան և տառապանքի բայերի ենթախմբերով: Խղճահարության բայերի  
 ենթախումբ՝ խղճահարության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի նկատ-  
 մամբ գոթ՝ կարեկցություն զգալ»: Նույն-իչը խղճալ-ն է՝ արգահատել,  
 գթալ, խանդաղատել, խղճահարվել բայերով: Տառապանքի բայերի են-  
 քախումբ՝ տառապանքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի կամ մի բանի  
 համար վիշտ՝ ցավ կրել, հոգեկան վշտից՝ ցավից տանջվել, ծանր հոգե-  
 կան ապրումներ ունենալ»: Նույն-իչը տառապել-ն է՝ նեղվել, չարչարվել,  
 տանջվել, տապտապվել բայերով: *Ամոթի բայերի խումբ*՝ ամոթխածու-  
 քյան իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Անհարմար զգալ կատարած որևէ վատ  
 արարքի համար»: Նույն-իչը ամաչել-ն է՝ ամոթահարվել, ամոթխածել,  
 պատկառել, քաշվել բայերով: *Չղջման բայերի խումբ*՝ զղջման իմ-իչով՝  
 հետևյալ ԻԲ-ով. «Ափսոսալ, ցավ զգալ մի բան արած կամ չարած լինե-  
 լու համար»: Նույն-իչը զղջալ-ն է ապաշխարել, ափսոսալ, զղջահարվել,  
 ստրջանալ բայերով: *Հպարտության բայերի խումբ*. արտահայտում է  
 մարդու բարձր ինքնագնահատականը, իր հաջողություններից ունեցած  
 գոհունակության բարձր աստիճանը\*: Չևավորվում է հպարտության իմ-  
 իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի կամ մի բանի նկատմամբ հպարտություն  
 զգալ»: Նույն-իչը հպարտանալ-ն է՝ պանծալ, սիգանալ, փառավորվել  
 բայերով: Ներկայանում է պարծենկոտության և բարձրամտության են-  
 քախմբերով: *Պարծենկոտության բայերի ենթախումբ*՝ պարծենկոտու-  
 քյան իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Իր արժանիքների՝ խրախուսելի արարք-  
 ների են գիտակցությամբ իրեն բավարարված զգալ, պարծանքով տո-  
 գորվել, պարծանք զգալ»: Նույն-իչը պարծենալ-ն է՝ պանծալ, պարծել,  
 սնապարծել բայերով: *Բարձրամտության բայերի ենթախումբ*. բարոյա-  
 կան բացասական հատկություն, որը բնութագրվում է անհարգալից, ար-  
 համարիական, գոռոզ վերաբերմունքով այլ մարդկանց հանդեպ՝ կապ-  
 ված իր սեփական արժանիքների և ինքնասիրության չափազանցման  
 հետ: Չևավորվում է բարձրամտության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով.  
 «Բարձրամիտ լինել, մեծ համարում ունենալ սեփական անձի հանդեպ»:

\* Այսուհետև հոգեբանական երևույթների բացատրությունները բերվում են Ա. Նալ-  
 չաջյանի հիշյալ բառարանից:

Նույն-իչը բարձրամտել-ն է՝ ամբարտավանել, գոռոզանալ, գոռոզամտել, մեծամտել բայերով: *Արելություն բայերի խումբ*. թշնամական զգացմունքի բարձրագույն աստիճանը: Չևավորվում է առելության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Մեկի նկատմամբ առելություն, հակակրանք տածել»: Նույն-իչը առել-ն է՝ զարշել, զզվել, խորշել, հակակրել, նողկալ բայերով: *Չարության կամ նախանշի բայերի խումբ*՝ չարության, նախանձի իմ-իչներով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Մեկի առավելությունը՝ գերազանցությունը՝ հաջողությունը նն տեսնելով՝ չարությամբ լցվել»: Նույն-իչը նախանձել-ն է՝ թունոտվել, չարագնել, նենգանալ, չարակնել բայերով: *Խաբեության բայերի խումբ*՝ խաբեության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Խոստացածը չիրագործել, անբարեխիղճ՝ անագնիվ վարվել»: Նույն-իչը խաբել-ն է՝ դավաճանել, խարդավանել, խարդախել, պատրել բայերով: Ներկայանում է կեղծիքի և ուխտադրության բայերի ենթախմբերով: *Կեղծիքի բայերի ենթախումբ*՝ կեղծիքի իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Կեղծ կերպով երևալ՝ գործել, իրականության հակառակ ձևանալ, կեղծակերպել»: Նույն-իչը կեղծել-ն է՝ կեղծակերպել, ձևանալ, ձևացնել, պատրվակել բայերով: *Ուխտադրության բայերի ենթախումբ*՝ ուխտադրության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Ուխտը խախտել՝ դրժել»: Նույն-իչը ուխտադրել-ն է երդմնագանցել, խոստմնադրժել, ուխտանենգել բայերով: *Գեղագիտական զգացմունքների խումբ*. մարդու բարձրագույն զգացմունքների այն տեսակը, որն առաջ է գալիս որպես երևույթների գեղագիտական գնահատման սուբյեկտիվ դրսևորում, որպես գեղեցիկի ապրում. դրսևորվում է ոգևորվածության, հաճույքի կամ բավականության, հիացմունքի, նախաձեռնելու բայերի խմբերով: *Ոգևորվածության բայերի խումբ*՝ ոգևորվածության իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Որևէ մեկով կամ մի բանով ոգևորվել, խանդավառվել»: Նույն-իչը ոգևորվել-ն է՝ խանդավառվել, ոգեշնչվել, ոգեպնդվել, սրտապնդվել, բաջալերվել բայերով: *Հաճույքի կամ բավականության բայերի խումբ*՝ հաճույքի, բավականության իմ-իչներով՝ հետևյալ **ԻԲ**-ով. «Մեկին կամ մի բանի հավանել, մեկի կամ մի բանի նկատմամբ գոհության, բավականության զգացում ունենալ»: Նույն-իչը հաճել-ն է՝ ախորժել, բավականանալ, բավարարվել, գոհանալ, համակրել բայերով: *Հիացմունքի*

**բայերի խումբ՝ հիացմունքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկով կամ մի բանով հիանալ»:** Նույն-իչը հիանալ-ն է՝ ապշել, զարմանալ, զմայլվել, սքանչանալ բայերով: **Նախաչեռնելու բայերի խումբ.** բնավորության դրական գիծ, որի դեպքում անձը դրսևորում է ստեղծագործելու հակում և ընդունակություններ: Չևավորվում է նախաձեռնելու իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Իր ներքին մղումով՝ իր մտահղացումով ևն ձեռնարկել մի բան, առանց կողմնակի ցուցման կամ հարկադրանքի սկսել մի բան»: Նույն-իչը նախաձեռնել-ն է՝ իրագործել, իրականացնել, հիմնադրել, ձեռնարկել, սկսել բայերով:

**Հուզավիճակի կամ տրամադրության ենթահարացույց.** բոլոր զգացմունքները կոնկրետ իրադրություններում վերածվում են հույզերի՝ արտացոլելով անձի՝ որոշակի ժամանակահատված զբաղեցնող հոգե-վիճակը, որն էլ արտահայտվում է համապատասխան տրամադրությամբ: Բաղկացած է ուրախության, երջանկության, երազանքի կամ անուրջի, կարոտի, տխրության, հանգստության, հոգնության, բարկության խմբերից: **Ուրախության բայերի խումբ՝** ուրախության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ մեկի կամ մի բանի նկատմամբ ուրախության զգացումով համակվել»: Նույն-իչը ուրախանալ-ն է՝ բերկրել, խայտալ, հրճվել, ցնձալ բայերով: Ներկայանում է աշխուժության և ծիծաղի բայերի ենթախմբերով: **Աշխուժության բայերի ենթախումբ՝** աշխուժության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Աշխույժ դառնալ, զվարթանալ»: Նույն-իչը աշխուժանալ-ն է՝ առույզանալ, զվարթանալ, ժրանալ, կայտառանալ բայերով: **Ծիծաղի բայերի ենթախումբ՝** ծիծաղի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի կամ մի բանի նկատմամբ վերաբերմունք արտահայտել դեմքի՝ աչքերի՝ հայացքի ցնձագին արտահայտությամբ»: Նույն-իչը ծիծաղել-ն է՝ ժպտալ, խնդալ, հռչոալ, փռթկացնել, քրքջալ բայերով: **Երջանկության բայերի խումբ՝** երջանկության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Երջանիկ դառնալ, իրեն երջանիկ զգալ»: Նույն-իչը երջանկանալ-ն է՝ երանանալ, բախտավորվել, բարեբախտանալ բայերով: **Երազանքի կամ անուրջի բայերի խումբ՝** երազանքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Երազի մեջ կամ մտքում (արթմնի) մեկին կամ մի բան տեսնել»: Նույն-իչները երազել-ն ու անրջել-ն են՝ անրջագծել, անրջանալ, երազաբանել, ցնորել

բայերով: *Կարոտի բայերի խումբ՝ կարոտի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Կարոտի զգացումով համակվել»: Նույն-իչը կարոտել-ն է՝ անձկալ, անձկանալ, կաթոզնել, փափազել բայերով: Տխրության բայերի խումբ՝ տխրության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Տխուր լինել, տխրությամբ համակվել»: Նույն-իչը տխրել-ն է՝ թախծել, տխրագունել, տրտմանալ, տրտմել բայերով: Ներկայանում է ընկճվածության բայերի ենթախումբով՝ ընկճվածության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Հոգեկան ծանր, ընկճված վիճակի մեջ լինել»: Նույն-իչը ընկճվել-ն է՝ բարոյալքվել, լքվել, հուսահատվել, հուսալքվել, վիատվել բայերով: Ներկայանում է արտասովելու բայերի շարքով՝ արտասուքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի կամ մի բանի համար արտասուք թափել, լալ»: Նույն-իչը արտասովել-ն է թնգթնգալ, կականել, կոծել, հեկեկալ, փղձկալ բայերով: Հանգստության բայերի խումբ՝ հանգստության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Աշխատանքից, հոգնածությունից հանգիստ առնել»: Նույն-իչը հանգստանալ-ն է՝ խաղաղվել, հանգչել, մեղմանալ բայերով: Ներկայանում է քնելու բայերի ենթախումբով՝ քնելու իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Քնի մեջ սուզվել»: Նույն-իչը քնել-ն է՝ մշմշալ, նիրհել, ննջել բայերով: *Չանհրույթի կամ հոգնածության բայերի խումբ.* հոգնածությունը մարդու նյարդային համակարգի հատուկ վիճակ է, որը բնորոշվում է երկարատև գործունեության հետևանքով առաջ եկած ուժասպառությանը. ձևավորվում է հոգնության, ճանճրույթի իմ -իչներով՝ հետևյալ ԻԲ-ով. «Տեսական միօրինակությունից՝ նույն բանի կրկնությունից մեկից կամ մի բանից հոգեպես հոգնել, տաղտկանալ»: Նույն-իչները ճանճրանալ-ը և հոգնել-ն են՝ գերհոգնել, խոնջանալ, թուլանալ, տաղտկանալ բայերով: *Բարկության բայերի խումբ՝* բարկության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ -ով. «Մեկի կամ մի բանի նկատմամբ բարկությամբ լցվել»: Նույն-իչը բարկանալ-ն է բորբորվել, մաղձոտել, նյարդայնանալ, ջղայնանալ, սրդողել բայերով: Ներկայանում է գայրույթի բայերի ենթախումբով՝ գայրույթի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Ինչ-ինչ հանգամանքներից առաջացած ծայրահեղ դժգոհություն արտահայտել որևէ մեկի կամ մի բանի նկատմամբ»: Նույն-իչը գայրանալ-ն է՝ գազազել, գայրագնել, գայրասրտել, վրդովվել բայերով: Ներկայանում է մոլեգնության բայերի շարքով. աֆեկտի վիճակ, որն*

ամենից հաճախ առաջ է գալիս խաղային իրադրություններում և կապված է շահելու, հաղթանակի հասնելու բուռն՝ շատ ուժեղ ցանկությամբ. ձևավորվում է **մոլեգնության իմ-իչով՝** հետևյալ **ԻԲ-ով**. «**Մեկի կամ մի բանի նկատմամբ մոլուցքով լցվել**»: **Նույն-իչը մոլեգնել-ն է՝ դիվանալ, դիվազնել, դիվոտել, կատաղել, մոլեգնոտել** բայերով:

*Կամքի բայերի ենթահարացույց՝* կամքի իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ-ով**. «**Կամքի ուժով կարողանալ վերահսկել սեփական անձը**»: **Նույն-իչը ինքնատիրապետել-ն է՝ ինքնագսպել, ինքնավերահսկել, ինքնադեկավարել** բայերով: Բաղկացած է **ցանկության, ձգտման, ծուլության, համառության, տոկունության, արիության, վախի խմբերով: Ցանկության բայերի խումբ**. գործունեության գիտակցված դրդապատճառ, կամային գործողությունների կատարման անհրաժեշտ նախապայման: Չևավորվում է **ցանկության իմ-իչով՝** հետևյալ **ԻԲ-ով**. «**Որևէ բան սրտանց ուզել՝ փափագել**»: **Նույն-իչը ցանկանալ-ն է՝ բաղձալ, ուզել, ըղձալ, տենչալ, փափագել** բայերով: *Չգտման բայերի խումբ՝* ձգտման իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ-ով**. «**Աշխատել՝ համառորեն ջանալ՝ մի բանի հասնելու**»: Ցանկությունը, միանալով կամային ճիգերի հետ, վերածվում է բարձր տեսակի դրդապատճառի՝ ձգտման: **Նույն-իչը ձգտել-ն է՝ հետամտել, միտել, հակվել, նկրտել, տենչալ** բայերով: Ներկայանում է **աշխատասիրության և նպատակասլացության բայերի ենթախմբերով: Աշխատասիրության բայերի ենթախումբ՝** **աշխատասիրության իմ-իչով՝** հետևյալ **ԻԲ-ով**. «**Որևէ բան հեղինակելու՝ ստեղծելու պահանջ զգալ**»: **Նույն-իչը աշխատասիրել-ն է ջանալ, տրնել, չարչարվել** բայերով: **Նպատակասլացության բայերի ենթախումբ՝** **նպատակասլացության իմ-իչով՝** հետևյալ **ԻԲ-ով**. «**Նպատակասլաց կերպով որևէ բան կատարել**»: **Նույն-իչը նպատակամղվել-ն է՝ նպատակաուղղվել, նպատակադրվել, նպատակամիտվել** բայերով: *Ծուլության բայերի խումբ՝* **ծուլության իմ-իչով՝** հետևյալ **ԻԲ-ով**. «**Որևէ բան անելու մեջ ծուլություն ցուցաբերել**»: **Նույն-իչը ծուլանալ-ն է՝ ալարել, զլանալ, հեղզանալ, պղերզանալ** բայերով: *Համառության բայերի խումբ՝* **համառության իմ-իչով՝** հետևյալ **ԻԲ-ով**. «**Համառել, կամակորություն անել**»: **Նույն-իչը համառել-ն է՝ կամակորել, հաստատակամել, քմահաճել** բայերով: *Տոկունության բայերի*

*խումբ՝ տոկունության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ բանի դիմանալ, հակակայելով իրեն պահպանել»:* Նույն-իչը տոկալ-ն է՝ ապրել, գոյատևել, կրել, համբերել բայերով: *Արիության բայերի խումբ՝* արիության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Վտանգավոր իրադրություններում արի դառնալ, խիզախանալ»: *Նույն-իչը արիանալ-ն է՝ քաջանալ, խիզախել, հանդըզնել, քաջասրտել* բայերով: Ներկայանում է ըմբոստության բայերի ենթախմբով՝ ըմբոստության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Գիմադարձություն՝ անհնազանդություն ցույց տալ, չենթարկվել»: *Նույն-իչը ըմբոստանալ-ն է անհնազանդանալ, ապստամբել, ընդվզել, ստամբակել* բայերով: *Վախի բայերի խումբ՝* վախի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի կամ մի բանի նկատմամբ վախ ունենալ, վախով պատվել»: *Նույն-իչը վախենալ-ն է՝ երկյուղածել, երկնչել, վախվորել, վեհերել* բայերով: Ներկայանում է տագնապի և սարսափի բայերի ենթախմբերով: *Տագնապի բայերի ենթախումբ.* վախի կարճատև կամ տևական հուզահոգեվիճակ: *Չևավորվում է տագնապի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի կամ որևէ բանի համար հուզվել, անհանգստանալ»:* Նույն-իչը տագնապել-ն է՝ անհանգստանալ, դողահարվել, խուճապահարվել, խռովվել, շփոթվել բայերով: *Սարսափի բայերի ենթախումբ.* վախի բարձրագույն աստիճանը՝ սարսափի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի կամ մի բանի պատճառով սարսափի մատնվել, սաստիկ վախենալ»: *Նույն-իչը սարսափել-ն է՝ ահաբեկվել, ահազնել, գարհուրել, սահմռկել, սոսկալ* բայերով:

*Հոգեկան ներգործության բայերի ենթահարսցույց՝* հոգեկան ներգործության իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Մեկի կամ մի բանի վրա ներգործություն ունենալ, ազդել»: *Նույն-իչը ներգործել-ն է՝ ազդել, գզուշացնել, խթանել, մղել, սրտաշարժել* բայերով: Բաղկացած է հրապուրելու, համոզելու, հոգեկան դրդման, ազդեսիայի կամ հարձակման, հիպնոսի խմբերից: *Հրապուրելու բայերի խումբ՝* հրապուրելու իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ նպատակով իր հմայքներին ենթարկել»: *Նույն-իչը հրապուրել-ն է՝ առիմքնել, հմայել, դյուրել, թովել* բայերով: *Հոգեկան դրդման բայերի խումբ՝* հոգեկան դրդման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Գրդել որևէ բացասական գործողության՝ արարքի»: *Նույն-իչը դրդել-ն է՝ գըրգռել, լարել, հրահրել, սադրել* բայերով: *Հիպնոսի բայերի խումբ.* մասնա-

կի քնի վիճակ, որն առաջ է բերվում ներշնչումով: Չևավորվում է **հիպնոսի իմ-իչով՝** հետևյալ **ԻԲ-ով**. «**Հիպնոսի ենթարկել, ներշնչումով քնեցնել**»: **Նույն-իչը հիպնոսել-ն է՝ հիպնոսացնել, ենթարկել, հիպնոսահարել, քնեածել** բայերով: ***Ազդեսիայի կամ հարչակման բայերի խումբ՝*** հարձակման իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ-ով**. «**Որևէ նպատակով եռանդուն գործողությունների դիմել**»: **Նույն-իչը հարչակվել-ն է՝ գրոհել, խոյանալ, խուժել, նետվել** բայերով: ***Համոզելու բայերի խումբ՝*** համոզելու իմ-իչով՝ հետևյալ **ԻԲ-ով**. «**Հորդորելով ամոքել, խաղաղեցնել, հաշտեցնել**»: **Նույն-իչը համոզել-ն է՝ հոժարեցնել, համաձայնեցնել, հորդորել, հաշտեցնել, խրատել** բայերով:

**Շարակարգային սկզբունքով** բացահայտվում են **ՉԲ-երի** կապակցելիության առանձնահատկությունները, **գործաբանական սկզբունքով՝** կիրառական առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են այլ ԲԻԽ-երի հետ հատումներում՝ առաջացնելով **երկրորդային և փոխաբերական** զգացականներ:

**Չզացական բայերի իմաստային դասակարգումը** փորձ է՝ խոսքային գործունեության մեջ մարդու հոգեկան ապրումների դերը, կարևորությունը, գործածության ծավալն ու գործաբանական առանձնահատկությունները առավել հստակ պատկերացնելու, խոսքային իրադրությանը համապատասխան մարդու ներաշխարհն ու հոգեվիճակները վերոնշյալ բայերի միջոցով ճշգրիտ ու բազմակողմանիորեն արտացոլելու, ապա՝ ճիշտ ու տեղին կիրառելու համար:

**Քանալի բառեր** – *զգացական բայերի բառաիմաստային խումբ, իմաստահարացուցային դասակարգում, առաջնային զգացականներ, իմաստահավելիչ, իմաստային բանաչև, նույնացուցիչ, զգայական ընկալումների, բուն զգացականների, հոգեվիճակի կամ փրամադրության, կամքի, հոգեկան ներգործության ենթահարացույցներ:*

**ДОХОЯН РУЗАННА – Семантическая классификация глаголов чувств современного армянского языка.** – В современном армянском языке не проводилось комплексного изучения глаголов чувств. Попытки семантических группировок этих глаголов или упоминание термина (глаголы чувств) встречаются только в работах по синтаксису. В статье вышеупомянутые глаголы мы изучали с семантической точки зрения, рассматривая как ЛСГ, организованную полемым принципом. Мы очертили границы, формируя парадигму глаголов чувств, которую разделили на следующие подпарадигмы: глаголы восприятия, истинных чувств, душевного состояния и настроения, воли, душевного воздействия. В свою очередь, подпарадигмы разделили на соответствующие группы, подгруппы, ряды. Цель исследования глаголов чувств – дать более четкое представление о роли и употреблении этих глаголов в процессе речевой деятельности.

**Ключевые слова:** *ЛСГ глаголов чувств; семантико-парадигматическая классификация; первичные глаголы чувств; семантический дополнител; семантическая формула; идентификатор; подпарадигмы восприятия, истинных чувств, душевного состояния и настроения, воли, душевного воздействия.*

**DOKHOYAN RUZANNA - The semantic classification of the verbs of feeling in modern Armenian.** - There is no complex research of the verbs of feeling in modern Armenian. We only meet the attempts of those semantic groups or the mentioning of the term (verbs of feeling) in the syntax. We have studied the above-mentioned verbs in the article from the semantic point of view observing them as a word-semantic group organized by a field principle. We have outlined the borders forming the semantic paradigm of the verbs of feeling which we have divided into the following subparadigms: perceptions, original verbs of feeling, those of state of soul and mood, psychic influence, will. We have divided the followings into appropriate groups, subgroups, series. The semantic classification of the verbs of feeling aims to imagine clearly the role and importance of human psychic feelings and to reflect them with many contrasts in speech activity.

**Key words:** *word-semantic group of verbs “feeling”; semantic-paradigmatic classification; primary verbs of “feeling”; semantic extra-word; semantic formula; identifier; sub paradigms of perceptives, basic verbs of “feeling”, state of mind or temper, will, spiritual influence.*

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՌԱՉԵՎԵՐ  
13-ՐԳ ԳԱՐԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները բացառիկ կարևոր սկզբնաղբյուր են հայոց լեզվի պատմության համար: Դա բացատրվում է հետևյալ առումներով. ա) հիշատակարանները, ի տարբերություն այլ բնագրերի, տրամադրում են մարդկային զգացումների, ապրումների, կենցաղային-ընտանեկան հարաբերությունների մանրամասներ, որոնցով և պայմանավորված է կենդանի խոսքին հատուկ անմիջականությունը, այսպիսով և բառապաշարի համապատասխան շերտերին պատկանող բառերի առկայությունը. բ) նրանցում սովորաբար գրառված է հիշատակագրության կոնկրետ ժամանակը, որով և պատկերացում է կազմվում տվյալ լեզվական երևույթի առկայության ճշգրիտ ժամանակի մասին. գ) հաճախ հեղինակները նշել են իրենց բնօրրանը, որով և պարզվում է լեզվական միավորների բարբառային պատկանելությունը: Ահա նշված առումներով էլ որոշակի կարևորություն է ներկայացնում սույն ուսումնասիրությունը: Նախորդ աշխատանքներում, անդրադառնալով 5-11-րդ դարերի, ապա և 12-րդ դարի հիշատակարանների բառապաշարին, առանձնացրել ենք քիչ թվով բարբառային բառեր և բառատարբերակներ, նաև այնպիսիք, որոնք ուղենշում են հետագա փոփոխությունները, այսինքն՝ հատուկ են միջին գրական հայերենին<sup>1</sup>: Ինչ վերաբերում է 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններին<sup>2</sup>, ապա դրանց լեզվական որոշ հարցերի անդրադարձել է Լ. Հովսեփյանը՝ շեշ-

<sup>1</sup> Տե՛ս **Խաչատրյան Վ.**, 5-11-րդ դարերի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2013, հոկտեմբերի 2-3, էջ 39-48, 12-րդ դարի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը, «Լրաբեր», գիտական հոդվածների ժողովածու, մաս 3, ՀՊՃՀ-80, Եր., 2014, էջ 803-809:

<sup>2</sup> «Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ (ԺԳ դար)», կազմ. Մաթևոսյան Ա., Եր., 1984:

տը դնելով միմիայն հողովման և խոնարհման համակարգերին բնորոշ այն իրողությունների վրա, որոնք շեղվում են գրաբարյան օրինաչափություններից՝ կիսով չափ լինելով միջինհայերենյան ձևեր, մասամբ գրաբարյան գերծշգրտության, զանազան վրիպակների և տարընթերցումների հետևանք, քիչ դեպքերում՝ բարբառային իրողություններ<sup>3</sup>: Սույն աշխատանքում ներառված են այն բառերը, որոնք ամենայն հավանականությամբ բնութագրվում են նեղ տարածքային պատկանելությամբ: Ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, բոլոր դարերում հիշատակարաններ հիմնականում գրվել են գրաբարով: Դրանցում բավականին քիչ ծավալ են կազմում միջին հայերենով, ապա և աշխարհաբարյան շրջանում՝ նաև աշխարհաբարով գրված հիշատակարանները: Ավելի մեծ թիվ են կազմում տարբեր լեզվավորներին հատուկ իրողությունների ներհյուսմամբ կազմվածները: Իսկ անխառն կամ գրեթե անխառն գրաբարով գրվածները ծավալով շատ անգամ գերազանցում են նախորդներին: Հարցն այն է, որ հիշատակարաններ գրել են ամենատարբեր կրթություն ունեցող անհատներ, որոնցից շատերը հայ գրական-մշակութային հայտնի գործիչներ են: Վերջիններս, լավագույնս տիրապետելով գրաբարին, գրել են սովորաձավալ հիշատակարաններ գրաբարյան օրինաչափություններով: Ոչ միայն ձեռագիր ընդօրինակողները՝ գրիչներն են հիշատակարաններ գրել, որոնք հիմնականում ուսյալ մարդիկ են եղել, այլև ձեռագիրը փրկագնողները, ստացողները, գրչագրել պատվիրողները և առհասարակ տվյալ երկին որևէ առնչություն ունեցող անհատներ: Նրանցից շատերը, առանձնակի կրթություն չունենալով, գրաբարի կանոններին ու բառապաշարին քաջատեղյակ չլինելով, մեկ կամ մի քանի նախադասությունից բաղկացած հիշատակարաններ են թողել, որոնք, ըստ երևույթին, հիմնականում տրամադրում են բարբառային-խոսակցական իրողությունները: Սակայն, ցավոք սրտի, վերջիններում շատ հազվադեպ է նշվում հիշատակագրողի ծննդավայրը<sup>4</sup>:

---

<sup>3</sup> Հովսեփյան Լ., ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Եր., 1997:

<sup>4</sup> Եթե հիշատակագիրը տեղեկություն է հաղորդել իր ծննդավայրի կամ գրչության վայրի վերաբերյալ, ապա յուրաքանչյուր բնագրային վկայության կողքին փակագծերում

Միջին հայերենի շրջանում ավանդված այն բառերը, որոնք գործածվել են լայնորեն տարածված համարժեքներից զուգահեռ և դրանով հանդերձ արդի լեզվավիություն փաստագրված բարբառներին հատուկ իրողություններ են, ամենայն հավանականությամբ բարբառային են եղել նաև տվյալ ժամանակաշրջանում: Քննությունը կատարվել է այս մոտեցմամբ:

Բարբառային բառերն ըստ ծագման ներկայանում են հետևյալ երեք խմբերով՝ բնիկհայերենյան, փոխառյալ և անհայտ ծագման բառեր: Վերջինները հայ լեզվաբանության մեջ հայտնի են «ենթաշերտային բառեր» տերմինով<sup>5</sup>:

**Բնիկ բառեր:** Ըստ բառարանային տվյալների՝ բնիկ հայերեն բառեր են հետևյալները.

**Գէշ** «վատ, տգեղ». «Յուրտ է, ձեռս **կաղոն** է, **գէշ** կու գրուի, թողութիւն արա աղաչեմ» (356, **Ականց** անապատ, որն ըստ ՏԲ-ի<sup>6</sup> գտնվում է Կիլիկիայի Յախստ գավառում): ՆՀԲ-ն բառը մեկնում է «որպէս մնկ. *յոռի, վարթար, անախորժ*»՝ վկայելով երկու օրինակ՝ մեկը 13-րդ, իսկ մյուսը 14-րդ դարի գրավոր աղբյուրից: **Գէշ** «ղի, դիակ» բառահոդվածում Աճառյանը նաև անդրադարձել է հիշյալ իմաստին՝ վկայելով. «**գէշ** «վատ» կապ չունի սրա հետ, այլ ծագում է *գարշ* բառից»: Վերջինս էլ, համաձայն ՀԱԲ-ի, բնիկհայերենյան բառ է՝ «հնխ. *ghers-* «սարսափ, զգուանք» բառից:

**Դոն** «հացի տեսակ». «ԶՓիլիպպոս սուրբ և ընտրեալ քահանայ յաղաթս ձեր յիշեսցիք, որ գտաք **գղոնս** երբեր» (146): Ըստ ՀԱԲ-ի՝ բնիկ հայերեն բառ է՝ հնխ. *dhon-* ձևից, նշանակում է «մի տեսակ հաց, պարսիմատ»: Հ. Աճառյանը, ելնելով բառարանային վկայություններից և իբրև լրացուցիչ փաստարկ բերելով այն, որ «նոյն բառի նուագական ձևը՝ *դոնիկ*, գործածական է մինչև այժմ էլ Բուլանըխի և Մշոյ բարբառ-

---

նշել ենք այն՝ Տեղանունների բառարանի տվյալների հիման վրա պարզելով տվյալ վայրի աշխարհագրությունը:

<sup>5</sup> Տե՛ս «**Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության**» (այսուհետև՝ Ակնարկներ), հ. Ա, Եր., 1972, էջ 191:

<sup>6</sup> **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՏԲ), Ե., 1986:

ումուն և նշանակում է «կէս կանգուն երկարութեամբ և մի մաստ հաստութեամբ մի տեսակ տափակ հաց՝ մէջտեղը ծակով», եզրակացնում է, որ բառը ժամանակին եղել է կենդանի ժողովրդական բառ: ՀԼԲԲ-ում<sup>7</sup> առաջին իմաստը նշված է «շան լափ», ապա նոր՝ «հաց»՝ հղված լինելով *ղոնհիկ*: Ընդ որում, համաձայն բառարանի, *ղոն* հայտնի է Վարաբաղի բարբառում, իսկ *ղոնհիկ* տարածված է նաև այլ բարբառներում, և այն բացատրված է «երկարած, բոքոնի նման հաստ հաց»: Ակնարկներում ներկայացված է «կլոր հաց, թոնրան բոքոն»<sup>8</sup>:

**Թարսու** «անձրև»․ «ի ժամանակս բարեպաշտ ամիրսպասալար Չաքարիայի... բովանդակ ԻԲ (22) ար **թարսու** եկն եւ գետ յարոյց եղև» (21)․ ՆՀԲ-ում<sup>9</sup> և ԱԲ-ում<sup>10</sup> վկայված չէ, սակայն առկա է նույն արմատից կազմված *թարսուեմ* բայը, որի մի շարք նրբիմաստների կողքին նշված է նաև «թրջել» իմաստը: ՀԱԲ-ի<sup>11</sup> **թարսու** բառահոդվածում տրված է. «Արմատ առանձին անգործածական, որից կազմած են *թարսուեմ*,... *թարսուումն*..., *տղմարարսու*, *մեղսարարսու*...», այնուհետև. «բնիկ հայ բառ. կրկնուած է պարզական \*թսւ արմատից (առանձին անգործածական), որ գալիս է հնիս. *tap* ձևից» և նշանակում է «ընկղմել, թաթաւել, մխրճել»: Նույն բառահոդվածում ի վերջո վկայված է, որ առանձին գործածական է որպես «անձրև» իմաստով գավառական բառ՝ կիրառության վայրերի նշումով: Ապա հիշատակվում է. «ըստ Նորայր, Բառ. Ֆր. 955 ա կայ և միջին հայերէնում»: ՄՀԲ-ում<sup>12</sup> երկու վկայություն է բերված՝ մեկը Հ. Երզնկացուց, մյուսը՝ Ն. Քուչակից:

**Կաղունկ** «ցրտից կուչ գալ, կծկվել»․ «Անհեթեթ կու գրուի, ցուրտ է, ձեռս **կաղունկ** է, թողութիւն արա» (356)․ այս բառն առկա է ՀԼԲԲ-ում, և տրված է, որ հատուկ է Ակնա բարբառին և նշանակում է «կծկվել, կուչ

<sup>7</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), Եր., 2012:

<sup>8</sup> Նշվ. աշխ., էջ 190:

<sup>9</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836-1837:

<sup>10</sup> **Ճէլալեան Գ.**, Առձեռն բառարան հայկազեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865:

<sup>11</sup> **Աճառեան Հ.**, Հայերէն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Եր., 1971-1979:

<sup>12</sup> **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Եր., 2009:

գալ (մատների մասին)»: Այն, ինչպես և պարզվում է, ՆՀԲ-ում, ՀԱԲ-ում և ՀԲԲ-ում<sup>13</sup> արձանագրված *կադուսեմ* բայի միջնավանկի *ս* ձայնավորի՝ միջին հայերենին հատուկ անկմամբ առաջացած հնչյունական տարբերակն է: Վերջինս ՀԲԲ-ում բացատրված է մաս *քցմեղ* բայով, որի *քուցումեղ* տարբերակը նույնպես գործածվել է նշված դարի հիշատակարաններից մեկում, ինչպես և կփաստենք ստորև:

**Ենթաշերտային բառեր:** Մառլենա Մուրադյանը Ակնարկներում գրում է. «Միջին հայերենը ավանդում է գրաբարին անծանոթ բազմաթիվ այնպիսի բառեր, որոնց ծագումը հաճախ դժվար է պարզել: Դրանց զգալի մասը, անշուշտ, հայ ժողովրդի կազմի մեջ ձուլված տարբեր ցեղերի ու ժողովուրդների բառապաշարի հետքերն են, որ հիմնականում միջին հայերենի բարբառներից ներթափանցել են գրական լեզվի մեջ»<sup>14</sup>: Ահա թե որ բառերն են անվանվում «ենթաշերտային»: Ըստ հիշատակված աշխատության և բառարանային տվյալների՝ այս ենթախմբին են պատկանում ստորև ներկայացվող բառերը:

**Կորդ** «խոպան, անվար, ամայի». «Ձի թեպետ ոչ աղբիւր ջրոյ նոր պատառեցաք և ոչ ի **կորդ** ագարակի սերմանց որ այս բարդից հնճեցաք, ի նոցունց համբարաց ցորենոյ, ճմլել» (Հեղինակ՝ Հովհաննես Երզնկացի, 706): Ինչպես հայտնի է, Երզնկան քաղաք է Արևմտյան Հայաստանում՝ Էրզրումի նահանգում: Ըստ ՀԼԲԲ-ի՝ բառը գործածվել է մի շարք վայրերում, սակայն նշված չէ Էրզրումը կամ Երզնկան:

**Չարք** «մեծ-մեծ, խոշոր». «...և հեր գլխոյն ուղղորդ և **չարք**, և աչն նեղ, և ճակատն լայն, և քիթն տափակ, և մուրուքն **քասակ**» (196): Բառը ՀԱԲ-ում նախ բացատրված է «մեծ-մեծ, խոշոր»՝ ելնելով եղած փաստերից: Ապա նշված է, որ հայտնի է մաս «կոշտ, անհարթ» իմաստով՝ որպես միակ վկայություն բերելով հիշատակարանիս օրինակը: Հագիվ թե կարելի լինի տվյալ տեքստից բխեցնել «անհարթ» իմաստը, մանավանդ որ *հերք* չի կարող միաժամանակ լինել «ուղղորդ» և «անհարթ»: «Կոշտ» իմաստը նույնպես հիմնավորված չէ ՀԱԲ-ում: Սակայն ՀԱԲ-ում

---

<sup>13</sup> **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Եր., 1944-1945:

<sup>14</sup> Նշվ. աշխ., էջ 191:

«մեծ-մեծ, խոշոր» նշանակության կողքին տրված է. «հմմտ. հայ. *չառ* «կոշտ», *չար* («կոշտ» մագ), հ. իռլ. garb, կիմր. garw «կոշտ»: Եթե դիտարկված բառի «մեծ-մեծ, խոշոր» իմաստով գործածության բնագրային վկայություններ չլինեին, ապա կարելի էր կարծել, որ հիշատակարանում առնված է «թալ» իմաստով: Անգամ չի բացառվում, որ *չարի* «մագոտ, թալ» եղած լինի և ինչ-ինչ հանգամանքներում դարձած լինի *չարբ*: Հիշատակարանում առկա հետևյալ նախադասությունից իմացվում է, թե որ տարածաշրջանից է հեղինակը. «...ոչ կարեմ պատմել զանցս չարչարանացն, որ ետ ըմպել զբաժակն բարկութեան **Այրարատեան** զաւառին և **Անոյ**», 196):

**ճոռ** «խաղողի փոքրիկ ողկույզ». «...ի նուագեալ ժամանակս իբր ի դրունս ձմերայնոյ ի լսնացեալ **ճոռ** կամ ողկոյզ ինչ զարմանալի փայլեաց» (568): ՆՀԲ-ում առկա է *ճիռ* հնչյունատարբերակը, իսկ ՀԱԲ-ում վերջինիս բառահողվածում բերված են ևս մի քանի հնչյունական տարբերակներ, այդ թվում՝ և *ճոռ*: ՀԼԲ-ում նույնպես վկայված է վերջինս, սակայն տրված չեն տարածման վայրերը: Բայց և այն պարունակող հիշատակարանը կրում է հետևյալ խորագիրը՝ «Յիշատակարան թագաւորին Հայոց Լեւոնի ընծայաւորի զարիմակ սուրբ գրոցս Հաղբատա», որից իմացվում է հիշատակագրի ինքնությունը: Պետք է նկատել նաև, որ *ճիռ* տարբերակը վկայվել է 15-րդ դարի հիշատակարանում. «և կամ թէ իբր *ճիռ* ի մեջ ողկուզաց ի զաւառին Սիւնեաց» (գրիչ՝ Թովմայ Մեծոփեցի, վայր՝ Մեծոփայ վանք)<sup>15</sup>:

**Մուրբախ** «խոհանոց». «ՉԱռիծ սպասատր նորա և *մուրբախի* և զծնաւոս իւր արիւնութեամբ յիշեցեք ի Տէր Յիսուս» (29): Վերը հիշատակված մի շարք բառարաններից միայն ՀԼԲ-ում է վկայված այս բառը, և որպես աղբյուր նշված է Սասունի բարբառը, սակայն բնագրային վկայություն առկա չէ:

**Մորեկ** «գժտվել, խռովություն բարձրացնել, սպստամբել». «Ի թուին Հայոց ՈՒՂԹ (1230), յամիս աւգոստոս ԻԾ (25) արն, յաւոր կիրակէի եկն առ մեզ Սարգիս հայրն և եբեր մեզ վատ զրոյց, որ եկեալ Լևոն թագաւո-

<sup>15</sup> Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Ա, կազմ. Խաչիկյան Լ., Եր., 1955, էջ 101:

րին թագուհի ի Կիպռասա ի Սելևկիա, որ *փեկնայր* զիր դուստրն, որ էր Հեթում թագաւորին թագուհի: Եւ տարան զթագուհին ի Սելևկիա, և անդ ետես զմայրն իւր, և խաբեց զթագաւորին հայրն զպարոն Կոստանդին, և մտաւ ի Սելևկիա, և *մոպեց* հետ իր մարն, և զպարոնն հանին *քաշնայր* բերդէն: Այս այսպէս գործեցաւ, և ենք յահի և յերկեղի. այլ յառաջկայն Աստուծոյ է գիտելի» (166): ՆՀԲ-ում տրված է *մոպեց* բայի մեկ վկայություն՝ դարձյալ 13-րդ դարին պատկանող աշխատությունից: Ըստ ՆՀԲ-ի՝ տվյալ վկայությունը «երբեմն ապստամբեալք յաստուծոյ» արտահայտության կողքին է՝ լուսանցքում. «ի լուսանցս գրի *մոպեց*»: ՆՀԲ-ում արձանագրված են նաև *մոռուր* «մռմռացող», *մոռութիւն* «աղմուկ, ապստամբութիւն»: ՀՄԲ-ում<sup>16</sup> տրված է *մոռուր* «աղմուկ, խռովություն» բառարմատը, որի հողվածում գրված է. «Բաղադրություն՝ *մոռել, մոռութիւն*: Թերևս կապված է *մոռ, մոռնջ* արմատների հետ», իսկ *մոռ*-ը բացատրված է «իլու, լուռումունջ լսող»: Ինչպես նկատելի է, անհավանական է այսպիսի բացատրությունը: Բայը վկայված է նաև ՀԳԲ-ում<sup>17</sup>, որի համաձայն՝ հայտնի է Չենկիլեի բարբառում «դրդել, գրգռել, խօսք խառնել» իմաստով<sup>18</sup>: Ելնելով վերոհիշյալից՝ դժվար չէ հասկանալ, որ *մոռնայ, մոռութ* «բերան, ստորին շրթունքը», *մոռ* «ոխ», ապա և *մոռուր* «մռմռացող», որից և *մոպեց* «զժտվել, ապստամբել» բառերը նույնական ծագում ունեն: Նշվածների հիմքը մարդու արձակած ձայնն է՝ որպես բողոքի, դժգոհության, զայրության արտահայտություն:

*Մսեկ* «ցրտահար լինել, պաղել». «Այսար ձեռս խիստ *մսեցաւ*, զի իմանալիս կրկին է սառեալ, վայ» (գրիչ՝ Առաքել, վայր՝ Ս. Թեոդորոսի վանք, մերձ ի գեղաքաղաքս Ծմին՝ ըստ ՏԲ-ի՝ Գյուղ Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Եկեղյաց գավառում, Երզնկայի շրջանում, 56): Ըստ ՆՀԲ-ի՝ վկայված է նաև 5-րդ դարում, ՀՄԲ-ը նշում է. «պատահական մնանություն ունին ալբան. *marթ* «ասստիկ ցուրտ», ռուս. морозь...»:

<sup>16</sup> **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Եր., 2010:

<sup>17</sup> **Աճառեան Հ.**, Հայերեն գաւառական բառարան (այսուհետև՝ ՀԳԲ), 1913:

<sup>18</sup> Այնարիկներում նույնպես վկայված է այս փաստը (էջ 196), սակայն ըստ ՏԲ-ի՝ *Չենկիլեիքը* գետակ է Կուրի ավազանում՝ Չորագետի վտակը. այդ անվանումով որևէ բնակավայր նշված չէ:

**Շիւսր** «խեղճ, անճար, մոլորված»։ «...քէ քանի թագաւորք և առաջնորդք և իշխանք և փարթաւք թողին զայս կեանս եւ գնացին ունայն և են ողորմ և **շիւսր**» (Հեղինակ՝ Վարդան Այգեկցի, 188)։ ՆձԲ-ն հղում է *շուսր* տարբերակը՝ բացատրության մեջ տալով. «Առաւել ոնկ. որպէս վարանք, տագնապ, խուճապ»։

**Քաշնք** «կշտամբանք»։ «...և զպարոնն հանին **քաշնաւք** բերդէն» (166)։ ՄձԲ-ում վկայված է *քաշանք* «նախատինք, անպատվութիւն», և բերված է բնորոշ վկայություն, իսկ ՀԼԲ-ում՝ *քաշնքի* «խրատել, կըշտամբել»։ Սակայն վերջինում բնագրային վկայություն տրված չէ, անգամ նշված չէ տարածական պատկանելությունը։ Այն արձանագրված է նաև ՀԲԲ-ում։ Ինչպես և գիտակցվում է, *քաշանք* կամ *քաշնք* բառի արմատը նույնական է *քաշել* բայի արմատին, ուստի և դիտարկված բառը սկզբնապես նշանակել է «քաշքշում, քաշքշոց», ապա և երկրորդաբար ստացել «հանդիմանություն, կշտամբանք» իմաստը։ Դա պայմանավորված է նրանով, որ հանդիմանությունը հաճախ ուղեկցվում է «քաշքշումով»։

**Քոցունկ** «մրսելուց մատների շարժականութիւնը նուազել, մատները հուպ չգալ»։ «Ով սուրբ ընթերցողք, յիշեցէք զեղկելիս, զի թանաքս սատոյց էր եւ ձեռս **քոցունսձ**, վասն Տեառն մի պախարակէք զխոշոր զրիխ» (882)։ Արձանագրված է ՀԲԲ-ում՝ հղվելով *քցունկ*։ ՀԼԲ-ն նույնպես վկայում է *քցնի*, *քցնուկ* (քցմած)։ Մեր կարծիքով՝ նշվածը *ցանաքի* (*ցմքի*) բայի՝ բարբառներին հատուկ դրափոխությամբ առկայացած իրողություն է. պետք է նկատել, որ *ցանաքի* բայի բացատրության մեջ ՆձԲ-ում տրված է նաև «պաղիլ»։ Իսկ ըստ ՀԱԲ-ի՝ *ցանաք* փոխառյալ է եբրայերենից. «Բառիս հետ յայտնապէս նոյն է եբր. *smq* «չորացնել»։

**Փոխառյալ բառեր**։ Առանձին խումբ են կազմում այն փոխառյալ բառերը, որոնք արմատացել են բարբառներում։ Հիշատակարաններում փոխառությունները երբեմն հանդես են գալիս բաղադրությունների կազմում։

**Անփեշ** «անարիեստ»։ «Զբազմամեղ Թեօֆիլէ՝ *անփեշ* գրիչ եւ զծընողսն եւ զեղբարսն եւ զգաւակսն իմ յիշեցէք ի Տէր» (941)։ ՄձԲ-ում

վկայված է *փեշայ* - պարսկ. piše «արիեստ, գրադմունք»: Շատ հիշատակագիրներ իրենց *անարհեստ* են կոչել: Սակայն մեկ նախադասությունից բաղկացած տվյալ հիշատակարանում գործածվել է օտար բաղադրիչը, որն ըստ երևույթին հարագատ է եղել հիշատակագրին: Նույն արմատից է նաև ներկայում էլ մի շարք հայ բարբառներում լայնորեն տարածված *փեշակ* բառը:

**Դեհ // դիհ** - պարսկ. «կողմն». «Այս **դեհիս** գիրն շատ է, ապա քիչ» (201), «Վա՛յ կուրացեալ մտաց, վերնագիրն ի մեկ այլ **դիհն** պիտեր» (222):

**Խապագ** – արաբ. «հացագործ». «Արիհնեայ Քրիստոս Աստուած Թորոս **խապագն**, որ եղև միաբան Սուրբ Աստուածամարն» (109): Այս բառը վկայվել է նաև ՆՀԲ-ում, որտեղ տրված է. «Բառ ռմկ. այն է արաբ. **խուպագ**, այսինքն Հացագործ»:

**Մամ** «նանի, մեծ մայր». «յիշեցէք ի Տէր Յիսուս Քրիստոսի թողութիւն մեղաց զՅակոբ գրիչ, և զՄամոց՝ **մամն** ին» (գրիչ՝ Յակոբ, վայր՝ Արգիլան. ըստ ՏԲ-ի՝ այն գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Առբերանի գավառում, 738), «հանգեօ ի Քրիստոս բարեպաշտ **մամն** իմ Չապել քագուհին» (Ստացող՝ Հեթում Բ քագաւոր, 705): ՆՀԲ-ում մեկ վկայություն կա Մխիթար Գոշի «Դատաստանագրքից»: Ըստ ՀԱԲ-ի՝ փոխառյալ է հունարենից, որը «նախապէս նշանակում էր «մայր», յետնաբար դարձաւ «մեծ մայր»:

**Մուխապրա** – ըստ ՍՀԲ-ի՝ արաբ., պարսկ. «վտանգաւոր». «...երկուցեալք, ել ի դուրս եղաք և համառատ գնացաք՝ ի **մուխապրա** կենացս» (Հեղինակ՝ Վարդան Արևելցի, վայր՝ Սանահին, 308): ՆՀԲ-ում նույնպէս վկայված է և տրված. «Բառ ռմկ. (թ. մուխաթարէ)»:

**Շիքրուն** - «Քրիստոս յիշեայ զԽաչատուր վարդապետ, որ զ**շիքրունն** ետ, ամեն» (882), «Կարի դժվար է ի կապած գիրք գրիչ բանեցնել, վասն այն, որ ձեռքն կու սղա առանց **շիքրունի**» (355): ՀԱԲ-ում *շիքրունն* «նստարան» գլխաբառի դիմաց գրված է. «նորագիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Դրնդ. 407...., նույնը կա *շիքրունն* ձևով՝ անդ, էջ 209»՝ բերվելով բնագրային վկայությունները՝ «դներ գգուխըն ի վերայ *շիքրունին*» և «ի վերայ *շիքրունին* յեցելով»: Այնուհետև նշվում է,

որ «թթր. բառ է. հմմտ. ույղուր. šikusun «փողոցներում հանգիստ առնելու տեղ, ...մի տեսակ հիւրանոց»։ ՀՍԲ-ն դարձյալ նույնն է վկայում՝ քիչ հավանական համարելով ՀՍԲ-ում նշված ծագումը։ ՄՀԲ-ն *շիքիրոն* գրլխաբառի մոտ հղում է *շիքիրոն* տարբերակը՝ բերելով մեկ վկայություն ԺԴ դարի հիշատակարանից՝ *գշիքիրոն* շնորհեստ, իսկ *շիքիրոն*-ը բացատրված է «նստարան», և բերված է վերը նշված օրինակը, սակայն փոխաստու լեզվի մասին ոչինչ ասված չէ։ Դատելով բերված բոլոր վկայություններից՝ միմիայն կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է «սեղանիկի կամ մման մի հարմարանքի», որը շարժական է և օգտագործվել է գրչագրական աշխատանքներ կատարելիս։

**Պասսրեղ.** «Սուրբդ Աստուծոյ, աւգնեա Սոսքեմէս քահանայի, որ *գպասսրեղս* եբեր մեզ» (146)։ Բառը վկայված է ՀՍԲ-ում՝ հետևյալ բացատրությամբ՝ «պտուղը եփելով խիս շինած և թերթ թերթ չորացրած», սպա համարված է հունական փոխառություն, որն էլ իր հերթին «փոխառեալ է լտ. *pastillus* «նկանակ, կարկանդակ կամ այլ խմորեղէն»։ Արձանագրված է նաև ՀԼԲԲ-ում *պասսրեղ* և *պասսրեխ* տարբերակներով. «խաղողի՝ թփի՝ սալորի՝ հոնի ռուպով և այլուրով պատրաստած քաղցրավենիք»։

**Պռոյք** – հուն. «օժիտ, բաժինք», **միրսայք** - արաբ., պարսկ. «ժառանգություն». «Բայց մի որ իշխեսցէ աւճտել զաա եկեղեցոյս կամ *պռոյք* տալ, կամ ումեք *միրսայք* հանել, այլ մնայ յայս եկեղեցիս ի Սուրբ Թորոս» (173)։

**Ռահ** – պահլ. «ճանապարհ, ուղի, արահետ». «*Ռահ* լուսոյ առ դա տեսայ» (753)։ Ըստ ՀԼԲԲ-ի՝ գործածվում է Ղարաբաղի բարբառում։

**Քոսակ** - պարսկ. «քարձ, մօրուքը չբուսնող». «...և քիթն տափակ, և մուրուքն *քոսակ*» (196)։ ՀՍԲ-ում ներկայացված է, որ մեկ վկայությամբ հայտնի է հիշատակարանում՝ նկատի առնվելով հենց այս օրինակը։ Ակնարկներում տրված է հետևյալ տարբերակը՝ *գոսակ* < պիլ. \*kōsak (նոր պարսկերեն՝ kōsa) (224)։

Ավարտելով ձեռագրերի՝ 13-րդ դարի հիշատակարաններում արձանագրված վերոհիշյալ բարբառային բառերի դիտարկումը՝ պետք է հա-

վաստենք, որ հայ մատենագրության մեջ վկայված դեռ բազում բառեր տարբեր տեսանկյուններից քննության ու լուսաբանման կարիք ունեն:

**Քանալի բառեր՝** *շեռազիր, հիշարակարան, քառապաշար, բարբառային բառեր, բնիկ բառեր, փոխառյալ բառեր, անհայր ծագման բառեր:*

**ВАЛЕНТИН ХАЧАТРИАН -Диалектические слова в колофонах 13-го века.** - В статье рассматривались диалектизмы, употребляемые в колофонах 13-го века. Последние классифицировались по происхождению и представлены следующими подгруппами: исконно армянские слова, заимствованные и слова, неизвестные по происхождению.

**Ключевые слова:** *рукопись, колофон, лексика, диалектные слова, родные слова, заимствования, слова неизвестного происхождения.*

**VALENTIN KHACHATRYAN - Dialectical Words in the Handwritten Colophons of the 13-th Century.** - In this article there have been discussed the dialectical words used in the handwritten colophons of the 13th century. They have been classified according to their origin, presenting the following subgroups: native Armenian words, loan words and words of unknown origin.

**Key words:** *handwriting, colophon, vocabulary, dialectal words, native words, words loan, words of unknown origin.*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |     |
|---|-----|
| <b>Միմոնյան Արամ</b>  |     |
| Ողջույնի խոսք .....   | 3   |
| <b>Աբաջյան Աննա</b>   |     |
| Մանուկ Աբեղյանի կյանքն և գիտական գործունեությունը .....   | 5   |
| <b>Ավետիսյան Յուրի</b>  |     |
| Միջին հայերենը որպես արևմտահայ աշխարհաբարի ձևավորման<br>ենթաշրջան .....   | 16  |
| <b>Կատվալյան Վիկտոր</b>   |     |
| Բարբառ և բարբառային լեզու .....   | 25  |
| <b>Սաքապետյան Ռուբեն</b>  |     |
| Լեզվական մեղանշումները հայերենում .....   | 36  |
| <b>Խաչատրյան Լալիկ</b>  |     |
| Միջին հայերենի համեմատություն-դարձվածային<br>արտահայտությունների ձևաբանական արժեքը .....                            | 47  |
| <b>Ջրբաշյան Աշխեն</b>   |     |
| Մանուկ Աբեղյանը և հայկական տաղաչափության խնդիրները .....  | 58  |
| <b>Մեսրոպյան Հայկանուշ</b>  |     |
| <i>Գուրի</i> հասկացության հոգևոր բովանդակությամբ պայմանավորված<br>բառանունների բարբառային բնութագիրը .....          | 67  |
| <b>Գրիգորյան Մուսաննա</b>   |     |
| Ֆրանսիական փոխառությունները միջին հայերենում, դրանց<br>բառակազմությունը .....                                       | 74  |
| <b>Սուքիասյան Քնարիկ</b>  |     |
| Իգական անձնանունների իմաստաբանական և բառակազմական<br>քննությունը Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» ..... | 84  |
| <b>Մեյքիսանյան Փառանձեմ</b>   |     |
| Մանուկ Աբեղյանը բառարանագիր .....   | 91  |
| <b>Պողոսյան Նորայր</b>  |     |
| «Բառգիրք հայոց»-ի որոշ ճշգրտումներ ձեռագիր բառարանների<br>տվյալների հիման վրա .....                                 | 99  |
| <b>Գիլբարյան Նարինե</b>   |     |
| Հայոց գետանունների ստուգաբանության պատմությունից .....  | 106 |
| <b>Աղաջանյան Ջարիկ</b>  |     |
| Լեզվի նորմավորման հարցերը Մ. Աբեղյանի աշխատություններում .....  | 119 |
| <b>Խաչատրյան Ավարդ</b>  |     |
| Անձնանունների հոլովական զուգաձևությունները Հին և Նոր<br>կտակարանների գրաբար տարբերակներում .....                    | 129 |

|   |     |
|---|-----|
| <b>Ներսեսյան Գոհար</b>  |     |
| Բացահայտչի արեղյանական ըմբռնումը .....  | 140 |
| <b>Գևորգյան Շուշանիկ</b>  |     |
| Հրամայական եղանակի զուգադրական-տիպարանական քննություն .....   | 149 |
| <b>Յուզբաշյան Անահիտ</b>  |     |
| Մանուկ Աբեղյանը իբրև գրաբարագետ .....   | 162 |
| <b>Ֆալաքյան Մանուկ</b>  |     |
| Ածանցավոր բառերի բառակազմական հիմքերի փոխաբերական իմաստների յուրացումը հայերենում .....   | 172 |
| <b>Մարգարյան Ռեբեկա</b>   |     |
| Դարձվածքային նորաբանությունները արդի մամուլում .....  | 182 |
| <b>Պարոնյան Նսիրա</b>   |     |
| Արաբերենից, պարսկերենից և հունարենից փոխառյալ բժշկագիտական տերմինները Մ. Հերացու «Ձերմանց մխիթարություն» և Բ. Սեբաստացու «Գիրք բժշկութեան» երկերում ..... | 190 |
| <b>Կիրակոսյան Մարիամ</b>  |     |
| Հեղինակի լեզվական կոնցեպտը և թարգմանությունը .....  | 200 |
| <b>Մովսիսյան Անահիտ</b>   |     |
| Իրակությունները որպես անհամարժեք բառապաշարի մաս .....   | 213 |
| <b>Գաբրիելյան Սուսաննա</b>  |     |
| Բանավոր խոսքի էթիկական նորմերը .....  | 221 |
| <b>Սարգսյան Հրաժին</b>  |     |
| Ժողովրդախոսակցական բառաշերտը Կոստան Չարյանի չափածոյում .....  | 229 |
| <b>Կարապետյան Աստղիկ</b>  |     |
| Հարադրավոր բայերը Ա. Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկում .....  | 239 |
| <b>Քոչատաշյան Սիլվա</b>   |     |
| Ոճագիտության ձևավորումը հայ իրականության մեջ .....  | 250 |
| <b>Դոխոյան Ռուզաննա</b>   |     |
| Ջգացական բայերի իմաստային դասակարգումը արդի հայերենում .....  | 258 |
| <b>Խաչատրյան Վալենտին</b>   |     |
| Բարբառային բառեր ու բառաձևեր 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում .....   | 275 |

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ

## ԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ  
150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ  
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
(Երևան, 2015թ., հոկտեմբերի 14-15)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Մրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:  
ք. Երևան, Խանջյան 15/55

Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 18:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1



ՆՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2016